

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 4 (20)

ԵՐԵՎԱՆ 2018

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝

ԱՇՈՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ասատրյան Ա. Գ. - արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

Գասպարյան Ս. Ք. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Դերձյան Հ. Մ. - իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

Զաքարյան Ս. Ա. - փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,

Ղարիբյան Գ. Ա. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ

թղթակից անդամ

Մանուչարյան Հ. Գ. - քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

Մինասյան Է. Գ. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Մ. Վ. - տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Միքայելյան Վ. Հ. - հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Մուրադյան Ս. Պ. - բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Նահապետյան Ռ. Ա. - պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ակունք. Գիտական հոդվածների ժողովածու/Խմբ. խորհուրդ՝ Ս.Ա. Առաքելյան և ուրիշ.; Գլխ. խմբ.՝ Ա.Ա. Ներսիսյան - Եր.: ԵՊՀ հրատ., 2018թ. - 238 էջ:

© ԵՊՀ հրատարակչություն, 2018 թ.

© Հեղ. խումբ, 2018 թ.

YEREVAN STATE UNIVERSITY

IJEVAN BRANCH

A K U N Q

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

NUMBER 4 (20)

YEREVAN 2018

YSU PUBLISHING HOUSE

EDITOR-IN-CHIEF

ASHOT NERSISYAN - doctor of historical sciences, professor

EDITORIAL COUNCIL

Asatryan A. G. - doctor of art, professor

Derdzyan H. M. - doctor of law, professor

Gasparyan S. K. - doctor of philological sciences, professor

Gharibyan G. A. - doctor of economic sciences, professor, associate member of
NAS, RA

Manucharyan H. G. - doctor of political science, professor

Minasyan E. G. - doctor of historical sciences, professor

Mikaelyan M. V. - doctor of economic sciences, professor

Mikaelyan V. H. - doctor of psychological science, professor

Muradyan S. P. - doctor of philological sciences, professor

Nahapetyan R. A. - doctor of historical sciences, professor

Zakaryan S. A. - doctor of philosophy, professor

Akunq. Collection of Scientific Articles/Editorial Board - S. A. Arakelyan and others; Editor – in – chief - A. A. Nersisyan. - Yerevan; YSU Publishing House, 2018 – 238 pages.

© YSU Publishing House 2018

© Author group, 2018

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1921թ. ապրիլի 2-ին կարմիր բանակի զորահրամանատար Մ. Վելիկանովը Երևանը գրավելու մասին հերթական հրամանն արձակեց՝ պահանջելով գործել վճռականորեն և լինել համառ՝ հակառակորդի զորքերը Երևանից բաց չթողնելու նպատակով¹:

Երևանի շրջակայքում մղած թեժ կռիվներից հետո՝ 1921թ. ապրիլի 2-ին, 11-րդ բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Քանաքեռի և Աշտարակի կողմից մտան Երևան, իսկ ապրիլի 3-ին Կարմիր բանակի հեծելազորը գրավեց Էջմիածինը²: Ապրիլի 4-ին Երևան մտան Վեդի-Ղամարլու շրջանում 45-օրյա մարտեր մղած խորհրդային բանակի զորամասերը՝ Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի գլխավորությամբ:

Իսկ մինչ այդ Ս. Վրացյանը մի վերջին անգամ հանդիպեց Հովհ. Թումանյանի հետ՝ պարսկական հյուպատոս Ասատուլլա խանի և բժիշկ Լոշերի ներկայությամբ, որոնք պետք է դիմավորեին Երևան եկող բոլշևիկներին: Նրանք հավաքվել էին խորհրդակցելու այն մասին, թե ինչպիսին է լինելու Երևանի վիճակը ապստամբների հեռանալուց հետո: Հանդիպման ժամանակ Հովհ. Թումանյանը իր վրա վերցրեց Հայրենիքի փրկության կոմիտեի անդամների ընտանիքների պաշտպանությունը:

Ապրիլի 2-ի կեսօրին Փրկության կոմիտեի անդամներն ու զորքը հեռացան քաղաքից: Տասնյակ հազարներով բնակիչներն արդեն Բաշ Գառնիի ճանապարհին էին: «Հայաստանի արևը փախչում էր Արարատյան դաշտից դեպի արևմուտք»³, - գրում է Ս. Վրացյանը: Երևանում երիտասարդ չէր մնացել: «Զավթիչները» Քանաքեռի բարձունքներից վախվորած մտան ամայի փողոցները, ուր նրանց նույնպես վախեցած դիմավորեցին պարսից հյուպատոսը, ամերիկացի բժիշկը և ամենայն հայոց բանաստեղծը: Պաշտպանվողը է նկարագրում Ս. Վրացյանը. «Ժողովուրդը ահասարսուռ լուռ էր... Երբեք ոչ մի տեղ հաղթական մի բանակ այսպիսի անփառունակ մուտք չի ունեցել իր նվաճած քաղաքը...»⁴:

Երևանի գրավման օրը Գ. Աթաբեկյանը հեռագրեց Վ. Լենինին և Գ. Օրջոնիկիձեին՝ գրելով որ կարմիր զորամասերի օգնությամբ հայ աշխատավորները վերացրին Դաշնակցություն կուսակցության ստոր պրովոկացիան: «Դաշնակցությունը, հենվելով տաճկահպատակ

¹ Տե՛ս «Освободительная миссия 11-ой красной армии», ԲՀԱ, Երևան, 1980, թիվ 2, էջ 53:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 296, թ. 1:

³ Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի մեջ, Երևան, 1993, էջ 580:

⁴ Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի մեջ, էջ 580:

փախստականների ապադասակարգված մասսայի վրա, իր մահից առաջ վերջին անգամ փորձեց ծառայական դեր խաղալ Անտանտի առաջ՝ դժբախտ, հոշոտված, քաղցած երկիրը վերածելով նոր թշվառությունների անդունդի»¹:

Պետք է ընդունել, որ այս հեռագիրը կրում էր Դաշնակցությանը Անտանտի կապատարը համարելու բոլշևիկյան քննադատելի քարոզչության կնիքը:

Կարմիր բանակի գերիների նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքի մասին Մ. Վելիկանովի հետևյալ տողերի նույնպես չի կարելի լիարժեք ճշմարտություն համարել. «Երբ մեր զորքերը ապրիլի 14-ի լույս 15-ի գիշերը գրավեցին Քելիշքենդը, պարզվեց, որ գերի կարմիր զինվորներից երեսուն հոգի մեռել են քաղցից և դաշնակների դաժան վերաբերմունքից»²:

Մայրաքաղաք Երևանից, գավառական կենտրոններից ու գյուղերից ավելի քան տասը հազար տղամարդ (և բավական թվով կանայք) բռնեցին տարագրության ճամփան՝ Բաշ Գառնիով դեպի Զանգեզուր, դեպի ազատ և անկախ Լեռնահայաստան³: «Ժողովուրդը սարսափահար թշնամու կողմը կը նայեր եւ վշտալից արցունք կթափեր՝ իր հարազատների հեռանալը տեսնելով»⁴:

Զանգեզուր գնացին Հովհ. Քաջագունին, Մ. Վրացյանը, Ն. Աղբալյանը, ճարտարապետ Ալ. Թամանյանը, գրող Լեո Կամսարը և հազարավոր ուրիշներ: Երևանը թողնելուց հետո՝ ապրիլի 3-ին, Բաշ Գառնիում և Խարաբա-Քյոթունկուում կենտրոնացան չորս ճակատների վրա գործող զինվորական ուժերը, մտավորական գործիչներ՝ մոտ ութ հազար մարդ:

Բոլշևիկներն իրենց ուժերը կենտրոնացրին Բաշ Գառնիի մերձակայքում, ուր ապրիլի 6-ին տեղի ունեցավ ամենակատաղի մարտերից մեկը: Ըստ Կ. Սասունու՝ կովի ընթացքում բոլշևիկները մի պահ խուճապի մատնվեցին և անգամ քիչ էր մնում թողնեին Երևանը: Բայց հոգնած գյուղացիները, չունենալով այլևս ռազմամթերքի անհրաժեշտ պաշար, լքեցին Բաշ Գառնին ևս⁵:

Բաշ Գառնիից նահանջողների համար մտահոգում էր մեկ հարց. ինչպե՞ս անել, որ Նախիջևանի և Բյոյուք-Վեդիի կողմից չկտրվի նահանջողների ճանապարհը: Նահանջից առաջ տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ որոշվեց, որ Կ. Սասունին ստանձնի թիկունքը պահելու խնդիրը և առաջապահ ուժերով բռնի Բյոյուք-Վեդիի և Նախիջևանի բարձունքները:

Խորհրդակցությունը նման որոշում ընդունեց նկատի ունենալով այն հանգամանքը, որ սասունցիներն ու մշեցիները քաջածանոթ էին տեղանքին: Համաձայն սահմանված կարգի՝ սկզբից պետք է անցնեին Սասունի, Վասպուրականի, Տարոնի ուժերը՝ Սմբատի, Մուշեղի և Ասլանի

¹ ՀԱԱ, ֆ. 1438, ց. 1, գ. 10, թ. 8:

² «Խորհրդային Հայաստան», 20 ապրիլի, 1921:

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Սասունի Կ., Յուշեր և վկայութիւններ, Պէյրուք, 1972, էջ 228:

⁵ Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 230:

գլխավորությամբ: Այդ գործառնությունները պահպանեցին դիրքերը, մինչև որ նահանջող ուժերը անցնեն ավելի ապահով վայրեր: Կ. Սասունու առաջապահ ուժերը Դարալագյազի Այնձոր գյուղում հանդիպեցին Յապոնի ժողովրդական վաշտերին: Այդ նույն ժամանակ նահանջողները հասան Քեշիշքենդ (Եդեգնաձոր), որտեղ էին Փրկության կոմիտեի անդամները, դրանց թվում էր և Ռ. Տեր-Մինասյանը:

Երևանի նահանջելիս փրկության կոմիտեն իր հետ վերցրեց կառավարական արխիվների մի մասը և պետական գանձարանը:

Ս. Վրացյանն այդ արարքը հիմնավորում է հետևյալ կերպ. «Փետրվարի 18-ի ապստամբության հետևանքով Երևանից նահանջելիս բոլշևիկները պետական գանձը լցրել էին սնդուկների մեջ՝ իրենց հետ տանելու նպատակով, բայց հաջողվել էր տանել այդ սնդուկների մի մասը, մնացածն էլ ընկել էր Փրկության կոմիտեի ձեռքը: Այդ արկղերը մնացել էին պետական գանձարանում չբացված՝ մինչև Զանգեզուր նահանջի նախօրյակին հատուկ հանձնաժողովի միջոցով դրանք հաշվառվել էին և տարվել զինվորական ջոկատի հսկողությամբ»¹:

Փրկության կոմիտեի ձեռքում կար Երևանից տարված արժույթի երեք տեսակ. հայկական դրամանիշներ ու չեկեր, խորհրդային ռուբլիներ, տարադրամային արժեքներ: Հայկական դրամները տեղավորվեցին 15 արկղերի մեջ, որոնց պարունակությունը կազմում էր 9 միլիարդ, 400 միլիոն ռուբլի: Խորհրդային դրամները կազմում էին 650 միլիոն ռուբլի, մեկ արկղ ոսկյա իրեր, արտասահմանյան վալյուտա՝ դոլլարներ, ֆունտ-ստերլինգ, ֆրանկ, պարսկական դոան, գերմանական մարկ և այլն²:

Մինչդեռ, Ա. Հակոբյանը, գտնում է, որ ՀՓԿ-ի քայլին կարելի է ըմբռնումով մոտենալ. «որովհետև հեղափոխությունների, բռնի իշխանափոխությունների, քաղաքացիական կռիվների ժամանակ, որպես կանոն այդպիսի փաստեր արձանագրվել են շատ երկրներում և դրանում առանձնապես արտառոց բան չպետք է տեսնել»³:

Արտասահման անցնելուց հետո Փրկության կոմիտեի անդամները (Ս. Վրացյան, Իրազեկ) կառավարության այդ քայլը փորձեցին հիմնավորել և արդարացրել այսպես. եթե իրենք Երևանից հանած չլինեին տարադրամը և մյուս արժեքները, ապա Պարսկաստան անցած մի քանի հազար հայերն անկասկած սովամահ կլինեին: Միանշանակ, այս պատճառաբանությունը ոչ մի կերպ չի մեղմում դաշնակցականների արարքը. չէ՞ որ Հայաստանում մնացել էին ոչ թե մի քանի հազար, այլ յոթ-ութ հարյուր հազար հայեր, որոնց գերակշիռ մասը գտնվում էր ծայրահեղ աղքատության և թշվառության մեջ:

¹ Վրացյան Ս., Հայաստանը բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի մեջ, էջ 673-677:

² Տե՛ս Ժամկոչեան Ա., Զորաւար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945, էջ 59:

³ Հակոբյան Ա., Մի ամբաստանության հետքերով, ՎԷՄ, Գ (Թ), թիվ 4 (36), 2011, էջ 145-146:

«Ավելին, այդ ամենը հետագայում տնօրինեցին ընդամենը մի փոքր խումբ մարդիկ: Եվ բնավ էլ պատահական չէ, որ այդ առթիվ դժգոհություններ ծագեցին ոչ միայն գաղթականության, այլև շարքային դաշնակցականների շրջանում: Հանրությանը ներկայացրած կիսատ-պռատ հաշվետվությունը ոչ մի կերպ չկարողացավ հանգստացնել կրքերը Սփյուռքում,- գրում է Ա. Միմոնյանը¹: Գ. Զաղեթյանը դաշնակցականների հաշվետվության մասին գրում է. «... ողորմելի փշրանքներ գցելով Թավրիզի գաղթականների ու զինվորականներին, այժմ առանց կարմրելու հրապարակել են մի ինչ-որ «հաշվետվություն»՝ իրենց օրինապահ և անբիծ ցույց տալու համար: Այդ հաշվետվությունը մի պայծառ նմուշ է դաշնակցական շեֆերի խարդախ գործելակերպի»²:

1921թ. ապրիլի 6-ին Ս. Կասյանը և Ա. Նուրիջանյանը մի հեռագիր հղեցին Գ. Օրջոնիկիձեին՝ նշելով, որ դաշնակցականներն Երևանից հեռանալիս տարել են պետական արժեքներ և դրամանիշներ (խորհրդային և հայկական) ու խնդրեցին նրան իր հետ բերել ամենաքիչը մեկ միլիարդ ռուբլի խորհրդային փող³:

Այսպիսով՝ Երևանի գրավումով փետրվարյան ապստամբությունը պարտություն կրեց, պարտություն, որն անխուսափելի էր ու կանխորոշված:

Միանգամայն իրավացի է Վ. Ղազախեցյանը, երբ գրում է, որ ապստամբության համար հեռանկար չէին տեսնում նաև նրանք, ովքեր կանգնած էին նրա գլուխ⁴: «Եթե բոլշևիկները ուժեղանան արտաքին օժանդակությամբ, իսկ մենք մնանք մենակ,- գրում է Ս. Վրացյանը,- պարտությունն անկասկած է ու անխուսափելի»⁵:

Ահա թե ինչ է գրում ապստամբության պարտության պատճառների մասին Գ. Սարգիսբեկյանը. «Մեր անյաջողութեան պատճառներից գլխավորը Վրաստանի անկումն էր, որ հոգեբանորեն շատ ծանր ազդեց մեր ժողովուրդի և կոռուղների վրայ: Մենք մեզ զգում էինք կղզիացած ու մինակ, երբ մեր դեմ կանգնած էր հսկայ եւ լայնածառալ Ռուսաստանը: Մեր ժողովուրդի եւ զորքի մեջ կատարուեց խոշոր բեկում, կռուի թափն ընկաւ եւ ապստամբութիւնը իր իմաստ կորցրեց:

Երկրորդ՝ փորձուած հրամանատարական կազմի կատարեալ բացակայութիւնն էր: Սպայութեան աքսորով մեր երկիրը զրկուել էր լաւ ռազմականօրէն պատրաստուած ու գործին գիտակ զինուորականներից: Գլխավոր պատճառներից մէկն էլ պետք է նկատել այն, որ մենք չունէինք

¹ Միմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 446:

² Տե՛ս Գ. Զաղեթյան, Մոտիկ անցյալից, Երևան, 1969, էջ 16:

³ Չոկտեմբեկյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 511:

⁴ Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940թթ., Երևան, 2006, էջ 83:

⁵ Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, էջ 656:

կանոնաւոր զինուորական կարգապահութեան և դաստիարակութեան բովից անցած և մարզուած զօրք: Կռուի ամբողջ ծանրութիւնը ընկած էր անմարզ ժողովրդի վրայ, թէւ նա կոտում էր հրաշալիօրէն»¹:

Հատկանշական է նաև Հովհ. Քաջագունու տեսակետը՝ շարժման պարտության վերաբերյալ. «Ապստամբության պարտությունը կանխորոշված էր և անխուսափելի, երբ ապստամբութիւնը իր իսկ ներսում կրում էր արդեն պարտութիւն, որովհետև հավատ չուներ հաջողութեան»²:

Երևանի գրավման օրը՝ ապրիլի 2-ին՝ ժամը 18-ին, բոլշևիկները բոլորին հայտարարեցին, որ քաղաքն արդեն իրենց ձեռքում է, իսկ դաշնակցականները խայտառակ ձևով փախել են³: Իսկ հաջորդը օրը խորհրդային իշխանությունը հրաման է արձակում՝ համաձայն որի երկրում տապալվում է Հայրենիքի փրկության կոմիտեի իշխանությունը, և վերականգնվում է Խորհրդային իշխանությունը: Հրամանի համաձայն՝ չեղյալ են հայտարարվում Փրկության կոմիտեի արձակած բոլոր հրամաններն ու սահմանած օրէնքները⁴:

Բանալի բառեր - Ապրիլի 2, Հայրենիքի փրկության կոմիտե, ապստամբություն, պարտություն, կոմունիստ, դաշնակցական, Խորհրդային իշխանություն, Երևան, Ս. Կապյան, Ավ. Նուրինջանյան Ս. Վրացյան:

Նաթելլա Գրիգորյան, 1921թ. Փետրվարյան ապստամբության պարտությունը - 20-րդ դարի հայոց պատմության կարևորագույն իրադարձություններից է 1921թ. Փետրվարյան ապստամբությունը, որի վերաբերյալ թեև ստեղծվել է քաղաքական, հրապարակախոսական ու գիտական հարուստ գրականություն, բայց չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ չկա այս ապստամբությանն առնչվող գեթ մեկ հարց, որը արժանացած լինի միանման ու սպառնիչ գնահատականի:

Մեր նպատակն է հանդիսացել սույն հոդվածով հնարավորինս անաչառ ու անկողմնակալ դիրքերից ներկայացնել ապստամբության պարտությունը և նրա պատճառները:

Нателла Григорян, Поражение Февральского восстания 1921 года -

Одним из самых важных событий в армянской истории 20-го века является Февральское восстание 1921 года, о котором была создана богатая политическая, публицистическая и научная литература, но не было бы преувеличением, если скажем, что нет хоть одной проблемы, связанной с этим восстанием, которая была бы удостоена единой и исчерпывающей оценки.

¹ «Գարեգին Սարգիսիւկեանի պատմածը(գրի առաւ Արշակ Մեհրապեանը), «Հայրենիք» ամսագիր, 1968, թիվ 2, էջ 19:

² Քաջագունի Հովհ., նշվ. աշխ., էջ 52:

³ ՀԱՍ. ֆ. 1022, ց. 3, գ. 347, թ. 1; նաև՝ ց. 8, գ. 295, թ. 1:

⁴ Նույն տեղում, ֆ. 113, ց. 1, գ. 1, թ. 2:

Наша цель состояла, как можно более беспристрастно и непредвзято, представить в этой статье поражение восстания и его причины.

Natella Grigoryan, The rout of February rebellion of 1921 - One of the most important events of Armenian history of the 20th century is the February rebellion, about which political, journalistic and scientific rich literature was created, but it will not be considered overstatement, if we say that there is no question connected with that rebellion that deserves similar and comprehensive rating.

Our aim is with the help of this article to introduce the rout of rebellion and its reasons from impartial and disinterested aspect.

**ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՎ
ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՂԻՐՈՒԹՅՈՒՆԸ 1992-2002 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ
ԲՈՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ**

ԽՍՀՄ փլուզումից և պաշտպանության ընդհանուր համակարգի քայքայումից հետո օբյեկտիվ պատճառներով նոր անկախ պետություններից ոչ մեկը՝ այդ թվում և Ռուսաստանը չկարողացավ արդյունավետորեն ապահովել սեփական անվտանգությունը: Խորհրդային Միության ռազմական ենթակառուցվածքները անհամաչափորեն բաժանված էին նորանկախ 15 հանրապետությունների միջև: Միջուկային զենքերը հայտնվեցին ոչ միայն Ռուսաստանի տարածքում, այլ նաև Բելոռուսիայի, Ղազախստանի և Ուկրաինայի, որը հանգեցրեց նոր միջուկային պետությունների հայտնվելուն: Սա կարող էր ապակայունացնել ռազմաքաղաքական իրադրությունը միջազգային ասպարեզում¹:

ԽՍՀՄ փլուզումը մեծ ազդեցություն ունեցավ ռազմաքաղաքական իրադրության վրա ամբողջ եվրասիական տարածաշրջանում: Այս մասշտաբային գործընթացի արդյունքը եղավ 15 ինքնիշխան հանրապետությունների ձևավորումը, որոնք ունեին սեփական ռազմական ուժեր: Նոր ձևավորված պետական կազմավորումներին բնորոշ էին ներքաղաքական անկայունությունները, ռազմական հակամարտություններում ներգրավվածությունը: Վերջիններիս վրա մեծ ինտենսիվությամբ ազդում էին արտաքին ուժերը: Բացի այս բավականին թուլացել էր սահմանների պաշտպանության արդյունավետությունը: Ժամանակի ռիսկերից էին դարձել թմրանյութերի ներկրումն ու ահաբեկչական սպառնալիքի առկայությունը:

Ռուսաստանի և մյուս հետխորհրդային տարածաշրջանի երկրների համար հրատապ էր վերոնշյալ խնդիրների անհապաղ լուծումը: Դրա ճանապարհին տրամաբանական քայլ կարող էր լինել նոր ռազմաքաղաքական միության ստեղծումը: Տվյալ կազմակերպության մեջ առաջատար դեր պետք է կատարեր Ռուսաստանը, որն ուներ ամենամեծ ռազմատեխնիկական և տնտեսական հնարավորությունները և արտաքին լուրջ քաղաքական կշիռ: Ռուսաստանի Դաշնության համար նոր միության ստեղծումը կրնձեռեր պոտենցիալ հնարավորություն՝ պահելու ռազմաքաղաքական ամուր կապերը մերձակա երկրների հետ, ինչպես նաև զարգացնել ինտեգրացիան ռազմատեխնիկական ոլորտում: Սակայն այդպիսի մոդելը ընդունելի եղավ ոչ բոլոր հետխորհրդային տարածաշրջանի պետությունների համար: Մերձբալթյան պետությունների անկախության ձեռք բերումից հետո նրանց արտաքին

¹ Stu` Халевинская Е.Д., Интеграция, сотрудничество и развитие на постсоветском пространстве, Москва, 2012, Магистр Инфра-м , стр. 177.

քաղաքականության գլխավոր նպատակ դարձավ ՆԱՏՕ-ին և ԵՄ –ին անդամակցելուն նախապատրաստվելը, և Ռուսաստանի հետ ռազմաքաղաքական համագործակցության բացառումը: Ուկրաինան զբաղեցրեց միջանկյալ դիրք, շարունակելով Մոսկվայի հետ ռազմական հարցերում համագործակցությունը, բայց չէր դիտարկում Ռուսաստանի հովանավորությամբ ռազմաքաղաքական կազմակերպությանը անդամակցելու տարբերակները: Միավորման գաղափարին չաջակցեց նաև Մոլդովան, որի հարաբերությունները Ռուսաստանի հետ սրվել էին մերձդնեստրյան հակամարտության պատճառով:

Հավաքական անվտանգության ապահովման հարցում այլ մոտեցում ցուցաբերեցին հետխորհրդային տարածաշրջանի անդրկովկասյան և Կենտրոնական Ասիայի հանրապետությունները: Այս տարածաշրջաններում 1980-90-ական թթ. քաղաքական իրավիճակի կտրուկ լարվածություն էր նկատվում, որն ուղեկցվում էր մի շարք «թեժ կետերի» առաջացմամբ: Անդրկովկասյան և Կենտրոնական Ասիայի հանրապետությունները երբեմն տեսնում էին Մոսկվայի հետ ռազմաքաղաքական բլոկում սեփական անկախությանը սպառնացող վտանգ, երբեմն էլ կարծում, որ անհրաժեշտ է մշակել ընդհանուր ռազմաքաղաքական մարտավարություն՝ նոր մարտահրավերներին պատշաճ դիմակայելու համար²:

1992թ. մայիսի 15-ին Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը Տաջիկստանը և Ուզբեկստանը Տաջքենտում ստորագրեցին պայմանագիր հավաքական անվտանգության մասին: Ադրբեջանը պայմանագիրը ստորագրեց 1993թ. սեպտեմբերի 24-ին, Վրաստանը 1993թ. սեպտեմբերի 9-ին, Բելոռուսիան 1993թ. դեկտեմբերի 31-ին : Պայմանագիրը ուժի մեջ մտավ 1994թ. ապրիլի 20-ին: Պայմանագիրը նախատեսված էր 5 տարով և թույլատրում էր երկարաձգել: ՀԱՊ-ը դարձավ ԱՊՀ երկրների կողմից ավելի վաղ ձեռք բերված համաձայնությունների տրամաբանական շարունակությունը: Ինչպես հայտնի է, դեռևս 1991թ. դեկտեմբերին ԱՊՀ անդամ երկրների նախագահների խորհրդի կողմից ստորագրվել էր համաձայնագիր ռազմական ուժերի և սահմանապահ զորքերի, միջուկային զենքի համատեղ միջոցառումների, ինչպես նաև միջուկային զենքի չտարածման և Բելոռուսիայի, Ղազախստանի, Ուկրաինայի տարածքներից Ռուսաստանի տարածք վերջիններիս դուրս բերման վերաբերյալ³:

ՀԱՊ-ը սկզբնապես ուներ զգալի թերություններ: Վերջինիս անդամների թվում չէր Ուկրաինան, որն իրենից ներկայացնում էր ԽՍՀՄ կարևորագույն ռազմաադյունաբերական կենտրոններից մեկը: Պայմանագրին միանգամից չմիացան Ադրբեջանը և Վրաստանը, իսկ ահա 1993 թ. միանալուց հետո արդեն

² Sku՝ Пивовар Е.И., Постсоветское пространство:альтернативы интеграции. Исторический очерк, Алетея, 2009, стр. 63-64.

³ Sku՝ Халевинская Е.Д, նշված աշխատությունը, էջ 177-178:

1999թ. դուրս եկան պայմանագրից: Ռազմավարական բազաների կորուստը Մերձբալթիկայում և բալթյան պետությունների հակումը ինտեգրվելու արևմտյան կառույցներին, բարդացրին Ռուսաստանի աշխարհաքաղաքական իրավիճակը: Բելոռուսի մասնակցությունը բավականին նշանակալի էր ոչ միայն նրա մարտավարական դիրքի տեսանկյունից, այլ նաև արևմտյան ուղղությամբ վերջինիս ունեցած կոմպակտ մարտունակ ռազմական ուժերի առկայության: Առանձնահատուկ նշանակություն ունեն Ղազախստանի անդամակցությունը՝ իր հսկայական տարածքի վրա եղած նախկին ԽՍՀՄ ռազմավարական ենթակառուցվածքների, հրաձգարանների և տիեզերակայանի առկայությամբ:

Սակայն, 1990-ական թթ. առաջին կեսերին հետխորհրդային երկրների անվտանգության նկատմամբ սպառնալիքները թույլ էին, քանի որ մեծ թափ էր հավաքել միջուկային վտանգի թուլացման գործընթացը, ակտիվ հարաբերություններ էին հաստատվել ՆԱՏՕ-ի, ԵՄ, ԵԱՀԿ երկրների հետ, բարելավվել էր հարաբերությունները ՉԺՀ-ի հետ: Կենտրոնական Ասիայի երկրներն ակտիվորեն ընդլայնում էին համագործակցությունը ասիական և մահմեդական հարևանների հետ: Միայն կային որոշ հակամարտություններն էին նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում (Տաջիկստանում, Կովկասում, Մեծդնեստրում), ինչպես նաև տնտեսական իրավիճակի կտրուկ վատթարացումը բոլոր նորանկախ հանրապետություններում: Այսպիսի պայմաններում ՀԱՊ-ը փաստացի իրեն չէր դրսևորում որպես կառույց, որն ունակ է խաղաղապահ գործողություններ անցկացնելու և չեզոքացնելու հակամարտությունները: Օրինակ, Աբխազիայում տեղակայվեցին ռուսական խաղաղապահները, բայց վերջիններս ունեին ԱՊՀ մանդատ: Մերձդնեստրում ռուսական բանակի ներկայությունը իրավական տեսանկյունից ընդհանրապես քիչ հիմնավորված տեսք ուներ:

Միջպետական հակասություններով պայմանավորված առաջացան «բեկման գծեր» ՀԱՊ անդամ երկրների միջև: Այդ «բեկման գծերը» ավելի ցայտուն դրսևորվեցին Վրաստանի և Ռուսաստանի, Ուզբեկստանի և Տաջիկստանի, Հայաստանի և Ադրբեջանի հարաբերություններում:

1995թ. փետրվարին Ալմա-Աթայում ՀԱՊ երկրների կողմից փորձ ձեռնարկվեց ամրացնել կառույցը: Ընդունվեցին հիմնարար փաստաթղթեր՝ ՀԱՊ անդամ պետությունների հռչակագիրը, հավաքական անվտանգության հայեցակարգը, ՀԱՊ անդամ պետությունների ռազմական համագործակցության խորացման հիմնական ուղղությունները:

ՀԱՊ երկրների հավաքական անվտանգության հայեցակարգն իրենից ներկայացնում էր անդամ երկրների ագրեսիայից համատեղ պաշտպանություն, խաղաղության սպառնալիքի կանխարգելում և վերացում, տարածքային ամբողջականության և ինքնիշխանության ապահովում: Հայեցակարգի հիմքում

ընկած էին. 1. հավաքական անվտանգության ապահովման հիմունքները, 2. անդամ պետությունների ռազմական քաղաքականության հիմունքները, 3. հավաքական անվտանգության համակարգի ստեղծման հիմնական ուղղությունները և փուլերը:

Հայեցակարգում հավաքական անվտանգության ապահովման նպատակ հռչակվեց պատերազմների և ռազմական հակամարտությունների դադարեցումը, իսկ վերջիններիս առկայության դեպքում շահերի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության երաշխավորված պաշտպանությունը: Անդամ երկրների հավաքական անվտանգությունը, համաձայն հայեցակարգի՝ հիմնվում էր հետևյալ սկզբունքների վրա.

- Անվտանգության անբաժանելիություն. անդամ երկրներից մեկի դեմ ուղղված ագրեսիան դիտարկվում էր որպես ակտ բոլոր անդամ պետությունների դեմ ուղղված,
- Անդամ պետությունների պատասխանատվության հավասարություն անվտանգության ապահովման համար,
- Տարածքային ամբողջականության և ինքնիշխանության, ներքին գործերին չմիջամտում և փոխադարձ շահերի հարգում,
- Հավաքական անվտանգության ապահովման վերաբերյալ սկզբունքային հարցերի շուրջ որոշումների ընդունում փոխհամաձայնությամբ,
- Ուժերի և միջոցների համատեղում ռազմական սպառնալիքի դեպքում:

ՀԱՊ-ի ձևավորման սկզբնական շրջանում (1994-1998 թթ.) նշվեցին համընդհանուր հավաքական անվտանգության կազմակերպման հիմնական փուլերը և ժամկետները.

1. Անդամ պետությունների զինված ուժերի կազմավորման ավարտ, անդամ պետությունների միջև ռազմական և ռազմատեխնիկական համագործակցության ծրագրի մշակում և իրագործում, իրավական ակտերի մշակում և ընդունում հավաքական անվտանգության համակարգի գործունեությունները կարգավորելու համար,
2. Ընդհանուր (միացյալ) բանակային խմբի (ուժեր) ստեղծում հնարավոր ագրեսիան կանխելու համար, համատեղ հակաօդային պաշտպանական համակարգի ձևավորում,
3. Անդամ պետությունների կողմից հավաքական անվտանգության համակարգի կազմավորման ավարտ⁴:

⁴ Տե՛ս՝ **Довгань Е.Ф., Розанов А.А.**, Организация Договора коллективной безопасности (2002-2009 гг.), «Кавчег», Минск, 2010, стр. 16-20.

ՀԱՊ սկզբնական շրջանում հավաքական անվտանգության մարտավարության մշակման համար կարևոր դեր խաղաց ՀԱՊ անդամ երկրների կողմից ընդհանուր զինված ուժերի ստեղծման գաղափարը: Այս գաղափարի գլխավոր առաջ քաշողներն էին Ռուսաստանը և Ուկրեյնան: Այսպես, Ուկրեյնական նախագահ Իսլամ Կարիմովը եղել է պայմանագրի նախաձեռնողներից մեկը՝ 1992թ. առաջարկելով ստեղծել միասնական բանակ բոլոր պետությունների գործնական մասնակցությամբ: Փորձեր կատարվեցին առանձին զորատեսակների համար ձևավորել միասնական կառավարում: Այս ուղղությամբ առաջին քայլը եղավ համատեղ հակաօդային պաշտպանության մասին համաձայնագրի ստորագրումը:

Առաջին անգամ ՀԱՊ-ը իր արդյունավետությունը ցուցաբերեց Տաջիկստանում, երբ ապահովեց ազգային հաշտեցում 1990-ականների առաջին կեսին: Այս հետխորհրդային երկրում կազմավորվեցին համընդհանուր խաղաղապահ ուժեր, որոնք 1996 թ. աշնանը և 1998 թ. ամռանը չեզոքացրին Աֆղանստանից զինված խմբավորումների ներթափանցման վտանգը, ինչպես նաև 1999 և 2000 թվականներին Ղրղզստանի հարավում և Կենտրոնական Ասիայի այլ վայրերում զինյալների դեմ իրականացրին գործողություններ⁵:

Ռազմական հակամարտությունների առկայությունը ՀԱՊ անդամ Հայաստանի և Ադրբեջանի, Վրաստանի և Աբխազիայի միջև, ինչպես նաև Տաջիկստանում քաղաքացիական պատերազմը, ինչպես նաև ավելի ուշ տեղի ունեցած «գունավոր հեղափոխությունները» անդամ պետություններում ցույց տվեցին ՀԱՊ հայեցակարգի անկատարելիությունը:

Չնայած 1995թ. փետրվարին Ալմա-Աթայում ընդունած կարևոր փաստաթղթերին, ՀԱՊ-ի փորձը աստիճանաբար և ավելի հստակ վերածվում էր քիչ արդյունավետ կազմակերպության՝ իր առանձին անդամ երկրների ներքին կոշտ առճակատումներով: Թեև 1999թ. ապրիլին ստորագրվեց ՀԱՊ 5 տարով երկարացման արձանագրությունը (այս ամենով դրվեց վերջինիս գոյության երկարացման սկզբունքը հետագա ժամանակահատվածներում), երեք երկրներ (Ադրբեջանը, Վրաստանը և Ուկրեյնան) դուրս եկան պայմանագրից:

Ինչպես ներկայացվում է, Ուկրեյնական նախագահ Ի. Կարիմովի որոշման գլխավոր պատճառն էր 1999թ. փետրվարին իր դեմ կատարված մահափորձը, ինչպես նաև մեղադրանքները, ուկրեյն ղեկավարը խրախուսում և քողարկում է իսլամիստ զինյալներին:

ՀԱՊ-ից դուրս գալը Տաշքենտի կողմից յուրովի բողոքի ակցիա էր ուղղված և Ռուսաստանի դեմ: Մոսկվայի կողմից Էմոմալի Ռահմոնովի ռեժիմին աջակցելը հանգեցրեց Իսլամ Կարիմովի ակնհայտ դժգոհությանը:

⁵ Տե՛ս՝ **Пивовар Е.И.**, նշված աշխատություն, էջ 64-65:

Վրաստանի դուրս գալը պայմանագրից պայմանավորված էր վրաց ռուսական տարաձայնություններով, առաջին հերթին կապված Աբխազիայի և Հվ. Օսեթիայի հետ: Ակնհայտորեն աջակցելով այս կամ այն ուժերի, որոնք ընդիմանում էին Վրաստանի կառավարությանը, ռուսական կառավարող շրջանակները փորձում էին ազդել այդ երկրի քաղաքականության վրա, որն ուներ կարևոր աշխարհաաղքական դիրք: Վրաստանն իր անկախության առաջին տարիներից չէր թաքցնում իր արևմտյան կողմնորոշումը՝ ձգտելով ինտեգրվել ՆԱՏՕ-ին:

Ադրբեջանը ՀԱՊ-ից դուրս գալով նույնպես արտահայտում էր որոշակի դժգոհություն կապված անդամ երկրների քաղաքականության հետ Լեռնային Ղարաբաղի հարցում: Ռուսաստանի կողմից իբրև թե Հայաստանին ակտիվ աջակցություն ցույց տալը դժգոհություն ստեղծեց Բաքվում, որը և տարավ այդ երկրի ՀԱՊ-ց դուրս գալուն:

Ընդդեմ ՀԱՊ-ի ԱՊՀ երկրների շրջանակում՝ այսպես կոչված ՎՈՒՈՒԱՄ-ի (Վրաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Ադրբեջան, Մոլդովա) ձևավորումը⁶, որի հաստատումը տեղի ունեցավ 1997թ. հոկտեմբերի 10-ին Ստրասբուրգում Եվրոպայի խորհրդի գազաթնաժողովի ժամանակ, նպաստեց նրա թուլացմանը: Այդ ժամանակ Վրաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի և Մոլդովայի ղեկավարներն ընդունեցին համատեղ կոմյունիկե, որտեղ հաստատեցին քառակողմ համագործակցության զարգացման անհրաժեշտությունը՝ Եվրոպայում անվտանգության և կայունության ամրապնդման համար՝ հիմնվելով ինքնիշխանության հարգման, տարածքային ամբողջականության, պետական սահմանների անխախտելիության, ժողովրդավարության, օրենքի գերակայության և մարդու իրավունքների սկզբունքների վրա⁷:

Այս միտումն ակնհայտորեն ուներ հակառուսական և արևմտամետ երանգ, որն ակտիվորեն խրախուսվում էր ԱՄՆ-ի և որոշ արևմտյան պետությունների կողմից: Հետխորհրդային տարածքում առաջացան երկու միմյանց հակադրվող բլոկներ՝ ՀԱՊ և ՎՈՒՈՒԱՄ: ՀԱՊ-ը գտնվում էր ճգնաժամի մեջ⁸:

Կային նաև արտաքին ավելի ուժեղ ազդակներ, որոնք հանգեցրել էին ՀԱՊ-ի ներսում ճգնաժամային իրադրության: Առաջինը Աֆղանստանում իրադրության ծայրահեղ լարումն էր դեռ 1995թ. աշնանից: Արդյունքում ՀԱՊ և ԱՊՀ հարավային երկրների սահմանները հայտնվել էին արտաքին ներթափանցումների վտանգի մեջ:

⁶ Տե՛ս՝ **Довгань Е.Ф., Розанов А.А.**, նշված աշխատություն, էջ 21:

⁷ GUAM: history and institutional formation <https://guam-organization.org/guam-organizatsiya-za-demokratiyu-i-ekonomicheskoe-razvitiye-istoriya-i-institutsionalnoe-stanovlenie/>

⁸ Տե՛ս՝ **Довгань Е.Ф., Розанов А.А.**, նշված աշխատություն, էջ 21:

1995թ. սեպտեմբերից Աֆղանստանում նկատելի հակակառավարական ըդիմադիր դեր սկսեցին խախալ «Թալիբան» շարժման զինված խմբավորումները: Թալիբների խնդիրը ուժի միջոցով ներաֆղանական հակամարտությանը վերջ դնելու մեջ էր: Արդյունքում 1992 թ-ի օգոստոսին Քաբուլում սկսվեցին զինված բախումներ մոջահեդական խմբավորումների միջև, որոնց արդյունքում ռուսական դեսպանատունը փակվեց և անձնակազմը եվակուացվեց: Մնացել էր միայն ռուսական գլխավոր հյուպատոսությունը Մազերե Շարիֆ քաղաքում՝ Աֆղանստանի հյուսիսում, տաջիկական բնակչության առավել տարածված հատվածում:

ԱՊՀ սահմանները չէին հսկվում այնպիսի աչալրջությամբ, ինչպես ԽՍՀՄ-ի գոյության շրջանում: Այս պատճառով Աֆղանական հակամարտությունը սկսեց տարածվել սահմանակից Տաջիկստանի տարածքի վրա՝

Հաջորդ կարևոր արտաքին ազդակն էր թալիբների և այլ իսլամիստական արմատական կենտրոնների կողմից մահմեդական զինված խմբավորումներին աջակցելը արաբական և մահմեդական երկրներում, որոնք գալիս էին Կենտրոնական Ասիայից: Իսկ ահա 1997թ. առաջացավ Ուզբեկստանի իսլամիստական շարժումը՝ իր առջև նպատակ դնելով տապալել Իսլամ Կարիմովի ռեժիմը և ստեղծել «իսլամական խալիֆաթ»: 1999 և 2000թթ. իսլամիստ զինյալները Աֆղանստանից Ղրղզստանի և Տաջիկստանի տարածքներով ներթափանցեցին Ուզբեկստան, սակայն հետ շարվեցին ուզբեկական բանակի կողմից:

Մյուս ազդակն արևմուտքից էր. ՆԱՏՕ-ն ընդարձակվել էր փորձում դեպի ԱՊՀ և ՀԱՊ անդամ երկրների արևմտյան սահմաններ՝ ակնկալելով հետագա ծավալման հնարավորություն⁹:

Այսպիսով, 1990-ականների վերջին աշխարհաքաղաքական իրավիճակը ՀԱՊ-ի և հիմնականում ԱՊՀ-ի շուրջ սկսեց վատթարանալ, իսկ անվտանգության մակարդակն ընկավ: Ծայրահեղ անհանգիստ էր իրավիճակը Կովկասում. 1994թ. Ռուսաստանն ակտիվ ռազմական գործողություններ սկսեց Չեչնիայում, իսկ 1999թ. իսլամական արմատականությունը տարածվեց Դաղստանի վրա, որից հետո սկսվեց երկրորդ պատերազմը Չեչնիայում:

ՀԱՊ-ի արդյունավետությունը բարձրացնելու համար սկզբունքային նշանակություն ունեցան այդ տարիներին անցկացված գազաթափողովները անդամ պետությունների կողմից: Առաջինը Հավաքական Անվտանգության Խորհրդի Մինսկի նիստն էր 2000թ-ի մայիսի 24-ին: Այնտեղ քննարկվեցին և

⁹ Տե՛ս՝ **Богатуров А. Д., Аверков В. В.**, История международных отношений 1945-2008, АСПЕКТ-ПРЕСС, Москва, 2010, стр. 351.

¹⁰ Տե՛ս՝ **Аляев Андрей**. ОДКБ как система коллективной безопасности, современное состояние и перспективы, Журнал “Обозреватель-Observer” в каталоге “Газеты и журналы”, Роспечать, 2007, н. 47653, стр. 68.

ընդունվեցին կարևոր փաստաթղթեր: Դրանցից էին՝ «1992 թ-ի մայիսի 15-ից Հավաքական անվտանգության պայմանագրի արդյունավետության բարձրացման և վերջինիս ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակին հարմարեցնելու մասին հուշագիրը», «Կոլեկտիվ անվտանգության համակարգի ուժերի և միջոցների օգտագործման համար կոլեկտիվ որոշումների ընդունման և իրականացման կարգի մասին կանոնակարգը», «1992թ. մայիսի 15 - ի Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ պետությունների կռալիցիոն ռազմավարությունների մասին հիմնական դրույթները», «Հավաքական անվտանգության պայմանագրի անդամ պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի կանոնակարգ»:

Ստեղծվեց Կոլեկտիվ ավտանգության խորհրդի խորհրդատվական մարմին՝ Անվտանգության խորհրդի քարտուղարների կոմիտե: Որոշվեց շարունակել աշխատանքները համաձայնագրի նախագծի հիմնական սկզբունքների՝ երկրների միջև ռազմատեխնիկական համագործակցության ուղղությամբ: Խորհրդի նիստի արդյունքներով ընդունվեց անդամ երկրների ղեկավարների հայտարարությունը՝ Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաևի առաջարկով: «Մեմորանդումը» (հուշագիրը) նիստի ընթացքում ընդունված փաստաթղթերից կարևորագույնն էր : 2000թ. հունիսին Մոսկվայում ՀԱՊ անդամ երկրների ղեկավարները ստորագրեցին համաձայնագիր ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին ՀԱՊ անդամ երկրների միջև, համաձայն որի նախատեսվում էր արտոնյալ մատակարարումներ ազգային ռազմական կազմավորումների համար՝ ներառված բազմակողմանի հավաքական անվտանգության խմբավորումների կազմում¹¹:

2000թ. հոկտեմբերին Բիշքեկում Հավաքական անվտանգության խորհրդի նիստում ընդունվեց փոխկապակցված որոշումների փաթեթ՝ հստակեցնելով ինչպես ընդհանուր հավաքական անվտանգության համակարգերի, այնպես էլ բաղադրիչների ստեղծման գործընթացը: Նիստը միտված էր հիմնականում Կենտրոնական Ասիայում տարածաշրջանային ուժերի և դրանց կորիզի կազմավորմանը՝ սահմանափակվելով հավաքական արագ տեղակայման ուժերի (ՀՍՏՌ) շրջանակներով: Որոշվեց նաև պատրաստել մարմնի կենտրոնական շտաբի ստեղծելու մասին հստակ առաջարկ, որի գլխավոր խնդիրը պետք է լիներ տարածաշրջանային հավաքական անվտանգության համակարգերի փոխգործունեությունները ապահովելը: 2001թ. մայիսին Երևանում ստորագրվեց ՀԱՊ անդամ երկրների հավաքական անվտանգության համակարգերի ուժերի և միջոցների

¹¹ Договор о Коллективной Безопасности (ДКБ) http://www.mid.ru/integracionnye-struktury-prostranstva-sng/-/asset_publisher/tl7Fzr0mbE6x/content/id/503042

գործառնությունների և ձևավորումների կարգի մասին արձանագրություն, որը ենթադրում էր միասնական հավաքական անվտանգության համակարգի կազմավորում, իր մեջ ներառելով զգալի թվով ռուս-բելոռուսական և ռուս-հայկական կոալիցիոն ուժեր¹²: Արձանագրության 2-րդ հոդվածում ամրագրվեց, որ երկրներից յուրաքանչյուրի դեմ ագրեսիայի իրականացման դեպքում մեկ կամ մի քանի երկրների խնդրանքով տարածաշրջանային բանակային խմբավորումները կարող էին մասնակցել մեկ այլ շրջանում ագրեսիայի հետմղման գործողություններին՝ համապատասխան ՀԱՊ 4-րդ և 5-րդ հոդվածների: Արձանագրությունում արտացոլվեց նաև այն փաստը, որ յուրաքանչյուր տարածաշրջանային խմբավորում պետք է գտնի իր տեղը համընդհանուր անվտանգության համակարգում՝ հաշվի առնելով երկրների օրենսդրությունը, աշխարհագրական և ռազմավարական դիրքը¹³: Սակայն, ՀԱՊ արդյունավետությունը կատարելագործելու համար ակնահայտ էր, որ ի կատար չէին ածվում ստորագրված փաստաթղթերի դրույթներն ամբողջությամբ ու ճշգրտությամբ: Կային սուր հակասություններ ՀԱՊ անդամ երկրների միջև ռազմատեխնիկական նորարարություններով ապահովման ոլորտի հետ կապված, որն ամբողջովին կախված էր ՀԱՊ-ի գլխավոր դերակատար Ռուսաստանի քաղաքական կամքից, ինչպես նաև տնտեսական տեխնիկական հնարավորություններից: Վերջինս ոչ միշտ էր կարողանում և երբեմն նաև ցանկություն ունենում իր դաշնակիցներին համապատասխան աջակցություն ցույց տալ: Պետությունների ղեկավարների կողմից բարձր մակարդակով ձեռք բերված բազմաթիվ պայմանավորվածություններ գործնականում փաստացի չիրականացվեցին: Հարկ է նշել նաև, որ ՀԱՊ-ը շեշտը դրել էր հիմնականում տարածաշրջանային անվտանգության համակարգի վրա, որն ավելի շուտ իրենից ներկայացնում էր երկողմանի հարաբերություններ՝ ռուս-բելոռուսական, ռուս-հայկական, ռուս-ղազախական և այլն: Անդամ երկրների համար հաճախ չէին համընկնում անվտանգության շուրջ ունեցած հիմնական խնդիրների լուծման եղանակները: Այսպես, օրինակ 2000-2001 թթ. կենտրոնական ասիական երկրների համար սուր խնդիր էր դարձել ահաբեկչության և արմատականության դեմ պայքարը, մինչդեռ Հայաստանի և Բելոռուսիայի աշխարհագրական դիրքերն այնպիսին էին, որ, օրինակ, Աֆղանստանից եկող ահաբեկչության և արմատականության վտանգն այնքան էլ առաջնային նշանակություն չունեցավ: Նոր հազարամյակի նախաշեմին ՀԱՊ անդամ երկրները բախվեցին մի շարք հիմնախնդիրների: Սուր հարց էր մնում Աֆղանստանի իրավիճակը և այնտեղից եկող վտանգը կենտրոնաasiական երկրներին: Այս ամենի արդյունքում երկրները կանգնեցին արագ տեղակայման անվտանգության ուժերի ստեղծման

¹² Stu՝ **Пивовар Е.И.**, նշված աշխատություն, էջ 66:

¹³ Stu՝ **Довгань Е.Ф., Розанов А.А.**, նշված աշխատություն, էջ 24:

անհրաժեշտության առջև, որն սկզբում նախատեսված էր կենտրոնական ասիական երկրների համար և հետագայում նոր արդեն ՀԱՊ մյուս այն երկրների, որոնցիցնկառաջանալը ընդհանուր խաղաղությանը և անվտանգությանը սպառնացող վտանգ: Այսպիսով այս ամենի արդյունքն եղավ այն, որ ընդհանուր անվտանգությանը ուղղված ՀԱՊ-ի հիմնարար փաստաթղթերում առկա կարևորագույն կետերը բյուրեղացնելու և ավելի արդյունավետ գործելու համար պայմանագրի անդամ երկրները որոշեցին գնալ այնկազմակերպության վերածելու ուղղով: Նման միտման համար հատկապես մեծ ազդեցություն ունեցան 2001թ. ստեպտեմբերյան ահաբեկչությունից հետո Աֆղանստանում ծավալված հակաահաբեկչական ռազմական գործողությունները, որոնց աջակցություն ցույց տվեցին Կենտրոնասիական ՀԱՊ անդամ երկրները՝ թույլատրելով իրենց տարածքներում ԱՄՆ և ՆԱՏՕ-ի անդամ երկրների զինված ուժերի տեղակայում: Այս ամենի արդյունքում առաջացել էր պարադոքսալ իրադրություն, մի կողմից ԱՄՆ-ի ռազմական ուժերն էին ներկա տարածաշրջանում, մյուս կողմից՝ Ռուսական ռազմակայանները: Իսկ ՀԱՊ արևմտյան պատասխանատվության գոտում մեծացել էր ՆԱՏՕ-ի ընդարձակման վտանգը ԱՊՀ անդամ երկրների հաշվին: Նման իրադրությունը նախ, ՀԱՊ-ի արևմտյան սահմաններից մինչև Կենտրոնական Ասիա կարող էր մեծացնել ԱՄՆ-ի ազդեցությունը, մյուս կողմից էլ կնպաստեր Աֆղանստանից ահաբեկչական խմբերի, թմրանյութերի և անօրինական միգրացիայի ներթափանցման վտանգի մեծացմանը:

Այս ամենին որպես հակակշիռ անհրաժեշտություն առաջացավ միասնական անվտանգությանն ուղղված պայմանագիրը վերածել կազմակերպության: 2002 թ. հոկտեմբերի 7-ին Մոլդովայի մայրաքաղաքում՝ Քիշինյոմ ԱՊՀ երկրների ղեկավարների նիստի ժամանակ ՀԱՊ անդամ երկրների ղեկավարները ստորագրեցին վերջինիս ՀԱՊԿ-ի (Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպություն) փոխակերպման մասին կանոնադրական փաստաթղթերը:

Բանալի բառեր - Խորհրդային Միության փլուզում, անվտանգություն, Հավաքական Անվտանգության Պայմանագիր, ՀԱՊ, աշխահաքաղաքական, ռազմաքաղաքական, Ռուսաստան, հետխորհրդային տարածաշրջան, միասնական անվտանգության համակարգ, պայմանագիր, մարտահրավերներ, տարածաշրջան, կազմակերպություն, ՀԱՊԿ:

Բորիս Դազարյան, Հավաքական անվտանգության պայմանագիրը և ռազմաքաղաքական իրադրությունը 1992-2002 թվականներին - Հոդվածի նպատակն է ցույց տալ Խորհրդային Միության փլուզումից հետո անվտանգության ապահովմանը ուղղված խնդիրներում առաջացած ծանր

իրադրությունը նորանկախ երկրներում, Հավաքական Անվտանգության Պայմանագրի (ՀԱՊ) կնքմանն ուղղված ջանքերը, դրա զարգացման նախադրյալները, նպատակները, աշխարհաքաղաքական և ռազմաքաղաքական իրադրությունը ՀԱՊ-ի շուրջ: ԽՍՀՄ փլուզումից հետո Ռուսաստանը հետխորհրդային տարածաշրջանում միակ երկիրն էր, որը ունակ էր գլխավորել նոր միասնական անվտանգության ձևավորվելիք համակարգը, բայց և պարզ է դառնում, որ ոչ բոլոր հետխորհրդային երկրներն էին շահագործված նման անվտանգության գոտում հայտնվելուն: Մի շարք արտաքին և ներքին պատճառներով պայմանավորված, որպես անվտանգության միասնական համակարգի՝ ՀԱՊ-ի ստորագրումով և ձևավորումով չէին լուծվում պայմանագրի անդամ երկրների դեմ ծառացած անվտանգության մարտահրավերները, քանի որ դրանք տարբեր տարածաշրջաններում տարբեր էին: Ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակը, նոր մարտահրավերների առկայությունը և մեծացումը ՀԱՊ անդամ երկրներին 2002 թ-ին հանգեցնում է ՀԱՊ-ի կազմակերպության վերափոխմանը, որի արդյունքում ստեղծվում է ՀԱՊԿ-ը:

Борис Казарян, Договор о Коллективной Безопасности и военно-политическая обстановка 1992-2002гг. - Цель статьи - показать крайне тяжелую обстановку в вопросе по обеспечению безопасности в новоявленных независимых государствах после распада Советского Союза, усилия, направленные на подписание Договора о Коллективной Безопасности (ДКБ), предпосылки его развития, его цели, геополитическую и военно-политическую обстановку вокруг ДКБ. После распада СССР Россия была единственной страной на постсоветском пространстве, которая была способна возглавить формирующуюся единую систему безопасности, однако стало ясно, что не все постсоветские страны были заинтересованы вступить в подобную зону безопасности. С формированием и подписанием ДКБ, в качестве единой системы безопасности, проблемы в вопросах безопасности, возникшие по ряду внешних и внутренних причин, с которыми сталкиваются государства-члены договора, не были решены, поскольку они были разными в разных регионах. Созданная военно-политическая обстановка, наличие и увеличение новых вызовов перед государствами-членами ДКБ привели в 2002 году к реорганизации ДКБ, в результате которой сформировалась ОДКБ (*Организация Договора о коллективной безопасности*).

Boris Ghazaryan, The Treaty of Collective Security and military-political situation 1992-2002 - The aim of this article is to show the difficult situation, which came up after the collapse of Soviet Union when newly independent countries took measures to alleviate the problems and provide security. Also to show the efforts of concluding Treaty of Collective Security, prerequisites of its development, aims, geopolitical and military-political situation around CST. The collapse of USSR Russia

was the only state in post soviet region which was capable of leading the system of collective security which was being created, but it became clear that not all the post soviet states were interested to be in such a security zone. Because of several internal and external reasons, conclusion of treaty of CST as a system of a collective security was not a solution for challenges that were in the way of treaty member states as they were different in different regions. The created military-political situation, the availability and increase of challenges before CST member states in 2002 led to conversion in to CSTO as a result which CSTO was established.

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆՆ ՈՒ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԸ ԷԴՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ «ՄԱՏԱՆԻ ԿԱՄՈՒՐՋ» ՎԵՊՈՒՄ ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ, ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

Անկախության տարիների արձակում մեծ տեղ են գրավում բանահյուսական՝ դիցաբանական-առասպելական թեմաների նորովի արծարծումները, ինչը յուրահատուկ դրսևորումներով հանդես է գալիս նաև մանկապատանեկան արձակում:

Մանկագիր գրողները նույնպես, անդրադառնալով այդ թեմաներին, փորձում են դրանք լուսաբանել նորօրյա իրադարձությունների համապատկերում, ինչը, անտարակույս, «կոնկրետ իմաստ ունի և թելադրվում է գրական պրոցեսի օբյեկտիվ օրինաչափությամբ»:¹

Ակադեմիկոս Ս. Սարինյանը այս տեսանկյունից կարևորում է «պատմական հիշողություններից ու հավասարակշռված տրամաբանությունից դուրս ներկա աշխարհն ու իրադարձությունները հնագույն առասպելների, խորացված, բյուրեղացված հիշողությունների մեջ»² տեսնելը, ժամանակի շարժնթացի տարբեր հանգրվաններում ներկայացնելը:

Բանահյուսական, դիցաբանական, առասպելական թեմաներն ու մոտիվները նորօրյա իրադարձությունների համապատկերում է ներկայացնում Էդուարդ Միլիտոնյանը «Վահանգ վիշապաքաղի արկածները» և «Մատանի կամուրջը» վեպերում, որոնք, անկասկած, անկախության տարիների մանկապատանեկան արձակի լավագույն, ցավոք, ոչ հաճախ հանդիպող, ստեղծագործություններից են:

Այս ստեղծագործություններն աչքի են ընկնում ճանաչողական ու դաստիարակչական նպատակաուղղվածությամբ: Գրված են ընթերցողի համար մատչելի ոճով, գեղեցիկ, անպաճույճ հայերենով: Կառուցվածքային տեսանկյունից այս ստեղծագործություններն աչքի են ընկնում պարզությամբ, պատկերները հմայիչ են, ինչը շատ կարևոր հանգամանք է մանկապատանեկան գրականության համար, ծավալվում են առանց ճյուղավորումների, առանց հեղինակային ավելորդ միջամտությունների:

«Մատանի կամուրջը» վեպում Էդ. Միլիտոնյանն իրականի ու երևակայականի հետաքրքիր համադրումների ու հակադրությունների միջոցով փորձում է ներկայացնել արդիական հնչեղություն ունեցող հարցադրումներ՝ գուգադրելով սատիրան և հումորը, հիպերբոլան ու լիտոտան:

¹ Սարինյան Ս; Հայ գրականության երկու փուլը, Եր; 2004, էջ 142:

² Նույն տեղում, էջ 443:

Վեպում ներկայացված գործողությունները տեղի են ունենում կոնկրետ ժամականաշրջանում ու ծավալվում են տարածական կոնկրետ հարթության շրջանակներում: Վեպի հերոսները՝ Արեգը և Կարենը, «ծնվել են Հայաստան երկրի Միսիան գավառի Անգեղակոթ գյուղում, որի անունը գալիս էր հազարամյակների խորքից և հուշում էր հինավուրց ասքերի, լեգենդների, աժդահանների, հերոսների, վիշապների, աստղագետների ու էլ մտքովդ չի անցնի՝ ինչ տարաշխարհիկ բաների մասին»:³ Ճիշտ է, գործողությունների ծավալման ժամանակաշրջանը մեր օրերն են, բայց հեղինակն իր հերոսներին երազների միջոցով տանում է մերթ միջնադար, մերթ՝ ապագա՝ ժամանակի տարբեր հոսքերը (անցյալ-ներկա-ապագա) շաղկապելով իրար, անցյալի ու ներկայի համապատկերում ներկայացնելով իր հերոսների ապագայի տեսլականը:

Արեգն ու Կարենը «ամեն օր իրար հետ բարձրանում էին մոտակա բլուրները, վերնից նայում Անգեղակոթի առօրյա իրադարձություններին, ինչպես բոլոր պատանիները, երազում մեծանալ, արագ խառնվել աշխարհի անցողարձին» (5): Նրանց երազներում իրենց ստեղծած երկիրը նման չի լինելու այս երկրին, ուր «հազար տեսակ պանրագլուխներ, հազար տեսակ գլխարկներով տարօրինակ ու բազմազան իրականություն են կազմում՝ նույնքան տարօրինակ օրենքներով» (6):

Տղաներից յուրաքանչյուրն իրեն պատկերացնում է նորստեղծ երկրի օրենսդիրների շարքում, որոնց օրենքները կլինեն «ցանկալի անգամ կենդանիների ու բույսերի համար»:

Նոր ծրագրերի մասին են մտածում տղաները, պետականաշինության նոր ձևերի մասին. «Ի՞նչ ծրագրեր են բերելու, աշխարհի ոչ մի քաղաքագետ չի մտածել ու չի մատձելու նման պետականաշինության մասին» (9):

Նրանց երազած երկիրը միացյալ պետություն է լինելու, և կիսատ-պռատ օրենքները չեն արտահայտելու միայն վերևների կամքը, այլ՝ «ողջ երկրի քաղաքացիների ազատ ու անկաշկանդ ապրելու կամքը» (12), իսկ դրա համար անհրաժեշտ է նոր սահմանադրություն, և անհրաժեշտ է, որ այն գրվի արևածագին. «Վաղ առավոտյան կգրեմ վերջին պարբերությունը, արևի լույսով լուսավոր կլինի, վերջապես սահմանադրությունն էլ պիտի լավատեսական թրթիռ հաղորդի իր քաղաքացիներին» (13):

Երազների երևակայական ոլորտներից Էդ. Միլիտոնյանը իր պատանի ընթերցողին տեղափոխում է իրականություն, ուր նրանք շփվում են տարբեր մարդկանց հետ: Հեղինակն իր ընթերցողին ներկայացնում է լեռնաշխարհի մարդկանց, նրանց սովորույթները, դարերից եկած ու անխաթար պահպանված ավանդույթները, աշխարհընկալման յուրահատուկ եղանակները, բնության ու

³ **Միլիտոնյան Էդ.**, Սատանի կամուրջը, Եր: «Ծիծեռնակ» հրտ, 2012, էջ 5: Այսուհետև շարադրանքում կնշվի միայն էջը:

մարդու կապերի վերաբերյալ նրանց պատկերացումները, որոնք կարող են լայնացնել ընթերցողի իմացությունների շրջանակները:

Իրենց հող ու ջրին նվիրված մարդիկ են անգեղակոթցիները և ապրում են արդար քրտինքով: Տարիների փորձով իմաստնացած, հազար ու մի փորձանքների միջով անցած, արժանապատիվ կերպով ապրած մարդիկ են հովիվ Ավագը, ջրադացպան Մգրոն, աղքատ Հագոն, Արեգի հայրը՝ Պողոսը, ովքեր ունեն իրենց կարգախոսը. գյուղում ապրելը դժվար է, դժվար է բնության արհավիրքների դիմակայելը, երեխա մեծացնելը, նրանց դաստիարակելը, սակայն «եթե ծնվել ես այստեղ, պիտի հարմարվես ու պատրաստվես հետաքրքիր ու դժվարին կյանքի» (15):

Վեպում Միլիտոնյանի ոճը հետաքրքիր է այն առումով, որ վարպետորեն միահյուսում է երգիծականն ու սովորական պատումը, հումորն ու թեթևակի զավեշտը նրա հորոսների կտրում են առօրյա հոգսերից ու մտածմունքներից, թեթևացնում նրանց բեռը:

Հումորով է շաղախված հովիվ Ավագի ամենասովորական դեպքերի վերաբերյալ պատմությունները.

- Բոլոր ոչխարներին ճանաչու՞մ ես,- հարցրեց Արեգը:
- Բա ո՞նց, անուն ազգանունով, տիրոջ անուն հայրանունով, տոհմական կոչումով, մի գյուղ ենք, իրաի չիմանա՞ք: (8):

Բնության մի մասնիկն են նրանք, և բնության նկատմամբ ունեցած անսահման սերը՝ ավելինճիշտ պաշտամունքը փոխանցվում է սերնդեսերունդ: Բնությունը ոգեշնչման աղբյուր է նաև Արեգի ու Կարենի համար, ովքեր, ճիշտ է, ապագա երկրի սահմանադրությունն են, գրում, օրենքներ են մշակում, բայց և հասցնում են զմայլվել բնության գեղեցկություններով. «Ինչ ուզում ես ասա, գյուղում ապրելն էլ իր հմայքն ունի, գյուղում ամռան անձրևը հաճելի է, ուզում ես հանել շորերդ ու վագել շեղակի տաք շիթերի միջով, քաղաքը՝ քաղաք է, գյուղը՝ գյուղ, քաղաքում չես ասի՝ արևը կանաչ է, դաշտը՝ ծաղկազարդ», - ասաց Կարենը:

Սահմանադրություն «գրելու, և օրենքներ մշակելու ընդմիջումներին» տղաները «թեթևորեն բարձրանում էին բլուրի արահետով, նայում էին շրջապատի կանաչ տարածքների մեջ տեղ-տեղ բուսած վայրի մանուշակներին, կորնգանին, տուղտի դեղին, խոշոր ծաղիկներին, ու երկուսն էլ իրենց ներսում լցվում էին թավշե ներշնչանքով, պատանկեկան խինդով» (16):

Բնականաբար, ինչպես իրական կյանքում, այնպես էլ երազներում, շատ-շատերն են խանգարում նոր սահմանադրություն մշակել ու բոլորի համար ընդունելի օրենքներ գրել՝ Այդ խանգարողներին: Էդ. Միլիտոնյանը վեպում ներկայացնում է տարատեսակ սատանաների կերպարներով, որոնք հաճախ հետապնդում են տղաներին, զոդանում, սահմանադրության ու օրենքների՝ դեռևս չմշակված օրինակները: Նրանք չեն ուզում ապրել նոր երկրում, ուր պիտի

սովորական մարդիկ ու իրենց նման սատանաներն ապրեն որպես իրավահավասարներ: Չեն ուզում հարկեր վճարել, աշխատել օրինական դաշտում: Ուզում են ենթարկվել միայն Սատանապետին, շահել նրա սիրտն ու վստահությունը: Բայց այդպես երկար շարունակվել չէր կարող, և գրողը իրադարձությունների զարգացան ընթացքի մեջ է ներքաշում Բարի ծերուկ հեքիմ Բաղդասարին, որն ապրում է Սատանի կամրջի մոտ՝ առողջարանում, ուր կարող են բուժվել բոլորը, անգամ սատանաները, որոնք կկարողանան վերափոխվել, ընտրությունների ժամանակ կողմ քվեարկել Արեգի ու Կարենի ներկայացրած սահմանադրական նախագծերին:

Բարի ծերուկ հեքիմ Բաղդասարը ժողովրդական իմաստությունն է մարմնավորում իր մեջ, նրա աշխարհընկալումն ու փիլիսոփայությունը:

Միասնության ու համերաշխության կոչ է անում ծերուկ Բաղդասարը բոլորին և ուզում է, որ Արեգի ու Կարենի երազած ապագայում հաղթողներ ու պարտվողներ չլինեն. «Ես առաջարկում եմ վերադառնալ միացյալ երկրի գաղափարի, ետ բերել պարտվողներին ու հաղթածներին, նրանք նույնն են, միավորվեք և հաշտ ու խաղաղ ապրեք նոր երկրի օրհներգի հնչյունների տակ» (34):

Էդ. Միլիտոնյանը «Սատանի կամուրջը» վեպում իրականն ու երազայինը ներկայացնում է առանց գույները խտացնելու, պատանի ընթերցողին հետաքրքիր պատմելաժողով, սյուժեի շարժընթացում հանգուցալուծումը դարձնելով փաստարկված ու պարզ:

Մանկապատանեկան գրականության կարևոր յուրահատկություններից մեկն այն է, որ ստեղծագործությունը պետք է ավարտվի բարու հաղթանակով, այդպես է ավարտվում նաև «Սատանի կամուրջը» վեպը. Անցնելով մի շարք փորձությունների միջով, բախվելով բազմաթիվ դժվարությունների՝ Արեգն ու Կարենը ողջ և առողջ վերադառնում են հայրենի գյուղ՝ Անգեղակոթ, որտեղից եկող «խնջույքի գինեվետ աղմուկը հասնում է Բաղդասար պապին, ով իր դիտակետից հսկում է սատանի կամրջի անդորրը» (142):

Բանալի բառեր – Հրացան, ներկա, ապագա, միջնադար, ոհմակ, արահետ, Որոտան, Սատանի կամուրջ:

Մեկինե Գիլավյան, Ջոյա Պողոսյան Իրականն ու երևակայականը Էդուարդ Միլիտոնյանի «Սատանի Կամուրջը» վեպում – Հոդվածում փորձ է արվում Էդուարդ Միլիտոնյանի վեպում բացահայտել իրականի ու երևակայականի փոխկապվածության եզրերը, լուսաբանել գրողի՝ առասպելա-դիցաբանական թեմաների ու մոտիվների՝ ժամանակակից հասարակական-քաղաքական զարգացումների համապատկերում ներկայացնելու մեթոդները:

Мелине Гилавян, Зоя Погосян, Реальность и ирреальность в романе Эдварда Милитоняна «Дьявольский мост» – Статья пытается выявить недостатки

реальности и ирреальности в романе, осветить методы представления писателя, легендарно - мифологические темы и мотивы в свете новых эпох.

Meline Gilavyan, Zoya Poghosyan, The real and imaginary in Edward Militosyan's "Devil's bridge" novel - The article attempts to reveal the borders of interconnection between reality and imaginary in the novel and cover the writer's methods of presenting the mythological themes and motives in the context of modern era.

**ԿՈՐՈՒՍՑԱԼ ԵԶԵՐՔԻ ԿԱՐՈՏԸ ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐԶԱԿՈՒՄ
ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ**

Աշխարհաքաղաքական զարգացումները միշտ էլ պայմանավորված են լինում որոշակի հանգամանքներով և աշխարհագրական տարբեր հարթություններում դրսևորվում են յուրահատուկ կերպով: 21-րդ դարասկզբին համաշխարհային ասպարեզում «տիրապետում են երկու հակադիր սկզբունքներ՝ համաշխարհայնացում (գլոբալիզացիա) և ազգային առանձնահատկությունների, ինքնության շեշտադրություն: Ժողովուրդների և նրանց մշակույթների համահարթեցման պայմաններում երկրների ու ժողովուրդների միջև պայքար է գնում մշակութային ժառանգության ազայնացման, ազգերի ինքնության հաստատման համար, որը հաճախ զարգանում է անկախ պետականությունների ստեղծման գործընթացներից հետո»:¹

Համաշխարհայնացման մարտահրավերներին դիմակայելու լավագույն միջոցներից մեկը պատմական հիշողության պահպանումն է, որը մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության կարևորագույն հիմնախնդիրներից է, քանի որ համացանցը, տեղեկատվական բազմաթիվ այլ միջոցները երեխաներին կամա թե ակամա դաստիարակում են աշխարհաքաղաքացու հոգեբանությամբ, փորձում կտրել ազգային ակունքներից, սնել օտար երկրներում երջանիկ ապագայի կեղծ խոստումներով:

Ակադեմիկոս Ս. Սարինյանը, կարևորելով ազգային ինքնության պահպանմանն ուղղված գրողների ջանքերը, գրում է, որ դրանք հնարավոր են դարձնում «գեղարվեստական նոր փոխաձևման միանգամայն խորիմաստ ու հետաքրքրական հիշողությունների ենթաշերտերում հայտնաբերել ոչ միայն ազգային լինելիությունը հաստատող կայուն նստվածքներ, այլև եթնիկական ու փիլիսոփայական հարուստ արժեքներ, որոնք գրականությանը մղում են դեպի համամարդկային ոլորտներ, ընդլայնում նրա ներքին կարողությունը»:²

Մեր գրականության մեջ կորուսյալ եզերքի, նրա հետ կապված հիշողությունների, ցավի, Եղեռնի ողբերգական հիշողությունների, այդ իրադարձությունների ընթացքում նաև հերոսական մաքառումների մասին շատերն են գրել: Հիշենք թեկուզ Ս. Խանգադյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպը, «Վեց գիշեր», «Մեռածները հրամայում են» վիպակները, Մ. Գալշոյանի պատմվածքները, Խ. Դաշտենցի «Խոշեղանը» և ուրիշներ, որոնց մեջ կան նաև պատանի հերոսներ: Ռ. Շառոյանը, բնականաբար, իր մանկապատանեկան

¹ **Քալանթարյան Ժ**; Ազգային ինքնության փիլիսոփայությունը էպոսում կամ՝ ըստ Լևոն Վետոյանի, "Գիտական թերթ", 2014, N 13:

² **Սարինյան Ս**; Հայ գրականության երկու դարը, Եր; 2004, էջ 442:

արձակում, շարունակելով ավագների փորձը, ազգային ինքնության ու արժանապատվության պահպանման հարցերին անդրադառնում է նոր մոտեցումներով, ընթերցողին հասկանալի պատումի ինքնատիպ ոճով:

Պատանի ընթերցողին հասցեագրված նրա ստեղծագործությունները ներկայացված են պատմվածքների «Ամպշող արև» ժողովածուում (2001թ., «Լուսակն» հրտ), որտեղ զետեղված «Մառախուղ», «Հիշողության վարձ», «Էրգրի աստվածները», «Ամպշող արև», «Մեր ժամանակի թախիծը», «Մայրամուտի գույնը», «Դեպի մեծ աշխարհ» պատմվածքները աչքի են ընկնում ճանաչողական ու դաստիարակչական նշանակությամբ: Այդ պատմվածքների հերոսները տոհմիկ սասունցիներ են, ովքեր բնավորվելով Աշնակ գյուղում, ապրում են կորուսյալ եզերքի անմահ կարոտով, հիշողությունների, երագների աշխարհում:

Շինական մարդիկ են նրանք, հողի հետ արմատներով կապված աշխատավորներ, ովքեր ծառ են տնկում, խոտ են հնձում, անասուն են պահում, երեխաներ են դաստիարակում՝ նրանց մեջ սերմանելով բարության, հանդուրժողականության, ազգային արժանապատվության պահպանման հանդեր:

Կյանքի, անցավորի ու մնայունի, մարդկային հարաբերությունների, ընտանիքի սրբության վերաբերյալ ինքնատիպ պատկերացումներ ունեն Սամոն, Միրոն, քեռի Հայրոն, Մարիամը («Հարյուր կռունկ»), Մերոբը, Ավոն («Մառախուղ»), պատանի Իշխանյան Մակարը («Դեպի մեծ աշխարհ») և ուրիշներ: Տարբեր սերունդների ներկայացուցիչներ են նրանք և ամբողջացնում են տոհմի, ցեղի, ազգի համապատկերը: Ժողովրդական իմաստության կրողներ են աշնակցի պապերը, որոնք անցել են դարասկզբի տառապանքների պարունակներով, եկել նոր տուն ու տեղ են դրել, որդիներին ուղարկել պատերազմ, որովհետև գենետիկ կապեր են տեսել Թախաթի, Էնվերի ու Հիտլերի միջև:

Եղեռնի շարունակությունն է Հագո պապի համար Մեծ հայրենականը, որը տասնամյակներ էլ անց դեռ չի վերջացել, որովհետև «տուն չկար, մայր չկար, քույր ու եղբայր չկար, որ սև թուղթ ու վերջին նամակի անընթեռնելի մի կտոր չունենար պահած՝ բարձի տակ, ծոցագրպանում, ծիրանի ծառի տակ թաղված, լուսանկարի ինքնաշեն շրջանակի անկյունում, «Նարեկի» թերթերի մեջ և Ավետարանի նույն անունը կրող գլխում»³ («Մառախուղ»), բայց կյանքը շարունակվում է, և Հագոն, Ավոն, Միրոն և նրանց նման շատերը պիտի մեծացնեն իրենց գոհված զավակների որդիներին, թոռներ ունենան, երջանկանան նրանցից յուրաքաչյուրի ծննդով. «Պապդ լաց էր լինում, որ թոռ ունի, քեզ սիրում ու լաց էր լինում, ուրախությունից էր լաց լինում» (9, «Հարյուր կռունկ»):

³ **Շառոյան Ռ.** Ամպշող արև, Եր: «Լուսակն» հրտ; 2001, էջ 38: Այսուհետև շարադրանքում կնշվի միայն ժողովածուի էջը:

Հարազատ երկրին արմատներով կապված մարդիկ են աշնակցի պապերը: Նրանք չափավոր ապրելակերպ ունեն և նրանց համար միայն մի ճշմարտություն կա. «Աշխարհում երկու ուժեղ բան կա, մարդը ու հողը, երկուսն էլ ստեղծում են, բայց մարդը մեռնում է, հողն առնում է նրան իր մեջ և դառնում է հզոր» (21, «Հարյուր կոունկ»): Այս կարգախոսով են նրանք դաստիարակում իրենց թոռներին, և նրանց անհասկանալի է, թե ինչպես է լինում, որ շատերը գնում են քաղաք ու այլևս չեն վերադառնում. «Գնացիր քաղաք, սովորեցիր, էլ չես ուզում գալ, ասում ես ժամանակ չունեմ: Էդ ի՞նչ ժամանակ է, որ չունես, որտե՞ղ է ժամանակը: Արի գյուղ, քեզ էնքա՛ն ժամանակ տանք: Ժամանակ շատ կա: Մեր թաղի ոչխարը մեր հերթին կառնես առաջդ ու հայդա՛, մյուս օրն էլ հորեղբորդ հերթն է, էն մյուս օրն էլ հորքուրինդ, եթե կուզես՝ մեր հարևանի հերթին էլ դու քշիր, քեզ միշտ ոչխարի մածուն էր ուղարկում: Ժամանակ չկա՞... Հերդ զգվեց ողջ ձմեռ նարդի խաղալով» (8, «Հարյուր կոունկ»):

Սասունցի պապերն իրենդ թոռների մեջ խորացնում են պատմական հիշողությունը, կորուսյալ եզերքի պատկերների միջոցով խորացնում այդ հիշողության նստվածքը:

Հարյուրամյա Ավոյի երագների միջոցով Ռ. Շառոյանն իր պատանի ընթերցողին նկարագրում է հայ ֆիդայիների մղած հերոսամարտերը, նրանց տանում Սասնա լեռները, թերթում ֆիդայական մաքառումների հերոսական էջերը:

Թոռնուհին լսում է մահամերձ պապի կցկտուր պատմությունները, և նրա մտապատկերներում ուրվագծվում են ֆիդայիները՝ սպառազեն, ուժեղ, բայց անսահման բարի աչքերով: Նրանցից մեկն էր Տեր Ստեփանը: Երեք օր առաջ ֆիդայիներ Աղջեն ու Արթենը սպանել էին պարսպամուտը վառողի տակառով պայթեցնել փորձող ասկյարներին և հիմա նրանց դիակները տանելու եկած բանագնացներին Տեր-Ստեփանը ֆիդայական դասեր է տալիս.

- Ձեր Աստված սիրեք, ձեր աստծո անունից եք խնդրում թողեք մեր երեք սպանվածների դիակները տանենք,- ասում են բանագնացները:
- Աստծո անունի՞ց եք խոսում, Աստված սիրելու՞ց եք խոսում, դա՞՞ է ձեր իրավունքը, իսկ ձեր անունից ոչ մի խոսելու իրավունք չունեք, ոչ մի բառ չունենք, Դուք մեզ անհավատ եք կոչում, բայց երկրորդ ամիսն է պաշարման մեջ ենք, և դուք, որ հազարապատիկ շատ են մեզնից, բոլոր նենգ ու ստոր միջոցներին դիմելուց հետո անգամ չկարողացաք և էլի չեք կարողանա կոտրել մեր հավատը, որովհետև մենք մեր հողի վրա ենք, մեր ծնկները երբեք չեն կքվի: Կորեք ձեր դիակների հետ միասին,- պատասխանում է Տեր-Ստեփանը (93, «Հիշողության դարձ»):

Ռ. Շառոյանի պատմվածներում Աշնակը դառնում է Սասնա աշխարհի մի մասը, իսկ Աշնակում ապրող տարբեր սերունդները՝ տոհմաձառի ճյուղերը:

Տոհմածառը նոր ճյուղեր է տալիս, նրա արմատները ավելի խորն են ներթափանցում մայր հողի մեջ և կենարար լիցքեր ստանում:

Այդ պատմվածքներում աննշան թվացող դեպքերն ընդլայնվում են և ինչպես նշվում է տեսության մեջ, «Զգայական-մտային հոսքի մեջ սրվում, պայծառանում են հնագույն պատկերների մասնրմասները»⁴: Ժողովածուի պատմվածքների պատանի հերոսները պապերի ու հայրերի պես նվիրված են հայրենի եզերքին, բնության մի մասնիկն են նրանք, և անգամ, եթե նույնիսկ հայրենի գյուղում չեն, ապրում են նրա հոգսերով, ուր էլ որ լինեն, վերջիվերջո հայրենիք են վերադառնալու:

Այսպիսիներից մեկն է «Դեպի մեծ աշխարհ» պատմվածքի տղան: Որդին ցանկանում է գնալ քաղաք, սովորել, մայրը ցանկանում է, որ տղան մնա գյուղում. «Թող սովորի, թող լավ քաղվոր դառնա, ուր էլ որ գնա՝ պետք կգա, աշխարհում շատ խոտ կա, էնքան անտեր մնացած խոտ կա» (295, «Դեպի մեծ աշխարհ»):

Տղան մտածում է, որ սովորելուց հետո պիտի կարողանա թեթևացնել համգյուղացիների հոգսերը. «Միացող կրակի պես մի բան քորում է նրա կոկորդը, տեսնում է հորն այստեղ, այս տանիքին, մի թիզ հողի վրա ծնկած, մանգաղը ձեռքին գարնան մատղաշ խոտ քաղելիս գառների համար» (296, «Դեպի մեծ աշխարհ»):

Կորուսյալ եզերքի թեմայով գրված Ռ. Շառոյանի պատմվածքներն ունեն ճանաչողական ու դաստիարակչական կարևոր նշանակություն, և խիստ կարևոր կարող են լինել մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության նպատակաուղղված կազմակերպման, նրանց պատմական հիշողության ամրապնդման, ամբողջ կյանքի համար օգտակար դասեր խաղելու առումներով:

Բանալի բառեր – Հիշողություն, մառախուղ, կարոտ, թախիծ, բույր, դեպի մեծ աշխարհ, մայրամուտի գույն, սառը լույս, պատմական հիշողություն:

Զոյա Պողոսյան, Կորուսյալ եզերքի կարոտը Ռոլանդ Շառոյանի մանկապատանեկան արձակում - Ռոլանդ Շառոյանի ստեղծագործությունների առանցքային թեմաներից մեկը կորուսյալ եզերքի կարոտի թեման է: Այդ թեմայով գրված պատմվածքներից շատերի հերոսները Եղեռնից հրաշքով փրկված սասունցիներն են, որոնք բնավորվել են գրողի ծննդավայրում՝ Աշնակում, նրանց զավակներն ու թոռները: Հռչակվածում փորձ է արվել բացահայտել, թե ինչպես է Ռ. Շառոյանը աշխատում վառ պահել մանուկ ընթերցողների պատմական հիշողությունը, արյան կանչին հավատարիմ մնալու հեղել պատգամներ նրանց:

Зоя Погосян, Тоска по потерянным краям в детско-юношеской прозе Роланда Шарояна - Одна из основных тем творчества Роланда Шарояна – тема

⁴ Ու. Ուելլեր, Օ. Ուորրեն, Գրականության տեսություն, Սարգիս Խաչենց, Ֆրիմտ ինֆո, Եր; 2008, էջ 315:

тоски по потерянным полосам . Героями рассказов, написанных по этой теме, являются сасунцы, которые чудесным образом выжили из Геноцида, которые поселились на родине писателя- в деревне Ашнак, их внуки и дети.

Статья пытается выявить, как работает автор, чтобы сохранить историческую память читателя. Посылать им требования, чтобы оставаться верными зову кровотока.

Zoya Poghosyan, Longing (yearning) for the lost land in young children's prose of Roland Sharoyan - One of the main themes of Roland Sharoyan's work is the theme of Longing for Lost Land. The characters of the stories written on this theme are the Sassounians who survived miraculously from the Genocide and settled down in the writer's birthplace Ashnak Village, their grandchildren and children.

The article attempts to reveal how the author strives to keep the child reader's historical memory alive and send them messages to remain faithful to the call of their blood.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԾ ԱՆՀԱՏԸ Ս. ԽԱՆԶԱՂՅԱՆԻ
«ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ» ՇԱՐՔՈՒՄ
ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱՔՅԱՆ

Ժամանակի թելադրանքով գրականությանն առաջադրված ժողովրդի քաղաքական ճակատագրի, նրա գոյատևման առեղծվածի հայտնաբերման, հոգևոր մաքառումների իմաստավորման, նորովի արժևորման խնդիրները յուրատիպ մեկնաբանություններով դրսևորվեցին Ս. Խանզաղյանի «Վարք հարանց» շարքի պատմվածքներում, որոնց մեջ առանձնահատուկ նշվում է ժողովրդի՝ «զենք կռող դարբնոցի ու դպրատան ճանապարհը» չմոռանալու, խաղաղության կարճատև պահերին կառուցելու, արարելու դավանանքը՝ որպես գոյապահպանության հզոր կոժվան:

Այս առումով ուշագրավ է շարքը, որի պատմվածքների մեծ մասը նվիրված է Մ. Մաշտոցին, որի՝ սերունդներին ավանդած մարգարեությունը կարող է բանալի դառնալ ազգի հարատևման առեղծվածի բացահայտման գաղափարական միտումի համար. «Ես գիր տվի ձեզ, որ լույս ունենաք ձեր տանն ու հոգում: Բայց կմարի լույսը, եթե դուք մոռանաք սուր բռնելու գործը: Սուրն ու գիրը ձեզ պաշտպան, հիշեցե՛ք»¹:

«Վարք հարանց» շարքում, պահպանելով պատմության բնորոշ ոգին ու կոլորիտը, Ս. Խանզաղյանը հաճախ շեղվում է Մ. Մաշտոցի կենսագրության պատմական-փաստական կողմերից: Սակայն պատմվածքներում Մ. Մաշտոցին որպես «մեր գոյության ու հիշողության», մեր մեծագույն քաղաքագետի (որի «շահած անարյուն ճակատամարտի հետ չի կարող համեմատվել մեր սպարապետների փառավոր հաղթանակներից և ոչ մեկը»²) ներկայացնելու խանգաղանական միտումը ինչ-որ չափով արդարացնում է հեղինակին:

Մաշտոցի ամբողջ կյանքը կոժիվ է եղել: Նա կոժիվ է թշնամու դեմ, աչքի է ընկել որպես հմուտ զորական, բայց բոլոր կոժիվներից ամենանշանակալիցը եղել է կոժիվը խավարի դեմ՝ հանուն լույսի, հանուն հայոց «այբ ու բենի»:

«Լույսը հնձանից» պատմվածքում Ս. Խանզաղյանը Մաշտոցի առաքելությանն անդրադառնում է՝ հետադարձ հայացքով ընդգրկելով հայոց պատմության հեթանոսական շրջանը, որի բարբերն ու սովորությունները մարմնավորված են բրուտ Առաքելի կերպարում: Վերջինիս ու այգեգործ Առաքելին դարեր են բաժանում, և այդ դարերի համապատկերում է Ս. Խանզաղյանը իմաստավորում Մաշտոցի առաքելությունը:

¹ **Խանզաղյան Ս.**, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Ե., 1983, էջ 544: Այսուհետև բնագրում կնշվի միայն հատորը՝ հոմեական, էջը՝ արաբական նիշերով:

² **Մեակ Պ.**, Երկերի ժողովածու 3 հատորով, հ. 3, Ե., 1983, էջ 31:

Գյուղի անունը Մեսրոպական է: Ծեր այգեպան Առաքելը նայում է գյուղի եկեղեցու քարե նստարաններին՝ «սրանց մոտ այբ, բեն են սովորել իր ապուպապերը, իր պապը, ինքը, որդին, հիմա էլ թոռան ձայնն է լսվում,- Այբ, բեն...» (VI, 516):

Պատմվածքում հեռավոր անցյալի ու ներկայի համադրումը և «Ժամանակների զարմանալի ներդաշնակությամբ մոտեցումն ու միաձուլումը, որոնք խորհրդանշական իմաստ ունեն, «ճշգրտվում ու ստուգվում են գոյատևման կովաններով» (Ս. Աղաջանյան):

«Ժամանակների հանդիպադրումը» տեղի է ունենում Մեսրոպի ու գինեգործ Առաքելի միջոցով: «Գինեգործ Առաքել ապերը այս հողից բուսած ժառանգն է այստեղ՝ հայապատկեր այս Գողթան գավառում, ու նրա գլխի մշուշոտ ծալքերում հնչում է հնամենի գրույցը՝ Մեսրոպի, նրա գրերի մասին»:

Գինեգործ Առաքել ապոր ապուպապը նույնպես Առաքել անունն է ունեցել, Մեսրոպի ընկերն է եղել, երկրպագել է կրակին ու թերահավատորեն է նայել Մեսրոպի գործին. «Եկել է: Ինչի՞նչ է եկել: Ինչո՞ւ հեռացավ գորական կյանքից և կրեց ամենակեցույցի խաչը: Ասում է՝ դպրանոց եմ ուզում հիմնել այստեղ, մանկտիք սնել: Ասո՞ւմ է: Իսկ ի՞նչ լեզվով պիտի կրթի-սնի, ինչո՞վ» (VI, 519):

Մեսրոպը փրկել է Առաքելի կյանքը, երբ միասին գորական են եղել: Նա հիմա բրուտանոցում կավ է հունցում ու լսում է Մեսրոպին. «Ամենքը ձև ունեն, մենք՝ ոչ, բրո՛ւտ Առաքել: Հայոց արևմուտքում հոռովմ լեզուն է գիր մեզ համար, հարավում՝ ասորերենը, արևելքում՝ պարսկերենը, հյուսիսում... հյուսիսը դատարկ է: Ո՞րն է քո հոգու պատկերը: Այդ կուլայի նախշերն ու լեզուն ամենքն էլ ունեն, իրենցը, սեփականը: Դու սեփականը չունես» (VI, 521):

Մաշտոցի համար պատմվածքում ամենաաղժվարինը ժողովրդին, որ մարմնավորված է հեթանոս բրուտ Առաքելի կերպարում, ճշմարիտ հավատի բերելն է. «Անկարգ ու անխնամ ժողովուրդ եք,- խոսեց Մեսրոպ Մաշտոցը... Գերի եք հին մոլորություններին ու վայրենի» (VI, 519):

Ու հավատ է ներշնչում Մաշտոցը բրուտ Առաքելին, հավատ առ այն, որ «քո գրով քեզ չեն շփոթի ո՛չ մարերի հետ, ո՛չ ասորու, ո՛չ բյուզանդացու, ո՛չ էլ մեկ ուրիշի հետ: Գրով կմնա քո լեզուն քոնը, քո գինին՝ հայկական, և քո կուլայի նախշերը կխոսեն հայոց լեզվով» (VI, 521):

«Ես էլ եմ ուզում իմն ունենալ, ես ուզում իմ կուլան իմ լեզվով խոսի: Կարո՞ղ ես, խոսեցրու...» (VI, 521):

Բրուտ Առաքելի թրծած կուլաներն ու կարասները, գինու գավերը նախշազարդված են խաղողի ողկույզներով ու նոներով, գեղանի աղջիկներով, զանազան թռչուններով ու ծաղիկներով. «Անշունչ կավից սիրամարգեր է կերտում, որ ուր որ է կղայլայլեն: Կանացի ոտքի ձևով գինու գավաթներ է ստեղծում բրուտ Առաքելը, վրան դեռատի կնոջ ոտքի ջերմությունը, հրաշք

նախշեր և անսպառ կենդանություն» (VI, 533): Մաշտոցը փոխում է բրուտի պատկերացումներն արմատապես, ու դրանից հետո կուլաներն ու կավերը երիզվում են մեսրոպյան գրերով և հայերեն շնչում, նոր իմաստ են տալիս ու նոր խորքեր բացում, նոր ձևեր տալիս անշունչ կավին: Բրուտի ընկալումներն ավելի կոնկրետ ու առարկայական են դառնում: Հետո մեսրոպյան գրերը միանում են իրար, դառնում տուն, հայրենիք, առասպել ու միֆ, ու նա, որպես պատգամ գալիք դարերին ու սերունդներին, թրծում է կրակի բոցերի մեջ մեսրոպյան տառերով նախշագարդված գինու գավը՝ «գրով շենանա տունն Հայոց, Առաքել լ»...

Գրերի գյուտից հետո հատկապես սահմանամերձ գյուղերում ու ավաններում հիմնվում են դպրոցներ, և հայ ուսուցիչներն ու աշակերտները դառնում են սահմանապահ զինվորներ, երկիր են պահում ու շենացնում:

Հայոց գիրն է հային հայ պահել, տարել բազմաթիվ փորձությունների միջով, ու հիմա բրուտ Առաքելի՝ հայտնի չէ, թե որերորդ թոռը՝ Այգեգործ Առաքելը, հնձանում խաղող է ձմրում ու ականջներում հնչում են նոր-նոր դպրոց հաճախող փոքրիկ Առաքելի ձայնը՝ «Այբ, բեն...»:

Բրուտ Առաքելի՝ նույն անունով տարբեր ժամանակներում ապրած նրա շառավիղների կերպարն անցնում է «Վարք հարանց» շարքի՝ Մաշտոցին նվիրված բոլոր պատմվածքների միջով՝ նորանոր բացահայտումներ անելով մի դեպքում Մաշտոցի կերպարում, մյուս կողմից՝ ամբողջացնելով պատմության հոլովությունում շինական հայ մարդու հավաքական կերպարը:

Տարբեր սերունդների Առաքելների կերպարներում Ս. Խանգաղյանը խորհրդանշում է հողի, հայրենի եզերքի պաշտամունքը՝ որպես մարդու կեցության ու իմաստության ելակետային սկզբունք:

Հոգևոր մաքառումներին ուղղություն են տալիս ժամանակի հրամայականով ասպարեզ իջած հզոր անհատներ, որոնք իմաստության լույս են սփռում, առաջընթացի նոր ճանապարհներ են մատնանշում: Այդ լույսը հետո ճառագում է շինականի խրճիթներում, դառնում օրորոցային ու հորովել, օրհնանք ու մաղթանք: Շինականն է վառ պահում այդ լույսն ու փոխանցում սերնդե սերունդ:

«Լույս հնձանից» պատմվածքի յուրատեսակ շարունակությունն է «Կամուրջ» պատումը. «Անտառապահ Նավասարդը հասավ կամրջին, հմայիլ կտրած նայեց նրա կենտաղեղ կամարին: Ասում են, դե ո՞վ իմանա, ասում են ինքը՝ Մեսրոպ Մաշտոցն է կառուցել, որ հեռու հեռավոր այս օրերին լուսատու ճրագ էր իրենց գյուղում և հիմա էլ ճրագ է տանն համայն Հայոց» (VI, 525):

«Կամուրջ» պատմվածքում Ս. Խանգաղյանը Մեսրոպ Մաշտոցին ներկայացնում է մարդկանց հետ ունեցած առօրյա հարաբերություններում՝ ընդգծելով նրա բարձր արժանիքները, հասարակ մարդկանց հետ շփվելու, հաղորդակցվելու պատրաստակամությունը:

«Կամուրջը» նույնպես գրված է հիշողությունների հիման վրա: Այստեղ նույնպես գրողը ներկայացնում է տարբեր ժամանակաշրջաններ, որոնք արտացոլվում են տարբեր սերունդների ներկայացուցիչների կերպարներում: Գրական այս հնարքը հնարավորություն է տալիս իմաստավորելու ժամանակների կապը, անցյալ-ներկա-ապագա դիալեկտիկական միասնության մեջ հայտնաբերելու այն ընդհանուրը, որով իրար են կապվում ժամանակի շղթայի բոլոր օղակները:

Գրերի գյուտից հետո Մաշտոցն առաջին դպրանոցը բացում է սահմանամերձ գյուղերից մեկում՝ բրուտ Առաքելի հնձանում, ուր դասեր է առնում նաև դեռ Նավասարդը: Ընդամենը հինգ տարի է սովորում դպրանոցում Նավասարդը ու ամուր թելերով կապվում է իր ուսուցչի հետ, նրան վստահում իր գաղտնիքները, կյանքի դասեր առնում նրանից:

Ս. Խանգաղյանի Մաշտոցն այս պատմվածքում իր բնավորությամբ, մարդկային գծերով, բարոյական կերտվածքով ոչնչով չի տարբերվում հասարակ շինականներից: Նրանց հետ հացի է նստում, ուրախանում ու տխրում նրանց հետ, նրանց հետ կովում թշնամիների դեմ, Նավասարդի համար խնամախոսության գնում՝ Մամիկ անունով ջրաղացպանի չքնաղ աղջկա ձեռքը խնդրելու:

Դեռ Նավասարդը գեղեցկուհի Մանանին հարս բերելու համար Մաշտոցի խորհրդով և հարսնացուի հոր պահանջով կամուրջ է կառուցում Ջյունավան գետի վրա, Մաշտոցն օրհնում է կամուրջը, որը դիմանում է դարերի փորձությանը, ինչպես մեսրոպյան «Այբն ու Բենը»:

Դարերի, անհիշելի ժամանակների հոլովությամբ միասնանում են հայի ստեղծագործ միտքը՝ մեսրոպյան «Այբն ու Բենը», ու շինարար ոգին՝ Նավասարդի կառուցած կամուրջը՝ որպես ժողովրդի գոյատևման խորհրդանիշներ:

Մաշտոցյան շարքը Ս. Խանգաղյանը շարունակում է «Խոսում է մագաղաթի պատառիկը» և «Վարք Մաշտոցի» պատումներում, որտեղ նոր կողմերով է ներկայանում ու ամբողջանում Մաշտոցի կերպարը:

Գրերի գյուտն, իսկապես, հրաշք էր, որ փոխեց մեր պատմության ընթացքը, բայց այն նաև պահպանել էր պետք ու ժողովրդին հասանելի դարձնել, որին ձեռնամուխ է լինում Մաշտոցը՝ իր աշակերտներին ուսուցչության ուղարկելով «անկարգ ու անխնամ» տեղերը, որտեղ տեր և տնօրեն էին մոզերը, ովքեր վառում էին հայալեզու գրքերը, ոչնչացնում ձեռագիր մագաղաթները: Մոզերի դեմ զինված պայքար է մղում նաև շինականների գլուխն անցած Մաշտոցը՝ ցուցաբերելով խիզախություն ու քաջություն, իր օրինակով վարակելով շինականներին:

Շրջում է Մաշտոցը հեռավոր ու մոռացված բնակավայրերով, հայտնվում «Որդովատ գյուղում, ուր նրա թուխմորուս աշակերտները զարմանում էին ժայռերի մեջ մտած ժայռակուտակ գյուղով, բացգլուխ, լեզվանի մանուկներով, որոնք նույնիսկ խաչակնքել չգիտեին: Եվ գուցե հենց այդ օրը Կորյունը մագաղաթի վրա գրեց. «Երանելի ուսուցիչը մեր իր աշակերտներին առավ, իջավ Գողթանի անկարգ ու անխնամ տեղերը» (VI, 533):

Մ. Մաշտոցը դպրության լույսը ժողովրդին է հասցնում նաև իր բանաստեղծություններով, որոնց առաջին ունկնդիրները հողագործ շինականներ էին լինում.

- Տուր մեզ, տե՛ր, զխաղաղություն,

Եվ փրկեա ի նեղչաց մերոց...

Բանաստեղծում է Մաշտոցը («Արեգակն արդարության, // Ծագեա ի հոգիս մեր ըզլույս...»), դասեր տալիս իր աշակերտներին, որ թևեր են առնում ու ինքնուրույն թռչում՝ Հայաստան երկրի հեռավոր անկյունները տանելով գրերի խորհուրդն ու հոգևոր լույսը: Մերունդները երկրպագում են այդ լույսն արարողին, կանգնում նրա՝ Կապուտջիղի ծերպերում ծվարած ճգնարանների առջև, «նայում մամռած, բայց չմեռած, մամռոտ, բայց կենդանի գրերին ու շշնջում.

Որ անապական քոյով գորությանբ

Օգնեա՛ ի նեղություն մերում...

Եվ փրկեա՛ ի նեղչաց մերոց...» (VI, 545):

Հայ ժողովրդի ճակատագրին, գոյապահպանության պայքարում հոգևոր մաքառումների անգնահատելի նշանակությանը, ժողովրդի ինքնության նկարագրին են նվիրված «Հայրենի կարգավ», «Ծովի երգը», «Ուղեցույց», «Հակոբ Արմեն», «Քարահերձի թզենին» և այլ պատումներ, որոնց մեջ դարձյալ պատմության դասերը լուսաբանվում են հոգևոր մաքառումների տեսանկյունից՝ մեկ անգամ ևս փաստելով, որ «ոչ միայն հացի...»-ի խորհուրդը յուրաքանչյուր հայ մարդու կարգախոսն է ու փոխանցվում է սերնդեսերունդ:

Ամենադաժան պայմաններում անգամ հայ մարդը չի կորցնում ապրելու իր հաստատակամությունը, բռնությանն ու բիրտ ուժին արարման ոգով ու ստեղծագործ մտքով հակազդելու իր բնածին ունակությունը:

«Վարք հարանց» շարքի պատմվածքներից յուրաքանչյուրը բազում փորձությունների բովով անցած մարդու կենսագրություն է և յուրովի է ներկայացնում ոչ միայն հերոսներին, այլև նրանց ապրած ժամանակը:

Մեծ եղեռնից մագապուրծ եղածներից մեկն է «Հայրենի կարգավ» պատմվածքի Իզա Վարսերը՝ աներևակայելի գեղեցկության տեր մի հայ կին: Նա մեկն է այն հազարավորներից, որ հրաշքով կենդանի են մնացել ու հայտնվել հեռավոր արաբական անապատում՝ Էլ Սամ քաղաքում, ուր ամեն ինչ օտար ու խորթ է իրեն: Օտարության մեջ Վարսերը տասնամյակներ է անցկացրել ու հիմա

ապրում է հիշողության կապույտ երազներում. «Այն ժամանակ ինքը հարս էր հրեղեն: Կապույտ էին նրա աչքերը՝ լճակ-լճակ կապույտ լույս: Ճերմակ էր երեսի մոթը: Հագնված էր հայրենի կարգով՝ իր հեռավոր կապույտ լեռների կապույտ գույնը՝ արծաթե գլխանոցով, արծաթե սուրմանների ախորժ գոգնոցով» (VI, 553): Վարսերը արաբական անապատներում չի ենթարկվում ոչ մի գայթակղության ու անբասիր է պահում իր բարոյական նկարագիրը: Ճոխություն ու հարստություն են խոստանում նրան արաբ մեծահարուստները, բարեկեցիկ ու ապահով կյանք ոչ միայն նրան, այլև նրա հարազատներին ու բարեկամներին, սակայն անդրդվելի է Վարսերը իր հայրենի գյուղը երիզող լեռների պես, որոնց մտապատկերներն ամեն օր իր հետ են: Երանելի հուշերի, անցած-գնացած օրերի պայծառ երազներում, հայրենի բնապատկերների կապույտ հովիտներում է Վարսերը մտովի, և դա ուժ ու եռանդ է տալիս նրան:

Իր հեռավոր հայրենիքում Իզա Վարսերը «շուկայի փոշի չէր շնչել, ձեռքերը չէին խանձվել արևի տապից: Չինարի ստվերն էր օրորոց ու մահիճ եղել նրան կապույտ լեռներում, ծաղիկների գորգեր՝ ոտքերի տակ» (VI, 553):

Գեղեցիկ էր Իզա Վարսերը, և անապատի արևն ու ավազե մրրիկը տարիների ընթացքում «անգոր եղան աղճատելու նրա աչքերի գուլալը», կոտրելու նրա ոգին ու ապրելու կամքը, հայ կնոջ՝ ցանկացած իրավիճակում հոգսերն անմոռուչ տանելու, դժվարությունները հաղթահարելու համառությունը: Նա կարողացավ իր շուրջն համախմբել ճակատագրի հալածյալներին: Ավագների մեջ հառնում է «առաջին տնակը, ապա՝ ողջ թաղը Պանդխտական: Իննսունինը ծուխ էին, խորշակ քամին պոկել կապույտ լեռներից, բերել էր ծովերի ու ավագների լայնքերով, սփռել ավագների վրա (VI, 553):

Իզա Վարսերը բոլորի մեջ պահպանում է հայի ոգին, ուզում է, որ ամեն ինչ լինի «հայրենի կարգավ»․ «Հայրենի լեռներից մի կավե կուլա էր մնացել միայն: Իզա Վարսերը կուլան փշրեց քարի վրա, քարով աղաց, մանր փոշի արեց կուլայի կտորտանքը և մի բուռ հող դարձրած կապեց մետաքսի մեջ» (VI, 555): Այդ փոշուց նա մի-մի պտղունց բաժին էր հանում պանդխտականի ննջեցյալներին, որ ամեն ինչ «հայրենի կարգավ» լինի: «Հայրենի կարգավ» էր նա կազմակերպում Պանդխտավանում ծնունդներն ու կնունքները, հարսանիքները...

Դժվարին, անելանելի իրավիճակներում են հայտնվում նաև «Ծովի երգը», «Փշե գրույց», «Ուղեցույցը», «Արևը դամբարանին»՝ պատմության թեմայով գրված պատմվածքների ու գրույցների հերոսները, որոնց ցուցաբերում են հայրենասիրության վառ օրինակներ, անհուսալի թվացող իրավիճակներում դրսևորում հայ մարդուն յուրահատուկ վարքագիծ, բազմաթիվ ճանապարհներից միակ ճիշտն ընտրելու, ելքի ուղիներ փնտրելու կարողություն: Նրանց համար «անհնարին վիճակն է ծնում նոր հնար», ու այդ փնտրտուքների ընթացքում են դրսևորվում նրանց բարոյահոգեբանական հատկանիշները, մարդկային գծերը:

Ծովափնյա Ավանց ավանում է ապրում Բաբունց Խաչիկը, ուր Նոյի ժամանակներից ապրել են նրա ապուպապերն ու պապերը՝ ծովի պես փոթորկուն, անհնազանդ, ծովի պես երբեմն նաև խաղաղ ու հանդարտ մարդիկ, ովքեր աղուհացով են դիմավորել բարեկամ հյուրերին, ու սրով ու ատելությամբ՝ թշնամիներին:

Բաբունց Խաչիկի տան կտուրին միշտ վառվում է այն կրակը, որը դեռևս հին, հեթանոսական ժամանակներում օրհնել է Վարազա լեռան քուրմը, ու «բոց տալիս բարձր տան բարձր կտուրին, կրակե երգ՝ ծովի երգին հանգ և նավագների ուղեցույց» (VI, 559):

Նոյի ժամանակներից ծովն իր ափամերձ բնակիչներին դարձրել է համառ ու ուժեղ, անկոտրում ու պատվախնդիր: Եվ ամեն անգամ, երբ Բաբունց Խաչիկը հզոր բազուկներով ճեղքում է փոթորկուն ալիքները, իր հինգ որդիների հետ լողում դեպի անհասանելի թվացող խորքերը, ծովը հնազանդվում է, ջրահարսի պես փարվում նրան, հաղորդում նոր ու թարմ լիցքեր:

Հրաշալի պատկերներ է ստեղծում Ս. Խանգադյանը պատմվածքում, որոնք խիստ համահունչ են Խաչիկի և նրա որդիների հոգեկան ապրումներին, զգացմունքային ելևէջումներին «Խավար է գիշերը: Ծովի ոգին ելել է հատակից՝ նավեր ու նավագներ կուլ տալու: Նավագների ավագ գլուխ Բաբունց Խաչիկը ելնում է նավի կտուրը, գինու տկի բերանը դնում իր բերանին: Կրակ է Ավոնց ավանի գինին, որ իր ջահել կինն է ճմռթել իր շուշան մատներով: Խմում է, աչքերը ջահեր են դառնում, գտնում իր տան կրակի լույսը թանձր խավարի մեջ» (VI, 559):

Իր որդիների ու իր կյանքը վտանգելով՝ Խաչիկը ջրախեղդ է անում դեպի հայաբնակ Ախլաթ քաղաքն արշավող թուրք փաշայի մեծաքանակ ասկյարներին՝ փրկելով բազմաթիվ հայ մարդկանց:

«Ասկյարների խելագար ոռնոցը խեղդվում է ծովի խշշոցի մեջ», իսկ Խաչիկի ականջներում հնչում է նավագների հնագույն երգի դողանջները.

Օրորոց իմ,

Գերեզման իմ՝ ծով ծավի

Բազուկ արդար, նավի՛, նավի՛ (VI, 566):

Անցյալի ու ներկայի «հանդիպադրման» առումով խիստ բնորոշ է «Քարահերձի թզենին» պատմվածքի Կուճի Հաբու կերպարը: Ինչպես Բաբունց Խաչիկը, այնպես էլ Կուճի Հաբին կործանում է գյուղ ներխուժած թուրք ասկյարների մեծաքանակ ջոկատը ու հավերժ մնում մարդկանց հիշողության մեջ որպես հայրենասիրության խորհրդանիշ: Անցել են տարիներ, տասնամյակներ, հիմա Կուճի Հաբու տղան տրակտորով վար է անում, ու հողը, որը ոչինչ չի մոռանում, «ծիր առ ծիր» փռվում է Քարահերձի թզենու ստվերում:

«Վարք հարանց» շարքում գյուղի հոգեբանական ներսուզումները հաղորդում են միմյանց, ուրվագծում հետաքրքիր ու յուրատիպ կերպարներ,

որոնք իրենց մեծ ու փոքր արարքներով բացահայտում են ժամանակի համապատկերը, նրանց անխզելի կապը:

Հայ մարդու հոգևոր կերպարն է ամբողջացնում աշխարհահոչակ բժշկապետ Ամիրդովլաթ Ամասիացին, որը մի հիվանդության գաղտնիքը բացելու համար գոյություն ունեցող կարգին հակառակ հերձում է իր մահացած մինուճար որդուն («Ամիրդովլաթ՝ որդի Եղիայի»): Բազմաթիվ աշակերտներ է «սնել-մեծացրել Ամիրդովլաթն իր կյանքի երկար ու իմաստավոր տարիներին», թևեր է տվել ու դեպի աշխարհի զանազան ծագերն արձակել մեծ բժշկապետը (VI, 445): Կարոտյալներին, անբաժանելի հիվանդներին դարմանելու համար Ամիրդովլաթը «եղավ Հինդուստանում ու հունաց քաղաքներում, մեկնեց ղպտիների հին գրերը, հասավ Ֆոանգստան ու Իլվով, ծունր դրեց Գյառնու տաճարի լքված, հին աստվածների առջև և Էջմիածնի դատարկ կամարների տակ խունկ ծխելով նորից դարձավ իր հայրենի Ամասիա» (VI, 547): Նա գրեց իր հոչակավոր «Անգիտաց անպետը»՝ «մարդկային ցավերի ու վերքերի այդ դարմանագիրքը», ու մեծ ճանաչման արժանացավ բազմաթիվ երկրներում՝ ճանաչելի դարձնելով իր ժողովրդին, շատ ու շատ բռնակալների անգամ ստիպելով հարգանքով խոսել նրա մասին:

Ս. Խանգաղյանի՝ պատմության թեմայով պատմվածքներում ու վիպակներում հաջողությամբ համադրվում են առասպելն ու միֆը, իրականն ու երևակայականը: Յուրահատուկ փաստարկումներով են ներկայացվում ժամանակաշրջանին բնորոշ իրողությունները, որոնք ծավալվում են անցյալ-ներկա-ապագա փոխկապակցության մեջ, որն ավելի ուշագրավ է դարձնում պատմության դասերի խանգաղյանական արծարծումները:

Բանալի բառեր- Ս. Խանգաղյան, նորագույն շրջանի գրականություն, «Վարք հարանց» շարք, պատմվածք, Մեսրոպ Մաշտոց, պատմություն և մեծ անհատ:

Վահան Աղաբաբյան, Պատմությունն ու մեծ անհատը Ս. Խանգաղյանի «Վարք հարանց» շարքում - Ժամանակի թելադրանքով գրականությանն առաջադրված ժողովրդի քաղաքական ճակատագրի, նրա գոյատևման առեղծվածի հայտնաբերման, հոգևոր մաքառումների իմաստավորման, նորովի արժևորման խնդիրները յուրատիպ մեկնաբանություններով դրսևորվեցին Ս. Խանգաղյանի «Վարք հարանց» շարքի պատմվածքներում, որոնց մեջ առանձնահատուկ նշվում է ժողովրդի՝ «զենք կռող դարբնոցի ու դպրատան ճանապարհը» չմոռանալու, խաղաղության կարճատև պահերին կառուցելու, արարելու դավանանքը՝ որպես գոյապահպանության հզոր կովան:

Ամենադաժան պայմաններում անգամ հայ մարդը չի կորցնում ապրելու իր հաստատակամությունը, բռնությանն ու բիրտ ուժին արարման ոգով ու ստեղծագործ մտքով հակազդելու իր բնածին ունակությունը:

Ваган Агабабян, История и великая личность в серии рассказов С. Ханзадяна "Варк аранц"- Стоящие перед литературой по веянию времени задачи осмысления народной судьбы, загадки его существования, духовных исканий со своеобразной интерпретацией выразились в серии рассказов С. Ханзадяна "Варк аранц", в которых особо отмечается стремление народа не забывать дорогу к "кузнице, кующей оружие и к школе", его жажда строить и творить в кратковременные мирные дни, выступающие мощным оружием его выживания. Даже при самых жестоких условиях армянин не теряет твердой воли к жизни, врожденной способности противостоять насилию и грубой силе своим созидющим духом и творческой мыслью.

Vahan Aghababayan, History and Great Personality in S. Khanzadyan's "Behavior of the Fathers" series - The problems of the political fate of the people which were set forth in the literature by the time dictation, the discovery of the mystery of its survival, new meanings of spiritual struggles, issues of new values were displayed in S. Khanzadyan's "Behaviour of Fathers" short story collection. Among them it is highlighted the importance of not forgetting the way to school and to the forge to make weapons, and the religion of building and creating in the short periods of peaceful time as a basis of survival.

Even in the most terrible conditions, the Armenian man does not lose his persistence in living, withstanding the violence and the brutal power with his spirit of creation and inborn ability.

**ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎՐԱՑԵՐԵՆԻ
ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ
ԲԱԳՐԱՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ, ԱՍՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ**

Ոչ ցեղակից լեզուների զուգադրական ուսումնասիրությունը գիտական լուրջ հետաքրքրություն է ներկայացնում և լեզվաբանների ուշադրության կենտրոնում է: Բանն այն է, որ եթե ցեղակից լեզուների քերականական ընդհանրությունները հիմնականում բացատրվում են ծագումնաբանությամբ, ապա ոչ ցեղակից լեզուների ընդհանրություններն ու տարբերությունները լեզվաբանական տեսանկյունից առավել գիտական հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ անհրաժեշտ է լինում դրանք բացատրել, հիմնավորել: Վերջիններս նոր նյութ են տալիս տիպաբանական ուսումնասիրությունների համար: Բացի այդ, նման հետազոտություններն ունեն նաև գործնական նշանակություն. նպաստում են այդ լեզուների ուսուցմանը:

Ինչ վերաբերում է հայերենի և վրացերենի զուգադրական ուսումնասիրությանը, ապա այս բնագավառում, ցավոք, շատ քիչ բան է արված: Ասպարեզում եղածները վրացի և հայ հետազոտողների այնպիսի ուսումնասիրություններ են, որոնք վերաբերում են հիմնականում առանձին լեզվական խնդիրներին, իսկ մյուսներն էլ՝ մասնավոր համակարգերին¹: Այսինքն՝ հայերենի և վրացերենի ամբողջական զուգադրական համակարգային քննություն այսօր չկա: Այս առումով գրական արևելահայերենի և ժամանակակից վրացերենի հոլովման համակարգերի զուգադրական քննությամբ, մի կողմից՝ հարաբերականորեն կամբողջանա երկու լեզուների հոլովման համակարգերի ուսումնասիրությունը, քանի որ կհամալրի հին վրացերենի և գրաբարի հոլովման համակարգերի՝ ասպարեզում եղած ուսումնասիրությունը, մյուս կողմից՝ կնպաստի ամբողջական քերականական ուսումնասիրություն ունենալու ճանապարհին եղած բացը մասամբ լրացնելուն:

Ե՛վ գրաբարի ու հին վրացերենի, և՛ գրական արևելահայերենի ու ժամանակակից վրացերենի հոլովման համակարգերի անդամների քանակի, կազմության, հիմնական քերականական իմաստների գործառական յուրահատկությունների վերաբերյալ ինչպես հայերենագիտության, այնպես էլ քարթվելագիտության մեջ տարբեր կարծիքներ են եղել և կան: Հայտնի է, որ

¹ Մարտիրոսով Ա., Գրաբարի և հին վրացերենի քերականական մի քանի երևույթների զուգադրական-տիպաբանական քննություն, Միջազգային հայրենագիտական գիտաժողով, թեզիսներ, Երևան, 1982: Сахочия М., Пассивность, переходность и эргативность, Типологическое сопоставление древнеперсидских, древнеармянских и древнегрузинских конструкций, Тбилиси, " Мецниереба", 1985, Ներսիսյան Բ., Հին վրացերենի և գրաբարի անվանական հոլովական համակարգերի զուգադրական-տիպաբանական վերլուծություն. - Լեզվի պատմության հարցեր, Ժող. պրակ 2, Երևան, 1985, և այլն:

բանավեճի արդյունքում է ծնվում ճշմարտությունը, և եթե գիտության մեջ տարակարծություններ չլինեն, այն նույն տեղում կդոփի, առաջ չի գնա: Ուստի անհրաժեշտության դեպքում պետք է անդրադառնալ եղած կարծիքներին, հայտնել ու փորձել հիմնավորել սեփական դիրքորոշումը:

Հետաքրքիրն այն է, որ տարբեր լեզվաընտանիքների և լեզվական կառուցատիպերի պատկանող լեզուների հին տարբերակների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հոլովման համակարգերի անդամների և վերջիններիս քերականական իմաստների միջև բավական ընդհանրություններ կան: Նույնը կարելի է ասել նաև գոյականի մյուս քերականական կարգերի մասին՝ թվի և առկայացման՝ իրենց յուրահատկություններով հանդերձ:

Հասկանալի է, որ զարգացման արդյունքում ժամանակակից փուլում երկու լեզուների հոլովման համակարգերում բավականին փոփոխություններ են տեղի ունեցել: Ամենաթուցիկ հայացքն անգամ հնարավորություն է տալիս ասելու, որ ի տարբերություն վրացերենի, որտեղ փոփոխությունները շատ չեն, բայց կան, հայերենում դրանք զգալի են. գրաբարի հիմնականում թեքական տիպի հոլովման համակարգը, որը դեռ միջին հայերենում արդեն բավական փոփոխության էր ենթարկվել, գրական արևելահայերենում հասել է առավելագույն պարզության, որտեղ գրաբարյան երևույթները փոքր մաս են կազմում: Թե երկու լեզուների զարգացման ընթացքում հոլովման համակարգերը ինչ փոփոխությունների են ենթարկվել, որ ուղղությամբ են գնացել և ինչպիսին են արդյունքները, ցույց կտա ուսումնասիրությունը: Ընդ որում, այս դեպքում ուսումնասիրության առարկա պետք է դարձնել նաև դերանվանական հոլովման առանձնահատկությունները և կապային կառույցները:

Հոլովի քերականական կարգի, ինչպես նաև հոլովների ընդհանրական քերականական իմաստների տարրորոշման և գուցադրության համար ելակետային դրույթներ են հանդիսանում Է. Աղայանի և Գ. Ջահուկյանի առաջադրած սկզբունքները, որոնց վրա հենվելով՝ Բ. Ներսիսյանը փորձում է հիմնավորել գրական արևելահայերենում յոթ հոլովի համակարգի գոյությունը, նաև դասի քերականական կարգի առկայությունը, որը առանձնացրել է Գ. Ջահուկյանը³:

Բանն այն է, որ ժամանակակից վրացերենի հոլովման համակարգին շատ անվանի լեզվաբաններ են անդրադարձել, ընդ որում՝ և՛ վրացի, և՛ օտարազգի, որոնց տեսակետների մանրամասն վերլուծությունը որոշակի հետաքրքրություն է ներկայացնում, սակայն ընդհանրական, վերացարկված

² Ներսիսյան Բ., նշվ. աշխ., էջ 170-256:

³ Ներսիսյան Բ., Սահակյան Գ., Յոթ հոլովի տեսությունը հիմնավորելու նոր մեթոդ, Վեմ, թիվ 3, հուլիս-սեպտեմբեր, Երևան, 2017, էջ 106-117: Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 186-205:

քերականական իմաստներով բնորոշումներ, ինչպիսիք է. Աղայանինն ու Գ. Ջահուկյանինն են, չկան:

Նման փորձ արել է Բ. Ջորբենաձեն, սակայն, նախ՝ գիտնականի նպատակն է եղել բացահայտել հոլովական վերջավորությունների կազմում եղած ձայնավոր հնչյունների կապը բայի համակարգում զանազան քերականական իմաստներ ունեցող ձևույթների հետ, և երկրորդ՝ այդ նպատակի համար առանձնացրել է միայն այն հիմնական հոլովական իմաստները, որոնք վկայում են դրա մասին⁴:

Հոլովի քերականական կարգը միաժամանակ ձևաբանական և շարահյուսական ելակետով սահմանելը քարթվելագիտության մեջ ընդունված սկզբունք է, և դա գալիս է նրանից, որ էրգատիվ կառուցվածք ունեցող լեզվում ուղիղ կամ թեք հոլովով դրված ենթակայի, անցողական բայերի անավարտի թե կատարյալի հիմքով կազմված բայ-ստորոցյալի և տարբեր հոլովներով արտահայտվող ուղիղ խնդիրների փոխադարձ կապն ու պայմանավորվածությունը պարզապես թույլ չի տալիս, որ այլ սկզբունք գործի:

Ինչ վերաբերում է գրական արևելահայերենի հոլովման համակարգին, հոլովի քերականական կարգը սահմանելուն, ապա մեզանում հարացույցի և շարակարգի, ձևաբանության ու շարահասության, հոլովների ընդհանրական քերականական իմաստները հաշվի առնելու և այդ հիմամբ յոթ հոլովի համակարգը ընդունելու՝ վերը նշված համանման սկզբունքների միասնականության առումով, կարծում ենք, անհրաժեշտ է գուգադրական-տիպաբանական քննությունը կատարել Բ, Ներսիսյանի առաջարկած յոթ հոլովի համակարգով: Հին վրացերենի և գրաբարի հոլովման համակարգերի գուգադրական-տիպաբանական քննությունը ցույց է տվել, որ երկու լեզուների նշված հարացույցները, իրենց կառուցվածքային յուրահատկություններով հանդերձ, բավական ընդհանրություններ ունեն: Տարբերությունները հիմնականում բացատրվում են նախադասությունների կառուցատիպով: Հին վրացերենի և գրաբարի անվանական հոլովման համակարգերի վերլուծությունների ամփոփումը կատարվել է ընդհանրական իմաստների հիման վրա:

Հիշատակված դեպքում հեղինակը՝ Բ. Ներսիսյանը, համակարգերի քննությունից հետո ընդհանրական քերականական իմաստները բխեցրել է շարահյուսական կիրառություններից: Գրական արևելահայերենի և ժամանակակից վրացերենի հոլովման համակարգերի քննությունն այս դեպքում այլ ուղղությամբ է ընթանալու: Այն է, վերոհիշյալ մեթոդով սահմանվելու են հոլովի, թվի, առկայացման, դասի քերականական կարգերի համապատասխան գուգահեռները ժամանակակից վրացերենի հոլովման համակարգում, նշվելու են

⁴ Ջորբենաձե Զ., ზმნის ხმოვანპრეფიქსური წარმოება ქართულში, თბ. 1983.

երկու լեզվում էլ առկա քերականական կարգերի տարբերություններն ու ընդհանրությունները, արտահայտության միջոցներն ու եղանակները, այսինքն՝ վերհանվելու են երկրորդական բառահարաբերական ձևային քերականական իմաստները և վերջիններիս շարահյուսական իրացումները:

Բանն այն է, որ անունների, դերանուն գոյականների և գոյականի արժեք ունեցող լեզվական երևույթների քերականական հատկանիշների առանձնահատկությունները վերհանելը ինքնանպատակ չէ: Այս ամենը անհրաժեշտ է հասկանալու, բնութագրելու համար առարկաների և վերջիններիս ու բայերի միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունների յուրահատկությունները, որոնք իրենց հերթին հնարավորություն են տալիս բացահատելու տվյալ լեզուներին բնորոշ տրամաբանական առանձնահատկությունները:

Յուրաքանչյուր երկրորդական բառահարաբերական ձևային արտահայտած քերականական իմաստ յուրովի վերացարկում է ենթադրում: Առարկաների և սրանց ու գործողությունների փոխհարաբերությունը վերհանելը զարգացած հոլովման համակարգ ունեցող լեզուների դեպքում նշանակում է մտածելակերպի, տրամաբանական յուրահատկությունների վերլուծություն:

Լեզուն ոչ միայն հաղորդակցման միջոց է ,այլ նաև մտածողության, իսկ վերջինս ուղղակիորեն կապված է տրամաբանության հետ: Է. Ադայանը նկատում է . «Ամեն մի հոլով, իբրև բառաձև, քերականական արտահայտությունն է կամ ձևը որևէ վերաբերական իմաստի: Իբրև այդպիսին յուրաքանչյուր հոլովական իմաստ առարկաների՝ միմյանց միջև և առարկաների ու հատկանիշների միջև եղած օբյեկտիվ հարաբերությունների բարձրագույնս վերացարկված ու ընդհանրացված տրամաբանական կարգերի լեզվական արտահայտությունն է կամ դրսևորումը՝ ձևաբանական կառուցվածքի մեջ որպես քերականական վերաբերական (ոչ ածանցական) իմաստ⁵»:

Այս առումով շատ կարևոր է դառնում ձևային ընդհանրական, վերացարկված քերականական իմաստների սահմանումը: Մեզանում դա հաջողվել է անել Է. Ադայանին⁶ և Գ. Ջահուկյանին⁷:

Հետաքրքիր գուգադիպությամբ ժամանակակից գրական արևելահայերենի և վրացերենի հոլովների թիվը համընկնում է. դրանք յոթն են: Մակայն միայն խոր վերլուծությունների միջոցով կարելի է վերհանել, մի կողմից՝ նույն հոլովների (ուղղական-անվանական, սեռական, տրական, գործիական) ընդհանրական քերականական իմաստների նմանություններն ու տարբերությունները, մյուս կողմից՝ տարբեր հոլովներինը : Դրանք են՝ հայերենի հայցական, բացառական, ներգոյական, իսկ ժամանակակից վրացերենի

⁵ Ադայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967. էջ 221:

⁶ Նույն տեղում, էջ 220-223:

⁷ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 198-205:

պատմողական (Էրգատիվ), պարագայական, կոչական հոլովների յուրահատկությունները:

Հասկանալի է, որ վերլուծությունների հիմքում պետք է լինեն հիշյալ հոլովների բոլոր կիրառությունները, որոնց հիման վրա հնարավոր կլինի ընդհանրական, վերացարկված քերականական իմաստներ սահմանել:

Ըստ որում՝ քննությունն անհրաժեշտ է կատարել այնպես, որ առանց հիմնավորման մի լեզվին հատուկ քերականական իմաստները անհարկի չվերագրվեն մյուսին: Իհարկե, այնքան էլ հեշտ չէ կոնկրետ կիրառությունների հիման վրա ընդհանրականը սահմանելը, բայց անհրաժեշտ է, քանի որ այն մատնանշում է տվյալ լեզվի ամեն մի հոլովի համար բնութագրական, առանձնահատուկ քերականական իմաստը, դրանց հանրագումարի միջոցով բացահայտվում է ամբողջ հոլովման համակարգի քերականական էությունը, բացի այդ՝ հնարավոր է դառնում ձևաբանական և շարահյուսական, լեզվական միջոցներով տարրորոշել տրամաբանական կարգերի՝ երկու լեզուներին բնորոշ դրսևորումները:

Աշխարհի լեզուների զուգադրական, տիպաբանական գիտական քննությունը մեծ տեղ է գտել լեզվաբանության մեջ մանավանդ վերջին տասնամյակներում: Այս առումով գրական արևելահայերենի և վրացերենի հոլովման համակարգերի զուգադրական քննությունը կարող է յուրահատուկ տեղ ունենալ նշված ասպարեզում:

Բանալի բառեր – հարացույց, շարակարգ, երկրորդական բառահարաբերական ձևույթ, վերացարկված, ընդհանրական քերականական իմաստ, զուգադրություն, տիպաբանություն:

Բազրատ Ներսիսյան, Ասյա Դարբինյան, Գրական արևելահայերենի և ժամանակակից վրացերենի հոլովման համակարգերի զուգադրական քննության դրույթներ – Ժամանակակից լեզվաբանության մեջ մեծ հետաքրքրություն են առաջացնում տարբեր լեզուների զուգադրական, տիպաբանական ուսումնասիրությունները, ինչպես նաև քերականական իմաստաբանությունը: Այս կապակցությամբ, երկու ոչ ցեղակից լեզուների հարացուցային և շարակարգային համակարգերի զուգադրական ուսումնասիրությունը որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում: Սա հատկապես հետաքրքիր է, երբ խոսքը վերաբերում է բառաձևերի վերացարկված, ընդհանրական քերականական իմաստների համակարգային նկարագրությանը:

Նման բնութագիր գոյություն ունի գրական արևելահայերենի քերականության մեջ, իսկ ժամանակակից վրացերենի քերականության մեջ այն ամբողջական չէ, ուստի այս առումով լրացուցիչ հետազոտությունների կարիք կա:

Երկու լեզուների քերականական, համակարգային գուգադրության համեմատությունը, ներառյալ դերակատարական հոլովումը, ինչպես նաև կապային կառույցների անդրադարձը կարող են լրացնել այդ ոլորտում առկա բացը:

Баграт Нерсисян, Ася Дарбинян, Тезисы сопоставительного анализа систем склонения литературного восточно - армянского и современного грузинского языков - В современном языкознании большой интерес представляют сопоставительные, типологические исследования различных языков, а так же грамматическая семасиология. В связи с этим определенный научный интерес представляет собой сопоставительное изучение парадигматических и синтагматических систем двух неродственных языков. Это особенно интересно, когда речь идет о характеристике систем склонений с точки зрения абстрагированных, обобщенных грамматических значений словоформ.

Такая характеристика существует в грамматике литературного восточноармянского языка, а в грамматике современного грузинского языка она имеет неполный характер, и потому есть необходимость дополнительного исследования в этом аспекте.

Системное сопоставление грамматических категорий двух языков, в том числе и местоименного склонения, а также союзных строений может восполнить тот пробел, который существует в этой области.

Bagrat Nersisyan, Asya Darbinyan, Comparative Analysis of the Declination Systems of Literary Eastern Armenian and Modern Georgian Languages - In modern linguistics, comparative, typological studies of various languages, as well as grammatical semasiology, are of great interest. In this regard, a comparative study of the paradigmatic and syntagmatic systems of two unrelated languages is of special scientific interest. This is especially interesting when it comes to describing the systems of declensions in terms of abstracted, generalized grammatical meanings of word forms.

Such a characteristic exists in the grammar of literary Eastern Armenian language, and in the grammar of the modern Georgian language it is incomplete, and therefore there is a need for additional research in this aspect.

Systematic comparison of the grammatical categories of the two languages, including the pronominal declension, as well as the allied structures can fill the gap that exists in this area.

**ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ «ՄԹՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՋՆԵՐ»
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄ
ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Գեղարվեստական ոճի խնդիրը իրականության գեղագիտական վերարտադրումն է, հետևաբար «գրականության մեջ իրականության տեսանելի, պատկերավոր արտացոլումը, որը հենված է հուզական ընկալման վրա, առանձնահատուկ պահանջներ է առաջադրում լեզվի նկատմամբ»¹: Այս իմաստով լեզվում հատուկ կարևորություն են ստանում պատկերավորման այն միջոցները, որոնց օգնությամբ հնարավոր է դառնում առավել գունեղ ներկայացնել պատկերվող կյանքի առարկաներն ու երևույթները: «Պատկերավորման ու արտահայտչական միջոցների օգնությամբ, – գրում է Ա. Մարությանը, – գրողը ոչ միայն իրական ու շոշափելի է դարձնում մտքի առարկան, ընթերցողի երևակայության մեջ առաջ է բերում համապատասխան մտապատկերներ՝ ազդելով նրա երևակայության վրա, այլև նկարագրվող երևույթը դարձնում է վառ ու տպավորիչ, ուժեղացնում բանաստեղծական խոսքի հուզական ներգործությունը»²:

Լեզվի պատկերավորման միջոցները սովորաբար բաժանվում են երկու խմբի՝ այլաբերություններ (տրոպ) և բանադարձումներ (ֆիգուրա): «Այլաբերությունները բառային միավորներ են, որոնք կառուցվում են բառերի ու բառակապակցությունների միջոցով, իսկ բանադարձումներն ավելի շատ հենվում են շարահյուսական տարբեր կառույցների վրա»³: Ի տարբերություն այլաբերությունների, որոնց դեպքում առաջնայինը բառերի փոխաբերական գործածություններն են, ոճական բանադարձումների դեպքում առաջնայինը ոչ թե բառի փոխաբերական կամ այլաբանական կիրառությունն է, այլ յուրահատուկ հնչերանգը, արտասանական առոգանությունը:

Քնարական հերոսի հոգեվիճակն արտացոլող ստեղծագործություններում կարևոր նշանակություն են ստանում պատկերավորման այն միջոցները, որոնց օգնությամբ ուժեղացվում է բանաստեղծության ներգործման գործառույթը, արտահայտչականությունը: Այս առումով հատկապես առանձնանում է Վահան Տերյանի բանաստեղծությունների անդրանիկ շարքը՝ «Մթնշաղի անուրջները», որում բազմաթիվ պատկերավորման միջոցների կողքին կիրառված է նաև աստիճանավորման արտահայտչամիջոցը:

Աստիճանավորումը, ինչպես պատկերավորման մյուս միջոցները, պայմանավորված են լեզվական միջոցների՝ խոսքի բովանդակության

¹ **А. Рыбацко**, Художественные средства языка, Москва, 1961, с. 6.

² **Ա. Մարության**, Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն ու ոճը, Երևան, 1979, էջ 152:

³ **Լ. Եզեկյան**, Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 333:

նկատմամբ ունեցած հարաբերությամբ: Ասել է թե՛ ոչ միայն պատկերավորման միջոցները, այլև լեզվական բոլոր իրողությունները գնահատվում և արժևորվում են բովանդակության ու դրա լեզվական արտահայտության համապատասխանության հայեցակետով: Հետևաբար պատկերավորման միջոցների ուսումնասիրությունը ինքնանպատակ չէ. ուղղված է խոսքարվեստի էական կողմերի բացահայտմանը:

Աստիճանավորումը ոճական հնար է, շարահյուսական դարձույթ, որի դեպքում բառերի հաջորդական դասավորությամբ ընդգծվում են նկարագրվող առարկայի կամ երևույթի աստիճանական զարգացումը, սաստկացումը, որը գնալով ուժեղացնում է տվյալ արտահայտության, խոսքի իմաստը⁴: Այլ կերպ ասած՝ աստիճանավորումը համանիշ բառերի զուգադրումն է իմաստի ուժեղացման կամ թուլացման եղանակով, և տարբերակվում է բարձրացող ու իջնող աստիճանավորում:

Բարձրացող աստիճանավորումը խոսքի այնպիսի կառուցվածք է, երբ յուրաքանչյուր հաջորդող արտահայտություն կամ դարձվածք ավելի հագեցած է իմաստով, ավելի ուժգին և արտահայտիչ է, քան նախորդը, բառերի դասավորումը իմաստի, արտահայտչության և հնչերանգի ուժեղացման կարգով⁵, իսկ իջնող աստիճանավորումը բարձրացողի հակառակ երևույթն է, երբ տվյալ արտահայտության մեջ բառերը դասավորվում են իմաստի, արտահայտչության, հնչերանգի թուլացման եղանակով:

Տեքստի Մթնշաղի անուրջներ՝ շարքում աստիճանավորումը լայն կիրառություն ունի և նպաստում է քնարական հերոսի հույզերի ու ապրումների արտացոլմանը: Բանաստեղծը, աստիճանավորման միջոցով ստեղծագործական կառուցվածքային կողմը զուգակցելով իմաստայինին, կարողացել է ստեղծել գեղարվեստական բացառիկ պատկերներ: Շատ ստեղծագործություններում ոճական այդ միավորը նույնիսկ պայմանավորում է չափածոյի համար այդքան հատկանշական երաժշտականությունը, խոսքի գեղեցկությունն ու ներդաշնակությունը: Դիտարկենք օրինակներ.

Մոռանա՛լ, մոռանա՛լ ամեն ինչ,

Ամենին մոռանալ.

Չըսիրել, չըխորհել, չափստսալ –

Հեռանա՛լ... (I, 80)⁶

Իմաստուն խոսքեր սովորեցի ես,

Որ հրապուրեմ գորությամբ մթին,

⁴ Տե՛ս Լ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 365, Է. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1972, էջ 268:

⁵ Ֆ. Խլդաթյան, Ոճաբանական բառարան, Երևան, 2000, էջ 17:

⁶ Տե՛ս Վ. Տեքյան, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երևան, 1972: Մեջբերված օրինակներից հետո նշվում են համապատասխան հատորն ու էջը:

*Հոգիդ կախարդես ու հմայես քեզ,
Ինձ այրող հուրը նետես քո սրտին: (I, 94)*

Առաջին բանաստեղծության մեջ աստիճանավորմանը նպաստում է նաև ձայնավորների ներդաշնակ կրկնությունը, որը հուզական ուժեղ տպավորության և արտաքին երաժշտականության ստեղծման յուրահատուկ գործոն է դառնում: Ձայնավորների արվեստավոր կրկնությամբ, աստիճանավորման միջոցով Տերյանը ոչ միայն առավել բարեհունչ է դարձնում բանաստեղծական խոսքը, այլև արտահայտչամիջոցը հանդես է բերում որպես գեղարվեստական պատկերի կերտման կարևոր բաղադրիչ: Ահա այլ օրինակ՝

*Դու անհոգ նայեցիր իմ վրա
Ու անցար քո խաղով կանացի.
Ես քեզնից դառնացած հեռացա,
Ես քեզնից հեռացա ու լացի... (I, 44)*

*Պայծառ ըղձերը ինձ գուր մաշեցին,
Չողջունեց ինձ ոչ մի արշալույս,
Ինձ լուռ մոռացան, ինձ չհիշեցին, –
Իմ սրտում մեռան սեր, ցնորք ու հույս: (I, 59)*

Դիտարկված բանաստեղծական հատվածներում բարձրացող աստիճանավորումը դրսևորվել է գործողությունների հաջորդական շղթայով՝ ‘նայեցիր և անցար...’, ‘հեռացա և լացի’, ‘չողջունեց, մոռացան, չհիշեցին’:

Մթնշաղի անուրջներ՝ շարքի ստեղծագործություններում առավել տարածված է բարձրացող աստիճանավորումը, որը հիմնականում ստեղծվում է գոյականների կամ բայերի միջոցով, ինչպես օրինակ՝

*Հիշո՞ւմ ես դու ակացիան
Եվ պարտեզը իրիկվա,
Հանդիպումը մայիսյան
Պատանու և աղջկա: (I, 98)*

*Քնքուշ ձեռքերով պաճուճիր հոգիս,
Նստիր մահճիս մոտ ու տխուր երգիր,
Մազերդ փռիր հոգնատանջ կրծքիս
Եվ մեղմ փաքատիր սիրտըս տարագիր... (I, 65)*

Քնարական հերոսի հոգեվիճակի արտոգովման արտահայտչամիջոցներ են բարձրացող աստիճանավորման օրինակները բանաստեղծական ներքոհիշյալ հատվածներում.

*Ես կգամ, երբ դու կըլինիս տրտում,
Երբ երազներդ հավետ կըմեռնեն,*

*Ձեռքըդ կրոնեմ, ցավըդ կրմբոնեմ,
Կրվառեմ ուրիշ լույսեր քո հոգում... (I, 101)*

*Եվ քաղցր է լինել քո կամքի գերին,
Քո չարությունը բարիք համարել.-
Կրծքաքաց ելնել ընդդեմ քո սրին
Եվ այդ մահաբեր ձեռքը համբուրել: (I, 96)*

Բանաստեղծը աստիճանավորում է ստեղծում ոչ միայն հոմանիշ բառերի միջոցով, այլև բանաստեղծական հյուսվածքում իմաստային զուգորդություն է ստեղծում հաջորդական գործողություն ցույց տվող տարբեր բառերի միջև.

*Տխուր կծպտասս դու հոգնածորեն,
Ու հոգնածորեն դուռը կըբանաս.-
Սրտիս մութ ցավը անխոս կիմանաս,
Եվ արցունքներըդ հանդարտ կըծորեն: (I, 78)*

Հաճախ աստիճանավորմամբ կապվում են և տրամաբանական ու հուզական ուժեղ շեշտ ստանում ոչ հոմանիշ բառային միավորները: Խոսքաշարում ոչ հոմանիշ բառերի միջև իմաստային կապ ստեղծելը Տերյանի ոճի կարևորագույն առանձնահատկություններից մեկն է: Այս դեպքում, բնականաբար, աստիճանավորման հուզաարտահայտչական երանգավորումն ավելի ակնհայտ է.

*Չեռածավալ անհայտներում պահվտած
Գալիք օրերն անհուն, անտես խավարում... (I, 30)*
*Իմ երազները ձեր գիրկն են թռչում,
Բարձր, դեպի վեր, արեգակին մոտ,
Ուր խենթ բոցերի խուրձեր դողդոջում
Լուռ դալկանում են երկնում անաղոտ: (I, 75)*

Միննույն խոսքաշարում համատեղ գործածված *անհուն-անտես, բարձր-դեպի վեր-արեգակին մոտ* բառերը ոճական նպատակադրում ունեն: Դրանց միջոցով բանաստեղծը ոճական հագեցվածություն, բազմազանություն է հաղորդում իր խոսքին, գեղարվեստական պատկերը ստանում է աստիճանական զարգացում, իսկ բանաստեղծության բովանդակությունը ամբողջանում է հոմանշային կապի մեջ գտնվող բառերի ու կապակցությունների իմաստային նրբերանգներով:

Իջնող աստիճանավորումը պայմանավորված է լեզվական միջոցների այնպիսի դասավորությամբ, որոնք իմաստային թուլացում են առաջացնում, ինչպես օրինակ՝

*Եվ տանջանք, և բեկում, և թախիծ,
Սև օրեր ես դեռ շատ կտեսնեմ,*

Անունդ թող փարոս լինի

Սուտ կյանքի և դառը մահու դեմ: (I, 95)

Ուշագրավ է, որ Տերյանը նույն բանաստեղծության շրջանակներում հաճախ է զուգակցում բարձրացող և իջնող աստիճանավորման հնարավորությունները, ինչպես օրինակ՝

Շողում են, դողում աղմուկով զվարթ,

Անխոս քարանում և նորից խաղում,

Անդունդից ելնում, դեմքիս ծիծաղում,

Խուլ շառաչում են, լարում են թակարդ.... (I, 74)

Իջնող աստիճանավորում ստեղծող **շողալ-դողալ-անխոս քարանալ** բառային զուգորդումներից հետո բանաստեղծը բարձրացող աստիճանավորմամբ քնարական հերոսի հակառակ գործողությունների շղթան է առաջ բերում՝ **նորից խաղալ – ելնել –ծիծաղել – շառաչել – թակարդ լարել** իմաստային նրբերանգներով:

Տերյանի չափածոյի պատկերավորման համակարգում աստիճանավորումը համաչափ դասավորություն չունի, չի ենթարկվում որոշակի կադապարների: Նմանօրինակ աստիճանավորումները ոչ միայն նպաստում են խոսքի արտահայտ-չականությանը, այլև բազմազանություն են մտցնում խոսքի մեջ Հաճախ աստիճանավորումը պարզապես պայմանավորված է տվյալ ստեղծագործության կառուցվածքային հատկանիշներով, ասել է թե՛ բանաստեղծն այնպես է նկարագրում գործողությունների հաջորդականությունը, որ ստեղծվում է հույզերի ու ապրումների արտացոլման աստիճանական եղանակ, ինչպես օրինակ՝ ‘Հրաշք աղջիկ’ բանաստեղծության մեջ.

Հրաշք-աղջիկ, գիշերների թագուհի,

Ճառագայթող քո աչքերով դու **եկար,**

Ոսկե բոցով **լցրիր** հոգին իմ տկար,

Հրաշք աղջիկ, ցնորքների դիցուհի....

Կախարդ լուսնի հրապուրող շողի պես

Դու **ժպտացիր** գուրգուրանքով սեթևեթ,

Ազատ սիրտըս **շղթայեցիր** առհավետ,

Հրաշք աղջիկ, դու միշտ հաղթող ու միշտ հեզ: (I, 43)

Աստիճանավորման գործածությունը խոսքը դարձնում է ավելի արտահայտիչ, ավելի վառ, հնարավորություն է ընձեռում տարբեր կողմերից զննելու և նկարագրելու առարկաները, երևույթները, գործողությունները, հատկությունները, մասնավորապես քնարական հերոսի ապրումները:

Տերյանի ստեղծագործություններում աստիճանավորում է ստեղծում նաև տողասկզբի կրկնությունը՝ համանման շարահյուսական սկսվածքը: ‘Կրկնության այս տեսակը բնորոշվում է նրանով, որ շարահյուսական որևէ միավոր՝

նախադասություն, բառ, տող և այլն, սկսվում է միևնույն բառով, բառակապակցությամբ⁷: Կրկնվող գործողությունները առաջ են բերում աստիճանավորում: Դիտարկենք օրինակ.

Ինձ թաղեք, երբ կարմիր վերջալույսն է մարում,

Երբ տխուր գգվանքով արեգակը մեռնող

Մարերի արծաթե կատարներն է վառում,

Երբ մթնում կորչում են ծով ու հող...

Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,

Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ... (I, 37)

Բոլոր տների սկզբում կրկնվող ինձ թաղեք կապակցությունը առավել ներ-գործուն է դարձնում կյանքի կարոտով լեցուն բանաստեղծի ողբերգական ապրումները, իսկ *երբ* դերանվան կրկնությունը ընթերցողի ուշադրությունը բևեռում է աշխարհից ու մարդկանցից հեռանալու տխուր պահի վրա: Այդպես բանաստեղծը իր խոսքի իմաստային կենտրոնում է պահում մի քանի բառեր և դրանցով սկսելով բանաստեղծական տողերը՝ ներկայացնում է ապրումի աստիճանական զարգացումը: Որպես աստիճանավորման կառուցման միավորներ հանդես են գալիս տարբեր բառեր ու բառակապակցություններ:

Աստիճանավորումը ապրված զգացողությունների շրջանակում ուրվագծում են քնարական հերոսի վիշտն ու կարոտը՝ միաժամանակ նպաստելով չափ ու կշռույթի գոյացմանը: Ասվածին ներդաշնակում է նաև բառերի հնչյունական կազմը, որը շարունակ փոփոխվում է:

Մթնշաղի անուրջներ՝ ժողովածուի բանաստեղծություններում աստիճանավորում ստեղծում են նախադասության տարբեր անդամները: Լայն կիրառություն ունի հատկապես ստորոգյալի միջոցով ստեղծվող աստիճանավորումը: Տերյանի հանրահայտ Մթնշաղ՝ ստեղծագործության մեջ աստիճանավորում են գոյացնում բազմակի ենթականերն ու ստորոգյալները: Այսպես՝

Չկա ոչ մի սահման դնող պայծառ շող,

Աղմուկի բեռ, մարդկային դեմք սիրտ մաշող-

Հիվանդ սիրտը չի տրտնջում, չի ցավում

Որպես երազ մոռացումի անձավում...: (I, 67)

Շատ հազվադեպ, բայց աստիճանավորման ստեղծմանը նպաստում է նաև նպատակի պարագան: Ահա մեկ հատված Միրահարվածը՝ բանաստեղծությունից.

Խենթացած բեռից այս չար մենության

Ես դուրս եմ վազում քեզ որոնելու,

Տեսնելու ցուրրդ դեռ հեռվից-հեռու

⁷ Ա. Պապոյան, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976, էջ 88:

Եվ **հսկելու** քեզ ստվերի նման: (I, 93)

Խենթ կարոտից տառապող քնարական հերոսը հոգնել է չար մենության խենթացած բեռից՝ և իր սիրո համար հանգրվան է որոնում: Մենակությունը հաղթահարելու համար վազում է փողոց, կանգնում սիրելիի դռան առաջ, հետո փախչում՝ օրհներգելով ու փառաբանելով նրան: Բանաստեղծությունում իշխող տրամադրությունը, գործողությունների ընթացքը արտահայտվում են աստիճանականությամբ կապված իրողությունների՝ տեսնել, որոնել ու հսկել:

Տերյանի ստեղծագործությունների լեզվի շարահյուսական համակարգի քննությունը ցույց է տալիս, որ աստիճանավորումը հաճախված է նաև բարդ համադասական նախադասություններում՝ իրենց իմաստային ու կապակցական բազմաբնույթ արտահայտություններով, կառուցվածքային ինքնատիպ լուծումներով: Բանաստեղծի խոսքարվեստում հաճախադեպ են նաև ենթակա, որոշիչ, ուղիղ խնդիր, ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություններում դրնորվող աստիճանավորման օրինակները: Ահա աստիճանավորման օրինակ ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ կապակցություններից բաղադրված բանաստեղծական հատվածում.

*Ինձ թաղեք, երբ տխուր մթնշաղն է իջնում,
Երբ լռում են օրվա աղմուկները զվարթ,
Երբ շողերն են մեռնում, ծաղիկները – ննջում,
Երբ մթնում կորչում են լեռ ու արտ... (I, 37)*

Ուշագրավ են նաև շղթայական կերպով իրար հաջորդող որոշչային այն կա-ռույցները, որոնցում մի քանի կախյալ նախադասություններից յուրաքանչյուրը գերադասի առանձին անդամի է լրացնում, ինչպես՝ *Քո աչքերի խորությունը հրդե-հավառ, Ուր վառված են մութ ցանկության ջահեր անխոս. Քո ժպիտը թունոտ ծաղկանց բույրի նրման, Որ տիրաբար արբեցնելով մահ է բերում...* (I, 85), *Ճառագայթներ, որ շողացին ու չրկան, Մթնշաղի ուրվագծեր նրբահյուս. կյանքս, հեռվում անհայտ կորած մի հեզ լույս, Որ չի վառում ոչ անցյալը, ոչ ներկան...* (I, 30) և այլն:

Նարկ է նկատել, որ Տերյանի ստեղծագործություններին առավելապես բնորոշ են եռանդամ և բազմանդամ աստիճանավորումները, իսկ երկանդամ աստիճանավորումը, որը հիմնականում դրսևորվում է բառային և խոսքային հոմանիշների միջոցով, հուզական ազդեցության տեսանկյունից թույլ է, ինչպես օրինակ՝

*Թող շուրջս թռվի անանց լռություն,
Թող ինձ չհիշեն, թող ինձ մոռանան: (I, 64)*
*Լացող ամպերի միզում անսահման
Թռչնեցին, անցան...
Անձրևն անընդհատ*

Մաղում է վհատ թաղումի կոծով,-

Տիւր, հուսահատ...: (I, 61)

Տերյանի չափածոյի երաժշտականության գաղտնիքը ոչ միայն հնչյունական ոճավորման, աստիճանավորման, պատերավորման մյուս միջոցների, այլև բառերի ճիշտ ընտրության, անթերի ռիթմական ընթացքի, հանգավորման և տողերի ներդաշնակության մեջ է: Այլ կերպ ասած՝ բանաստեղծի քնարերգության երաժշտականութունը վերաբերում է ոչ միայն տերյանական նրբագեղ լեզվին, այլև գեղարվեստական մարմնավորում ստացած զգացումների ու տրամադրությունների էությանը: Այս առումով ուշագրավ է ներքոհիշյալ օրինակում առկա աստիճանավորման դեպքը.

Տարիներ, տարիներ կըսահեն,

Կըմենեն երազները բոլոր –

Քո պատկերը անեղծ կըպահեն

Օրերում անհաստատ ու մոլոր: (I, 95)

Բանաստեղծությունն ու երաժշտությունը միաձուլվել են և մեզ են ներկայանում մի ամբողջության մեջ: Մա է իսկական երաժշտականությունը, որը հնչյունների ուժով, համապատասխան բառերի առկայությամբ ստիպում է կերտել բանաստեղծական հրաշագեղ պատկեր: Բացի տողերի հանգային վերջավորություններից և ա ձայնավորի առձայնությից, որն ուղղակի բխում է մեր լեզվի հնչյունային կազմի առանձնահատկություններից, ուրիշ հնչյունական նմանություններ չկան դիտարկված օրինակում: Բանաստեղծության անվիճելի երաժշտականությունը պայմանավորված է լեզվական ու ռիթմական բոլոր միավորների, այդ թվում՝ աստիճանավորման յուրօրինակությամբ:

Տերյանի բանաստեղծական խոսքի երաժշտականության ստեղծման կարևոր գործոններից մեկն էլ նմանահունչ բառերի կրկնությամբ կազմված աստիճանավորումն է: Փոքրածավալ բանաստեղծություններում նույնիսկ բառի 3-4 անգամ կրկնելն արդեն նպաստում է չափ ու կշռույթի ուժեղացմանը՝ գոյացնելով առձայնույթ կամ բաղաձայնույթ: Ըստ Ա. Զաքարյանի՝ նշված հատկանիշի թելադրանքով է, որ արդեն սովորական դարձած ավանդությամբ Տերյանի բանաստեղծությունները համարվել ու համարվում են մեղմօրոր երգեր⁸: Բանաստեղծի ավելի քան 100 ստեղծագործությունների հիման վրա երգահանները հիասքանչ մեղեդիներ են ստեղծել⁹:

Ճիշտ է ասված՝ բանաստեղծությունը սերում է երգից, որի մեղեդին միշտ հուզական է: Անջատվելով մեղեդուց և վերածվելով բառի ինքնուրույն արվեստի՝ չափածոն պահպանել է երաժշտականության մի շարք հատկանիշներ¹⁰:

⁸ Ա. Զաքարյան, Գրական արձագանքներ և հուշեր, Երևան, 1985, էջ 217:

⁹ Տե՛ս Վահան Տերյանը երաժշտության մեջ (տեղեկատու), Երևան, 2008, Ռ. Դավթյան, Վահան Տերյանի պոեզիան երաժշտության մեջ, Երևան, 2007:

¹⁰ В. Холщевников, Основы стихосложения: Русское стихосложение, Ленинград, 1972, с. 75.

Բանալի բառեր – աստիճանավորում, բարձրացող աստիճանավորում, իջնող աստիճանավորում, պատկերավորման միջոց, ոճական հնար, շարահյուսական դարձույթ, «Մթնշաղի անուրջներ», խոսքարվեստ, երաժշտականություն:

Մերի Հովհաննիսյան, Աստիճանավորումը Վահան Տերյանի «Մթնշաղի անուրջներ» բանաստեղծական շարքում – Չափածոյի հնչյունական հարստությանը հատուկ նշանակություն տվող Վահան Տերյանն իր անգերազանցելի տեղն ունի աստիճանավորում ստեղծելու գործում: Աստիճանավորումը բանաստեղծի պոեզիայում ստեղծվում է բայերի, գոյականների միջոցով: Ոճական արժեքով առանձնանում է հատկապես միակազմ նախադասություններում հանդես եկող աստիճանավորումը: Վ. Տերյանի ստեղծագործություններում աստիճանավորումը նպաստում է գեղարվեստական կոնկրետ խնդիրների լուծմանը և բանաստեղծի ոճը հատկանշող լեզվական միավոր է:

Мери Оганнисян, Градация в сборнике стихов Ваана Терьяна «Грёзы сумерек» – Ваан Терьян, который придавал особое значение богатству мелодичности стихотворений, имеет свое непревзойденное место в деле создания градации. Градация в сборнике стихов «Грёзы сумерек» создается посредством вербальных и субстантивных средств. Своей стилистической ценностью выделяются образцы градации, выступающие в односоставных предложениях. Градация в произведениях Терьяна способствует решению конкретных художественных проблем и является языковой единицей, охарактеризующей стиль поэта.

Meri Hovhannisyan, The phenomenon of gradation in the series of poems “Twilight Dreams” by Vahan Teryan – Vahan Teryan, who has always attached great importance to the phonetic richness of poetry, played a unique role in the creation of gradation. The phenomenon of gradation in the series of poems “Twilight Dreams” is created through verb and noun phrases. The examples of gradations found in mononuclear sentences stand out with their particular stylistic value. In Teryan's poems, gradation serves as a basis for the solution of specific artistic issues and is a linguistic unit characterizing the style of the poet.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Դավթյան Ռ., Վահան Տերյանի պոեզիան երաժշտության մեջ, Երևան, 2007:
2. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003:
3. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Երևան, 2000:

4. Զաքարյան Ա., Գրական արձագանքներ և հուշեր, Երևան, 1985:
5. Մարության Ա., Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն ու ոճը, Երևան, 1979:
6. Պապոյան, Չափածոյի լեզվական արվեստի հարցեր, Երևան, 1976:
7. Ջրբաշյան Է., Գրականության տեսություն, Երևան, 1972:
8. Վահան Տերյանը երաժշտության մեջ (տեղեկատու), Երևան, 2008:
9. Տերյան Վ., Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երևան, 1972:
10. Рубайло А., Художественные средства языка, Москва, 1961.
11. Холшевников В., Основы стиховедения: Русское стихосложение, Ленинград, 1972.

ԿԵՆԱՑՆԵՐԻ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԸ ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՁԱՆ

Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրե՛ք
Հովհաննես Թումանյան

Կենացը հաղորդակցման ամենահետաքրքիր ձևերից է, որտեղ գրեթե ամեն ինչ ասվում է ուղղակիորեն, ազնվորեն և մեծ նվիրումով: Այն ամենահամեմված խոսքն է, որտեղ առավելագույնս են օգտագործվում բոլոր ոճական հնարները: Դրանք իսկապես միտված են գրավելու և ազդելու լսողին: Ամենահաճախ հենց կենացներում կարող ենք հանդիպել դարձվածքների, թևավոր խոսքերի, մեջբերումների (օրինակ՝ *ինչպես պապս կասեր...*), ինչպես նաև բարբառային գունեղ հավելումների:

Սույն հոդվածում փորձ է արվում ուսումնասիրել և համեմատել տարբեր մշակույթների կենացները լեզվամշակութային տեսանկյունից:

Կենացները, որոնք մեր կյանքի անբաժան մասն են կազմում, կարող են ներկայացնել մի ամբողջ ազգի պատկեր և ապրելակերպ: Այն որ կենացները ուշագրավ տեղ են գրավում Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, իսկ Գերմանիայում, Հոլանդիայում ընդհանրապես կարևոր չեն և կարելի է դրանց շրջանցել, խոսում է ազգերի մշակույթների, ինչպես նաև լեզվամտածողության բազմազանության մասին: Հայերի և վրացիների մոտ կենաց ասելը մի ամբողջ արարողակարգ է և ուշագրավ է այն, որ վերջիններս չեն արբում խմելիս, քանի որ շատ են խոսում ընթացքում: Ուշագրավ է նաև կենաց ասողի սեռը, տարիքը և սոցիալական դիրքը: Այս տեսանկյունից կենացների տեքստերը պարզագույնից հասնում են մինչև խորը փիլիսոփայականի:

Արտահայտությունների հետևում ինչպիսիք են *ողջ լինեք, cheers* և *на здоровье* ընկած են բարոյահոգեբանական արժեքներ, որոնք միավորում են տվյալ ազգերին և օգնում հաղորդակցվել նույն մակարդակի վրա: Հայկական կենաց լսելիս անգլիացին շատ արագ տեղեկանում է ազգի մշակութային նորմերի և արժեքների մասին:

Օրինակ այն, որ ծնողը, երեխան, հայրենիքը, ընկերները ամենաթանկ երևույթներն են մեր մշակույթում և չանդադառնալ դրանց հնարավոր չէ, ինչպես նաև հարիր չէ:

«Բարով տեսանք» արտահայտությունը, որ ավետում է հայկական կենացների սկիզբը պատահական չէ: Երկար տարիներ սգի, չարչաչանքի մեջ ապրած ազգը ցանկանում այլևս միշտ բարով տեսնել իր հարազատներին, մտերիմներին և ընկերներին:

Գործաբանությունը, որը ուսումնասիրում է մշակույթների մեջ և միջև տարբերությունները դիտարկում է հարցը մի քանի տեսանկյունից: Ըստ Հաուսի (1986: 281) միջմշակութային գործաբանությունը համեմատում է այն եղանակները, որոնցով երկու կամ ավելի լեզուներ օգտագործվում են հաղորդակցման ընթացքում: Միջմշակութային գործաբանությունը հակադրական լեզվաբանության նոր, կարևոր ճյուղ է, քանի որ ցանկացած երկու լեզուներում սոցիալական համատեքստի տարբեր հատկանիշներ կարող են հարաբերական լինել հասկանալու՝ ինչ է արտահայտված և թե դա ինչպես է պայմանականորեն արտահայտված: Երկար տարիներ, գործաբանական հետազոտություններ իրականացնողները համեմատելու նպատակով կենտրոնացած են այն բանի վրա, թե ինչպես են հատուկ հաղորդակցական գործառույթներ իրականացվում տարբեր լեզուներում: (Barron 2001: 23)

Շատ լեզվաբաններ ավելի են խորանում լեզուների և մշակույթների ուսումնասիրության մեջ և անվանում են այս գիտաճյուղը «Էթնոգործաբանություն»: (Duranti 2007)

Էթնոգրաֆները ավելի շատ ուշադրություն են դարձնում իր բնական միջավայրում գրույցի մեկնաբանմանը: Գործաբանները, հիմքում վերցնելով լեզուն և վերջինիս կիրառական դրսևորումները համատեքստում, ոչ միայն հետազոտում են խոսքային ակտերը, այլև արտալեզվական գործոնները և ինքնության դրսևորումները դիսկուրսում: (Putz & Aertselaer 2008)

Կենացները, որպես խոսքային մի ժանր, միջմշակութային հակորդակցության և մշակութային մարդաբանության ուսումնասիրության առարկա է: Ինչպես նշեցինք, կենացների տեքստերը շատ տարբեր կարող են լինել կախված մշակույթից և մի շարք այլ գործոններից, ինչպիսիք են տարիքը, սեռը, դիրքը և այլն: Կենացը կարող է խոսքային ակտ լինել, երբ ինչ-որ մեկը հավաքույթի ժամանակ բարձրացնում է բաժակը և ասում **այս բաժակով ցանկանում եմ խմել բոլոր հավաքվածների կենացը, միշտ անպակաս լինենք իրարից**, քանի որ կենացը իրենից պետք է ներկայացնի ինչ-որ ցանկություն կամ բարեմաղթանք, մեծ մասամբ նախադասությունները ըղձական եղանակով են: Այդ իսկ պատճառով գրեթե միշտ կենացներում հնչում է Աստծո անունը, որպես ցանկությունների կատարող և հովանավոր: Այս երևույթը նկատելի է ոչ միայն հայկական, այլև շատ այլ մշակույթներում (բնավ կապ չունի կենացասածը ինչ տարիքի է, սեռի և դիրքի): Իսկ կենացի վերջում բաժակները միմյանց խփելը, որը նույնպես առկա է գրեթե բոլոր մշակույթներում, կարելի է համարել ոչ խոսքային հաղորդակցություն և գեղեցիկ ըրիտուալ, որը մշակութային նշանագիտության ուսումնասիրության առարկան է:

Շատ դեպքերում կենացները հնչում են ի պատիվ ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի, ինչպես օրինակ հայերը կասեն եկեք խմենք գործերի հաջողության

կենացը կամ եկեք այս բաժակով խմենք մեզ հյուրընկալած տան տիրոջ կենացը: Շատ հաճախ կենացներ են հնչում մահացած մարդկանց պատվին և դա սովորաբար արվում է հոտնկայս, որը նույնպես ոչ խոսքային հաղորդակցության մի ձև է:

Կենացների տեքստերը սովորաբար ոչ պաշտոնական ոճով են շարադրվում, սակայն կախված համատեքստից և թե ում է հասցեագրվում խոսքը հնարավոր են նաև պաշտոնական կենացներ, որոնք կարող են հարել հրապարակախոսական ոճին: Մշակույթներում, որտեղ սակավաթիվ են երկար տեքստերով կենացներ (օրինակ՝ ԱՄՆ) ասվում է պարզապես *cheers* և ամեն ինչ ասված է:

Էրդիայմը (2010) համարում է ալկոհոլի օգտագործումը որպես շփման մեջ սահմաններ վերացնող գերազանց միջոց, հատկապես, երբ ալկոհոլ խմելը համարվում է բիտուալ:

Գոֆը և Էդվարդսը (1998) նշում են, որ ալկոհոլի օգտագործումը սովորաբար օգտագործվում է տղամարդկություն հաստատելու համար, քանի որ նախկինում շատ մշակույթներում և հասարակություններում կանանց նույնիսկ արգելված էր խմել, իսկ տղամարդիկ կարող էին մինչև նույնիսկ գիտակցությունը կորցնելը՝ միաժամանակ չկորցնելով ինքնավստահությունը: (Kotthoff 1995)

Հայկական մշակույթում կենացներ ասելու մենաշնորհը սովորաբար տղամարդկանց է պատկանում: Կանայք կենաց են հնչեցնում այն ժամանակ, երբ կամ իրենց առանձնահատուկ խնդրում են, կամ երբ սեղանի շուրջ միայն կանայք են: Չնայած որ կանայք ավելի շատ են սիրում խոսել քան տղամարդիկ այս փաստը փոքր ինչ զարմանալի է թվում: Գուցե խնդիրը գենդերային ոչ հավասարության մեջ է, որ վերջերս շատ ակտուլ թեմա է դարձել և բազմապիսի տարաբնույթ ուսումնասիրությունների առարկա է դարձել կամ գուցե տղամարդիկ անընդհատ զգում են կարիք հաստատելու և ամրագրելու իրենց սոցիալական բարձր դիրքը:

Ուսումնասիրելով տարաբնույթ կենացներ՝ վերջիններիս, մեր համոզմամբ, կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Շնորհակալություն հայտնող
2. Շնորհավորող
3. Գովերգող
4. Ցանկություններ արտահայտող
5. Հաճոյախոսություններ անող

Ուսումնասիրելով բազմաթիվ կենացներ՝ կարելի է եզրակացնել, որ հայկական մշակույթում գերակշռում են ցանկություն արահայտող կենացները, մինչդեռ անգլիացիների մոտ՝ շնորհավորող:

Տեքստերի ոճը բնականաբար նույնպես տարբեր են: Անգլիացիները նախընտրում են կարճ տեքստեր առանց ենթատեքստերի և բազմաթիվ ոճական հնարների, իսկ հայերը ճիշտ հակառակը՝ նախընտրում են խոսքին հաղորդել գունային տարբեր երանգներ և փորձում են գեղագիտական ազդեցություն ունենալ ունկնդրի վրա: Շատ են օգտագործվում փոխաբերությունը և համեմատությունը, որպես ոճական հնարներ:

Կան շատ կենացներ, որոնք հումորային բնույթ ունեն: Վերջիններս նկատելիորեն ավելի երիտասարդ սերնդի կողմից են օգտագործվում: Այս պարագայում ավելի պրագմատիկ և առօրյա խոսակցական ոճով են հանդես գալիս երտասարդ կենացասածները: Բարբառային տարրեր, անեկդոտներ և զվարճալի մեջբերումներ հայտնի մարդկանցից նույնպես օգտագործվում են: Օգտագործվում են նույնիսկ տվյալ ժամանակաշրջանում հայտնի ֆիլմերից, սերիալներից և հաղորդումներց արտահայտություններ, որոնք կարծես թևավոր խոսքեր են դառնում պատանիների շրջանում: Սակայն այս պարագայում էլ ազգային տարրերը զգացվում են խոսքում:

Ռուսական մշակույթում ևս ինչպես հայկականում առանց կենաց հնչեցնելու չեն խմում նույնիսկ եթե խմողները երկուսն են: Ըստ ռուսների՝ կենաց չեն ասում միայն ալկոհոլիկները: Այս սովորույթը կարելի է ասել կովկասյան ազդեցություն է ԽՍՀՄ-ի ժամանակներից մնացած: Օրինակ հայերի օգտագործած *թամադա* բառը, որը գլխավոր կենացասածն է և ինքն է հիմնականում կենացներ առաջարկում վրացիների բառն է, որը նշանակում է կենացների վարպետ: Ռուսները նույնպես ունեն *տամադա*, որին վարձում են կրելու այդ պատասխանատվությունը:

Պահանջարկից ելնելով կենացները արվեստի նման մի բան են դարձել, որով կարելի է գումար վաստակել: Նույնը վերջին տարիներին նկատելի է նաև հայկական միջոցառումների ժամանակ, և որքան հայտնի և հանրային է տվյալ անձը այնքան վարձավճարը ավելի բարձր է: Այս պարագայում գործ ունենք արդեն սցենարային կենացների հետ, որոնք նախապես գրվում և մշակվում են: Այստեղ հանդիպում ենք արդեն հանգավորված խոսքի և բանաստեղծական ոճով հնչեցրած կենացների: Այստեղ տեքստը առավելագույնս հազեցաց ոճական հնարներով:

Շատ հաճախ հայակական կենացները կարող են աղոթքի պես հնչել, հատկապես, երբ պահը հասնում է զինվորներին նվիրված կենացին: Կապ չունի, թե միջոցառումը ինչին կամ ում է նվիրված, այս կենացը պարտադիրների շարքից է: Հայերը իրենց բառապաշարի ամենասուրբ բառերն են օգտագործում զինվորի կենացը խմելիս, քանի որ զինվորը հայի համար կուռքի պես բան է:

Սոցիոլոգիայի, մարդաբանության, լեզվաբանության և սոցիալական հոգեբանության հասկացությունները մշակույթը ներկայացնում են որպես «մեզ և ուրիշներին» կառույցով: (Hausendorf 2000, Spreckels and Kotthoff 2007)

Վերջերս շատ գիտնականներ (Corder and Meyerhoff 2007) մշակութային խմբերին սկսել են համարել այսպես կոչված *communities of practice* (մարդկանց խումբ, որը նույնակարծիք, նույնատիպ է և նույն համոզմունքների):

Ըստ Լեյվի և Վենգերի (1991) աշխատության *communities of practice* –ը կարող է դիտվել որպես մշակութային խմբերի մի մաս, քանի որ նրանք ունեն իրենց սեփական փորձը և մեկնաբանական առանձնահատկությունները: Այս կառուցողական մոտեցման շրջանակներում կարելի է հասկանալ, թե ինչպես են ստեղծվում սոցիալական հարաբերությունները և ինչպես է ազդում խոսակցի գիտելիքը կամ անտեղյակությունը տվյալ իրադրությունում և տեղի պատմության շարունակական սոցիալական գործընթացների վրա: Շատ համատեքստերում մշակույթների դասակարգումը կարող է ճկուն սահմանազատմամբ գործել, ինչպիսին է օրինակ՝ արևելք-արևմուտք բաժանումը: Նախկին խորհրդային երկրները պատմական փորձը կիսում էին այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսը և քաղաքականությունը, և այս շփման արդյունքում հստակ տարանջատվում և ընդգծվում էին մշակույթների տարբերությունները:

Որոշ հանրալեզվաբանական ուսումնասիրություններ միջմշակութային հաղորդակցության ոլորտում (Leontiy 2009) վեր են հանում հաղորդակցական ոճի առանձնահատկությունները, որոնք արտացոլում են հասարակության կյանքի պայմանները: Հաղորդակցական ոճերի տարբերությունները կարող են արտացոլել տարբեր պայմաններ, ինչպիսիք են հասարակության ծագումը, գիտելիքի ասիմետրիան, լեզուների տարբեր կիրառումը, հակադրվող շահերը կամ արժեքային համակարգերը: Միջմշակութային հաղորդակցման հետազոտությունների մեծամասնությունը փորձել է բացատրել, թե ինչպես են տարբեր հաղորդակցական ոճերը տանում թյուրըմբռումների:

Այնուամենայնիվ, վերջին տասը տարիների ընթացքում կատարված հետազոտությունները սկսեցին ավելի հեռուն գնալ, քան պարզապես միջմշակութային դիսկուրսի թյուրըմբռումների վերլուծությունն է: (Bührig & ten Thije 2006) Կենաց լսողը, ով չի պատկանում տվյալ մշակութային խմբին կարող է նույնիսկ զայրանալ իր համար ոչ պատշաճ և ընդունելի տեքստ լսելով և իր համար սա կարող է մշակութային շոկ հանդիսանալ:

Հայաստանում կենացները կարող են համարվել մարդկային շփման բարդ մի համակարգ, որտեղ ամեն մեկը իր դերն ունի (օրինակ պարզապես կարող ես բարձրացնել բաժակը և ոչինչ չասել՝ միևնույն ժամանակ հաղորդակցվելով բոլորի հետ) և կարող ես անհարգալից թվալ, եթե ուշադիր չես

լսում կենացասածին, մինչդեռ շատ այլ երկրներում այս երևույթը հաղորդակցման ավելի պարզ, ոչ պաշտոնական և ձևական բնույթ ունեցող բան է:

Հայկական կենացները լի են խորը փիլիսոփայական մտքերով, որոնք կարող են, մեղմ ասած, տարօրինակ հնչել այլ մշակույթի ներկայացուցչի համար:

Թամադա ընտրելու գործընթացը հայերի համար այնքան էլ դյուրին գործ չէ: Նա պետք է լինի մեծ փորձ ունեցող և ճարտասան մեկը, ով հարգանք է վայելում սեղանակիցների շրջանում: Երբ արտասահմանցին նստում է սեղան մեզ հետ ուտելու նպատակով, նա չի էլ պատկերացնում, որ մասնակցելու է մի դրամատիկ փոքրիկ ներկայացման: Նա չի պատկերացնում, որ խմելու և ուտելու արանքում դասախոսություն կարող է լսել այս կամ այն երևույթի, խնդրի կամ հարցի վերաբերյալ:

Կախված հավաքույթի առիթից, որոնք կարող են և ուրախ և տխուր լինել, ոչ միայն ուտեստները կարող են տարբեր լինել, այլև կենացների ուղղվածությունը և ժանրը: Թամադայի հնչեցրած կենացների հերթականությունը պայմանավորվում է հարցերի կարևորությամբ: Թամադան պարտադիր պիտի հնչեցնի ընտանիքի, հյուրերի, հայրենիքի, առողջության, ընկերության, ծնողների, օջախի, երեխաների կենացը: Այստեղից ևս կարող են երևալ մարդկանց արժեհամակարգերի տարբերությունները:

Անգլիայում առաջին կենացը տան տերը կամ տան տիկինն են ասում: Կենացասածը սովորաբար կանգնում է, որպեսզի մարդիկ ավելի ուշադիր լսեն, իսկ մյուսները նստում են և ժպտում՝ ցույց տալով, որ անտարբեր չեն խոսացողի հանդեպ: Այստեղ չեն սկսում օգտվել ուտելիքից մինչև չի հնչել առաջին կենացը, որը ինչպես նշեցինք տան տերն է ասում, այնուհետ բոլորը հերթով առաջարկում են կենացներ և խմում: Կենացներ հնչում են նույնիսկ դեսերտի ժամանակ: Կենացասածը կենացը ասնպայման ավարտում է *thank you* ասելով: Անգլիացիների մոտ կենացը պետք է հակիրճ և ճիշտ նշանակակետին լինի ի հակադրություն հայերի, ովքեր սիրում են հեռվից մոտենալ խնդրին: Անգլիացիները միանում են կենացին *cheers* ասելով: Եվ կապ չունի, թե ում կամ ինչի կենացն են խմում մեկը մյուսին ասում է *to your health* կամ *to stan*: Զպլանավորած կենացը հնչում է այսպես *To Stan – God bless him/her*: Երբ անգլիացուն հանկարծ խնդրում են կենաց առաջարկի ասում է *To Stan, a terrific guy and a friend to us all!*:

Հետաքրքրաշարժ է, որ անգլիացիների համար տարբերություն չկա կենացը ընտանեկան խնջույքի, ընկերական հավաքույթի, գործընկերների հետ ընթրիքի, թե հարսանիքի ժամանակ է, միևնույնն է այն նուն կերպ է հնչում: Պաշտոնական բնույթի կենաց հազիվ թե հնարավոր լինի լսել անգլիացիներից: Անգլիացիները լավ կենացը լավ նվեր են համարում: Նրանք երբեք առիթը բաց չեն թողնի կատակելու:

Հաճախ հանդիպում ենք այսպիսի կլիշեներին.

Your friend has a shoulder to cry on.

You see them once in a blue moon.

Your relationship means the world to you.

You are partners in crime.

Անգլիացիները կենացների ժամանակ շատ են օգտագործում մարմնի լեզուն խոսքը ավելի տպավորիչ դարձնելու համար:

Հատկապես տպավորիչ են անգլիացիների հարսանեկան կենացները.

Remember, bride and groom, that love is not about how much you say “I love you.” It is about what you do to prove it. May you continue to show your love for each other each and every day. A toast to the two of you on your wedding day.

Կենացասածը ոչ մի ոճական հնար, դարձվածք կամ թևավոր խոսք չի օգտագործում: Պրագմատիկ մոտեցում է ցուցաբերում հարցին և բարեմաղթանքն էլ է հնչում բավականին պրագմատիկ

To be really able to experience the value of joy, you must have someone special to share and experience it with. What a wonderful thing it is then, a miracle even, that the two of you have found each other. Congratulations and to you, I raise my glass.

Այստեղ կենացասածը համեմատում է սերը հրաշքի հետ: Գեղեցիկ համեմատություն է: Քանզի հրաշքները ամեն օր կամ հաճախ չեն պատահում, հեղինակի մտադրությունը շեշտելն է սիրո կարևորությունը և անուղղակիորեն խորհուրդ է տալիս պահել, փայփայել ու գնահատել մեկը մյուսին:

To love, laughter, and a happily ever after. To bride and groom, your fairy tale is only beginning.

Շատ հակիրճ կենաց է, բայց կարծես ամեն ինչ ասվում է: Կենացասածը օգտագործում է *fairy tale* բառը՝ ցույց տալու, թե ինչ լավ կյանք է սպասվում նորապսակներին:

May you always have walls for the wind, a roof for the rain, tea by the fire, laughter to cheer you up, and everything that your heart desires. Congratulations.

Բավականին պոետիկ հնչողությամբ կենաց է, որը խորքային իմաստներ ունի: Պարզ է, որ *walls for the wind, a roof for the rain, tea by the fire* ուղիղ իմաստով չի օգտագործվում, այլ փոխաբերական:

What is love anyway? It is unpredictable, sometimes it makes very little sense. But it is the strongest thing in the world and I am so happy that the two of you love each other the way that you do. Cheers to the bride and groom. May your love continue to shine and serve as a beacon of hope for all of us.

Կենացասածը խոսքի սկզբում տալիս է ինչ է սերը հարցը և ստիպում բոլորին մտքի մեջ սահմանել դա և փորձել կրկին պատասխան գտնել: Ումանց սա կզգեր շատ հաճելի հիշողությունների գիրկը: Հակիրճ, բայց շատ գեղեցիկ

շարադրված կենաց է՝ հազեցած ոճական հնարներով, որոնք բարեմաղթանքը ավելի տպավորիչ են դարձնում: *May your love continue to shine and serve as a beacon of hope for all of us* գեղեցիկ փոխաբերություն է, որով կենացասածը ավարտում է իր խոսքը:

Let us toast to the health of the bride, let us toast to the health of the groom, let's have a toast to the person who tied, and let's raise a glass to everyone in this room.

Սա նույնպես բանաստեղծական ոճով շարադրված կենաց է, և անգլիացիները ամենահաճախն են խմում առողջության կենացը, և հարսանիքները բացառություն չեն:

Հարսանիքների ժամանակ բավականին շատ են հնչում հումորային կենացները.

Marriage is always a workshop in the sense that the husband is the one who works and the wife is the one who shops. But in all serious, marriage is a balance, no matter what roles the husband and wife take on. As long as you remember to respect and love each other, you can never go wrong. Let us toast to the marriage of bride and groom.

Բառախաղը իսկապես տպավորիչ է (workshop – work and shop)

Marriage is an interesting arrangement that allows you to annoy that one special person for the rest of your life. But it is so worth it when you really love each other. Congratulations to bride and groom, may they continue to annoy each other for many more years to come.

What God has joined together today, let man not separate. Join me, everyone in congratulating bride and groom on this blessed day.

Անգլիացիները, ինչպես հայերը պարտադիր հիշատակում են Աստծուն և միշտ խնդրում նրա հովանավորությունը, հատկապես, երբ հարցը վերաբերում է նոր կյանքի ստեղծմանը:

Հայկական կենացները հերթակայվում են ըստ կարևորության: Առաջնային տեղերում են հայրենիքը, մայրը, օջախը:

Եկեք, խնդրեմ, եկեք այսօր ու դարձեք ինձ սեղանակից՝
Օգտվելով իմ այսօրվա բարենպաստ եղանակից:
Եկե՛ք այսօր ուզածի պես ուրախանանք, ուտենք–խմենք,
Զե՛ որ նորից էլ մեր մորից չենք ծնվի մենք:
Թող գան, խնդրե՛մ, բոլոր նրանք, ովքեր գիտեն
Փայլատակել կարմիր գինու թնդությունից.
Ուրախանալ և օտարի խնդությունից,
Ովքեր գիտեն վիշտ ու ցավը ետ վանելու,
Կյանքում լավը և առողջը հավանելու,

Գեղեցիկը ու վսեմը դավանելու հարգն ու կարգը.

Պարույր Սևակ

Խորը փիլիսոփայական կենացների շարքից.

Երբ մենք ծնվեցինք՝լացեցինք, բայց բոլորը ուրախացան...Եկեք խմենք այն բանի համար, որ մեռնելիս բոլորը մեր շրջապատում լացեն, իսկ մենք ուրախ լինենք...

Հայկական կենացները առանձնանում են իրենց հումորով: հատկապես տպավորիչ են սեփական անձը գովերգող կենացները:

Եկեք խմենք ազնիվ և համեստ մարդկանց կենացը: Նամանավանդ, որ մեր նմանները շատ չեն...

Այստեղ իհարկե հումոր կա, բայց և այնպես ճշմարտություն էլ կան այս տողերում: Միշտ էլ հայերի մեծ մասը մտածում է, որ ինքը լավն է ու իր նմանը չկա:

Երիտասարդներին հատկանշական են այսպիսի հումորային կենացները: Տեքստը սկսվում է առածի պես ու մինչը վերջին նախադասությունը պարզ չի դառնում, թե կենացը ում կամ ինչին է նվիրված:

Վագուս էր գորտը երկաթ գծերով: Հանկարծ եկավ գնացքը և կտրեց նրա ոտքերը: Գորտը սողաց առաջ և փրկվելով մտածեց, որ ափսոս էին սիրուն ոտքերը,ապա որոշեց վերադառնալ ոտքերի հետևից: Ոտքերը վերցնելիս եկավ հաջորդ գնացքը և կտրեց գլուխը: Եկեք խմենք այն աղջիկների կենացը, ովքեր իրենց սիրուն ոտքերի համար գլուխը չեն կորցնում:

Ինչպես տեսնում ենք կենացը նվիրված էր գեղեցիկ աղջիկներին, որոնք, ընդհանրապես, կապ չունեին գորտերի և գնացքների հետ: Տեքստի առաջին հատվածում *գլուխը կորցնել* արտահայտությունը ուղիղ իմաստով է օգտագործվում, իսկ երկրորդ հատվածում՝ փոխաբերական:

Քանի, որ հայերը էությանմբ շատ շփվող, իրար օգնող և հյուրասեր մարդիկ են, նրանց մոտ ընկերություն հասկացողությունը շատ կարևոր է: Շատերը պնդում են, որ ընկերը անգին բան է և կյանքը կտան հանուն ընկերոջ: Հետևաբար, ընկերության կենացը հայկական սեղանների անբաժան մասն է կազմում:

Բազմաժանր կենացների կարելի է հանդիպել ընկերների մասին, նույնիսկ երբեմն բանաստեղծական ոճի:

Մոտիկ ծանոթ թե հարազատ, ունեմ կողքիս մեծ շրջապատ, բայց լավ ընկեր ես վեց հատ ունեմ, միշտ ես ձեզ կվստահեմ, ձեզ իմ օջախ կընդունեմ, միշտ ձեր կողքին կլինեմ, ես ձեր ցավը տանեմ:

Նշենք, որ *ցավը տանեմ* արտահայտությունը ընկալվում է միայն հայ հասարակության կողմից: Անգլիացին չի հասկանա, թե ինչու կամ ինչպես է մեկը մյուսի ցավը տանում: Այսպիսի արտահայտություններ հաճախ կարելի է

հանդիպել հայերենում, որոնք պարզապես մշակութային շոկի կենթարկեն այլ մշակույթի կրողին:

Հայերը երբեք բաց չեն թողնում խաղաղության կենացը՝ ելնելով այն հանգամանքից, որ դժբախտաբար իր պատմության տարբեր հատվածներում իմացել է խաղաղության գինը: Դրա համար միշտ հնչում է *Ցամաք աչքով* բարեմաղթանքը:

Ամենաշատ կենացներ կարելի է լսել հայկական հարսանիքների ժամանակ: Սովորաբար, թամադան է զբաղվում կենացներ առաջարկելով և դա սովորաբար անում է բանաստեղծական ոճով է՝ ասել է, թե հանգավորված խոսքով, երբեմն էլ հետաքրքիր պատմություններ պատմելով: Կարելի է նշել, որ հայկական և անգլիական հարսանեկան կենացների տեքստերը առանձնահատուկ չեն տարբերվում:

Նորակազմ ընտանիքին հյուր են գալիս երջանկությունը, առողջությունը, հարստությունը և սերը:

Սկեսայրն ասում է,- թող ներս գա առողջությունը, այն ինձ շատ է հարկավոր:

Սկեսուրն ասում է,- թող ներս գա հարստությունը, մենք նրա կարիքը շատ ենք զգում:

Տղան ասում է,- թող ներս գա երջանկությունը, երկար ժամանակ է ինչ փնտրում եմ:

Հերթը հասնում է հարսին, նա էլ ասում է թող ներս գա սերը:

Որպես իրենց ընտանիքի նոր անդամ որոշում են կատարել հարսի ցանկությունը:

-Թող ներս մտնի սերը:

Միոր հետևից ներս են մտնում և՛երջանկությունը, և՛հարստությունը, և՛առողջությունը:Երբ հարցնում են, թե ինչու ներս մտան մնացածը, չէ, որ մենք ընտրեցինք միայն սիրուն, նրանք պատասխանում են՝ որտեղ սեր կա մենք այնտեղ ենք:

Հարսանիքների ժամանակ կենաց պետք է ասի պարտադիր ներկա գտնվող ամենատարեց մարդը, ում խոսքը բարոյախրատական է:

Երեխե՛ք ջան, ուրախ կյանք եմ ձեզ մաղթում: Իրար հարգող և իրար լսող լինեք և ամեն մեկդ իր տեղում: Եթե մեկդ զանգակ է, ապա մեկը բամբակ լինի: Մի բարձի ծերանաք ու շրջապատված լինեք բազմաթիվ գավակներով:

Մի բարձի ծերանալ արտահայտությունը օտարերկրացին բնականաբար չի հասկանա: Անգլիացիների մոտ համարժեք որևէ արտահայտություն փորձեցինք գտնել, բայց ապարդյուն: Մի բարձի ծերանալ՝ այսինքն ծերանալ միասին:

Կարևոր տեքստային հատկանիշներ են համարվում առողջաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, ինչպես նաև կրկնությունները, որոնք օգտագործվում են հատում ուշադրություն հրավիրելու տվյալ բառի կամ արտահայտության վրա, ինչպես նաև հատուկ ընտրված բառապաշարը, որը տարբեր է առօրյա բառապաշարից: Նրանք հատուկ ընտրվում են գոհացնելու նրան, ում նվիրված է կենացը: Երբ մեկից ավելի մարդկանց ուշադրություն են հրավիրում մեկ անձի շուրջ հարկավոր է շատ պատշաճ կերպով դա անել, որպեսզի հնարավոր լինի գրավել բոլորի համակ ուշադրությունը: Դա այնքան էլ դյուրին գործ չէ: Ամեն մեկին տրված չէ հոետորությունը և դա իսկապես արվեստի պես բան է: Այնպես ընտրել բառերը, շարադասությունը, արտասանությունը և առողանությունը, որ ստացվի իմաստալից, գեղագիտական տեքստ իր համապատասխան հաղորդագրությամբ հասանելի հասցեատերերին:

Կան նաև բազմաթիվ քաղաքավարության նորմեր և կանոններ, որոնք պետք է պահել տվյալ հասարակական խմբում համապատասխանաբար ընկալվելու համար: Հասարակությունը շատ պահանջկոտ է այս հարցում և այն անշուշտ պետք է բավարարվի, այլապես սխալ ձևակերպված տեքստը կարող է ընդհարումների առիթ հանդիսանալ, ավելին, լուրջ վիճաբանության և նույնիսկ ծեծկռթուկի կարող է հասնել հասարակության որոշ խմբերի պարագայում: Հայկական մարդաշատ միջոցառումների ժամանակ, հատկապես հարսանիքների, նման դեպքեր շատ են գրանցվում մի սխալ ընտրված բառի, արտահայտության կամ սխալ հասկացված ենթատեքստի պատճառով:

Հետևաբար թամադա է ընտրվում ոչ պատահական մարդ, այլ տվյալ խմբից փոքր-ինչ առանձնացող մեկը, ով աչքի է ընկնում իր գիտելիքի մակարդակով և փորձով և ում բոլոր սեղանակիցները հարգում են:

Ուսումնասիրելով կենացների տեքստերի լեզվամշակութային և լեզվաոճական առանձնահատկությունները կարելի է եզրակացնել, որ մշակույթի դերը առաջնայինն է: Բիտուալները տարբեր երկրներում տարբեր են, և կենացները, լինելով ամենահետաքրքիր ռիտուալներից մեկը, բացառություն չեն:

Բանալի բառեր - Կենաց, լեզվամշակութային հաղորդակցություն, ոճական հնարներ, մշակութային առանձնահատկություններ, համեմատական վերլուծություն, ենթատեքստ, հեղինակի մտադրություն:

Համիկ Մկրտչյան, Կենացների լեզվամշակութային դրսևորումները - Սույն հոդվածում փորձ է արվում ուսումնասիրել և համեմատել տարբեր մշակույթների կենացները լեզվամշակութային տեսանկյունից:

Կենացները, որոնք մեր կյանքի անբաժան մասն են կազմում, կարող են ներկայացնել մի ամբողջ ազգի պատկեր և ապրելակերպ: Այն որ կենացները ուշագրավ տեղ են գրավում Հայաստանում, Ռուսաստանում, Վրաստանում, իսկ

Գերմանիայում, Հոլանդիայում ընդհանրապես կարևոր չեն և կարելի է դրանց շրջանցել, խոսում է ազգերի մշակույթների, ինչպես նաև լեզվամտածողության բազմազանության մասին:

Асмик Мкртчян, Лингвокультурные проявления тостов - В этой статье изучаем и сравниваем тосты разных культур с лингво-культурной точки зрения. Тосты, которые являются неотъемлемой частью нашей жизни, могут рассказать об образе жизни целой нации. То, что в Армении, России, Грузии тост является важным компонентом, а в Германии, в Нидерландах их можно избежать, говорит о многообразии культур наций, а также их языков.

Hasmik Mkrtchyan, The Linguocultural Manifestations of Toasts - In this article, an attempt is made to study and compare the toasts of different cultures from a linguocultural perspective.

Toast, which is an inseparable part of our lives, can represent the image and lifestyle of a whole nation. The fact that in Armenia, Russia, Georgia toast is an important phenomenon in contrast to Germany, the Netherlands where it can be avoided, speaks of the diversity of nations' cultures as well as their language.

REFERENCES

1. Austin, John. 1962. *How to Do Things with Words*. Oxford: OUP.
2. Barron, Anne. 2001. *Acquisition in Interlanguage Pragmatics* [Pragmatics & Beyond New Series 108]. Amsterdam: John Benjamins.
3. Boeder, Winfried. 2009. Swanische Trinksprüche. *Georgica* 31: 20–33.
4. Bohle, Ulrike & König, Ekkehard. 2001. Zum Begriff des Performativen in der Sprachwissenschaft. *Paragana* 10(1): 13–34.
5. Brehmer, Bernhard. 2009. *Höflichkeit zwischen Konvention und Kreativität. Eine pragmalinguistische Analyse von Dankesformeln im Russischen*. Munich: Otto Sagner.
6. Briggs, Charles & Bauman, Richard. 1992. Genre, Intertextuality, and Social Power. *Journal of Linguistic Anthropology* 2(2): 131–172. Brown, Penelope & Levinson, Stephen. 1987. *Politeness: Some Universals in Language Usage*. Cambridge: CUP.
7. Buhrig, Christin & ten Thije, Jan. 2006. *Beyond Misunderstanding: The Linguistic Reconstruction of Intercultural Communication* [Pragmatics & Beyond New Series 144]. Amsterdam: John Benjamins.
8. Chatwin, Mary Ellen. 1997. *Socio-cultural Transformation and Foodways in the Republic of Georgia*. New York NY: Nova Science Publishers.
9. Collins, Randall. 2004. *Interaction Ritual Chains*. Princeton NJ: Princeton University Press.

10. Corder, Saskia & Meyerhoff, Miriam. 2007. Communities of practice in the analysis of intercultural communication. In *Handbook of Applied Linguistics*, Helga Kotthoff & Helen Spencer-Oatey (eds), 446–466. Berlin: Mouton de Gruyter.
11. Douglas, Mary. 1984. *Constructive Drinking. Perspectives on Drink from Social Anthropology*. Cambridge: CUP.
12. Farnia, Maryam, Buchheit, Ly & Salim, Shahida Banu binti. 2010. “I need to talk to you” – A contrastive pragmatic study of speech act of complaint in American English and Malaysian. *The International Journal of Language, Society and Culture* 30: 11–31.
13. Finnegan, Ruth. 1992. *Oral Traditions and the Verbal Arts – a Guide to Research Practices*. London: Routledge.
14. Foley, William A. 1997. *Anthropological Linguistics*. Oxford: Blackwell.
15. Hymes, Dell. 1974. Ways of speaking. In *Explorations in the Ethnography of Speakin*
16. Irvine, Judith. 1979. Formality and informality in communicative events. *American Anthropologist* 81(4): 773–790

LES EXPRESSIONS IMAGÉES EN FRANÇAIS ET EN ARMÉNIEN

MYRA KARAPÉTIAN

Les recherches sur la phraséologie datent du XVIII^e siècle (1771). Or, les grammaires traditionnelles descriptives lui ont attaché peu d'importance, car les expressions idiomatiques, perçues et considérées comme secondaires, à cause de leur appartenance au langage familier et informel, expriment les émotions, les sentiments et la sagesse populaire d'une même communauté. De nos jours, la phraséologie bénéficie d'une reconnaissance méritée grâce aux nombreux chercheurs qui s'intéressent à ces tournures.

Pour Saussure, il s'agissait de "locutions toutes faites"¹; Rey et Chantreau² définissent la phraséologie comme "un système de particularités expressives liées aux conditions sociales dans lesquelles la langue est actualisée". Le père de la phraséologie, Bally citait ce terme dans son traité: "Si, dans un groupe de mots, chaque unité graphique perd une partie de sa signification individuelle ou n'en conserve aucune, si la combinaison de ces éléments se présente seule avec un sens bien net, on peut dire qu'il s'agit d'une locution composée...c'est l'ensemble de ces faits que nous comprenons sous le terme général de phraséologie"³.

Les expressions idiomatiques font parties de la phraséologie. Ces expressions sont désignées par des appellations différentes: «idiomatiques» (Gross, 1996) ou imagées (Galisson, 1984) ou encore «figurées» (Rey et Chantreau, 2003; Heinz, 1993, etc). Nous allons parler de l'expression imagée qui est définie sur le site, <http://www.mnaaft.org.janc2.htm> du 22/02/08, comme une «Expression souvent fondée sur une comparaison, une figure ou une métaphore». Elle peut également être considérée comme une «... "manière d'exprimer quelque chose qui implique une rhétorique et une stylistique, elle suppose le plus souvent le recours à une 'figure', métaphore, métonymie, etc»⁴. Les deux définitions donnent une idée claire de ce qui peut être une expression imagée. En réalité l'expression imagée peut être une phrase, une phrase ornée d'image ou de rhétorique et qui demande une deuxième lecture. C'est probablement l'image et la métaphore qui l'ont également attribué le nom d'expression imagée. Autrement dit, les expressions imagées nous représentent le monde et les idées partagées à travers les métaphores. Elles traduisent une fonction importante de la langue, celle du détour, de l'accès indirect au sens : il faut les interpréter selon leur sens figuré et non leur sens littéral.

¹ Saussure D.F.: Cours de linguistique générale, 1916, p. 173.

² Rey A. Chantreau S.: Dictionnaire des expressions et locutions. Le Robert, coll. Les Usuels, préface IX, 1989.

³ Bally Ch.: Traité de stylistique française. Genève: vol.1. Librairie George et Cie; 1951, p.86.

⁴ <http://www.tv5.org/cms/chaine-francophone/lfp-11171-Les-expressions-imeges-d-Archibald.htm>

La bonne maîtrise des expressions idiomatiques est aussi importante dans la langue maternelle que dans la langue étrangère. Dans la première elle se fait automatiquement (sans faire nécessairement une réflexion linguistique) et les expressions sont utilisées sans effort (sans se rendre compte de leurs particularités). Tandis que dans la langue étrangère, elles peuvent poser des vraies difficultés: le locuteur est obligé de chercher toujours des explications logiques pour que le message soit compréhensible. Pourtant, même pour les natifs la signification d'une expression peut rester floue ou bien ils peuvent les utiliser de manière inadaptée.

Il existe des expressions idiomatiques dans plusieurs langues. La comparaison contrastive avec la langue maternelle permet d'analyser le fonctionnement des deux langues et de voir les ressemblances et les différences culturelles. La différence entre les expressions imagées en français et celles en arménien est ce qui nous a donné l'envie de les explorer.

Les expressions imagées sont basées sur des représentations concrètes et suggestives d'idées et de situations de la vie courante. C'est un procédé qui permet d'embellir et d'enrichir la sémantique d'une langue par l'imaginaire collectif. On comprend que plus les adeptes d'une même langue sont d'horizons différents, plus l'inspiration est riche et les trouvailles sont géniales. Les expressions imagées sont souvent le reflet d'une culture; les images qu'elles véhiculent sont différentes, mais l'idée exprimée est sensiblement la même. Dans chaque langue les expressions sont intraduisibles au sens de la signification, car chaque langue a son registre d'images, qui sont propres à son génie, à sa culture, à sa façon de voir les choses. Prenons-en celle-ci : «Chercher des poils sur un œuf»⁵. Nous savons que sur l'œuf normalement il n'y a pas de poil. Si nous cherchons une chose là où elle n'est pas, nous cherchons donc une chose introuvable où on la cherche. Par exemple, lorsque nous sommes à la poursuite d'un objectif insaisissable, nous sommes en train de chercher des poils sur l'œuf. Mais la traduction littérale arménienne (Չվի մեջ մազ փնտրել) n'a pas le même sens, elle signifie montrer de la mesquinerie, être malveillant, méticuleux. L'équivalent arménien de l'expression française «Chercher des poils sur un œuf» est: Ցաւաւորութիւնը գետնի վրայ փնտրել (Pêcher du poisson sur la terre). L'image est différente, mais l'idée exprimée est la même.

Ainsi, la traduction, surtout mot-à-mot, d'une expression idiomatique d'une langue à une autre serait une tâche difficile et même risquée, car chaque langue présente ses propres traits socioculturels et linguistiques dans lesquels les expressions imagées peuvent surgir en transmettant la réalité. Ces expressions sont définies selon le Petit Robert comme «forme ou locution propre à une langue, impossible à traduire

⁵ A, Rey, S. Chantreau, ibidem, p. 739

littéralement dans une autre langue de structure analogue»⁶. Le passage d'une langue à l'autre sans dénaturer le sens devient plus fluide. Pour utiliser une expression imagée il faut chercher l'expression imagée correspondante. Il est important de les aborder en contexte pour découvrir quand une expression précise s'utilise, le sens qu'elle a et les images qu'elle provoque. Dans l'exemple ci-dessous l'image et le message véhiculés par l'expression imagée, sont intimement liés à la langue dans laquelle ils sont nés: «elle le mène par le bout du nez» (signifiant «elle le contrôle», «elle fait ce qu'elle veut de lui»). C'est une expression imagée, qui appartient à la langue française, mais sa traduction littérale coïncide avec la tournure arménienne - Քթից բռնած ման ածել:

Examinons d'autres expressions où la traduction mot à mot n'a pas pour résultat un sens similaire dans notre langue.

Perdre la boussole (կողմնացույցը կորցնել), **perdre le nord** (հյուսիսը կորցնել), **perdre la tête** (զուլիսը կորցնել). Les traductions des deux premières expressions sont incompréhensibles pour le lecteur arménien, tandis que la dernière existe aussi en arménien avec une autre tournure- **կծիկը կորցնել** (perdre la pelote) exprimant le même sens: ne pas savoir que faire, être égaré.

On le connaît comme sa poche – signifie *connaître qqn ou qqch à fond*. Dans l'équivalent arménien - «**հինգ մատի նման (պես) ճանաչել, գիտնալ**» (connaître comme ses 5 doigts) l'idée est la même, mais l'image est différente.

Une expression idiomatique est le miroir de la pensée et de la vie d'un peuple. Toute langue possède des expressions qui évoquent sur-le-champ une image pour parler de situations courantes. En contrepartie, une expression peut revêtir du sens dans une langue et non dans une autre. En voici quelques-unes:

Casser la pipe - signifie *mourir*. En arménien nous avons une autre expression qui englobe l'image de fumée pour dire mourir, périr - **ծուխը մաքել, հանգցնել** (littéralement – éteindre la fumée). Au sens figuré le mot «fumée - ծուխ» en arménien a le sens de «famille», «ménage», «symbole de vivacité», donc «Eteindre la fumée», veut dire «détruire la maison, le ménage de qn», «interrompre la lignée, l'ensemble des descendants, des enfants, des petits-enfants, etc».

Mettre la main au feu signifie *être sûr de qch*. Ce qui est intéressant c'est la différence des images de la même idée en français et en arménien. En arménien on dit – **քիթս կկտրեմ, ձեռքս կկտրեմ`** *je couperai mon nez, je couperai ma main* pour dire «qu'il est sûr de ce qu'il dit».

Pourquoi arrive-t-il que deux énoncés éloignés aient une interprétation sémantique si rapprochée dans deux langues différentes? Lorsqu'on cherche à analyser ce mécanisme, on constate que les expressions idiomatiques, malgré la différente vision

⁶ Dictionnaire *le Petit Robert*, version électronique, 2012, *Le français langue seconde, origines d'une notion et implications didactiques*. Paris, Hachette, 1991, p.95.

du monde de chaque langue, doivent leur signification au contenu conceptuel de ce qu'elles expérimentent. Observons les expressions suivantes:

Raconter des salades (raconter des histoires, des mensongeries; traduction littérale – աղցան՝ շիլափլալ պատմել). L'équivalent arménien de cette tournure sera ***հեքիաթներ պատմել*** (raconter des contes).

Se jeter dans la gueule du loup (aller imprudemment au-devant d'un danger; trad. litt. – նետվել գայլի երախը) – en arm. ***գայլի բերան ընկնել*** (tomber dans la bouche du loup);

En faire un fromage ou faire d'une mouche un éléphant (grossir démesurément l'importance d'un fait- traduction littérale: դրանից պանիր սարքել՝ շատ կարևոր սննդամթերք ֆրանսիացիների համար կամ ճանճը փիղ դարձնել). L'équivalent arménien: ***լուն ուղտ դարձնել*** (*faire d'une puce un chameau*);

Avoir la tête dans les nuages (être distrait, se perdre dans des rêveries confuses; trad. Littérale – գլուխն՝ ամպերում) – en arm. ***ամպերում սավառնել*** (*voler dans les nuages*).

Il est souvent difficile de retrouver l'origine de telle ou telle expression, ce qui n'empêche pas que les locuteurs natifs les utilisent abondamment ! Les expressions font partie intégrante de leur langue, de leur culture. Nous proposons l'explication de quelques expressions idiomatiques en français en comparant avec celles de l'arménien qui faciliteront l'apprentissage des expressions et permettront de mieux comprendre quand et comment les utiliser.

Prendre la poudre d'escampette – se sauver

Selon Claude Duneton, «prendre l'escampe» serait probablement de l'occitan, se délivrer, se sauver. Et le mot escampette correspond au mot «sauvette» mais avec un air coquin. Dans le dictionnaire Le Petit Robert - Le Robert 1991, nous trouvons que «sauvette» signifie à la hâte, ce qui nous rapproche du sens de cette expression: «prendre la poudre d'escampette» veut dire «prendre la fuite».

En arménien - ***կծիկը դնել – mettre la pelote***.

Pour comprendre la signification de cette expression, il faut tout d'abord savoir le sens métaphorique de la pelote qui veut dire quelque chose emmêlée, un problème, etc. D'où l'image et la signification: abandonner tout (le problème: la pelote) et se sauver.

Dormir comme un sabot – dormir en ronflant

En partant du principe qu'un sabot ne dort pas, nous dirions que cette phrase n'a pas de sens. Mais, si nous pensons également au bruit que peut faire le sabot sur le pavé, nous pouvons penser à dormir en faisant du bruit. Et justement, à travers une comparaison, dormir comme un sabot se dit à une personne qui dort en ronflant.

En arménien on dit *«Il dort comme s'il joue du zourna»* (un instrument de musique arménien à vent). Ce qui est identique dans les deux expressions c'est «le bruit», l'instrument qui fait le bruit est différent, mais l'idée exprimée est la même.

En arménien - *Մեռելի պէս քնել* (dormir comme un mort – une expression analogue en français – *dormir d'un sommeil de plomb*):

Faire le poireau – attendre longuement

Cette expression a dérivé du sens figuré d'être ou rester planté (immobile, sans bouger). On dit aussi planter son poireau. L'image que nous avons du poireau en tant qu'une plante est une image d'immobilité. C'est peut-être à partir de cette image que l'expression a trouvé son origine. En fait, faire son poireau veut dire attendre longuement. Les femmes qui voient leurs maris partir à l'étranger à la recherche d'une vie meilleure, en leur devant la fidélité, font le poireau jusqu'à ce qu'ils retournent.

Շնորհավորանքի գեղչված ձևը՝ *Congratulations!*, բնութագրական է բանավոր խոսքին և հետազոտվող գրավոր նյութում հանդիպում է շատ հազվադեպ:

Շնորհավորանքի խոսքային ակտի առավել բնորոշ բանաձև է պարզ նախադասությունը՝ արտահայտված *to congratulate* կամ նաև *wish* պերֆորմատիվ բայերով՝ *I congratulate you on your promotion*: Շնորհավորանքի կառուցվածքում հնարավոր են այնպիսի արտահայտություններ, որոնք խոսքին տալիս են բարձր հուզական երանգ. *from the bottom of one's heart, sincerely, warmly*: Դրական պերլոկուտիվ արդյունքի հասնելուն նպաստում է անկեղծության կանոնի պահպանումը, ինչի մասին վկայում են հետևյալ արտահայտությունները՝ *with all one's heart, by nature, innately*:

Եթե բանավոր ձևում հնարավոր է բայի գեղչում, ապա շնորհավորանքի գրավոր տարբերակում նման կառուցվածքը հանդիպում է շատ հազվադեպ:

Անգլիական լեզվամշակույթին բնորոշ երևույթ է նաև շնորհավորանքին զուգահեռ անձի հասցեին դրական գնահատական արտահայտելը, որտեղ կանխենթադրույթը անձին ոգևորելը և հաճելի հարաբերությունների պահպանման միտումն է:

Marsden: Hello, Nina Cara Nina! Congratulations on your son's birthday! He's grown so much bigger and stronger in the two months since I've seen him. (O'Neill E., Strange Interlude)

Այս օրինակում շնորհավորանքի ակտին զուգահեռ կատարվում է նաև գովեստի ակտ, ինչի վկայությունն է այս նախադասությունը՝ *He's grown so much bigger and stronger... :*

"Brilliant. Eighteen months of stability. And reduced costs. And to transform a confrontation into a dialogue on improving the paper... A masterstroke. Congratulations, my boy." He went to Matt and put his hands on his shoulders. "...I'm glad we have you on our side. Of course, I never doubted you'd succeed... Of course we all knew you'd never faced a situation like it before, but I'd put money on you against Dugan any time. You've got brains and class. Dugan hasn't." (Michael J., Private Affairs)

Ինչպես տեսնում ենք օրինակից, շնորհավորանքը դարձյալ ուղեկցվում է ենթակայի հասցեին ուղղված անկեղծ դրական գնահատականով՝ գովեստով, որը վերաբերում է նրա մասնագիտական հմտություններին: Շնորհավորանքի այս տեսակը շատ է հանդիպում բրիտանական մշակույթում:

Հաջորդ օրինակներում ևս շնորհավորանքները ուղեկցվում են գովեստի խոսքերով և հիացմունքի արտահայտումով՝

1. *Lexy: I must congratulate you. What a noble, splendid, inspired address you gave us! You surpassed yourself.* (Shaw B., Candida)
2. *“...I congratulate you, Elizabeth. It was a well-done story. I hope you can keep it up.” Elizabeth broke into laughter. “Thank you, Herb. I’ll try not to get a swelled head from such lavish praise.” ...It was the highest praise writers could give each other...* (Michael J., Private Affairs)
3. *The ceremony over, everyone crowded around to shake hands and add more congratulations to those they had been given for two hours. “Very nice”, Chef Colfax murmured to Elizabeth. “It’s a nice time for you. It’s a pleasure to see deserving people get rewards.”* (Michael J., Private Affairs)
4. *“Congratulations. I’m glad you’re so set there. It’s nice to see people making a success of things.”* (Michael J., A Ruling Passion)

Հետազոտվող նյութի հիմնական մասը ցույց է տալիս, որ շնորհավորանքն, որպես վարվելակերպի խոսքային ակտ, միակաղապար է և ներկայացված է պարզ նախադասության կառուցվածքով, որը բաղկացած է երեք անդամներից. գլխավոր անդամ՝ պերֆորմատիվ բայ *to congratulate*, որը դրված է 1-ին դեմք եզակի կամ հոգնակի թվով, անուղղակի խնդիր, որն արտահայտված է գոյականով, և ուղիղ խնդիր, որն արտահայտված է 2-րդ դեմքի եզակի կամ հոգնակի թվի անձական դերանունով:

Ելնելով արդյունքներից՝ նշենք, որ շնորհավորանքն ունենալով արտահայտման կաղապարային ձև, պահպանվում է բոլոր լեզվակիրների կողմից: Այս խոսքային ակտը կարևոր և հաճախ գործածվող խոսքային ակտ է առօրյա հաղորդակցության մեջ:

Բանալի բառեր - Շնորհավորանք, խոսքային ակտ, իլլուկուտիվ նպատակ, հասցեագրող, հաղորդակցություն, բարեմաղթանք:

Նարինե Գասպարյան, Շնորհավորանքի խոսքային ակտի գործաբանական-կառուցվածքային առանձնահատկությունները - Հոդվածում վերլուծվում է շնորհավորանքի խոսքային ակտը, որը դիտարկվում է որպես խրախուսական, արտահայտչական խոսքային ակտ: Այս ակտի հիմնական հաղորդակցական գործառույթը քաղաքավարության և հարգանքի

արտահայտումն է, իսկ իլլոկուտիվ նպատակը՝ հույզերի արտահայտումն ու հույզերի առաջացումը: Հոգվածում առանձնացվել են շնորհավորանքի թեմատիկ երեք խմբեր՝ տոնի առթիվ, անձնական և պաշտոնական: Վերլուծության է ենթարկվել նաև շնորհավորանքի այն տեսակը, որին հաջորդում է անձին դրական գնահատական արտահայտելը՝ գովելը, հաճոյախոսելը, հիացմունք արտահայտելը:

Нарине Гаспарян, Прагматично-структурные особенности речевого акта поздравления - Статья посвящена изучению речевого акта поздравления, который изучается как ободрительный, выразительный акт. Коммуникативная функция этого речевого акта - выражение вежливости и уважения. Иллокутивная цель этого речевого акта - выражение эмоций. Мы дифференцировали три типа поздравлений на английском языке - праздничные, личные и формальные. В этой статье также рассматривается тип поздравления, после которого мы выражаем положительную оценку (похвала, восхищение, комплимент и т. д.).

Narine Gasparyan, Pragmatic-structural peculiarities of the speech act of congratulation - The article is devoted to the study of the speech act of congratulation, which is studied as encouraging, expressive act. The communicative function of this speech act is the expression of politeness and respect. The illocutionary purpose of this act is the expression of emotions. We have differentiated three types of congratulation in English - on holiday, personal and formal. The type of congratulation, after which we express positive evaluation (praise, admiration, compliment, etc.) is also considered in the article.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, Հայկ.ՍՍՀ Գիտ. Ակադ. Հրատ., Երևան 1980:
2. Матвеев В., Панов А. В мире вежливости. О культуре общения людей., М., 1991.
3. Васильева А.Н. Основы культуры речи. М.: Русский язык, 1990.
4. Формановская, Н.И. Культура общения и речевой этикет / Н.И. Формановская. М.: Издательство ИКАР, 2004.
5. Формановская Н.И. Эмоции, чувства, интенции, экспрессия в языковом и речевом выражении // Эмоции в языке и речи: Сборник научных статей / Под ред. И.А. Шаронова. М.: РГГУ, 2005, с.106-116.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՀԱՍՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՀՐԱՆՏ ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ

Փոքր և միջին ձեռնարկատիրությունները (այսուհետ՝ ՓՄՁ) ներկայացնում են արտադրական և վերամշակող ձեռնարկությունները, արհեստները, մանրածախ և մեծածախ առևտուրը, ծառայությունների և սպասարկման ոլորտը, որոնք շատ երկներում համարվում են տնտեսության այն հիմնական օղակը, որի վրա հիմնված է երկրի տնտեսությունը:

Այդ մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ տալով ՀՆԱ-ի մինչև 60%-ը, որն այնքան էլ փոքր ցուցանիշ չէ: ՓՄՁ-ների ազդեցությունը պակաս ակտիվ է զարգացող անցումային երկրներում, որտեղ դրանք պակաս դերակատարություն ունեն ՀՆԱ-ի և աշխատատեղերի ստեղծման համար¹:

ՓՄՁ-ները կարևոր դերակատարում ունեն երկրների միջին խավի ձևավորման գործում, և որքան մեծ է տնտեսության մեջ նրանց դերը, այնքան մեծ է դառնում միջին խավի տեսակարար կշիռը տվյալ երկրի ազգաբնակչության մեջ²:

ՀՀ անցումային տնտեսությունում այս ձեռնարկությունների դերը բավական փոքր է՝ չնայած դրանց մեծ թվաքանակին, պատշաճ կերպով չեն օգտագործվում նրանց ներուժը և հնարավորությունները, ինչն էլ օբյեկտիվորեն հանգեցրել է սոսկալի հետևանքների՝ աղքատության բարձր մակարդակ, ՀՆԱ-ի աճի ցածր տեմպ, միջին խավի գրեթե բացակայություն և այլն: Նշվածից առավել քան պարզ է դառնում, որ թվարկված բացասական հետևանքները չեն կարող արմատախիլ արվել ՓՄՁ-ների զարգացվածության ներկայիս մակարդակի պայմաններում (ցածր տեսակարար կշիռ ՀՆԱ-ի արտադրության մեջ): Ուստի այս ոլորտի զարգացումն ու կայացումը օրակարգային այնպիսի հիմախնդիր է, որի լուծումը վերջ կդնի մեր երկրի տնտեսության անցումային շրջանին և կստեղծի զարգացման նորանոր հնարավորություններ:

1. ՓՄՁ ոլորտի զարգացումը որպես տնտեսության շարժիչ ուժ

ՓՄՁ-ները հանդիսանում են ազատական տնտեսության հիմքը,

¹ Ա.Զատիկյան, Ա.Դանիելյան, ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, ԳԱԱ <<Գիտություն>> հրատարակչություն, Երևան, 2014, էջ 77:

² Մ.Վ.Միքայելյան, ՓՄՁ-ները Հայաստանում, դասախոսություն <<Ազգային տնտեսություն>> առարկայից:

դրանք ապահովում են պետական բյուջեի հարկային մուտքերը, եկամուտները (խնայողությունները) և բնակչության զգալի մասի ապրելու միջոցները: Շնորհիվ ՓՄՁ-ների ստեղծվում են նոր աշխատատեղեր, ապահովվում է նյութական, ֆինանսական և բնական ռեսուրսների հավաքագրումը (մոբիլիզացիան): ՓՄՁ-ները զբաղվում են նոր արտադրատեսակների, տեխնիկայի և տեխնոլոգիայի մշակմամբ և արտադրության մեջ ներդրմամբ³:

Ավելացնենք նաև այն փաստը, որ ՓՄՁ-ներին մեծ դեր է վերապահված տնտեսության զարգացման գործում: Այսպես օրինակ ԱՄՆ-ում դրանք ձեռնարկատիրության բոլոր ոլորտներում կազմում են բոլոր ձեռնարկությունների 70-98%-ը: Նշված ձեռնարկությունները հանդես են գալիս որպես տեխնոլոգիական լիդերներ երկու տեսակի ճյուղերում՝

- ✓ դինամիկ, արագ փոփոխվող տեխնոլոգիաներով, ճյուղերում,
- ✓ սաղմնային, նոր ձևավորվող ճյուղերում:

Արտասահմանում իրականացվող ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ակտիվ նորարարական գործունեությամբ զբաղվում են հատկապես այն ֆիրմաները, որոնցում աշխատողների թվաքանակը չի գերազանցում 100 մարդը: ԱՄՆ-ի ազգային գիտական ֆոնդի գնահատմամբ մինչև 100 աշխատողներ ունեցող ֆիրման 4 անգամ ավելի շատ նորարարություններ է իրականացնում, քան 1000 մինչև 10000 աշխատողներ ունեցող ֆիրման, 24 անգամ ավելի նորարարություններ են կիրառում, քան 10000 ավելի աշխատողներ ունեցող ֆիրման⁴:

Ազգային տնտեսության տեսանկյունից, ՓՄՁ-ները իրենց թույլ և ուժեղ կողմերն արտահայտում են գործարարության այլընտրանքային ձևի՝ խոշոր ձեռնարկությունների հետ համեմատության ընթացքում: Դիտարկենք այդ կողմերը համեմատական առավելությունների տեսանկյունից, ներկայացնելով հետևյալ աղյուսակով՝

³ Վ.Հովսեփյան, Մ.Շղիազարյան, Ազգային տնտեսություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014, էջ 181-184:

⁴ С. Мозоль, Экономика малого бизнеса, Минск, 2004, стр. 18

Աղյուսակ 1.

ՓՄՁ-երի առավելությունների ու թերությունների համեմատական
բնութագրությունը առավել խոշոր կազմակերպությունների համեմատ⁵

ՓՄՁ-ի առավելությունները	ՓՄՁ-ի թերությունները
1. ուղիղ և անձնական շփումները գործընկերների հետ 2. կառավարչական որոշումների արագ ընդունումը 3. անուղղակի ծախսերի ցածր մակարդակը 4. աշխատանքի մոտիվացիայի բարձր աստիճանը 5. գիտատեխնիկական նվաճումների նկատմամբ ճկուն վերաբերմունքը /ռեակցիան/ 6. դինամիկ կողմնորոշումը սպառողների պահանջմունքներին 7. կազմակերպությունում բյուրոկրատական կառույցների բացակայությունը 8. մենեջմենթի նվազագույն աստիճանակարգությունը /հիերարխիան/	1. մենեջմենթի ցածր որակավորման աստիճանը 2. արտաքին ֆինանսավորման, այդ թվում՝ վարկավորման չնչին հնարավորությունները 3. ՓՄՁ-ի պրոֆիլի դիվերսիֆիկացման սահմանափակ հնարավորությունները 4. ձեռնարկատիրական գործունեության ռիսկի բարձր աստիճանը 5. աշխատանքի բաժանման և աշխատուժի մասնագիտացման ցածր աստիճանը 6. զանգվածային պահանջարկի բավարարման սահմանափակ հնարավորությունները 7. սիներգիկ արդյունքի բացակայությունը ՓՄՁ-երի բազմաթիվ կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ գործունեությունից

ՓՄՁ-ները եվրոպական տնտեսության շարժիչն ուժն են: Նրանք ստեղծում են աշխատատեղեր, ապահովում տնտեսական աճ և սոցիալական կայունություն: 2013 թ.-ին ավելի քան 21 մլն ՓՄՁ-ներ ստեղծել են 88,8 միլիոն աշխատատեղ Եվրամիությունում: Ամեն 10 ձեռնարկությունից 9-ը ՓՄՁ են, և ՓՄՁ-ները ստեղծում են յուրաքանչյուր երեք աշխատատեղից երկուսը: ՓՄՁ-ները նաև խթանում են ձեռնարկատիրական ոգին ու նորարարությունը ԵՄ-ում և այդպիսով կարևոր են մրցունակության և զբաղվածության խթանման համար⁶:

Մասնավորապես դինամիկ փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) գոյությունը գերմանական տնտեսության առանձնահատկություններից մեկն է: Գերմանական տնտեսությունը բնութագրվում է մոտավորապես 3.3 միլիոն փոքր և միջին ձեռնարկություններով և ձեռներեցներով առևտրի, զբոսաշրջության, ծառայությունների և ագատական մասնագիտությունների մեջ: ՓՄՁ-ները ներկայացնում են շրջանառության հարկի ենթակա բոլոր գերմանական ձեռնարկությունների 99.3% -ը, որոնք վճարում են բոլոր հարկերի 44.8% -ը,

⁵ Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Ավարտական թեզ, Գյումրի, 2008, էջ 12:

⁶ “The New SME definition”, User guide and model declaration, Chapter 2 – European Commission, Enterprise and Industry publications, Eurostat (2000), page 3 .

արդյունաբերության մեջ նրանց բաժին է ընկնում ավելացված արժեքի 57% -ը, կատարում են համախառն ներդրումների 46% -ը, ստեղծում աշխատատեղերի 69.3% և վերապատրաստման վայրերի 80%-ը⁷:

2. Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշներ ՓՄՁ-ների վերաբերյալ ՀՀ-ում

Աղյուսակ 2.

2013-2015 թթ. ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ ՓՄՁ սուբյեկտներին խոշոր կազմակերպությունների⁸ (%)

Ճյուղ	2013թ.		2014թ.		2015թ.	
	ՓՄՁ	խոշոր	ՓՄՁ	խոշոր	ՓՄՁ	խոշոր
Արդյունաբերություն	28.9	71.1	30.6	69.4	31.0	69.0
Շինարարություն	51.4	48.6	50.1	48.9	49.8	50.2
Առևտուր	49.8	50.2	51.1	48.9	51.3	48.7
Տրանսպորտ և կապ	28.8	71.2	28.7	71.3	28.9	71.1
Ծառայություններ	45.2	54.8	44.6	55.4	45.8	54.2
Ընդամենը՝ ՀՆԱ	42.8	57.2	42.5	57.5	42.7	57.3


Գնահատականում հաշվի չի առնվում գյուղատնտեսության և զուտ հարկերի բաշխվածքն ըստ ՓՄՁ սուբյեկտների և խոշոր կազմակերպությունների, պայմանավորված նշված ոլորտներում ճշգրիտ գնահատականների բացակայությամբ:

Փոքր և միջին ձեռնարկությունների 2015 թ-ի առաջին կիսամյակի արդյուքներն՝ ըստ աշխատատեղերի քանակի՝

- 58 455 գերփոքր ձեռնարկություններ (մինչ 10 աշխատող) ապահովում են 119.209 աշխատատեղ, որը կազմում է ընդհանուր մասնավոր հատվածում աշխատատեղերի 33.0 %-ը,
- Թվով 4.262 փոքր ձեռնարկություններն (մինչ 50 աշխատող) ապահովում են 91.379 աշխատատեղեր, որը կամզմում է ընդհանուր մասնավոր հատվածում աշխատատեղերի 25.3 %-ը,
- Թվով 960 միջին ձեռնարկություններ (մինչ 250 աշխատող) ապահովում են 101.134 աշխատատեղ, որը կազմում է ընդհանուր

⁷ SME-Promotion in Germany / an overview – Bettina Furhmann Duisburg, July 2002, page 2,8 .
⁸ **Ա.Հ.Հովսեփյան**, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրներն ու կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2017, էջ 14:

մասնավոր հատվածում աշխատողների 28.0 %-ը⁹:



Գծապատկեր 1¹⁰.

ՀՀ մասնավոր հատվածի աշխատաշուկա (2015 թ. 1-ին կիսամյակ,%)


Գծապատկեր 1-ից պարզ է դառնում, որ ՓՄՁ-ները ապահովում են ընդհանուր մասնավոր հատվածի աշխատատեղերի 86.3 %-ը: Սակայն պետք է նշենք, որ 2015 թ. -ի դրությամբ զբաղվածների թիվը կազմել է 1072600 մարդ, այսինքն՝ ՓՄՁ-ները ապահովում են ընդհանուր աշխատաշուկայի շուրջ 29 %-ը:

ՀՀ-ում գործունեություն ծավալող գերփոքր ձեռնարկությունները, հանդիսանալով ակտիվ հարկատուների մեծամասնությունը, գտնվում են թույլ զարգացվածության աստիճանում, հեռու լինելով մինչև 10 աշխատող ունենալու կամ տարեկան մինչև 100 մլն դրամ հասույթ գեներացնելու ՓՄՁ սահմանման ցուցանիշներից:

Ըստ գործունեության ոլորտի՝ գերփոքր ձեռնարկություններում գերակշռում են առևտրի ոլորտի ձեռնարկությունները, այնուհետ ծառայության ոլորտը, իսկ ամենացարժր մասնաբաժինը ընկնում է արտարությանը:

⁹ <http://hetq.am/arm/news/68792/gerpoqr-biznesn-u-pmdz-neri-gortsuneutyany-vitchakagrutyuny-2013-2015-tyakannerin.html> հասանելի էր 16.03.2018 թ.-ի դրությամբ:

¹⁰ Նույն տեղում:



Գծապատկեր 2.

ՓՄՁ սուբյեկտների կառուցվածքը՝ ըստ գործունեության ոլորտի¹¹ (01.07.2015 թ. դրությամբ)

Ըստ գործունեության ոլորտի՝ գերփոքր ձեռնարկություններում գերակշռում են առևտրի ոլորտի ձեռնարկությունները, այնուհետ ծառայության ոլորտը, իսկ ամենացածր մասնաբաժինը ընկնում է արտադրությանը:

3. ՓՄՁ աջակցության հիմնական ուղղությունները ՀՀ-ում

2001թ.-ից ի վեր երկրում մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության տարեկան ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները:

ՓՄՁ պետական աջակցության 2002թ. ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, ՀՀ կառավարության 19.03.2002թ. N282 որոշմամբ հիմնադրվեց «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը (Հայաստանի ՓՄՁ ՋԱԿ), որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականություն և ոլորտի զարգացման ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցը¹²:

Հայաստանում ՓՄՁ աջակցության ներկայիս համակարգը ներկայացնելու համար դիտարկենք ՓՄՁ աջակցության հիմնական ուղղությունները ՀՀ-ում¹³.

- ✓ ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության ծրագրերի համակարգում, կառավարում և ընդլայնում,
- ✓ Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն,
- ✓ Տեղական և տարածքային տնտեսական զարգացում,

¹¹ <http://hetq.am/arm/news/68792/gerpoqr-biznesn-u-pmdz-neri-gortsuneutyany-vitchakagrutyuny-2013-2015-tvakannerin.html>, հասանելի էր 16.03.2018 թ.-ի դրությամբ:

¹² http://www.smednc.am/content/sme_state_support/ (հասանելի էր 31.01.2018 թ.-ի դրությամբ)

¹³ «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում, 28.12.2013թ., Երևան, գլուխ 5:

- ✓ Տեղական արտադրանքի արտահանմանն աջակցություն և ՓՄՁ-ի սուբյեկտների միջազգային համագործակցության ընդլայնման ապահովում,
- ✓ Ոլորտային (արդյունաբերական համակարգերի կառուցմանն) աջակցություն,
- ✓ ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական աջակցություն և Հաշվապահական կենտրոնի գործունեության ապահովում,
- ✓ ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն
- ✓ Կանանց ձեռներեցությանն աջակցություն,
- ✓ Միջազգային և օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում:

2018թ հունվարի 1-ի դրությամբ ՓՄՁ պետական աջակցության 2017 թվականի ծրագրի շրջանակում մոտ 4700 սկսնակ և գործող ՓՄՁ-ներին տրամադրվել է 11,487 աջակցություն:

Աղյուսակ 3¹⁴

ՓՄՁ պետական աջակցությունն ըստ ուղղությունների ՀՀ-ում (2013-2017 թթ.)

Աջակցության ուղղություն	013թ.	014թ.	015թ.	016թ.	017թ.
Տեղեկատվական և խորհրդատվական	5647	3064	1857	417	0337
Ուսուցողական	21	00	07	26	46
Սկսնակ գործարարների ձեռներեցության աջակցություն	62	36	03	52	64
Վարկային երաշխավորություններ	43	35	76	8	1
Բիզնեսի միջազգայնացում՝ Ձեռնարկությունների եվրոպական ցանց	43	54	59	93	48
Ոլորտային աջակցության ծրագրեր/դրամաշնորհներ	27	81	7	1	2
Ընդամենը	7243	4688	3194	917	1487

¹⁴ <http://smednc.am/am/content/reports/> (հասանելի էր 31.01.2018 թ.-ի դրությամբ) :

2017 թ.-ին աջակցություն ստացած ՓՄՁ-ների **3.3%**-ը գործում է Երևան քաղաքում, **96.7%**-ը՝ ՀՀ մարզերում, առավելապես հեռավոր և սահմանամերձ գյուղական և քաղաքային համայնքներում:

Առողջ ՓՄՁ մթնոլորտը նաև տնտեսության համար կարող է ապահովել ցածր ինֆլյացիայի մակարդակ, իսկ հակառակ պարագայում տնտեսության մեջ ՓՄՁ-ների գործունեությունը կառաջացնի բարձր ինֆլյացիա, իսկ վերջինս կենտրոնական բանկի կողմից կարգավորելու և զսպելու պարագայում ավտոմատ կերպով անցում կկատարվի «թանկ փողերի» քաղաքականության, որն էլ կնվազեցնի տնտեսական ակտիվությունը: Այսինքն՝ տնտեսության մեջ երևույթները միմյանց հետ խիստ փոխկապված են, և մի ոլորտում տեղի ունեցող բացասական զարգացումներն իրենց անմիջական արտահայտությունն են գտնում տնտեսության մյուս հատվածներում¹⁵:

Եզրակացություն

ՓՄՁ-ները բացառիկ դեր և նշանակություն ունեն երկրների տնտեսական զարգացման ու կառուցվածքային բարեփոխումների իրականացման գործընթացում, ինչպես նաև արդի տնտեսական ու սոցիալական հիմնախնդիրների լուծման կարևորագույն գործոն են հանդիսանում:

Այս տիպի ձեռնարկությունների առավելություններն են՝

- ✓ նվազեցնում են տնտեսության կախվածությունը ներմուծումից,
- ✓ համեմատաբար արագ են ներդնում նոր տեխնոլոգիաներ և կատարում նորարարություններ,
- ✓ նրանց կողմից արտադրված ապրանքները իրենց մրցունակությամբ հաճախ գերազանցում են ներմուծված ապրանքներին՝ հաջողությամբ փոխարինելով վերջիններին,
- ✓ արագորեն հարմարվում են անընդհատ փոփոխվող շուկայի պահանջներին,
- ✓ կարճ ժամանակահատվածում ունակ են ստեղծել ոչ քիչ թվով աշխատատեղեր,
- ✓ նպաստում են տվյալ երկրի ազգաբնակչության միջին խավի ստեղծմանն ու զարգացմանը,
- ✓ բացասական ազդեցություն ունեն մենաշնորհների զարգացման վրա, ինչը, թերևս, ձեռնտու է տնտեսությանը,
- ✓ ունեն ռազմավարական մեծ նշանակություն՝ նպաստելով տնտեսության բազմաթիվ ճյուղերի և ենթաճյուղերի դինամիկ զարգացմանը կամ վերակենդանացմանը:

¹⁵ Ա. Զատիկյան, Ա.Ղանիկյան, ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, Երևան, 2014, էջ 147:

Հիմք ընդունելով վերը նշված առավելությունները՝ ՀՀ-ում ՓՄՁ-ների զարգացման համար արվել են հետևյալ առաջարկությունները.

- ✓ հակակոռուպցիոն և հակամենաշնորհային արդյունավետ քաղաքականության մշակում և հավուր պատշաճի իրականացում,
- ✓ բարեխիղճ մրցակցության համար պայմանների բարելավում,
- ✓ հարկավոր է մշակել հնարավոր մոտեցումներ ՓՄՁ-ների տեղեկատվական հասանելիությունն առավել բարձր մակարդակի հասցնելու համար, ինչպես նաև զարգացնել կառավարության և ՓՄՁ-ների փոխհարաբերությունների մակարդակը,
- ✓ հաջորդ քայլով հարկավոր է հզորացնել ՓՄՁ-ների ունակությունները, որոնք պետք է արտահայտվեն կառավարչական հմտությունների հզորացման, ֆինանսական կառավարման ոլորտում գիտելիքների ընդլայնման հարցերում և այլն,
- ✓ վարկավորման արտոնյալ պայմանների ստեղծում, ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում,
- ✓ ՓՄՁ-ների արտաքին առևտրի աջակցության պետական արդյունավետ քաղաքականության իրականացում,
- ✓ անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել ձեռնարկատիրության ոլորտում համացանցի հնարավորությունների օգտագործման ուղղությամբ:

Այսպիսով ՓՄՁ-ները գործում են տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում (առևտրի ու սպասարկման ոլորտից մինչև գիտատար արտադրանք թողարկող ձեռնարկություններ) և ազատ մրցակցություն ծավալելու համար նպաստավոր պայմաններ են ստեղծում ապրանքներ արտադրողների ու ծառայություններ մատուցողների համար, ինչպես նաև միաժամանակ հանդիսանում են և՛ արգելք տնտեսության մոնոպոլացման տեսանկյունից, և՛ խթան շուկայական հարաբերությունների զարգացման համար:

Բանալի բառեր - փոքր և միջին ձեռնարկատիրություն, ձեռներեց, ՀՆԱ, նորարարություն, աջակցության ուղղություններ, աշխատատեղ, տնտեսական աճ, ազատ մրցակցություն:

Հասմիկ Մարգարյան, Հրանտ Ղարազյոզյան, Փոքր և միջին ձեռնարկատիրության էությունը և դերը տնտեսության մեջ - Փոքր և միջին ձեռնարկատիրությունները գործում են տնտեսության գրեթե բոլոր օղակներում, որոնց վրա հիմնված է երկրի տնտեսությունը: ՀՀ անցումային տնտեսությունում այս ձեռնարկությունների դերը բավականին փոքր է, ինչը հանգեցրել է սոսկալի հետևանքների՝ աղքատության բարձր մակարդակ, միջին խավի գրեթե բացակայություն և այլն: Ուստի այս ոլորտի զարգացումն ու կայացումը վերջ

կղնի ՀՀ-ի տնտեսության անցումային շրջանին և կատեղծի զարգացման նորանոր հնարավորություններ:

Асмик Маргарян, Грант Карагезян, Существенность малых и средних предпринимательств и роль в экономике - Малые и средние предпринимательства действуют почти во всех отраслях экономики, на основе которых образуется экономика страны. Роль этих предпринимательств достаточно мала в переходной экономике РА, что привел к ужасным результатам: высокий уровень нищеты, почти отсутствие среднего класса общества и так далее. Следовательно развитие и осуществление этой отрасли положит конец переходного этапа экономики РА и создаст новые возможности для развития.

Hasmik Margaryan, Hrant Gharagyozyan, The essentiality of small and medium entrepreneurship and role in economy - Small and medium entrepreneurship operate in all sectors of the economy, on which the country's economy is based. The role of these enterprises is rather small in the transition economy of RA, which have led to terrible results: high level of poverty, almost absence of middle-class society, and so on. Therefore, the development and implementation of this sector will put an end to the transitional stage of the Armenian economy, and create new opportunities for development.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա.Զատիկյան, Ա.Դանիելյան, ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, ԳԱԱ <<Գիտություն>> հրատարակչություն, Երևան, 2014
2. С. Мозоль, Экономика малого бизнеса, Минск, 2004
3. Վ.Հովսեփյան, Մ.Եղիազարյան, Ազգային տնտեսություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2014
4. Ա.Հ.Հովակիմյան, Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման արդի հիմնախնդիրներն ու կատարելագործման ուղիները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսության սեղմագիր, Երևան, 2017
5. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Ավարտական թեզ, Գյումրի, 2008
6. «Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության սուբյեկտներին» 2014 թվականի ծրագիրը և ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշում, 28.12.2013թ., Երևան
7. Մ.Վ.Միքայելյան, ՓՄՁ-ները Հայաստանում, դասախոսություն <<Ազգային տնտեսություն>> առարկայից

8. “ The New SME definition”, User guide and model declaration, Chapter 2 – European Commission, Enterprise and Industry publications, Eurostat (2000)
9. SME-Promotion in Germany / an overview – Bettina Furhmann Duisburg, July 2002

**ՈՒՍԱՆՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ
ՆՈՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**


Ներածություն

Ուսանողի սոցիալական մեկուսացումը համարվում է հեռաուսուցման էական թերություններից մեկը: Եթե ի սկզբանե, համակարգիչների օգտագործումը պարունակում էր անհատի առողջապահական խաթարման ռիսկեր (տեսողության վատթարացում, նյարդային լարվածություն, “էլեկտրոնային պրեսինգ”) և միայն խնդիր էր առաջանում պահպանելու համացանցից օգտվելու հիգենա (համակարգչից անընդմեջ օգտվելու ժամանակը ոչ ավելի, քան քառասուն րոպե, այնուհետև՝ մեկ ժամ աչքերին հանգիստ), ապա ներկայումս առավել “չարիք” է հանդիսանում առցանց համակարգում անհատի սոցիալական մեկուսացումը, որի դեմ պայքարելը հետզհետե դառնում է էլ ավելի դժվար:¹

Ավանդաբար, համալսարանը ուսանողության կողմից ընդունվում է ոչ միայն գիտելիքների, մասնագիտական հմտությունների ընկալման միջավայր, այլև սոցիալական հարթակ, որտեղ ձևավորվում են ընկերային փոխհարաբերություններ, երիտասարդական ժամանցային, սպորտային միջոցառումներ, պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ անմիջական շփումներ, որով ակադեմիական գործունեությունը դառնում է գրավիչ, իսկ ուսանողը հայտնվում է իրեն հարազատ սոցիալական խմբերում:

Առցանց ուսուցման պարագայում բացակայում է ավանդական ուսումնառության գրավիչ միջավայրը, ուսանողը հայտնվում է սոցիալական մեկուսացման ռիսկի առջև, որը ոչ միայն իր բացասական հետևանքներն է թողնում անհատի ակադեմիական գործելավորճում, այլև նրա մոտ ձևավորում է սոցիալ-հոգեբանական շեղումներ՝ մի շարք պատճառներով (տես գծապատկեր 1):

¹ Warburton. (2009). Second Life in higher education: Assessing the potential for and the barriers to deploying virtual worlds in learning and teaching. *British Journal of Educational Technology*, 40(3), p. 414-426.



Գծապատկեր 1 Հեռաուսուցման համակարգում ընդգրկված ուսանողի սոցիալական մեկուսացման առանցքային պատճառները²

Անհամընթաց ժամանակային դասավանդում (ասինխրոնություն)

Հեռավար ուսուցումը, ուսանողին տրամադրելով ուսումնառության դասաժամերի ընտրության ժամանակային ճկունություն, ձևավորում է դասավանդվող խմբի անդամների միջև շփման ասինխրոնիա:³ Ավանդական ուսուցման պարագայում ուսանողները խմբերով հաճախելով լսարաններ, կամա թե ակամա շփվում են միմյանց հետ, անմիջական կոնտակտային քննարկումներ են ունենում, գործում են դասախոսների հետ “դեմ առ դեմ” համագործունեության բազմաթիվ ձևաչափեր:

Առցանց ուսուցման դեպքում ուսանողը որոշակիորեն ազատ է առօրյա ուսումնառության գրաֆիկի ընտրության հարցում, և կարող է դասավանդմանը մասնակցել, լսել դասախոսություններ, քննարկում ֆորումներին ընդգրկվել ժամանակային իր ընտրած ինտերվալում, որը նպաստում է կրթական գործընթացում անհատի սոցիալական մեկուսացմանը: Սոցիալական մեկուսացման նման ռիսկերը չեզոքացնելու համար հեռավար ուսուցման պարագայում հնարավորինս ուսանողին պետք է “բերել խմբային ուսումնառության դաշտ”, պարբերաբար հանձնարարելով ոչ միայն անհատական, այլ խմբային առաջադրանքներ, որոնք կստիպեն առցանց համակարգում ներգրավված ուսանողներին շփվելու միմյանց հետ, համատեղ լուծելու առաջադրանքներ, համատեղ ներկայացնելու պրեզենտացիաներ և այլն:⁴

² Կազմված է հեղինակի կողմից:

³ **Moody, J.** (2004). Distance education: why are the attrition rates so high? *The Quarterly Review of Distance Education* 5(3) pp.205-210.

⁴ **Keppell, M., Au, E., & Chan, C.** (2006). Peer learning and learning-oriented assessment in technology-enhanced environments. *Assessment & Evaluation in Higher Education*, 31(4), 453-464.

Չափազանց կարևոր է նաև on-line քննարկումների ժամանակացույցի ներկայացումը հենց սեմեստրի սկզբից, երբ յուրաքանչյուր ուսանողին ներկայացվում է քննարկման նյութը և համացանցում քննարկումների մասնակցության ակտիվության գնահատման կարգը: Ցանկալի կլինի on-line քննարկումների գնահատմանը համեմատաբար մեծ կշռի վերագրումը, որը կշահադարձի առցանց համակարգի ուսանողներին մասնակցության ակտիվության աճին:⁵

Դասավանդման ասինխորոնությունը բացասական հետևանքները որոշակիորեն փոխհատուցվում են WEB սեմինարներով: Այս դեպքում, նույնպես սեմեստրի սկզբին յուրաքանչյուր ուսանողին ներկայացվում է սեմինարների թեմատիկ ժամանակացույցը և ստացվում է այնպես, որ սեմինարի ընթացքում բոլորը մասնակից են լինում դասավանդմանը, իսկ այնուհետև հետևում են on-line քննարկումները, որի դեպքում, ի դեպ, նույնպես հնարավոր է գնահատել ուսանողին մասնակցության ակտիվության աստիճանը:

Ներխմբային տարիքային տատանումներ

Առցանց դասավանդման պարագայում հիմնականում ուսանողների տարիքային սահմանափակումներ չկան՝ հատկապես վերապատրաստման թրեյնինգների պարագայում: Եվ ստացվում է այնպես, որ ուսանողական խմբերը ձևավորվում են ոչ համասեռ տարիքային խմբերով, որը որ հազվագյուտ երևույթ է ավանդական ուսանողական երիտասարդական խմբերի պարագայում:

Բնականաբար, ուսանողները տարիքային տարբեր հետաքրքրություններ ունենալով, առանձնապես հակված չեն անգամ on-line շփումների: Նման հիմնախնդիրները փոքր ինչ հարթելու համար, առցանց խմբեր ձևավորելիս խորհուրդ է տրվում կազմակերպելու անհատների տեղեկատվական բաց ինքնաներկայացում, երբ յուրաքանչյուր ուսանող նկարագրում է իր ակադեմիական հավակնությունները, ժամանցային նախասիրությունները, հոբին, ընտանեկան կարգավիճակը և այլն:⁶ Նման տեղեկատվությունը հավաքագրվում է ուսանողական խմբի բազայում և հնարավորություն է ստեղծում յուրաքանչյուր անհատին on line ծանոթանալու իր թիմակից ուսանողին, հետաքրքրությունների համընկման պարագայում շփվել նրա հետ և դրանով իսկ՝ փոքր ինչ դուրս գալ սոցիալական մեկուսացումից:⁷

⁵ Gregory, S., Willems, J., Wood, D., Hay, L., Ellis, E. & Jacka, L. (2011). Learning and teaching in Second Life: Educator and student perspectives. Education 2011 – 2021: Global challenges and perspectives of blended and distance learning. *DEHub Summit Proceedings*, Sydney, 15-18 February 2011

⁶ Garrison, D. R. & Vaughan, N. D. (2008). *Blended learning in higher education: Framework, principles, and guidelines*. Jossey-Bass: John Wiley & Sons, Inc.

⁷ Beldarrain, Y. (2006). Distance education trends: Integrating new technologies to foster student interaction and collaboration. *Distance Education*, 27(2), 139-153.

Համացանցից կախվածություն

Տեղեկատվական հասարակության հիմնական արատներից է անհատի հստակ կախվածությունը համացանցից, որը տարեց տարի ավելի է խորանում: Այսօրվա երիտասարդությունը դեռևս իր պատանեկան հասակից աստիճանաբար հրաժարվում է հասակակիցների հետ կենդանի շփումներից և նախընտրում է առցանց հաղորդակցումը: Արդյունքում, տեղի է ունենում իրականությունից օտարում, ու թերևս մանկապատանեկան հասակից նրանց համար անիմացիոն խաղերի հերոսներն են արժևորվում, իսկ առցանց միջավայրը հետաքրքրության առումով դառնում է էլ առավել գրավիչ, քան իրական կյանքը, որը տանում է անհատի սոցիալական ինքնամեկուսացման:⁸

Ավելին, դպրոցական տարիներին որոշ դասընթացների գծով աշակերտներին մատուցվում է հեռավար ուսուցում, զուգորդված զանազան նկարագրողումներով, մուլտիմեդիաներով, ուսուցիչ Բանավոր խոսքով: Այդ ճանապարհով ակադեմիական տեղեկատվության ընկալումը դառնում է առավել գրավիչ, քան ընթերցումների միջոցով:

Հենց այս հանգամանքն էլ դեռ մանկապատանեկան հասակից անհատին կախվածության մեջ է գցում համացանցից, և արդեն հասուն տարիքում ակադեմիական գործունեության ընթացքում նա ձգտում է առցանց ճանապարհով դասախոսությունների ունկընդրման, անիմացիոն ուսումնական նյութերի դիտարկման՝ արդեն իսկ սակավ արժեվորելով պրոֆեսորադասախոսական համակազմի, կամ ուսանողների հետ կենդանի շփումները, որն ավելի է խորացնում հեռավար ուսուցման կուրսերում սովորող ուսանողի սոցիալական ինքնամեկուսացումը:⁹

Այս նկատառումներով, միջազգային պրակտիկայում ներկայումս համալսարաններում լայնորեն օգտագործվում է հեռաուսուցման և ավանդական ուսուցման համակցված տարբերակը (blended): Այս դեպքում արդեն որոշ գիտակրթական քննարկումներ, գործնական աշխատանքներ, լաբորատոր փորձեր, հետազոտական աշխատանքներ, հեռավար համակարգի ուսանողի համար համացանցում անիրագործելի համարվելով, արդեն իսկ նրան համալսարան են բերում և հաճախակի դարձնում կենդանի շփումները, որն էլ որոշակիորեն մեղմում է սովորողի սոցիալական մեկուսացման վիճակը:

⁸ Zhao, Y., J. Lei, B. Yan, C. Lai, and H. S. Tan. 2005. What makes the difference? A practical analysis of research on the effectiveness of distance education. *Teachers College Record*

⁹ Nicholas Croft, Alice Dalton & Marcus Grant Overcoming Isolation in Distance Learning: Building a Learning Community through Time and Space, [Journal for Education in the Built Environment](#). Volume 5, 2010 - [Issue 1](#)

Բանալի բառեր - հեռաուսուցում, ուսումնառության ինքնակազմակերպում, համացանցային ուսանողական համայնք, կրթական մոդուլներ, ինքնամեկուսացում

Նոնա Խաչատրյան, Ուսանողի սոցիալական մեկուսացման հիմնախնդիրները հեռուսուցման համակարգում - Այսպիսով, հեռավար ուսուցման պարագայում ներկայումս հիմնախնդիր է դառնում “համացանցային ուսանողական համայնքի” ձևավորումը, որը գալիս է որոշակիորեն փոխարինման ավանդական լսարանային ուսանողական խմբերին: Անկախ այն հանգամանքից, որ հեռավար ուսուցման համակարգում ընդգրկված անհատը կրթություն է ստանում “սոլո տարբերակով”, միևնույնն է, նա հնարավորինս պետք է զգա ուսանողական իր խմբի ներկայությունը՝ թեկուզ և վիրտուալ աշխարհում, իսկ հետագայում նաև, մի գուցե կենդանի շփումներում, երբ համացանցային շփումներին կգան փոխարինելու իրական կյանքում ուսանողական շփումները:

Հետևաբար, համացանցային կրթական մոդուլները պետք է նախատեսել այնպես, որ նրանցում գերադասելի լինեն on-line ֆորումները, բանավիճային ակումբները, խմբային աշխատանքները, որոնք կմեղմեն հեռավար ուսուցման ուսանողի սոցիալական մեկուսացման աստիճանը: Իսկ եթե հեռավար ուսուցման խմբերը հավաքագրվեն միևնույն տարածաշրջանից, ապա հնարավորինս կիրառելի պետք է դառնա ուսուցման համակցված (blended) տարբերակը, որը իրատեսական կդարձնի ուսանողական ավանդական լսարանյին շփումները:

Нона Хачатрян, Вопросы социальной изоляции студента в системе дистанционного обучения - При дистанционного обучения в настоящее время становится проблема формирования «общины on-line студентов», которое в определенном смысле приходит к замене альтернативным традиционным студенческим группам университета. Независимо от того, что человек, участвующий в системе дистанционного обучения, получил образование в «сольной версии», он все равно должен чувствовать присутствие своей студенческой группы даже в виртуальном мире и в будущем, возможно, в живых контактах, когда интернет общение происходит одновременно - со студенческим посещением в университет.

Поэтому модули онлайн-обучения должны быть предварительно установлены таким образом, чтобы on-line форумы, дискуссионные клубы, групповые работы облегчили бы степень социальной изоляции учащегося дистанционного обучения. А если группы дистанционного обучения формируются из того же региона, наиболее подходящая версия учебной программы должна стать комбинированная (blended) версия, обеспечивая

реалистичный контакт в студенческих аудиториях и предотвращая негативные риски самоизоляции в обучении.

Nona Khachatryan, Issues of students social isolation in the system of distance learning - With distance learning, it is now becoming a problem to form a “community of on-line students”, which in a certain sense comes to replace alternative traditional student groups of the universities. Regardless of the fact, that a person participating in the distance learning system was educated in the “solo version”, he still needs to feel the presence of his student group even in the virtual world and in the future, perhaps in live contacts when internet communication occurs simultaneously - with a student visit to the university. Therefore, online learning modules should be pre-installed so that online forums, discussion clubs, group work, facilitating the degree of social exclusion of a distance learning students. And if distance learning groups are formed from the same region, the most appropriate version of the curriculum should be a combined (blended) version, providing realistic contact with student audiences and preventing the negative risks of self-isolation in training.

**ՇՈՒԿԱՑԻ ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ,
ԻՐԱԿԱՆԱՅՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ
ՇՈՒՇԱՆ ԶԻՐՈՑԱՆ**

Ավելի քան հարյուր երեսուն երկրներ կամ իրավական համալարգեր այսօր ունեն շուկայի մրցակցությունը պաշտպանող և խթանող օրենքներ¹, որոնցից մոտ երկու երրորդը գործարկել են իրենց առաջին մրցակցային օրենքները վերջին քսանհինգ տարիների ընթացքում²: Սակայն հարց է առաջանում՝ ինչ է նշանակում հաջողված, կամ հակառակը՝ անհաջող մրցակցության պաշտպանության իրավական դաշտ կամ քաղաքականություն և ինչպես է պետք այդ քաղաքականությունը գնահատել: Էմպիրիկ վերլուծությունն այս պարագայում միայն անուղղակիորեն կտա մեզ այս հարցի պատասխանը, օրինակ՝ պարզել, թե արդյոք մրցակցության պաշտպանության քաղաքականությունը նպաստել է երկրում տնտեսական աճին, օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքին, դեմոկրատիային կամ կոռուպցիայի կրճատմանը³: Այնուամենայնիվ, միանշանակ պատասխանել այս հարցին հնարավոր չէ: Ամբողջապես և դեղուկտիվ մեթոդի միջոցով հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է սկսել ազատ մրցակցությունը ապահովող օրենսդրական դաշտի և քաղաքականության նպատակների ուսումնասիրությունից: Ուսումնասիրության նպատակով պայմանականորեն առանձնացնենք հետևյալ նպատակները՝ արդյունավետություն, զարգացում, մասնավոր հատվածի մրցակցային դաշտի զարգացում, մրցակցության ազատականացում պետության լծակներից, մրցակցության առկա մշակույթի ազդեցություն, տնտեսական և քաղաքական անկայություն:

Արդյունավետություն

Չիկագոյի դպրոցի և դրա մրցակցության պաշտպանության խիստ քաղաքականության մեջ գնորդի բարօրության կարևորումը 1970-1980-

¹ **Umut Aydin**, The International Diffusion of Competition Laws, Paper presented at the Instituto de Ciencia Política, Pontificia Universidad Católica de Chile (June 19, 2015); **Tim Büthe & Shahryar Minhas**, The Global Diffusion of Competition Laws: A Spatial Analysis

² **Büthe & Minhas**, supra note 1. See also **Tim Büthe & Cindy Cheng**, The Effect of Competition Law on Innovation: A Cross-National Statistical Analysis, in **A STEP AHEAD: COMPETITION POLICY FOR SHARED PROSPERITY AND INCLUSIVE GROWTH** 183-220 (Washington: World Bank & OECD, Conference ed. 2016)

³ **Serdar Dalkir**, **A Quantitative** Evaluation of Effectiveness and Efficacy of Competition Policies Across Countries, in **2 Politics Triumphs Economics? Political Economy And The Implementation Of Competition Law And Economic Regulation In Developing Countries** 226 (**Pradeep S. Mehta & Simon Evenett** eds., 2009); **Niels Petersen**, Antitrust Law and the Promotion of Democracy and Economic Growth, 9 **COMPETITION L. & ECON.** 593 (2013); **Jerg Gutmann & Stefan Voigt**, Lending a Hand to the Invisible Hand? Assessing the Effects of Newly Enacted Competition Laws (Feb. 2014)

ականներին դարձավ մրցակցության պաշտպանության օրինական դաշտի և քաղաքականության գերիշխող գործառնական նպատակը ԱՄՆ-ում, իսկ հետագայում նաև շատ երկրներում ևս⁴: Գնորդի բարեկեցությունը՝ որպես շեշտադրված նպատակ, արագ զիջեց իր տեղը արդյունավետությանը՝ որպես իրական, գործառնական նպատակ: Այս անցումը ևս նկատվում է Չիկագոյի դպրոցի տնտեսագիտական մտքում⁵:

Արդյունավետությունը՝ որպես գործառնական նպատակ կիրառում է առաջնահերթություններ, կանխարգելում և պատժամիջոցների կիրառում հակամրցակցային պրակտիկայում: Արդյունավետության աճը ընդունելով որպես տնտեսական մրցակցության քաղաքականության կարևոր գործառնական՝ արտադրության արդյունավետության, տեղաբաշխման արդյունավետության և դինամիկայի արդյունավետության աճը կարող են ծառայել որպես հաջողության չափման միավորներ՝ քանի դեռ այդ աճը բխում է մրցակցության պաշտպանության առկա քաղաքականությունից:

Զարգացում

Շատ տեսաբաններ և տնտեսագետներ վիճում են այս հարցի շուրջ և պնդում, որ արդյունավետությունը չպետք է լինի միակ նպատակը մրցակցային իրավական դաշտը և քաղաքականությունը ձևավորելիս և, որ այս նպատակը կարող է լինել սխալ համեմաբար աղքատ երկրների համար, որնք գտնվում են իրենց զարգացման և արդյունաբերացման առաջին փուլերում և օգտագործում են միայն որոշ հետարդյունաբերական ծառայություններ: Ոչ արդյունավետ ապրանքների պաշտպանությունը կարելի է հետաձգել, բայց վերջիվերջո անհարժեշտ կարգավորումները կբերեն տնտեսության բարեկեցության էական անկման: Ոչ արդյունավետ արտադրողների շուկայում նոր, ավելի բարձր արդյունավետությամբ արտադրողների մուտքը իր բնույթով հաղիսանում է մի յուրօրինակ շուկային թերապիա, որը կարող է բերել որոշակի եկամուտների կորստի⁶: Այսպիսի շուկային թերապիաները կարող են բերել աղքատության մակարդակի բարձրացման և կարող են նաև կրճատել շուկայում խաղացողների թիվը՝ իջեցնելով ընդհանուր շուկայում մրցակցության մակարդակը: Այդ իսկ պատճառով կարևոր է մրցակցային իրավական դաշտ և քաղաքականություն մշակելիս հաշվի առնել տնտեսական և ոչ տնտեսական զարգացման հեռանկարները:

⁴ **DAVID J. GERBER**, GLOBAL COMPETITION: LAW, MARKETS, AND GLOBALIZATION, 142 (2010)

⁵ **Robert H. Bork**, Legislative Intent and the Policy of the Sherman Act, 9 J. L. & ECON. ECONOMICS 7, 12, 30 (1966)

⁶ **NITA RUDRA**, GLOBALIZATION AND THE RACE TO THE BOTTOM IN DEVELOPING COUNTRIES: WHO REALLY GETS HURT? (2008); Erik Wibbels, Dependency Revisited: International Markets, Business Cycles, and Social Spending in the Developing World, 60 INT'L ORG. 433, 438, (2009)

Մեկ այլ տեսակետի համաձայն , առաջնորդվելով մարդկային արժեքներով, և ոչ միայն՝ տնտեսական, պետք է զարգացող երկրներում կառուցել մրցակցային այնպիսի քաղաքականություն, որը պետք է կենտրոնանա այնպիսի ոլորտների վրա, որոնք ուղղակիորեն բարելավում են աղքատների կյանքի որակը՝ կապված առաջին անհրաժեշտության ապրանքների և արտադրության, գյուղատնտեսության և առողջապահության համակարգի հետ⁷: ՀՀ-ում աղքատության մակարդակի նվազումը ևս կարևոր մարտահրավեր է և այս առումով միշտ պետք է հետևել առաջին անհրաժեշտության ապրանքների շուկայում մրցակցության լիարժեք ապահովմանը և գնագոյացման մեխանիզմներին, ինչպես նաև կարևոր է հետևել գյուղատնտեսության ոլորտում առկա ռաջարկ ներկայացնող գյուղացիների ազատ մրցակցային դաշտում գործելու և մրցակցային գնագոյացմանը: ՀՀ-ի պայամաններում կարևոր է արտահանման պոտենցիալ ունեցող արտադրության համար շուկայում ազատ մուտքի հնարավորության ստեղծումը և ազատ մրցակցային դաշտի ապահովումը, որը հնարավորություն կտա այդպիսի կազմակերպությունների շատացմանը և հավասար պայմաններում ազատ զարգացմանը: Շուկա ազատ մուտքին խոչընդոտում են նաև կապիտալի և կրթության անհավասար բաշխումը և մրցակցային քաղաքականությունը, որը ձգտում է հաղթահարել շուկա մուտքի խոչընդոտները, պետք է իրականացնի գործողություններ, որոնք կբերեն այսպիսի գործոնների և անհավասարության հաղթահարմանը⁸: Այս պարագայում շուկայում կշարունակեն մնալ և զարգանալ միայն կենսունակ ընկերությունները, որոնք արտադրանքի մրցունակությունը մեծ և որոնք կունենան հստակ արտահանման և արտահանման ծավալների մեծացման հնարավորություն, որի շնորհիվ Հայաստանի տնտեսությունը կգրանցի արտահանման ծավալներ աճ և հետևապես նաև տնտեսական աճ: Այս գործընթացն, իհարկե ածանցյալ ձևով, նաև կնպաստի գործազրկության ակարդակի իջեցմանը:

Մասնավոր հատվածի մրցակցային դաշտի զարգացում. Մրցակցության խթանում և խոչընդոտների հաղթահարում

«Մրցակցության սանձազերծումը»⁹ լայնորեն ընդունված շուկայական մրցակցության պաշտպանության քաղաքականության նպատակ է, որը նաև կարող է բերել իրավական ոլորտում արդարադատության կայացմանը՝ արդյունավետության և զարգացման նպատակների իրազագործումը

⁷ **Aditya Bhattacharjee**, Who Needs Antitrust? Or, Is Developing-Country Antitrust Different? A HistoricalComparative Analysis, in COMPETITION LAW AND DEVELOPMENT at 53

⁸ **Eleanor M. Fox**, Competition, Development, and Regional Integration: In Search of a Competition Law Fit for Developing Countries, in competition policy and regional integration in developing countries 273, 275, 281–83, 285

⁹ Competition Commission South Africa, Unleashing Rivalry: Ten years of enforcement by the south african competition authorities (2009)

երաշխավորելու համար: Այս վերլուծությունը շատ կարևոր է շուկայում առկա մրցակցային թերությունները բացահայտելու հարցում, որը երկար ժամանակ կարող է պահանջել շուկայի մասնավոր հատվածի սանձազերծման համար, և այս ամենը պետք է անել նախքան որևէ ոլորտում արդարադատության իրագործումը: Մինչև մրցակցությունը կարգավորող մարմինը (ՀՀ-ում տնտեսական մրցակցությունը երաշխավորող մարմին է հանդիսանում Տնտեսական Մրցակցության Պաշտպանության Հանձնաժողովը) փորձի պատժել կամ կանխարգելել հակամրցակցային վարքը՝ իրավական լծակների կամ այլ գործիքների միջոցով, այն պետք է նույնականացնի կամ բացահայտի այդպիսի սպառնալիքները: Այս նպատակն իրագործելու համար մրցակցային դաշտը կարգավորող մարմինը պիտի ունենա կարողություն , որը թույլ կտա նրան ձեռնարկել, տնտեսական, իրավական և անհրաժեշտության դեպքում նաև քաղաքական վերլուծություն: Ավելի հեշտ է բացահայտել, քան իրականացնել վիրահատություն, որը չի թողնի սպիներ կամ չի ունենա այլ բացասական հետևանքներ¹⁰:

Մրցակցության ազատականացումը պետության լծակներից. Կարգավորումն օրենքների և հասարակական քաղաքականության միջոցով

Հաճախ հենց պետությունն է հանդիսանում ազատ մրցակցությունը խոչընդոտող մարմին¹¹՝ իր օրենքներով կարգավորվող շուկաների, քաղաքական որոշումների, պետության սեփականությունը հանդիսացող և նրա կողմից ղեկավարվող ձեռնարկություններին արտոնությունների տրամադրման, պետության կողմից գրանտավորվող մոնոպոլիաների միջոցով և այստեսակ խնդիրները հենց բնորոշ են զարգացող երկրներին: Այս խնդրի լուծման երաշխավոր կարող է հանդիսանալ լավ մշակված և վերլուծության հիման վրա ընդունված մրցակցությունը կարգավորող օրինական դաշտը և իհարկե վերահսկողություն իրականացնող մրցակցային պաշտպանություն իրականացնող մարմինը, որը պետք է օժտված լինի անկախությամբ և ինքնուրույնությամբ՝ իր վերլուծություններն իրականացնելու և որոշումներ իրապատման հարցում:

Մրցակցության առկա մշակույթի ազդեցությունը

Այսպիսի ինստիտուտների ձևավորումը հիմնականում երկար ժամանակ է պահանջում¹²: Հենց այս ինստիտուտի առկայությունն է բացատրում այն, թե ինչու, որոշ զարգացող երկրներ՝ ունենալով հանդերձ մրցակցությունը կարգավորող լավ օրենսդրական և իրավական դաշտ, գորշնականում չեն

¹⁰ **Richard R. Nelson**, Comments on a Paper by Posner, 127 U. PA. L. REV. 949, 952 (1979)

¹¹ **Eleanor M. Fox & Deborah Healey**, When the State Harms Competition: The Role for Competition Law, 79 ANTITRUST L. J. 769, 775–95 (2014)

¹² **Jerry F. Hough & Robin Grier**, The Long Process Of Development: Building Markets And States In Pre-Industrial England, Spain, And Their Colonies (2015)

կարողանում ապահովել ազատ մրցակցային շուկա: Այդ սոցիալական ինստիտուտներից մեկն էլ հենց «մրցակցության մշակույթն» է, որին հետևում է այն տեսակետը, որ մրցակցությունը հիմնադիր նշանակություն ունի շուկայի համար, և կարող է սահմանվել որպես շայնամասշտաբ կոնսետուս, որ մրցակցությունը և արդյունավետ է, և նորմատիվորեն անհրաժեշտ¹³: Այս նպատակը քննարկելիս նաև կարևոր է նշել, որ շուկայում մրցակցության ապահովումը, ոչ միայն տնտեսական արդյունավետության ապահովման երաշխիք է, այլ նաև տնտեսական և քաղաքական ազատության պահպանման գրավական: Մրցակցության իրավական դաշտի և քաղաքականության ոլորտում ԵՄ-ի պատմական վերլուծությունը հաճախ ընդգծում է մրցակցության այդպիսի մշակույթի զարգացումը՝ որպես կարևորագույն ներդրում շուկայում խաղացողների միջև հանցավոր համաձայնությունների և դեմպինգի կանխարգելման հարցում¹⁴: ԱՄՆ-ի ղեկավարները և մասնավոր հատվածի ներկայացուցիչները հաճախ նշում են այսպիսի մշակույթի ստեղծումը և պահպանումը, որպես կարևոր ներդրում ԱՄՆ մրցակցության պաշտպանության իրավական դաշտի և քաղաքականության մեջ¹⁵: Այս նպատակի իրագործումը շատ կարևոր է Հայաստանյան շուկայի ազատ մրցակցության ապահովման հարցում, քանի որ մրցակցային մշակույթի բացակայությունը կխոչընդոտի այդ քաղաքականության լիարժեք իրացմանը՝ նույնիսկ լավագույն իրավական դաշտի ապահովման պայմաններում:

Տնտեսական և քաղաքական անկախություն

Տնտեսական ռեսուրսները գրեթե միշտ կարող են օգտագործվել շուկայում և այլ ոլորտներում՝ ազդեցություն ձեռք բերելու նպատակով: Զարմանալի չէ, որ ժառանգաբար փոխանցվող և մեծ տնտեսական կենտրոնացված ուժի տիրապետող քաղաքական կերպարները ի սկզբանե հանդիսանում են մրցակցային քաղաքականության առումով տարբեր քննարկումների առարկա: Տնտեսական կարողությունների այդպիսի բարձր կենտրոնացումը կործանաբար է տնտեսական և քաղաքական անկախության համար:

Երկրում մրցակցային դաշտի ապահովման հնարավոր չափորոշիչների ամփոփ ներկայացման համար քննարկված մրցակցության հիմնական նպատակների և դրանց ապահովման առաջնահերթությունները սեղմ կերպով ամփոփված են Աղյուսակ 1-ում:

¹³ **Franz Böhm, Walter Eucken & Hans Grossman-Doerth**, The Making Of Competition Policy: Legal And Economic Sources 2013, 254, 265

¹⁴ **Stephen Wilks**, Agencies, Networks, Discourses and the Trajectory of European Competition Enforcement. 3 EUR. COMPETITION J. 415 (2007)

¹⁵ **Tony A. Freyer**, Regulating Big Business: Antitrust In Great Britian And America, 1880–1990 (1992)

Աղյուսակ 1.

Մրցակցության հաջող ապահովման իրականացումը և չափորոշիչները

Գործառնական նպատակ	Իրականացում (քաղաքականության առաջնահերթությունները)	Արդյունավետության և հաջողության հնարավոր չափորոշիչներ
Արդյունավետություն	- Հակամրցակցային վարքի (որոնք կարող են բերել արդյունավետության անկման՝ ուղիղ և անանցյալ ձևով) կանխարգելում և պատժում, - Տնտեսական վերլուծության արդյունքում ստացված եզրակացությունների հիման վրա անհրաժեշտ միջոցառումների իրականացում	- արտադրության արդյունավտություն - տեղաբաշխման արդյունավետություն - դինամիկայի արդյունավետություն
Զարգացում	- Մրցակցային իրավական դաշտի/քաղաքականության թիրախավորում՝ աղքատների բարոյությունը բարձրացնելու նպատակով - Տեղական շուկայի մրցակցության աղավաղումների թիրախավորում - Անհավասարության ֆիքսումը՝ որպես շուկա մուտքի խոչընդոտ	- Մրցակցային քաղաքականության իրականացման ոլորտային և/կամ աշխարհագրական կենտրոնացվածությունը - Երկարաժամկետում ձեռնարկությունների համար շուկա մուտքի պայմանների բարելավում
Մասնավոր հատվածի մրցակցային դաշտի զարգացում	Մասնավոր հատվածում շուկայական մրցակցության խոչընդոտների հայտնաբերման նպատակով շուկայական վերլուծության իրականացում	- Գործիքակազմի առկայություն - Երկարաժամկետում՝ մրցակցության խոչընդոտների, հակամրցակցային վարքի և կառուցվածքների հայտնաբերում և հրապարակում
Մրցակցության ազատականացումը պետության լծակներից	Պետության և պետական մարմինների վարքը կարգավորող օրենսդրական դաշտի մշակում	- Պետական մարմինների և կառույցների պետ. Թույլտվությունների ու սեփականության վերլուծություն - Պետական մարմինների թիրախավորված իրավական քննություն - Երկարաժամկետում՝ պետական մարմինների կողմից մրցակցության խոչընդոտների վերացում
Մրցակցության առկա մշակույթի ազդեցություն	Գործարարների, հասարակության իրավունքները պաշտպանող միջավայրի ստեղծում	Երկարաժամկետում՝ փոփոխություններ սոցիալական սպասելիքներում և շուկայի մրցակցության նորմատիվ դիրքավորում
Տնտեսական և քաղաքական	Ուշադրություն քաղաքական-իրավական ինստիտուցիոնալ որոշիչներին և տնտեսական	Քաղաքական հավասարության/անհավասարության հանդեպ շուկայի կառուցվածքի

անկախություն	հզորությունների օգտագործումը քաղաքականության կողմից ▪ Շուկայի կենտրոնացվածության և տնտեսական ուժերի կառուցվածքային վերլուծություն	զգայության պայմանները ▪ Երկարաժամկետում՝ ազատականացում մասնավոր տնտեսական ուժերից, ▪ Երկարաժամկետում՝ քաղաքական- իրավական հավասարության դեֆակտո պահպանում
--------------	--	---

Բանալի բառեր - Մրցակցություն, մրցակցային շուկա, իրավական դաշտ, մրցակցային շուկայի քաղաքականություն, գործառնական նպատակներ:

Շուկան Զիրոյան, Շուկայի ազատ մրցակցության հաջող ապահովման գործառնական նպատակների ընտրությունը, իրականացումը և գնահատման չափորոշիչները - Մրցակցային շուկան հարուստ և զարգացած արդյունաբերությամբ տնտեսության առավելություններից մեկն է: Մրցակցային շուկան ապահովում է շուկայական տնտեսությանն այնպիսի կարևոր տնտեսական երաշխիքներով, ինչպիսիք են՝ ապրանքատեսականության բազմազանությունը, ինովացիայի վրա հիմնված նոր արտադրանքը, արտադրողականության աճը կամ գների իջեցումը միննույն ապրանքների համար, տնտեսական աճը և զարգացումը: Այս պարագայում կարևոր խնդիր է դառնում հասկանալ այն պայմանները, որոնց դեպքում շուկան կարող է դառնալ և մնալ մրցակցային, և մրցակցությունը խթանող այն օրինական դաշտը և քաղաքականությունը, որի դեպքում մրցակցային շուկան հաջող գործունեություն կիրականացնի: Հոդվածում քննարկվել են երկրում մրցակցության ապահովման նպատակով առկա օրենսդրական դաշտի և քաղաքականության գործառնական նպատակները և մրցակցության գնահատման չափորոշիչների ընտրությունը:

Шушан Зиroyan, Отбор, внедрение и оценка операционных цепей успешной рыночной конкуренции - Конкурентоспособный рынок является одним из преимуществ экономики с богатой и развитой отраслью. Конкурентоспособный рынок обеспечивает рыночную экономику такими важными экономическими гарантиями, как разнообразие продуктов, инновационных продуктов, рост производительности или снижение цен на одни и те же товары, экономический рост и развитие. В этом случае важной задачей является понимание условий, в которых рынок может стать конкурентоспособным, а также правовое поле и политика, в которой конкурентный рынок будет успешным. В статье обсуждались законодательные рамки и оперативные цели критериев политики и конкурентоспособности для конкуренции в стране.

Shushan Ziroyan, The Selection of operational objectives, implementation and evaluation of criteria for successful market competition ASUE - Are competitive markets a privilege of rich, industrial democracies? Competitive markets ensure that the

tremendous potential benefits of a market economy—such as product variety, innovation leading to new products, increasing quality, and/or lower price for the same goods, and economic growth or development—are both achieved and widely shared. So there is much at stake in understanding the conditions under which markets can become and remain competitive and under which laws and policies that seek to foster competitive markets will succeed. The article discusses the operational objectives of the legislative framework and the policy of the competitive market of the country and choice of criteria for competition evaluation.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐԻ ԵՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՆԵԼԼԻ ՀԱՐՈՑԱՆ, ԱՇԽԵՆ ՄՎՈՑԱՆ

Կառավարման տեխնոլոգիաները ի հայտ են եկել դեռևս մարդկության պատմության ամենավաղ փուլերում: Մարդկային հասարակության ձևավորման սկզբնական շրջանում կառավարման գործընթացում հոգեբանական ներագործը տարրերային բնույթ է կրել և որպես կանոն հիմնված է եղել մարդկային խմբերի, ցեղերի կամ տոհմերի առաջնորդների անձնային որակների՝ նախաձեռնության, խիզախության, ճարպկության, պարզունակ գիտելիքների ու հեղինակության վրա:

Հասարակական կյանքի աստիճանական բարդացմանը զուգընթաց հետզհետե մեծանում է սոցիալական խմբերի և կոլեկտիվների/հանրությունների/աշխատանքային գործունեության ռացիոնալ կազմակերպման անհրաժեշտությունը՝ իբրև առավել մեծ արդյունավետություն ապահովելու նախապայմանի: Այս առումով հոգեբանության մեջ ձևավորվել է հատուկ մի ոլորտ՝ կառավարման հոգեբանություն, որը ուսումնասիրում և բացահայտում է աշխատանքի կազմակերպման ընթացքում հանրության վրա հոգեբանական ներագործման գործոնները, սկզբունքները, եղանակներն ու ձևերը: Կառավարման հոգեբանությունը գիտելիք է տալիս սոցիալական փոխազդեցություններում ոչ ուժային, մարդասիրական, տեղեկատվական-հոգեբանական միջոցների գործադրմամբ նպատակին հասնելու եղանակների ու ձևերի մասին:

Ինչպես ցանկացած գիտություն, այնպես էլ հոգեբանական գիտությունը նպատակ ունի բացահայտել ուսումնասիրվող երևույթների միջև գոյություն ունեցող կայուն, կրկնվող, անհրաժեշտ, օրինաչափ կապերն ու հարաբերությունները: Օրենքներ և սկզբունքներ կոչվող այդ կապերի իմացությունն էլ հենց գիտությունը տարբերում է մարդկային գործունեության մյուս բնագավառներից, քանզի գիտելիքը թույլ է տալիս գործ ունենալ կանխատեսելի արդյունքների հետ: [2]

Այլ կերպ՝ օրենքները սահմանափակելով մարդու պատրանքային ազատությունը, մտքի շարժումը, իմացությունը տանում են ճիշտ ուղղությամբ, դրանով իսկ ձևավորում են պրոբլեմի լուծման մասնագիտական մոտեցում:

Հասկանալով հիմնական հարցը լուծելուն կողմնորոշված հոգեբանական գիտելիքի արժեքը՝ մարդիկ, կամա թե ակամա, ձգտում են ազդել մյուս մարդկանց վրա՝ հարկադրելով կամ համոզելով նրանց կատարելու այն, ինչն անհրաժեշտ է իրենց:

Սեփական նպատակների իրագործման համար մարդիկ փոխազդեցության մեջ են մտնում, որոշակի ակնկալիքներ ունենալով միմյանցից: Կան այդ սպասելիքները իրականություն դարձնելու տարբեր ձևեր ու միջոցներ. սեփական ուժերով, ճնշում գործադրելով, ուժերը միավորելով, համոզելով և այլն: Անտարակույս, սեփական ուժերով կամ համոզելով հասնել նպատակների իրականացմանը ավելի արդյունավետ է, քան ճնշում գործադրելը կամ հարկադրական այլ միջոցներ կիրառելը: Սակայն, եթե արժեքավոր իրը ուզում են խլել այն տնօրինողից, իսկ վերջինս ամեն կերպ դիմադրում է և ամեն գնով պաշտպանվում, ապա այս պարագայում իրադրությունը արմատապես փոխվում է և հարցը, ըստ էության, մարդասիրական լուծում չի կարող ունենալ:

Գոյություն ունեն ուրիշների վրա ազդելու և մարդկանց իր էտնից տանելու բազմաթիվ եղանակներ: Նման գործունեության հոգեբանական բաղկացուցիչը թեև չափազանց կարևոր է, բայց միաժամանակ նաև բարդ է, քանզի որպեսզի մարդիկ տրամադրեն իրենց աշխատանքը, ժամանակը, ուժերը որևէ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է նրանց հետ հոգեբանական աշխատանք տանել՝ համոզել և շահագրգռել, ջանքերը միավորել:

Ամեն մի ղեկավար մի շարք ընդունակություններ ունեցող եզակի անձնավորություն է: Դրա համար էլ ղեկավարման ոճը միշտ կախված է ղեկավարի անհատականությունից: Ընդհանուր առմամբ, ղեկավարումը դա՝ որոշակի միջոցների ու եղանակների գործադրումով նպատակին հասնելու, այն է՝ աշխատանքի մղելու համար, անհատների և մարդկանց խմբերի վրա ազդելու ընդունակություն է: [1]

Լիդերության ուումնասիրությանը նվիրված տարբեր մոտեցումներում ընդգծվում են անձնային տարբեր որակներ և վարքային մոդելներ. միջինից բարձր ինտելեկտ, խարիզմատիկ հատկանիշներ, հաղորդակցման կարողություններ, ապրումակցման ունակություն, նպատակների ճշմարտացիության մեջ համոզվածություն, լավատեսություն, տպավորիչ արտաքին, ողջախոհություն, նախաձեռնողականություն, նոր գաղափարներով աշխատակիցներին ոգևորելու ձիրք, նաև ինքնավստահության բարձր աստիճան:

Կազմակերպիչ-ղեկավարը, եթե նպատակադրված է ունենալ բարձր արդյունավետություն թե՛ աշխատանքային գործընթացի մեջ, թե՛ աշխատակազմի հետ հարաբերություններում, անհրաժեշտ է, որ դրսևորի ինքնակառավարման հմտություններ և պրոբլեմը լուծելու հմտություն, ունենա որոշակի անձնային արժեքների հիման վրա ձևավորված նպատակներ, մարդկանց վրա ազդելու և սովորեցնելու կարողություն, հասկանա կառավարման աշխատանքի յուրահատկությունները, հստակ գիտակցի խմբային

աշխատանքի հնարավորությունները, վերջապես ամենակարևորը՝ դրսևորի ստեղծագործական մոտեցում և կոլեկտիվ ձևավորելու ընդունակություն: [2]

Կառավարման հոգեբանության մեջ նշված որակներին զուգընթաց կարևոր է նաև ղեկավարման տարբեր ոճերի իմացությունը: Ղեկավարման ոճեր հասկացությունը առաջին անգամ առաջադրել է Կուրտ Լևինը: Այդ ժամանակից ի վեր ղեկավարման ոճերին հոգեբանության մեջ մեծ ուշադրություն է դարձվում: Տարբեր հեղինակներ առաջարկում են ղեկավարման տարբեր ոճեր: Այսպես, օրինակ, որոշ հեղինակներ շեշտադրում են ենթակաների վրա ազդելու սիստեմատիկ օգտագործվող կոմպլեքս, տիպական մեթոդները (Ա.Պ.Վոլկով, Ա.Լ.Ժուռավյով, Ա.Ա.Ռուսալինով), կամ որոշումներ կայացնելիս ղեկավարի անձնային որակներով պայմանավորված մեթոդները (Դ.Պ.Կայդալով, Ե.Ի.Սուլիմենկո, Դ.Կաուսոյ), մյուսները՝ ենթակաների հետ հարաբերվելիս ղեկավարի կողմից գործադրվող նորմերի և կանոնների համակցությունը (Ջ.Պերսեյ) կամ կոլեկտիվի մեջ մարդկային հարաբերությունների և մարդու բնույթի մասին պատկերացումներով առաջնորդվելը (Ֆ.Ֆիդլեր, Դ.Մակ-Գրեգոր) [1]:

Կառավարման որակներին տիրապետելուց, ղեկավարման տարբեր ոճերի իմացությունից զատ, արդյունավետ ղեկավարման համար շատ կարևոր է նաև կառավարման օրենքների և սկզբունքների իմացությունը: Այս առումով, նպատակահարմար է դիտարկել նաև կառավարման հոգեբանության համար հիմնարար նշանակություն ունեցող մի շարք օրենքներ և սկզբունքներ, որոնց գործադրումն է կառավարչին դարձնում իրական ղեկավար:

Օրինակ, վարքաբանական ուղղության հոգեբանները նշում են, որ վարքը կառավարում է նա, ով կառավարում է ամրապնդումը: Ուստի ղեկավարը հիմնվելով այդ օրենքի իմացության վրա, պետք է անձնակազմի վրա ճիշտ ներագրի, հասկանալով, թե երբ և ինչ բնույթի խրախուսանք են սպասում աշխատակիցները իրենց՝ անհրաժեշտ վարքային մոդելը ամրապնդելու համար, իսկ *անուղղակի ուսուցման օրենքը* հիմնված է այդ նույն ամրապնդման մեխանիզմի վրա, երբ տեղի է ունենում անուղղակի ուսուցում. այս պարագայում մարդը՝ մեկ ուրիշի համար, հանդես է գալիս վարքային մոդելի կարգավիճակում: Սովորաբար իբրև մոդել հանդես են գալիս նույն սեռի պատկանող, հաճախ տարիքով մոտ, ավելի բարձր սոցիալական կարգավիճակ ու հեղինակություն վայելող մարդիկ: Ղեկավարի գործունեության մեջ այս օրենքի կիրառումը շատ կարևոր է, քանի որ սեփական վարքային մոդելով նա կարող է խրախուսել իր աշխատողների մոտ արդյունավետ գործունեության ընթացքը: [2]

Ռուս հոգեբան Լ.Ս.Վիգոտսկին իր տեսության մեջ ներկայացրել է, թե ինչպես է հնարավոր նպատակաուղղված համագործակցությունը մեծահասակի հետ և նրանց ղեկավարման ներքո լուծվող առաջադրանքների օգնությամբ հաջողությամբ հաղթահարել երեխայի ակտուալ զարգացման մակարդակի և

նրա հնարավոր զարգացման մակարդակի միջև եղած հեռավորությունը: Այս օրենքի իմացությունը կարևոր է նաև կառավարման գործընթացում. հիմք ընդունելով աշխատողների ակտուալ հնարավորությունները և մոտիվացիան, ղեկավարը նաև նախանշում է այն նպատակները և խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել առաջիկայում՝ համապատասխանաբար զարգացնելով և մշակելով աշխատակցների մոտ անհրաժեշտ գիտելիքներն ու հմտությունները:

Հոգեբան Ե.Ս.Ժարիկովը գտնում է, քանի որ մարդը արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ պայմանավորված բարդ կենսաբանական, սոցիալական և հոգեբանական համակարգ է, հետևաբար յուրաքանչյուր աշխատակից, կախված իր հոգեֆիզիոլոգիական ռեակցիաների արագությունից և տեմպից, սթրեսակայունությունից, ներքին մոտիվացիայից, ղեկավարի և խմբում ունեցած միջանձնային հարաբերություններից և տասնյակ այլ բնութագրիչներից, կարգադրություն ստանալով կամ գործելով իր պարտականությունների շրջանակներում, կարող է այն իրականացնել ոչ ճիշտ ժամկետներում և ճշգրտությամբ, և ոչ էլ պահանջված որակով: [2]

Հաջորդ կարևոր սկզբունքը անմիջականորեն կապված է հումանիստական հոգեբանության ներկայացուցիչ Ա. Մալոու պահանջմունքների բուրգի տեսության հետ: Այդ հիերարխիկ կառուցվածքին համաձայն, պահանջմունքները կենսաբանականից բարձրանում են անվտանգության, սոցիալական ընդունման և շփման, ինքնահարգանքի և ինքնաիրականացման պահանջմունքների մակարդակին: Պահանջմունքի յուրաքանչյուր նոր մակարդակ ձևավորվում է նախորդ՝ ավելի վաղ մակարդակի պահանջմունքի կայուն բավարարման հիմքի վրա: Այս օրենքի գործնական նշանակությունն այն է, որ հիմնվելով դրա իմացության վրա և երբեք չսպասելով անհնարինին, ղեկավարը կարող է գնահատել անձնակազմի արժեքային և դրդապատճառա-պահանջմունքային զարգացման մակարդակը և կանխատեսել մոտիվացիոն ազդեցությունների արդյունավետությունը: Հետագայում Մալոուի պատկերացումները զարգացրեց Ա.Ն.Լեոնտևը. խոսելով մոտիվացիոն ոլորտի հիերարխիկ կառուցվածքի մասին: Նա նշում է, որ այն անհատական բնույթ ունի և կախված է մարդու կենսափորձից: Մասնավորապես, հասուն մարդու պարագայում, նրա մոտիվացիոն ոլորտը կարող է լինել բազմազագաթ կամ հիերարխիկորեն դասավորված: Դա դրսևորվում է բարձրագույն պահանջմունքների գերակայությամբ՝ ի հակադրություն ֆիզիոլոգիական պահանջմունքների: Տիրապետելով այս հոգեբանական գիտելիքին ղեկավարը կկարողանա ճանաչել իր ենթակաների մասնագիտական ու անձնային հնարավորությունները և վերջիններս օգտագործել ի շահ կազմակերպության առաջընթացի [2]:

Մարդու վարքը մշտապես ճշգրիտ կանխատեսելն անհնար է, քանի որ այն բարդ համակարգ է: Դրա հետ մեկտեղ նա ներգրավված է հասարակական հարաբերությունների համակարգի մեջ և դրա արդյունքում հանդիսանում է դրանց կրողն ու արտահայտողը: Մարդու ֆիզիոլոգիական, ինտելեկտուալ, էմոցիոնալ, մոտիվացիոն, սոցիալ և սեքսուալ զարգացումները միշտ չէ որ համընթաց են զարգանում և բացի դրանից մարդը բազմաթիվ պաշտպանական մեխանիզմների կրող է, որոնք և դժվարացնում են նրա առանձնահատկությունները բացահայտելու փորձերը: Դրա համար ղեկավարման գործում շատ կարևոր է հոգեկանի գործունեության որոշակի օրինաչափությունների իմացությունը:

Ղեկավարման արդյունավետությունը պայմանվորված է նաև ղեկավարի կատարած դերով: Կառավարման հոգեբանության մեջ նշվում են մի շարք դերեր, որոնց մեջ առանձնացվում են հիմնականում չորսը՝ լիդերի, ադմինիստրատորի, ծրագրող-պլանավորողի և գործարարի:

Լիդերի դեպքում ի նկատի են առնում ոչ ձևական լիդերության մեխանիզմը, երբ լիդերի հատկանիշների օգտագործումը բարձրացնում է տվյալ կազմակերպության գործունեության արդյունավետությունը: Ադմինիստրատորի դերը ենթադրում է, որ ղեկավարը պետք է վերահսկի գործերը, որոշումներ ընդունի, կազմակերպի և իրականացնի ենթակաների գործողությունները, պահպանի իրավական ու վարչական նորմերն ու պահանջները: Ծրագրողի, պլանավորողի դերում ղեկավարի գլխավոր խնդիրն է պլանավորել կազմակերպության ապագան՝ հաշվի առնելով միջավայրի և կազմակերպության շրջանակներում առաջացող զարգացումները, կատարի կառավարչական այլընտրանքներ՝ ընտրելով դրանցից լավագույնը: Պլանավորող դերը պահանջում է ղեկավարից անալիտիկ մտածողություն, որը անհրաժեշտ է ապագայում կողմնորոշվելու համար: Գործարարի դերում հանդես եկող ղեկավարը դրսևորում է փորձարարի ունակություններ, օրինակ, ոչ ստանդարտ որոշումներ կայացնելու, պատրաստ լինելու որոշակի գործարարական ռիսկի՝ միաժամանակ ձգտելով նվազագույնի հասցնել այդ ռիսկը: [3]

Այսպիսով, կառավարման հոգեբանության օրենքները և սկզբունքները գործում են անկախ նրանից, գիտենք մենք դրանք, թե չգիտենք, գիտակցում ենք, թե՛ ոչ: Արդյունավետ կառավարման մասին խոսք չի կարող լինել, եթե ղեկավարները այդ օրենքները հաշվի են առնում միայն ինտուիտիվ մակարդակով: Շնորհիվ կառավարման հոգեբանական այս սկզբունքների, ինչպես նաև կառավարման ոճերի, դերերի և ղեկավարման համար անհրաժեշտ որակների իմացության և դրանց գիտակցաբար կիրառման, էապես փոխվում է ղեկավարման որակը, ապահովվում է աշխատակազմի համախմբվածությունը, աշխատանքային դրական մթնոլորտն ու արդյունավետությունը:

Բանալի բառեր - Կառավարում, հոգեբանական սկզբունք, կառավարման ոճ:

Նելլի Հարոյան, Աշխեն Մկոյան, Կառավարման ոճերի և հոգեբանական սկզբունքների ընդհանուր վերլուծություն - Կառավարման գործընթացում առկա են բազմաթիվ հոգեբանական սկզբունքներ, որոնց իմացությունը և նպատակային կիրառումը էապես փոխում են ղեկավարման որակը, բարձրացնում դրա արդյունավետությունը և ապահովում են աշխատակազմի համախմբվածությունը: Ելնելով իր անհատականությունից՝ ղեկավարը ընտրում է ղեկավարման որոշակի ոճ և երբ դրան ավելանում է նաև կառավարման հոգեբանական օրենքների և սկզբունքների իմացությունը, կառավարիչը դառնում է իրական ղեկավար:

Հոդվածում անդրադարձ ենք կատարել կառավարման գործընթացի արդյունավետությունը ապահովող կարևոր գործոնների ուսումնասիրությանը, որոնց ամբողջականությամբ էլ որոշվում է կառավարման որակը:

Нелли Ароян, Ашкен Мкоян, Общий анализ стилей управления и психологических принципов - В процессе управления встречаются различные психологические принципы, знание и целевое применение которых значительно изменяют качество управления, повышают его продуктивность и обеспечивают сплоченность коллектива. Исходя из своих личностных особенностей, менеджер выбирает определенный стиль управления и, когда вместе с этим имеются психологические знания управленческих законов и принципов, управляющий становится настоящим менеджером.

В статье мы изучили важные факторы, обеспечивающие продуктивность управленческого процесса, которыми и определяется качество управления в целом.

Nelli Haroyan, Ashkhen Mkoyan, General Analysis of Management Styles and Psychological Principles - Management process has various psychological principles. Knowledge and targeted use of these principles significantly change the quality of the management, increase its efficiency and ensure the cohesion of the staff. The manager adopts a certain management style in accordance with his/her personality and with the knowledge of management principles and rules becomes a real leader.

The present article aims at exploring important factors for the effective management, which taken together determine the quality of management.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Жуков Б., Ткачева Е.**, Исследование систем управления. Из-во Дашков и К, 2014, 208с.
2. **Захарова Л. Н.** Важнейшие научные законы психологии управления, http://www.elitarium.ru/nauchnye_zakony_psikhologii_upravlenija/
3. **Пугачев В. П.** Руководство персоналом организации: Учебник — М.: Аспект Пресс, 2002.— 279 с

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՌՐԳՅԱՆ

Ազգային անվտանգաբանության հասկացությունների ու եզրույթների մեջ համակարգակազմիչ նշանակություն ունի «ազգային անվտանգություն» կատեգորիան, որը լինելով ամենից ընդհանրացվածը, նախ պայմանավորում է մնացած հասկացությունների բովանդակային տարրերը, մյուս կողմից միայն դրա հայաստանյան իրողություններին համապատասխան տեղայնացված հասկացությունը կարող է ճիշտ և կայուն հիմք հանդիսանալ ազգային անվտանգության համակարգում պետության տեղը և դերը համակարգային, ամբողջական կերպով վեր հանելու համար:

«Անվտանգություն» և «ազգային անվտանգություն» հասկացություններն անվտանգաբանության և ազգային անվտանգության իրավական կարգավորման տեսության ամենաբանավեճային հիմնահարցերից են: «Ազգային անվտանգություն» կատեգորիան հայտնագործվել է ԱՄՆ-ում և հենց ամերիկացիներն են դրան հաղորդել ինչ-որ իմաստավորված բովանդակություն: Առաջինն այդ եզրույթն օգտագործել է Թ. Ռուզվելտը՝ 1904 թ. Կոնգրեսին ուղղված ուղերձում: 1947 թ. ԱՄՆ-ում ընդունվեց օրենք «Ազգային անվտանգություն մասին»¹: Այս քայլը խթանեց գիտական հետաքրքրությունը: Ազգային անվտանգության ամերիկյան տեսլականը կառուցված է XX դ. կեսերի քաղաքագետ Գ. Մորգենթաուի ուսմունքի վրա, որում ազգային անվտանգությունը հասկացվում է որպես քաղաքացիների, հասարակության, պետության անվտանգություն²:

Համապատասխան մասնագիտական գրականության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ազգային անվտանգություն» հասկացության համընկնող բնորոշումներ գրեթե չկան: Մ.Յ. Զելենկովն ուսումնասիրելով «ազգային անվտանգություն» հասկացությունը, կիրառելով բոլոր մոտեցումների (բնորոշումների) համակարգային դասակարգումը, առանձնացնում է «ազգային անվտանգություն» կատեգորիայի էության ու

¹ Քաղաքական-իրավական տեսություններում անվտանգության և ազգային անվտանգության հայեցակարգերի ծագման պատմական համառոտ ակնարկը տե՛ս **Колокольников В.А.** Обеспечение государственных интересов России в контексте национальной безопасности. Диссертация на соискание ученой степени доктора юридических наук. Специальность 12.00.01: теория и история государства и права, история учений о праве и государстве, Санкт-Петербург, 2005, ст. 101-121:

² Տե՛ս **Morgenthau Hans J.** Politics Among Nations. 4-th edn., N.Y., 1967.

բովանդակության մեկնաբանման յոթ հիմնական տարբերակներ³: Կարծիքներն այնքան բազմազան են, որ բոլոր տեսակետների քննարկման արդյունքում երևի թե հնարավոր չլինի պարզել ազգային անվտանգության էությունը, ինչպես դա նկատվում է շատ հեղինակների աշխատություններում: Փորձենք հասկանալ այդ կատեգորիան՝ Հայաստանի առանձնահատկություններից ելնելով: «Ազգային անվտանգություն» ձևակերպման պարզ մեկնաբանությունը կարող է տալ երեք նշանակություն, արդյունք:

Առաջին, ազգային անվտանգությունը ազգի, ժողովրդի, այսինքն՝ որևէ երկրի բնակչության անվտանգությունն է: Այս իմաստով անվտանգությունը սակայն կարող է հասկացվել երկակիորեն, կախված այն հանգամանքից, թե ինչ կառուցվածք ունի տվյալ երկրի բնակչությունն ըստ էթնիկ չափանիշի: Հնարավոր է, որ այն լինի միաէթնոս կամ բազմաէթնոս: Տարբերությունը վերածվում է էականի, քանի որ միաէթնոս բնակչության պայմաններում հասարակությունը՝ որպես ազգային անվտանգության օբյեկտ և էթնոսը համընկնում են, իսկ բազմաէթնոս բնակչության դեպքում էթնոսի(ների) և հասարակության անվտանգություններն իրարից տարբերվող շահեր են ենթադրում և նույնիսկ հնարավոր են դրանց հակասություններ:

Երկրորդ, ազգային անվտանգություն նշանակում է հասարակության անվտանգություն, այսինքն՝ համատեղ կենսագործունեության պատմականորեն ձևավորված պայմաններով միավորված մարդկանց համակցություն: Այս դեպքում, սակայն, «հասարակություն» և «ազգ» հասկացությունները հանդես են գալիս որպես հոմանիշներ: Որպես կանոն «ազգ» հասկացությունն ունի այդ իմաստն ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, որտեղից էլ առաջացել է «ազգային անվտանգություն» բանաձևը և դրա հայեցակարգը: «Ազգային անվտանգության» ոչ միանշանակ հասկացումը պայմանավորված է «ազգ», «ազգություն» հասկացությունների մեջ տարբեր իմաստներ դնելով. առաջին, երբ շեշտադրվում է դրանց էթնիկ իմաստը և արդյունքում ազգային անվտանգություն մեկնաբանվում է որպես առանձին ազգի անվտանգություն, երկրորդ, երբ «ազգային անվտանգություն» մեջ առաջինը հասկացվում է որպես այս կամ այն երկրին վերաբերող, անկախ դրանում ապրող ազգային կազմավորումների: Այս մոտեցումը բնութագրական է ամերիկյան և ֆրանսիական դպրոցներին, որտեղ ազգը համարվում է համաքաղաքացիություն: Այս դեպքում ազգային անվտանգությունը նույնացվում է պետականորեն կազմակերպված հասարակության անվտանգության հետ՝ իր բոլոր դրսևորումներով: Ի վերջո «ազգային անվտանգություն» եզրույթն անգլիական «national security» բառակապակցության թարգմանությունն է, որը նշանակում է և՛ ազգային, և՛

³ Այդ մասին մանրամասն տե՛ս **Зеленков М.Ю.** Основы теории национальной безопасности М.: 2015, ст. 25-33:

պետական անվտանգություն: Արևմուտքում «ազգային անվտանգությունը» նույնական է «պետականին»⁴: Հայաստանում «ազգային անվտանգություն» և «պետական անվտանգություն» հասկացությունների նույնականացումն անթույլատրելի է, որովհետև անվտանգության երեք հիմնական օբյեկտներն ու դրան համապատասխանող տեսակներն են անհատականը, հասարակականը, պետականը:

Երրորդ, ազգային անվտանգությունը պետության անվտանգությունն է, այսինքն ժողովրդի, ազգերի միավորման կազմակերպական-իրավական ձևը, որը միջոց է համատեղ գործերը վարելու համար: Այս դեպքում «ազգայինը» վերածվում է «պետականի» հոմանիշ և, հետևաբար, այս մեկնաբանման կողմնակիցներն «ազգային անվտանգություն» ասելով հասկանում են պետության անվտանգություն:

Արևմտյան տեսաբաններից շատերն ընդունում են «ազգային անվտանգություն» հասկացության անորոշությունը, դրա բնորոշման սահմանման բարդությունը, Ռ. Բարնետի խոսքերով ասած «մշտափոփոխությունը»: Ա. Ուոլֆերսը նույնիսկ եկավ եզրակացության, որ ազգային անվտանգությունը երկիմաստային խորհրդանիշ է, որը հնարավոր է, որ չունի ինչ-որ ճշգրիտ բնորոշում⁵: Արևմտյան ազգային անվտանգաբանությունը մեծամասամբ ազգային անվտանգությունը կապում է «ազգային շահեր», «ազգային ուժեր» հասկացությունների հետ, ազգային անվտանգությունը մեկնաբանելով հիմնականում որպես ռազմական անվտանգություն ու երկրի պաշտպանություն⁶:

Արևմտյան ազգային անվտանգաբանության մյուս առանձնահատկությունն ազգային անվտանգության արտաքին, միջազգային կողմերի շեշտադրումն է՝ թերագնահատելով անվտանգության ներքին կողմերը, ներքին կյանքի ազդեցությունը պետության վրա: Արտաքին հարաբերությունների երկու հիմնական դպրոցներից՝ «իրատեսականը» և «իդեալիստականն» իրենց բանավեճի ընթացքում կառուցեցին «ազգային անվտանգություն» հասկացության տարբեր կառույցներ, սակայն երկուսում էլ հիմնական շեշտադրումը դրվում էր անվտանգության արտաքին կողմերի վրա: Միայն 1990-ական թթ.-ից առաջ եկան աշխատություններ, որոնք սկսեցին հետազոտել ազգային անվտանգության ներքին կողմերը, սպառնալիքները,

⁴ Տե՛ս **Даниленко В.В.** Теоретико-правовые проблемы правового обеспечения национальной безопасности России. Дисс. кан. юр. наук. Специальность 12.00.01; М., 2010, ст 90-91:

⁵ Տե՛ս **Wolfers A.** Discord and Collaboration. Essays on International Politics. Baltimore: Johns Hopkins University Press, 1962. P. 6.

⁶ Այսպես Ու. Լիպպմանը գտնում է, որ պետությունն անվտանգության վիճակում է, երբ նա չի գոհարերում իր օրինական շահերը պատերազմից խուսափելու համար, և, երբ նա ի վիճակի է անհրաժեշտության դեպքում պաշտպանել այդ շահերը ռազմական ուժի օգտագործմամբ (տե՛ս **Lippman W.** US Foreign Policy: Shield of the Republic. Boston, 1943. P. 5):

գործոնները⁷, վերլուծեցին ժողովրդավարության և խաղաղության կապը⁸, շեշտադրեցին ոչ միայն դրա ռազմական բաղադրիչը, այլև՝ ներքինը⁹:

Սառը պատերազմի ավարտից հետո շատ հեղինակներ հիմնավորեցին, որ ազգային անվտանգությունը չի կարող սահմանափակվել միայն ռազմական անվտանգությամբ, ճիշտ է, երբեմն զգուշանալով, որ անվտանգության լայն մեկնաբանման դեպքում այն կարող է կորցնել իր հայեցակարգային ամբողջությունը¹⁰: Անվտանգաբանության ռուսական դպրոցը, ի միջիայլոց, լինելով նոր ձևավորված, ունի բավականին համակարգված, հետևողական ու տրամաբանական մոտեցումներ, որոնց որոշ տարրեր կարող են օգտակար լինել ՀՀ ազգային անվտանգության հասկացության կառուցման համար: Սակայն անվտանգաբանության ռուսական դպրոցի առանձնահատկությունը և հիմնահարցի խճճվածությունը պայմանավորված է ռուսական պետության բազմազգությամբ, ինչն առաջ է բերում «ազգ» եզրույթի տարբեր իմաստներ և այստեղ խնդրի լուծման միակ ուղին ոչ թե գիտականն է, այլ եզրույթային կոնվենցիան, համաձայնությունն «ազգ» կամ «ազգային» բառի իմաստի շուրջ: Հետևաբար, Հայաստանի իրողությունների համար անհրաժեշտ է կառուցել ազգային անվտանգության սեփական, հայ ժողովրդի ու նրա պետականության առանձնահատկությունների վրա կառուցված բնորոշումը, որում իրենց յուրահատուկ իմաստը կստանան անվտանգության բոլոր հնարավոր տեսակներն՝ ազգայինը, պետականը, հասարակականը, անհատականը, արտաքինը, ներքինը և այլն:

Ազգային անվտանգության հասկացությունը կառուցելիս պետք է նկատի ունենալ նաև մեկ այլ հանգամանք, որ պայմանավորված է սույն հետազոտության առարկայով: Ի վերջո «ազգային անվտանգություն» հասկացությունը և դրա տեսակների առանձնացումը չի մտնում ատենախոսության առարկայի հետազոտական շրջանակի մեջ: «Ազգային անվտանգություն» հասկացությունն ընդամենն օպերացիոնալ միջոց է պետության տեղն ու դերն ազգային անվտանգություն համակարգում գնահատելու համար: Հետևաբար, սույն աշխատանքի տեսակետից հարմար է

⁷ St' u **Russett Bruce**. Controlling the Sword: The Democratic Governance of National Security. Cambridge: Harvard University Press, 1990; Risse-Kappen Th. Public Opinion, Domestic Structure, and Foreign Policies // World Politics. 1991. Vol. 43. № 4. July. P. 479-512:

⁸ St' u **Rummel R.** Libertarianism and International Violence // Journal of Conflict Revolution. 1983. Vol. 27. № 1. P. 27-71.

⁹ Օրինակ՝ Ե. Մեյն ազգային անվտանգությունը դիտարկում է երկու բաղադրիչների՝ ներքին և արտաքին միասնություն, որոնք հաճախ բխվում են միմյանց հետ (տե՛ս **May E.** National Security in American History // Rethinking Americas Security / Ed. By G. AUison and G. Treverton. N.Y.: W.W. Norton and Co., 1992. P. 104):

¹⁰ St' u **ICnorr K.** National Security Studies: Scope and Stracture of the Field // F. Trager and P. ICronenberg. National Security and American Society: Theory Process Policy. Lawrence: University of Kansas Press, 1973. P. 5-6; US National Security. A Framework for Analysis / Ed. by **D. Kaufman**, J. McICitrick: Lexindton Books, 1985. P. 4:

ազգային անվտանգություն այն բնորոշումը, որ կառուցված է ճիշտ հայեցակարգային հիմքերով՝ հատկապես անվտանգության օբյեկտների հարցում և հաշվի է նստում ազգային առանձնահատկությունների, հայաստանյան իրողությունների հետ: Այս տեսանկյունից հետաքրքիր կլինեք օգտագործել ազգային անվտանգության այն բնորոշումը, որը սահմանված կլինեք ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մեջ: Սակայն ՀՀ ԱԱՌ-ն չունի ոչ մի բնորոշում: Դրա ներածությունը սկսվում է ազգային անվտանգության ռազմավարության բնորոշմամբ, համաձայն որի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է»¹¹: Հիմք ընդունելով ազգային անվտանգության ռազմավարության այս բնորոշումը, վերլուծության, բաղդատման միջոցով փորձենք կառուցել ազգային անվտանգության հայկական բնորոշումը:

Առաջին, կարևոր հատկանիշը, որ բնութագրական է ազգային անվտանգությանը, դա նրա օբյեկտների հարցն է: ՀՀ ԱԱՌ-ն ընդունում է այդ հարցի լուծման եռմիասնական մոտեցումը՝ անհատ, հասարակություն և պետություն: Սակայն այդ լուծումը պետք է ճշգրտվի, քանի որ, այսպես կոչված, հայկական անվտանգությունն ունի որոշակի առանձնահատկություններ: Հայաստանում ազգն էթնիկ իմաստով և հասարակությունը, որպես անհատների համակցություն, գրեթե համընկնում են, ի տարբերություն մի շարք այլ երկրների: Նշանակում է ազգային անվտանգության օբյեկտ է ոչ թե չեզոք համարվող հասարակությունը որպես երևույթ, այլ «հայ հասարակությունը», ազգը: Հետևաբար, ազգային անվտանգության բնորոշումը պետք է հաշվի նստի այդ առանձնահատկության հետ: Որպես դրա լուծման տեսական-դատողության ձև առաջարկում ենք օբյեկտների թվարկման շարքում «հասարակություն» եզրույթից հետո փակագծերի մեջ դնել ազգ եզրույթը, կստացվի «հասարակության (ազգի) պաշտպանվածություն»: Ազգային անվտանգության օբյեկտի նման ճշգրտումը կարևոր նշանակություն ունի ազգային անվտանգության ռազմավարության գործնական խնդիրների լուծման համար, որովհետև ազգը դառնում է և՛ ազգային անվտանգության օբյեկտ, և՛ դրանից բխող քաղաքական ծրագրերի օբյեկտ: Այսպիսով՝ ազգային անվտանգության օբյեկտներ են դառնում անհատը, հասարակությունը (ազգը), պետությունը, դրանով իսկ լուծվում է ՌԴ անվտանգաբանության համար այդքան խճճված «ազգային անվտանգություն» «պետական անվտանգություն» հասկացությունների հարաբերակցությունը: Այս մոտեցման հիման վրա ըստ ազգային անվտանգության օբյեկտների պետք է

¹¹ Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն //ՀՀ Պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկումը, Եր., 2007, «Ամարաս» տպարան, էջ 13:

տարբերակել անվտանգության երեք տեսակներ՝ անհատի անվտանգություն, հասարակության (ազգի) անվտանգություն և պետության անվտանգություն: Բոլոր երեքին միավորող (սինթեզող) ընդհանուր հասկացությունը «ազգային անվտանգություն»-ն է:

Առաջին միջանկյալ եզրակացությունը կարելի է ձևակերպել հետևյալ բանաձևով. հայկական ազգային անվտանգության օբյեկտներ են անհատը, հասարակությունը (ազգը), պետությունը:

Ընդհանուր հասկացության մեջ «ազգային» ածականի պահպանումը պայմանավորված է հայ ազգի մեկ այլ յուրահատկությամբ, մասնավորապես՝ հայկական սփյուռքի գոյությամբ, որն արդեն հարյուրամյակներ օբյեկտիվորեն առկա իրողություն է: Հայկական սփյուռքի առկայությունն անհրաժեշտաբար պետք է արտացոլվի մեր ազգային անվտանգության հայեցակարգում, որովհետև սփյուռքի գոյությունը Հայաստանի Հանրապետության արտաքին անվտանգության հիմքերից ու պայմաններից մեկն է: Այս խնդիրը նկատի ունենալով, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը, որպես պետական քաղաքականության համակարգ, ներառում է նաև այնպիսի ոլորտ, ինչպիսին է «հայ ինքնության պահպանումը»: Դրան համապատասխան ՀՀ ազգային անվտանգությունը հիմնարար արժեք է ճանաչվում **հայապահպանությունը**¹²: Այդ արժեքի բովանդակությունը ներկայացված է հետևյալ կերպ. «Հայաստանի Հանրապետությունը հետամուտ է հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանմանն ու զարգացմանը՝ հայրենիքում և սփյուռքում: Այս արժեքի իրավական հիմքերը ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթներն են ամրագրված 19-րդ հոդվածում՝ «Հայկական սփյուռքի հետ կապերը»: Համաձայն այդ հոդվածի 1-ին մասի ՀՀ-ը հայկական սփյուռքի հետ իրականացնում է համակողմանի կապերի զարգացման և հայապահպանմանն ուղղված քաղաքականություն, նպաստում է հայրենադարձությանը: Նույն հոդվածի 2-րդ մասի ուժով ՀՀ-ը միջազգային իրավունքի հիման վրա նպաստում է այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը:

Գնահատելով ՀՀ ԱԱԲ-ի այս մոտեցումը, պետք է ասել, որ վերը բերված ձևակերպման մեջ կան նաև թերություններ: Մասնավորապես, ազգային անվտանգության սուբյեկտը միայն պետությունը չէ: Հետևաբար, հայապահպանությանը պետք է հետամուտ լինեն բոլոր սուբյեկտները

¹² Ազգային անվտանգության ռազմավարության ձևավորմանը նվիրված շատ երկրների փաստաթղթեր սկսվում են ազգային հիմնական արժեքների թվարկմամբ ու բնութագրմամբ, իսկ այնուհետև դրանց գլխավոր սպառնալիքների բացահայտմամբ: Այդ կապակցությամբ Ա. Ուոլֆերը գտնում է, որ «Անվտանգությունն օբյեկտիվորեն նշանակում է հիմնական արժեքների, սպառնալիքների բացակայություն, իսկ սուբյեկտիվորեն վախի բացակայությունը, որ այդ արժեքներին իրականում ոչինչ չի սպառնում» (տե՛ս **Wolfers A.** Dscord and Collabratin. Essayson International Politics. Baltimore: Johns Hopkins Univesity Press, 1962. P.150):

(պետական և ոչ պետական), որոնք տեսականորեն և իրավաբանորեն ճանաչվում են որպես ազգային անվտանգության ապահովման ոլորտում իրավագործություն ունեցողներ:

Այսպիսով՝ հայկական ազգային տեսանկյունից ազգային անվտանգության օբյեկտի վերածվեց նաև սփյուռքը, որին ըստ օբյեկտի համապատասխանող անվտանգությունը կարելի է անվանել «սփյուռքահայության անվտանգություն»: Այն իր բնույթով լրիվ և զուտ ազգային-հայկական խնդիր է և դրա նպատակը՝ օտար միջավայրում հայ ինքնության պահպանությունն է՝ հայապահպանությունը, ինչպես նաև դրան հարակից մի շարք օժանդակող գործառնություններ:

Պետք է նկատ ունենալ, որ 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունն այս հարցում արձանագրեց առաջընթաց մի շարք ուղղություններով: Եթե 2005 թ. Սահմանադրությունն օգտագործում էր հիմնականում օժանդակել, նպաստել եզրույթները, ապա գործող Սահմանադրությունն անցում կատարեց «ապահովման» միջոցով կարգավորմանը: 2015 թ. Սահմանադրությամբ ավելացան պետության պարտավորությունները հայկական սփյուռքի հետ կապերի ոլորտում. ՀՀ-ն պարտավորվում է հայկական սփյուռքի հետ իրականացնել՝ ա) համակողմանի կապերի զարգացման քաղաքականություն, բ) հայապահպանության քաղաքականություն, գ) նպաստել հայրենադարձությանը, դ) նպաստել այլ պետություններում հայոց լեզվի, հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, ե) նպաստել հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը: Այսպիսով, եթե 2005 թ. սահմանադրական տեքստից կարելի էր բխեցնել պետության 3 պոզիտիվ պարտականություն, ապա 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության 19-րդ հոդվածից կարելի է բխեցնել 5 պոզիտիվ պարտականություն:

Սահմանադրական այս կարգավորումը խարսխված է հայ ժողովրդի և նրա պատմության երկու առանձնահատկությունների վրա, այն է՝ «աշխարհասփյուռ վիճակը և Հայաստանի ու ներկայիս ՀՀ-ի տարածքային տարբերությունները, ինչի արդյունքում հայկական պատմական և մշակութային արժեքների մեծ մասը գտնվում է այլ պետությունների տարածքում»¹³: Սահմանադրական այս կարգավորումը միաժամանակ հիմք է տվել տեսաբաններին պետության վերը նշված պոզիտիվ պարտականությունները համարել պետության միջպետական մշակութային, գիտատեխնիկական և տեղեկատվական համագործակցության արտաքին գործառնության բովանդակային տարրեր¹⁴:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ /ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.- Եր.: «Իրավունք», 2010, էջ 140:

¹⁴ Այդ գործառնության այլ տարրերն են՝ այլ պետությունների հետ մշակութային, գիտական կապերի հաստատումը և զարգացումը, մշակութային արժեքների պահպանության համատեղ

1995 և 2005 թթ. խմբագրությամբ Սահմանադրությունների 11-րդ հոդվածը խթանեց հայապահպանության արժևորումը և դրա արդյունքում 2007 թ. ընդունված ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն այն դիտարկեց որպես ՀՀ ազգային անվտանգության հիմնարար արժեք: ՀՀ ԱԱՌ-ի տեսանկյունից հայապահպանությունը «հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման ու զարգացման» քաղաքականությունն է, որը պետք է իրականացվի հայրենիքում և սփյուռքում: Ազգային անվտանգության այս արժեքի լույսի ներքո ՀՀ ԱԱՌ-ն նախատեսում է՝

- Հայաստան-սփյուռք փոխհարաբերությունների համապարփակ հայեցակարգի մշակում ու իրականացում, սփյուռքի ներուժի համակողմանի համախմբում,
- հայազգիտական ճյուղերի՝ հայոց լեզվի, գրականության, պատմության և մշակույթի՝ որպես ազգային հոգևոր ժառանգության հարատևությունն ապահովող և ազգային ինքնությունը մարմնավորող գործոնների զարգացում,
- ազգային մշակույթի համակողմանի զարգացում՝ ինքնատիպության հիմքերի պահպանմամբ և համամարդկային մշակութային արժեքների ու նվաճումների յուրացմամբ, արտերկրում հայկական մշակութային ժառանգության ու նվաճումների արդյունավետ ներկայացում¹⁵:

Այդպիսի նպատակը և դրանով պայմանավորված գործառույթը՝ հայապահպանությունը կարող է ընդգրկվել միայն **«ազգային»** կոչվող անվտանգության ընդհանուր հասկացությամբ: Այնպես որ հայկական ազգային անվտանգութաբանության համար անընդունելի են «ազգային» և «պետական» անվտանգությունների և՛ նույնականացման, և, հակադրման տեսական մոտեցումները:

Տեսաբաններից Ի.Ն. Գլեբովն ընդգծում է «ազգային անվտանգություն» հասկացության մեկ այլ առավելություն. այն է լինելով ապագադափարկանացված՝ ունենալով միջառարկայական, միջճյուղային բնույթ՝ թույլ է տալիս իրենում միավորել անվտանգության բոլոր տեսակները, դրանով իսկ հնարավորություն է առաջանում ազգային անվտանգություն

միջոցառումների իրականացումը, մասնակցությունը համաշխարհային տեղեկատվական տարածությանը (տե՛ս **Վաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ /ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 122):

¹⁵ Տե՛ս ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն //ՀՀ Պաշտպանության նախարարության Դրաստամատ Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկումը, Եր., 2007, «Ամարաս» տպարան, էջ 14, 16:

հասկացությունից օգտվել ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական կարգավորման մեջ¹⁶:

Երկրորդ միջանկյալ եզրակացությունը, որին հանգում ենք, դա այն է, որ հայկական ազգային անվտանգության օբյեկտներ են ոչ միայն անհատը, հասարակությունը (ազգը), պետությունը, այլև սփյուռքահայությունը:

Հաջորդ հատկանիշը, որի միջոցով պետք է ձևակերպել ազգային անվտանգություն հասկացությունը, վերաբերում է ազգային անվտանգության նպատակներին: Ազգային անվտանգության ամենապարզ բնորոշումը կարելի է ձևակերպել որպես ազգային անվտանգության օբյեկտների պաշտպանվածություն ներքին և արտաքին տարաբնույթ վտանգներից: Հարց է առաջանում, ո՞րն է ազգային անվտանգության ապահովման նպատակը՝ անվտանգությունը: Կարծես թե չի ստացվում, հենց թեկուզ տրամաբանական տեսանկյունից՝ անվտանգության ապահովման նպատակն անվտանգությունն է: Տրամաբանական կրկնաբանությունից խուսափելու համար տարբեր հեղինակներ փորձում են նպատակայնացնել ազգային անվտանգությունը:

«Ազգային անվտանգության նպատակը պետության անկախ գոյության համար պայմանների ստեղծումն է բառի լայն իմաստով, որը ենթադրում է հիմնական սոցիալական խմբերի համար ընդունելի անձնական և նյութական ազատության ընդունելի աստիճան, տարածքային ամբողջականության, կյանքի ավանդական ոճի, ինչպես նաև հասարակական ու պետական կառույցի հիմնական ինստիտուտների, արժեքների և այլ կարևոր ատրիբուտների պահպանություն»¹⁷: ԱՄՆ-ի ազգային անվտանգության հայեցակարգի պաշտոնական հիմքը համարվող փաստաթղթերում որպես ազգային անվտանգության կարևոր տրամաբանական-դեդուկտիվ նպատակ է դիտարկվում ազգի որպես մշակութային-պատմական, քաղաքական ընդհանրության ինքնապահպանումը, ինչը ենթադրում է պետական կարգերի, ազգային իդեալների, ավանդույթների, կենսառճի պաշտպանություն¹⁸:

Այս հարցի պարզաբանման համար փորձենք դիմել փիլիսոփայության օգնությանը, ըստ որի նպատակը գիտակցության մեջ այն արդյունքի նախատեսումն է, որին հասնելուն են ուղղված գործողությունները: Նպատակն ուղղորդում և կարգավորում է գործողությունները, ներթափանցում է

¹⁶ St'u Глебов И.Н. Национальная безопасность Российской Федерации: проблемы правового регулирования. СПб.: Ун-т МВД России, 1998. - Ст. 10:

¹⁷ St'u Даниленко В.В. Теоретико-правовые проблемы правового обеспечения национальной безопасности России. Дисс. канд. Юр. наук. Специальность 12.00.01; М., 2010, էջ 70, Волков Я.В. Национальная безопасность государства Израиль: философско-политологический анализ концепции и практики применения: Дисс. ... канд. филос. наук. М., 1996. - ст. 19:

¹⁸ St'u The White House. National Security Strategy of the United States. Wash.: GPO, 1987. P. 3-4; The White House. National Security Strategy of the United States. Wash.: GPO, 1988. P. 6-7; The White House. National Security Strategy of the United States. Wash.: GPO, 1990. P. 1-3.

պրակտիկա՝ որպես ներքին օրենք, որին ենթարկված է գործող սուբյեկտի կամք: Նպատակը պետք է համապատասխանի շրջակա աշխարհի օբյեկտիվ օրենքներին, դրա և բուն սուբյեկտի իրական հնարավորություններին: Տարբերում են հեռակա, մերձակա և անմիջական, ընդհանուր և մասնավոր, վերջնական և միջանկյալ նպատակները¹⁹: Փիլիսոփայության այս մեթոդական-կողմնորոշիչ մոտեցումների և համակարգակառուցվածքային վերլուծության կիրառմամբ փորձենք իմաստավորել ազգային անվտանգության նպատակները: Ազգային անվտանգությունը որպես համակարգ գործում է ընդհանուր հասարակական համակարգում, հետևաբար, ազգային անվտանգության նպատակները պետք է համահունչ լինեն հասարակական համակարգի նպատակներին: Քանի որ հասարակական ընդհանուր նպատակների ընտրությունը հայեցողական բնույթ ունի, ուրեմն հակասականություն չառաջացնելու ու կայուն նպատակադրված գործելու համար հասարակական նպատակներն արդի պայմաններում ամրագրվում են Սահմանադրությամբ (հիմնական օրենքով) և առաջին հերթին սահմանադրական կարգի հիմքունենում:

«Սահմանադրական կարգի հիմունքները» հետխորհրդային սահմանադրական կարգավորման հասկացություններից է: Արևմտյան առաջադեմ երկրների Սահմանադրությունները որպես կանոն չեն օգտագործում այդ եզրույթը և չունեն այդպիսի անվամբ հատուկ գլուխ²⁰: Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքներ» վերտառությամբ գլուխն իրենից ներկայացնում է որոշակի համակարգ կազմող սկզբունքների ամբողջություն, որոնք բաժանվում են 4 խմբերի՝ սահմանադրական կարգի հումանիստական հիմքերը, պետության հիմնական բնութագրերը, սահմանադրական կարգի տնտեսական-քաղաքական հիմքերը, պետական իշխանության կազմակերպման հիմքերը²¹:

Եթե նկատի ունենաք, որ 2-րդը և 4-րդը վերաբերում են պետությանը, ապա կարող ենք ասել, որ սահմանադրական կարգի հիմունքները վերաբերում են հասարակական համակարգի երեք հիմնական տարրերին՝ անհատին, հասարակությանը (ազգին), պետությանը, նրանց բնականոն

¹⁹ Sté u Философский словарь, под ред. И.Т. Фролова, из. 5-ое, М., 1987, ст. 534:

²⁰ Այդպիսի գլուխ չունեն ԱՄՆ-ի, ԳՂՀ-ի, Ճապոնիայի Սահմանադրությունները: Որոշ երկրների Սահմանադրություններում կան կարճ գլուխներ «Հիմնական սկզբունքներ», (Բուլղար), «Ընդհանուր դրույթներ» (Շվեյցարիա), «Ինքնիշխանության մասին» (Ֆրանսիա): Սակայն, անկախ նրանից, կան արդյոք իմնական օրենքում հատուկ գլուխներ սահմանադրական կարգերի հիմունքների մասին և ինչպես են դրանք կոչվում, նորմ սկզբունքներ, որոնք վերաբերում են սահմանադրական կարգի հիմունքներին, առկա են Սահմանադրության զանազան գլուխներում, հատուկ օրենքներում կամ ճանաչվում են քաղաքակիրթ երկրների դատական պրակտիկայի կողմից (տե՛ս **Բաղլայ Մ.Յ., Գաբրիչիձե Բ.Ն.** Конституционное право Российской Федерации.-М.: Изд. Группа ИНФРА М. Кодекс, 1996, ст. 98):

²¹ Sté u **Բաղլայ Մ.Յ., Գաբրիչիձե Բ.Ն.** Конституционное право Российской Федерации.-М.: Изд. Группа ИНФРА М. Кодекс, 1996, ст. 97:

կենսագործունեության համար անհարժեշտ իրավական կարգավիճակի հիմքերին: Ստացվեց, որ սահմանադրական կարգի հիմունքները ներառում են և վերաբերում են հասարակական երեք հիմնական ենթահամակարգերին, որոնք իրենց հերթին ազգային անվտանգության օբյեկտներ են:

Սահմանադրական կարգի հիմունքները **հասարակական համակարգի ռազմավարական, ընդհանուր, վերջնական նպատակներն են**, որոնք ուղղորդում և կարգավորում են հասարակական համակարգի գործունեությունը, կամքը՝ որպես բառիս բուն իմաստով պարտադիր, իրավաբանական օրենք: Այսպիսով՝ արդի հասարակական իրողությունների տեսանկյունից ազգային անվտանգության նպատակները պետք է բխեն հասարակական համակարգի նպատակներից, համահունչ լինեն դրանց: Հետևաբար ազգային անվտանգությունն ինքնանպատակ չէ, այլ նպատակադրված է սահմանադրական կարգի հիմունքների կայացմանը, դրանց կայունացմանը, դրանց դեմ ուղղված քայքայիչ սպառնալիքների կանխմանը, չեզոքացմանը, վերացմանը և այլն:

Ընդհանուր հասարակական նպատակների համեմատ, ազգային անվտանգությունը միջոցներից ու պայմաններից մեկն է: Ազգային անվտանգության այս հատկության վրա շատ քիչ հեղինակներ են ուշադրություն դարձրել: «Անվտանգությունը ցանկացած համակարգի կամ ինստիտուտի գոյության կարևոր պայմաններից մեկն է: Հենց պայմանն, այլ ոչ թե նպատակը, քանի որ նպատակը պետք է լինի ինչ որ ավելի մեծ, որակապես այլ, ավելի բարձր և բովանդակային»²²: Այդպիսի «մեծ, որակապես այլ, ավելի բարձր ու բովանդակային» նպատակ կարող են ծառայել միայն և միայն սահմանադրական կարգի հիմունքները: Եթե հանկարծ ազգային անվտանգության համար պատկերացվեն այլ նպատակներ, ապա դա սահմանադրության ու ազգային անվտանգության հայեցակարգի միջև կոլիզիայի առաջացման հիմք է: Նման տեսական մոտեցումը կարող է ծնել նաև մրցակցություն սահմանադրության ու ազգային անվտանգության ռազմավարության միջև, ինչը շատ վտանգավոր երևույթ է: Այստեղից առաջանում է սահմանադրության և ազգային անվտանգության ռազմավարության հարաբերակցության հարցը:

Ամերիկացի տեսաբան Ա. Ուոլֆերսի կարծիքով, «անվտանգությունն օբյեկտիվորեն նշանակում է հիմնական արժեքներին սպառնացող վտանգների բացակայություն, իսկ սուբյեկտիվորեն՝ վախի բացակայություն, որ այդ արժեքներին իրականում ինչ որ բան սպառնում է»²³:

²² Տե՛ս **Рыхтик М.И.** Безопасность в современном мире // Национальные интересы и проблемы безопасности в меняющемся мире. Материалы междисциплинарного семинара / Отв. ред. К.С. Гаджиев, Г.В. Каменская, Э.Г. Соловьев. М., 2003. Ст. 6:

²³ Տե՛ս **Wolfers A.** Discord and Collaboration. Essays on International Politics. Baltimore: Johns Hopkins University Press, 1962. P. 150.

Հասարակական հիմնական արժեքներն առաջին հերթին սահմանադրական արժեքներն են, որոնք խտացված են սահմանադրական կարգի հիմունքներում և վերաբերում են պետությանը, քաղաքացիական հասարակությանը «ազգին», անհատին, սփյուռքին²⁴: Դա, իհարկե, չի նշանակում, որ այլ արժեքներ չեն կարող լինել անվտանգության օբյեկտ: Ուղղակի թվարկված բոլոր արժեքների մեջ սահմանադրական կարգի հիմունքներն առաջնային, առանցքային, բարձրագույն ուժ ունեցող, կայուն են: Պետք է նկատի ունենալ, որ ազգային արժեքների և իդեալների ընկալումը և հասկացումը կոնկրետ սուբյեկտի կողմից և կոնկրետ ժամանակում եղել է և կլինի տարբեր²⁵: Սակայն սահմանադրական կարգի հիմունքները կայուն, նորմատիվ բովանդակություն ունեցող, հետևաբար գրեթե անվիճելի և տարաձայնություն չառաջացնող արժեքներ են, որոնք արժանի են դիտվելու ու հասկացվելու որպես ազգային անվտանգության նպատակներ:

Պետք է համաձայնվել Ի.Ա. Լազարևի կարծիքի հետ, որ լայն փիլիսոփայական իմաստով սոցիալական բնության օբյեկտների՝ «պետության, հասարակության, սոցիալական խմբերի, մարդու միջազգային կազմակերպությունների, միավորումների» անվտանգությունը դրանց գոյություն և կայուն առաջադիմական զարգացման հուսալիությունն է: Դրա ապահովումը ենթադրում է անցկացվող քաղաքականության և միջոցառումների պետական նպատակադրում՝ ուղղված այդ սոցիալական սուբյեկտների բուն գոյության և զարգացման համար սպառնալիքներ ստեղծող վտանգավոր վիճակների ու խոքր ճգնաժամային գործընթացների կանխմանը: Պետական նպատակադրումը կոչված է խթանել քաղաքական կամքի, հասարակության ջանքերի և ռեսուրսների կոնցենտրացիան ազգային նպատակների իրականացման և ազգային շահերի պաշտպանության շուրջ²⁶: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ Ի.Ա. Լազարևի «պետական նպատակադրում» ձևակերպումը չի կարող չներառել սահմանադրական կարգի հիմունքները, որ սահմանադրական կարգի հիմունքները ենթադրում են բոլոր հիմնական սոցիալական օբյեկտների կենսագոյության հիմնակարգերը, հետևաբար վտանգների կանխումն առաջին հերթին ենթադրում է այդ օբյեկտների վտանգավոր վիճակների չեզոքացումը: Այսպիսի պնդումն, իհարկե, չի ենթադրում, որ ազգային անվտանգությունը չի կարող ունենալ այլ «կենսականորեն կարևոր շահերը», որոնք ներառված չեն

²⁴ Աշխարհի երկրների ազգային անվտանգության ռազմավարությունների մեծ մասը սկսվում է ընդհանուր արժեքների թվարկմամբ, իսկ այնուհետև վեր են հանվում դրանց գլխավոր սպառնալիքները:

²⁵ Տե՛ս **Рыхтик М.И.** Безопасность в современном мире // Национальные интересы и проблемы безопасности в меняющемся мире. Материалы междисциплинарного семинара / Отв. ред. К.С. Гаджиев, Г.В. Каменская, Э.Г. Соловьев. М., 2003. С. 63.

²⁶ Տե՛ս **Лазарев И.А.** Проблемы разработки концепции национальной безопасности РФ // Проблемы глобальной безопасности. М., 1995. Ст. 77-78 :

սահմանադրական կարգերի հիմունքների շրջանակի մեջ: Սահմանադրական կարգի հիմունքներն առաջնային «կենսականորեն կարևոր շահեր», «ազգային անվտանգության հիմնարար արժեքներ» են²⁷:

Ազգային անվտանգաբանության մեջ եզակի հեղինակներ կան, որ պետության անվտանգություն հասկացության բնորոշումը կառուցելիս փորձում են կրկնաբանությամբ սահմանազատել ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը սահմանադրական կարգի հիմունքներից²⁸: Սակայն այդ սահմանազատումը, նախ, անհրաժեշտ է երկրի պաշտանությունն ու անվտանգությունը տարբերակելու համար, իսկ այնուհետև տրամաբանական կրկնաբանություններից խուսափելու համար: Ի վերջո տարածքը նաև պետության հատկանիշ է, որը գլխավոր օբյեկտ է երկրի պաշտպանության գործառույթի, այլ ոչ թե անվտանգության համար: Երկրի պաշտպանությունը և անվտանգությունը փոխկապված են, սակայն դրանց խնդիրները, իրականացման կազմակերպակառուցվածքային ձևերն էականերոն տարբերվում են: Տեսաբաններից մեկը ՌԴ ազգային անվտանգության հիմնական օբյեկտներ է համարում «սահմանադրական կարգը, ՌԴ անկախությունը, ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ՌԴ դաշնակիցները, որոնց պաշտպանությունը և անվտանգությունն այս կամ այն կերպ իր վրա է վերցրել Ռուսաստանը՝ միջազգային պարտավորությունների հիման վրա»²⁹: Մանրագինին, հետևողական վերլուծության դեպքում այս դատողության մեջ կնկատենք բազմաթիվ կրկնաբանություններ: Առաջին հերթին անկախությունը, որ ներկայացված է որպես օբյեկտ, ինքնիշխանության հատկանիշ է³⁰: Տարածքը և դրա ամբողջականությունը բնակչության հետ միասին պետության առաջացման բանական նախադրյալներն են, որոնք վերածվում են պետության որպես ինքնիշխանի հիմնական հատկանիշների, իսկ սրանք էլ իրենց հերթին ներառված են սահմանադրական կարգի հիմունքների մեջ ի դեմս ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, որում ամրագրված են պետության հիմնական սահմանադրական բնութագրերը, ներառյալ ինքնիշխանությունը:

Երրորդ միջանկյալ եզրակացությունն այն է, որ ազգային անվտանգության նպատակը սահմանադրական կարգի հիմունքներն են՝ որպես անհատի, հասարակության (ազգի), պետության ու սփյուռքահայության

²⁷ Այդ հասկացության մասին տես հաջորդ պարագրաֆում:

²⁸ Տե՛ս **Колокольцев В.А.** Обеспечение государственных интересов России в контексте национальной безопасности. Дис. док. юр. наук. Специальность 12.00.01: теория и история государства и права, история учений о праве и государстве, Санкт-Петербург, 2005, ст. 137:

²⁹ Տե՛ս **Даниленко В.В.** Теоретико-правовые проблемы правового обеспечения национальной безопасности России. Дисс. канд. юр. наук. Специальность 12.00.01: теория и история государства и права, история учений о праве и государстве, М., 2010, ст. 76:

³⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Երևանի պետ. համալս.-Եր.: Երևանի համալս. հրատ., 2003, էջ 106-110, **Վաղարշյան Ա.**, Պետության և իրավունքի տեսություն-1: Դասախոսություններ (ԵՊՀ.-Եր.: Հեղինակային հրատարակություն, 2016, էջ 71:

կենսականորեն կարևոր շահերի իրավական արտահայտություն, կամ այլ կերպ ասած «կենսականորեն կարևոր շահերի» մեջ ներառվում են նաև «սահմանադրական կարգի հիմունքները», որպես առաջնային կարգի շահեր:

¹⁰ **Суханов Е.А.** Развитие института вещных прав при переходе к рынку// гражданское право России при переходе к рынку, М 1995 г., С. 83-92

Как известно, в гражданских кодексах РА и РФ нормы, относящиеся к вещным правам, представлены в разделе 4-ом ГК РА и разделе II ГК РФ “Право собственности и другие вещные (имущественные права)”. Тем самым законодатель подчеркивает существующее единство правовой природы и содержания этих правовых категорий.

Следует отметить, что права на чужую вещь ограничивают право собственности посредством его обременения. Поэтому в некоторых странах Европы ограниченные вещные права называются “вещными обременениями”. Так, в ч. 1 § 1257 ГК Чехии от 2012 года “vesnabremana” рассматриваются в качестве ограничений прав собственника недвижимой вещи, на которого возлагается “обязанность к выгоде кого-либо нечто претерпевать, от чего-либо воздерживаться или что-либо делать”¹¹.

Кроме того, несмотря на необходимость и значимость института ограниченных вещных прав, последние могут создавать существенные ограничения для собственника имущества в вопросах установления хозяйственного господства над вещью, тем самым “сжимая” права собственника в возможности свободного пользования своим имуществом. Однако в случае прекращения обременения на вещь право собственности восстанавливается в прежнем объеме, в чем проявляется так называемая “эластичность” права собственности, известная еще римским юристам.

Так, Кассационный суд РА постановлением от 19.10.2012 года установил, что в результате анализа норм, посвященных институту сервитута, следует, что право ограниченного пользования чужим земельным участком (сервитут) предполагает пользование недвижимым имуществом лицом, не являющимся собственником этого имущества (...) ¹². Более того, Конституционный суд РА решением от 29.06.2010 года в деле на основании заявления ООО “ДИДИ ГРУП”, учитывая международную правовую практику, посчитал необходимым оценить круг правовых возможностей ограничения права собственности, на примере сервитута. Конституционный суд утвердил позицию, в соответствии с которой установление сервитута обусловлено вынужденной необходимостью пользоваться чужим земельным участком ¹³.

Следует отметить, что Покровский И.А. отмечал: “истинной ценой, которую покупается каждое подобное ограниченное право на чужую вещь, является урезанное, морально и экономически подорванное право

¹¹ Гражданский кодекс Чехии от 03.02.2012 года//www.czechlegislation.com/89-2012-sb

¹² Постановление Кассационного суда РА от 19.10.2012 года// www.irtek.am/views/act.aspx?tid=68591&sc=p62

¹³ Решение Конституционного суда РА от 29.06.2010 года в деле на основании заявления ООО “ДИДИ ГРУП”//www.arlis.am/DocumentView.aspx?docid=59301

собственности"¹⁴. Именно поэтому возникновение ограниченных вещных прав обусловлено наличием установленных законом оснований, а усмотрение субъектов гражданских правоотношений может проявляться лишь в их выборе.

Таким образом, можно сделать следующие выводы, что признаками ограниченных прав являются:

1. исчерпывающий характер перечня ограниченных вещных прав;
2. абсолютный характер вещно-правовых отношений;
3. объектами ограниченных вещных прав являются индивидуально-определенные вещи;
4. как правило, длительный и постоянный характер ограниченных вещных прав;
5. ограниченным правам присуще право следования, право преимущества и старшинства;
6. права на чужую недвижимость подлежат регистрации в соответствующем государственном органе, что свидетельствует о публичности ограниченных вещных прав;
7. производность и зависимость от права собственности, в связи с тем, что ограниченные вещные права являются правами на чужую вещь, то есть имущество, принадлежащее на праве собственности другого лица

Ключевые слова - вещное право, обязательственное право, ограниченное вещное право,

Евгения Гянджумян, Правовые проблемы определения признаков ограниченных вещных прав РА - Данная статья посвящена проблеме определения существенных признаков ограниченного вещного права. В работе анализируется современный аспект данной проблемы с точки зрения преобразования гражданского законодательства. В статье выделены основные признаки вещных прав и определено содержание системы признаков вещных прав. Автор исследует различные взгляды на данную проблему и приходит к выводу о необходимости построения системы признаков вещных прав

Եվգենիա Գյանջումյան, Սահմանափակ իրային իրավունքների հատկանիշների սահմանման իրավական խնդիրները ՀՀ-ում - Այս հոդվածը նվիրված է սահմանափակ իրային իրավունքների հատկանիշների բացահայտման խնդրին: Աշխատանքում վերլուծվում է տվյալ խնդրի ժամանակակից կողմը՝ քաղաքացիական օրենսդրության բարեփոխման տեսանկյունից: Հեղինակը ուսումնասիրում է տվյալ խնդրի առնչությամբ

¹⁴ **Покровский И.А.** Основные проблемы гражданского права. М., 1998. С. 210.

տարբեր մոտեցումներ և գալիս է եզրահանգմանը՝ իրային իրավունքների համակարգի կառուցման անհրաժեշտության մասին:

Yevgenia Gyanjumyan, Legal problems of determination of the features of the limited property rights in the Republic of Armenia - This article is dedicated to the problem of determination of the features of the limited real rights. In this article the modern aspect of this problem is analyzed from new position of reformation of civil legislation. The author researches the various viewpoints of the problem and comes to a conclusion on the need for the creation of the system of features of real rights.

ЛИТЕРАТУРА

1. Брагинский М.И., Актуальные проблемы гражданского права. Выпуск 2-й, М., «Статут», 2000 г.
2. Васильев Е.А., Комаров А.С., Гражданское и торговое право зарубежных стран: Учебник: В 2 т. / Отв. ред. М.: Междунар. отношения, 2004. Т. 1.
3. Гаджиев Г.А., Пепеляев С.Г. Предприниматель - налогоплательщик - государство. Правовые позиции Конституционного Суда Российской Федерации: Учебное пособие. М., 1998.
4. Германское гражданское уложение// www.gesetze-im-internet.de/bgb/
5. Гражданский кодекс РА от 05.05.1998 года // www.arlis.am
6. Гражданский кодекс Франции// www.legifrance.gouv.fr
7. Гражданский кодекс Чехии от 03.02.2012 года//www.czechlegislation.com
8. Емелькина И.А. Система ограниченных вещных прав на земельный участок. Монография. - М.: Волтерс Клувер, 2011
9. Закон РА “О внесении в Гражданский кодекс РА дополнений и изменений” // www.parliament.am
10. Илларионова Т.И., Гонгалло Б.М., Плетнева В.А Гражданское право. Часть первая: Учебник для вузов
11. Покровский И.А. Основные проблемы гражданского права. М., 1998
12. Постановление Кассационного суда РА от 19.10.2012 года// www.irtek.am
13. Решение Конституционного суда РА от 29.06.2010 года в деле на основании заявления ООО “ДИДИ ГРУП”//www.arlis.am
14. Суханов. Е.А., Российское гражданское право: Учебник: В 2 т. Т.1: Общая часть. Вещное право. Наследственное право Интеллектуальное право. Личные неимущественные права / Отв. ред. М., 2014
15. Толстой Ю.К., Сергеев А.П., Гражданское право. В 3-х т. Т. 1 /М., 2009
16. Щенникова Л.В. Вещные права в гражданском праве России. М., 1996 г., С. 16-17

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 5-ԴԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԱՄԱԼՑԱ ՔՈՉԱՐՑԱՆ

Աներկբա է, որ դպրոցական դասագրքերում հեքիաթների գետեղումը հետապնդում է որոշակի նպատակներ: Հարցն այն է, թե հատկապես ինչ հեքիաթներ պետք է ներկայացնել աշակերտներին: Դեռևս «Լուսաբեր» դասագրքի հրատարակման նախապատրաստման շրջանում այս հարցը դարձել էր բուռն քննարկման առարկա, որովհետև, ինչպես Ղ. Աղայանն ու Հովհ. Թումանյանն էին իրավացիորեն պնդում, դպրոցական դասագրքերում ընթերցարաններում նպատակահարմար չէ գետեղել սարսափազդու, դևերի, հրեշների, վիշապների, բնության ահավոր տարերքների մասին պատմող հեքիաթներ:

Անմիջապես արձանագրեք, որ 5-րդ դասարանի «Մայրենիի» հեղինակներն այս առումով կատարել են ճիշտ ընտրություն՝ դասագրքում գետեղելով դաստիարակչական, նաև՝ ճանաչողական նպատակներ հետապնդող ստեղծագործություններ: «Մայրենիի» հեղինակները դասագրքում գետեղել են Ղ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Հ. Ք. Անդերսենի, Ավ. Բասիակյանի, Օ. Ուայլդի, Ժամանակակից գրողներից Էդ. Ավագյանի, Ռ. Մարուխյանի, Էդ. Միլիտոնյանի, Լ. Խեչոյանի հեղինակած կամ մշակած հեքիաթները, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի նպատակառոտվածություն և կարող է ամփոփ տեղեկություններ հաղորդել երեխաներին հեքիաթների տեսակների, նրանց թեմատիկ ընդգրկումների, ժանրի յուրահատկությունների հետ կապված այլ հարցերի վերաբերյալ:

Պետք է արձանագրել նաև, որ դասագրքի հեղինակները հեքիաթները գետեղել են ոչ թե պատահական հերթականությամբ, այլ թեմատիկ – գաղափարական առանցքների շուրջ միավորելով: Այս սկզբունքներով են ներկայացված «Ուրիշի համար փոս փորողը ինքը կընկնի մեջը» (ժողովրդական մշակումը՝ Արտաշես Նազինյանի), «Մուրացկանն ու հարուստը» (ժողովրդական մշակումը՝ Լևոն Խեչոյանի), «Այգեպան Մոսին» (Մկրտիչ Կորյուն), «Խոսող ձուկը» (Հովհ. Թումանյան), «Եղեգնուհին» (Ղ. Աղայան), «Նուկիմ քաղաքի խելոքները» (Ավ. Բասիակյան), «Սոխակը» (Հ. Ք. Անդերսեն), «Աստղամանուկը» (Օ. Ուայլդ), «Գարունածաղիկը» (Էդ. Ավագյան), «Կախարդված տղան» (Ռ. Մարուխյան), «Արդուկն ու մարդուկը» (Էդ. Միլիտոնյան) հեքիաթներ:

5-րդ դասարանի աշակերտները հեքիաթի վերաբերյալ թռուցիկ պատկերացումներ ունեն դեռևս նախակրթարանից ու տարրական

դասարաններից: Նրանք արդեն»ծանոթ են» քաջ Նազարին, Մատնաչափիկին, անբան Հուռուն, ձախորդ Փանոսին և ուրիշներին: Հեքիաթների հերոսների հետ նրանք ճանապարհորդել են տարբեր վայրերում, անհամբեր հետևել են, թե ինչպես են բարի հերոսները հաղթելու, հիացել են բնության գեղեցկություններով:

5-րդ դասարանում ուսումնական ծրագրերն ընդլայնում են աշակերտների՝ ժանրի վերաբերյալ պատկերացումների շրջանակները, և ցանկալի է, որ ուսուցիչները չսահմանափակվեն հեքիաթի մասին «Մայրենիի» տեղեկություններով և ձգտեն մատչելի կերպով ներկայացնել ժանրի յուրահատկությունները, համառոտ տեղեկություններ հաղորդել ոչ միայն հայ, այլև օտարազգի հեքիաթագիրների, ժողովրդական հեքիաթների մշակողների մասին:

Աշակերտներին անհրաժեշտ է բացատրել, որ հեքիաթը գեղարվեստական գրականության հնագույն ժանրերից է, և «բոլոր ժողովուրդներն էլ ունեցել են իրենց հեքիաթներ, որոնք աչքի են ընկնում բովանդակության ու ձևերի արտակարգ բազմազանությամբ»¹, արտահայտում են տվյալ ժողովրդի բնավորության հիմնական գծերը, չարի ու բարու, անցավորի ու մնայունի, բնության, կենդանական աշխարհի ու բազմաթիվ այլ հասկացությունների և իրողությունների վերաբերյալ պատկերացումներ:

Ներկայացնելով հեքիաթի ժանրային առանձնահատկությունները՝ ցանկալի է, որ ուսուցիչը երեխաների համար մատչելի ձևով անդրադառնա այսպես կոչված «թափառող սյուժեներին», «երևակայական հերոսներին», որոնք տարբեր հեղինակներ մեկնաբանում են «ըստ իրենց աշխարհայացքային և գեղարվեստական կոորդինատների», ասել է թե՛ «մնում են իրենց ստեղծագործության գլխավոր հանի ու տարերքի մեջ»²:

Որպես օրինակ, կարող են համառոտ կերպով անդրադառնալ «Քաջ Նազարի» մշակումներին՝ նշելով, որ այս թեմայով հեքիաթներ են մշակվել նաև կովկասյան ու միջինասիական գրականությունների մեջ: Այնուհետև ուսուցիչը ցանկալի է, որ անդրադառնա հայ գրողների մշակումներին, բացատրի, որ Հովհ. Թումանյանը «Քաջ Նազարը» գրելիս նախ և առաջ ի նկատի է ունեցել «աշխարհի ժողովուրդների «թափառական հեքիաթի» ժողովրդական - փիլիսոփայական շերտը, որի համաձայն բոլոր ժամանակներում էլ անարժան մարդիկ դառնում են դրության տեր ու ծիծաղում են աշխարհի վրա»³:

Ի տարբերություն Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանը «շեշտը տալիս է կույր ճակատագրին՝ նախախնամության կամքին», իսկ Դ. Դեմիրճյանը քաջ Նազարին ներկայացնում է ոչ միայն այդպես բախտի բերումով թագավորական

¹ Աղաբաբյան Ս: Հայ սովետական գրականության պատմություն, Եր: ՀՀ ՎՍ հրտ: 1986, էջ 364:

² Նույն տեղում, էջ 364:

³ Նույն տեղում, էջ 364:

բարձունքները «նվաճած» անձնավորության, այլ բախտախնդիր, «սարսափելի մարդ, երբ գործը ուժ ու հնար է ընկնում»⁴:

Ավելորդ չի լինի աշակերտներին ներկայացնել նաև, որ մեր գրողների մշակած «Քաջ Նազարի» սկզբնաղբյուրը, Գ. Սրվանձտյանի գրի առած «Դժիկոն» է, որ մտնում է համաշխարհային հեքիաթների՝ «կարծեցյալ հերոսների համակարգի մեջ»:

Այդ համակարգում առկա է երկու շարք. «Առաջինը այն սյուժեներն են, որտեղ գլխավոր հերոսը ասպարեզ է գալիս ճարպիկ և փորձված խաբեբայի, բախտախնդիր հերոսի գծերով, երկրորդը այն սյուժեներն են, ուր բախտի բերումով մարդը դառնում է հարստության և իշխանության տեր»⁵:

Այնուհետև ցանկալի է, որ ուսուցիչը աշակերտներին ներկայացնի դասագրքում զետեղված հեքիաթների՝ միմյանց հետ ունեցած աղերսակցությունների եզրերը, բացատրի, թե հեքիաթագիրներից յուրաքանչյուրն ինչպես է ներկայացնում իր հերոսներին, ինչպես է քննադատում մեծամտությունն ու գոռոզությունը, ստախոսությունը, փառասիրությունը և ընդհակառակը՝ գովեստով ներկայացնում աշխատանքի մարդուն, բոլոր նրանց, ովքեր ապրում են սեփական աշխատանքով, հարգում են իրենցից մեծերին, ունեն երախտագիտության զգացում, համարձակ են, չեն հաշտվում անարդարությունների հետ, աչքի են ընկնում արժանապատիվ կեցվածքով, ազաի ու ընչաքաղց չեն:

Պետք է աշակերտներին մատչելի կերպով ներկայացնել նաև, որ ի տարբերություն գրական մյուս ժանրերի ստեղծագործությունների, որոնց մեջ գործողությունները ծավալվում են կոնկրետ ժամանակահատվածներում ու տարածական կոնկրետ հարթություններում, հեքիաթներում չկան կոնկրետ ժամանակահատվածներ, իսկ տարածությունը մեծ մասամբ պայմանական է:

Ինչո՞վ բացատրել հեքիաթի ժանրային այս յորահատկությունը, ինչպե՞ս աշակերտներին բացատրել, թե ինչու են հեքիաթների մեծ մասը սկսվում այսպես՝ «Ժուկով ժամանակով ...»: Ուսուցիչը պետք է բացատրի, որ հեքիաթի ժամանակը ընդհանրական, սահմանափակումներ չենթադրող ժամանակ է՝ առանց կոնկրետ չափումների, իսկ այնտեղ ներկայացվող դեպքերն ու իրադարձությունները կարող են տեղի ունենալ բոլոր ժամանակներում: Օրինակ՝ «Մուրացկանը և հարուստը» հեքիաթում ներկայացված կերպարները, որոնք «թափառական սյուժեներին» յուրահատուկ հերոսներ են, մարմնավորում, խորհրդանշում են ժողովրդի (ների) վերաբերմունքը ազաիության, ստախոսության վերաբերյալ:

⁴ Նույն տեղում:

⁵ Նույն տեղում, էջ 363:

«Եղեգնուհին» հեքիաթում Ղ. Աղայանը ներկայացնում է բարու, արդարության հաղթանակը շահամոլության, խաբեբայությամբ նպատակին հասնելու ճանապարհին ընտրածների նկատմամբ: Հովի. Թումանյանը «Խոսող ձուկը» հեքիաթում ներկայացնում է երախտագետ երիտասարդ հերոսին, որն աղքատ ձկնորսին ու նրա ընտանիքը փրկում է հրեշից: Մեծամտության, ինքնասիրահարվածության, գոռոզամտության, քննադատությունն է Օ. Ուայլդի «Աստղամանուկը», Էդ. Միլիտոնյանի «Արդուկն ու մարդուկը», Ռ. Մարուխյանի «Կախարդված տղան»: Բոլոր այս հեքիաթներում ներկայացված դեպքերն ու իրադարձությունները յուրահատուկ դրսևորումներով տեղի են ունենում բոլոր ժամանակներում, տարածական ամենատարբեր հարթություններում:

Յուրաքանչյուր հեքիաթից հետո ուսուցիչը տալիս է հանձնարարություններ, որոնք պետք է նպատակաուղղված լինեն աշակերտների ինքնուրույն մտածողության, ստեղծագործական կարողությունների, ունակությունների բացահայտմանը:

Օրինակ, «Այգեպան Մոսին» հեքիաթի դասավանդումից հետո ուսուցիչն աշակերտներին հանձնարարում է գրել համառոտ շարադրություն, ասենք, «Իմ այգին» թեմայով, կամ նկարագրել այգու գույները տարվա տարբեր եղանակներին: Հ. Ք. Անդերսենի «Սոխակը» հեքիաթից հետո կարելի է փոքրիկ շարադրություն հանձնարարել ծանոթ թոչունների մասին, «Նուկիմ քաղաքի խելոքները» հեքիաթից հետո նմանատիպ մի ծիծաղաշարժ պատմություն հորինել կամ պատմել նույն կամ նման սյուժետով պատմություն, Էդ. Միլիտոնյանի «Գարունաձաղիկը» հեքիաթից հետո՝ «Գարունը Երևանում», «Գարնան առաջին գույները» թեմաներով:

Հեքիաթի վերաբերյալ երեխաների իմացությունների շրջանակը կարելի է ընդլայնել նաև արտադասարանական միջոցառումների միջոցով՝ թատերական, գրական խմբակների պարապմունքներին, որոնք ավելի լայն հնարավորություն են ընձեռում, քան քառասունհինգ րոպեանոց դասաժամերը: Այդ խմբակներում աշակերտները կարող են ներկայացնել հեքիաթների իրենց սիրելի հերոսներին, ներկայացնել հատվածներ նրանց հետաքրքիր մենախոսություններից կամ երկխոսություններից, կազմակերպել ներկայացում՝ հեքիաթի գործողություններն ու հերոսներին տեղափոխելով մեր օրեր:

Հանրակրթական դպրոցում գրականություն առարկայի դասավանդումն ունի իր յուրահատկությունները. Գրականության միջոցով է երեխան ճանաչում աշխարհը, սիրում իր հայրենիքը, հաղորդակցվում բնության հետ: Գրականությունն է երեխայի մեջ սերմանում սիրո ու բարության հունդեր, հղկում նրա գեղագիտակն ճաշակը, մշակում գեղեցիկն զգալու և նրանով հարստանալու ունակությունները:

Իսկ գրականության ամենատարածված, երեխաների կողմից ամենասիրված ժանրը, թերևս, հեքիաթն է, և նրա դասավանդումը պետք է կազմակերպել ամենայն լրջությամբ և պատասխանատվությամբ:

Բանալի բառեր - ժանր, այլաբանություն, համեմատություն, հիպերբոլա, լիտոտա, ուսուցում, դասավանդման եղանակներ, չարի ու բարու պայքար, լավատեսություն, ինքնուրույն աշխատանք:

Ամալյա Քոչարյան, Հեքիաթի ժանրը դաստիարակչական նշանակությունը ուսուցման մեթոդները հանրակրթական դպրոցի 5-րդ դասարանում - Հեքիաթի ուսուցումը հանրակրթական դպրոցում առաջին հերթին ունի դաստիարակչական կարևոր նշանակություն: Հոդվածի նպատակն է օգնել հանրակրթական դպրոցի ուսուցիչներին ժանրի ուսուցումը մանկավարժական մտքի արդի պահանջների համապատկերում կազմակերպելու համար:

Амалья Кочарян, Жанр сказки, значение воспитания, методы преподавания в 5 классе общеобразовательной школы - Изучение жанра сказки, в первую очередь, имеет воспитательное значение. Цель статьи - помочь учителям общеобразовательных школ организовать процесс изучения жанра в контексте современной педагогической мысли.

Amalya Kocharyan, The genre of fairy-tale, the significance of upbringing and methods of teaching in the 5th form of school - The study of the fairy-tale genre first of all is of upbringing significance. The aim of this article is to help the school teachers to organize the study of the genre in the context of the modern pedagogical thinking.

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՑԱՆԻ
«ԿՈՈՒՆԿ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ
ՄԻՐԱՆՈՒՇ ՂՈՒՇՅԱՆ

*Առանց ընթերցանության չկա իսկական կրթություն և չի կարող լինել
ո՛չ ճաշակ, ո՛չ խոսք, ո՛չ բազմակողմանի լավ ըմբռնում*
Ալեքսանդր Գևրգեն

Այսօրվա դպրոցի նպատակն է ձևավորել բազմակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ: Իսկ բազմակողմանի կրթության լավագույն միջոցներից մեկը ընթերցանությունն է:

Թվում է, թե ընթերցելու կարողությունը պարզ և բնական է, ինչ տեսնելը և խոսել կարողանալը, այնինչ, ընթերցանությունը նման է արվեստի: Ընթերցել և ընթերցածը ընկալելը նույնն է, ինչ տեսնել կտավը և հասկանալ, լսել համանվագը և ընկալել:

Ընթերցանության ուսուցումը, ինչպես ցանկացած այլ հմտության ձեռքբերում, որոշակի դժվարություններ է ենթադրում, որոնց հաղթահարումը ջանք ու ժամանակ է պահանջում:

Ամեն ինչ հենց դպրոցից է սկսվում: Դպրոցն է ձևավորում ընթերցող կամ չընթերցող անհատ:

Դպրոցը պետք է աշակերտին դարձնի ընթերցասեր, դրանից օգուտ ու հաճույք քաղող մարդ, ձևավորել այնպիսի ընթերցող, որ հասկանա տողերի տակ գրվածը, ուսումնասիրի տեքստն ամբողջությամբ, զգա ակնարկները, թաքնված իմաստները, որսա բառերը, արտահայտությունները:¹

Ինչպե՞ս անել, որ կարդալը չլինի պարտադրված ու ձանձրալի, որ սովորողը սիրով և ինքնակամ կարդա, յուրացնի կարդացածը: Ինչպե՞ս անել, որ ընթերցանության միջոցով աշակերտը ձեռք բերի խոսքային հմտություններ, այսինքն՝ ընթերցանությունը դարձնել հաճելի, թեթև, բայց շատ խորը գործընթաց:

Ընթերցանության նկատմամբ սերն ու ընթերցողական հմտությունների զարգացումը շատ կարևոր է նաև մյուս առարկաների ուսումնասիրման և ընկալման համար: Հետագա ողջ կյանքում ևս մարդն իր գործունեության բոլոր բնագավառների համար անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը ձեռք է բերում գրավոր տեքստերի հետ շփման, այսինքն՝ ընթերցանության միջոցով:

Ընթերցելու կարողությունը ընդգրկում է երկու կողմ՝ ընթերցանության տեխնիկա և ընթերցանության բովանդակության ընկալում: Այս երկու կողմերը պայմանավորված են մեկը մյուսով. բովանդակության լիարժեք ընկալումը

¹ Տեր-Գրիգորյան Ա., Ընթերցանության մեթոդիկա, Ե., 1978, էջ19:

հնարավոր է տեխնիկապես վարժ և սահուն ընթերցելու դեպքում միայն, մյուս կողմից՝ քիչ կարդալու պարագայում հնարավոր չէ լավ կարդալ:

Գիրք կարդալ չսիրելու հիմնական պատճառներն են վարժվածության պակասը, խոսակցական և գրավոր խոսքի տարանջատումը և շարժառիթի պակասը: Դպրոցում մայրենիի, գրականության ուսուցման նպատակներից մեկը կարդալու սեր, ցանկություն արթնացնելն է: Իսկ այդ ցանկությունը խթանելու համար պետք է ձեռքագատվել տեքստը մի քանի անգամ բարձրաձայն կարդալ տալու տխուր սովորությունից: Այն ձանձրացնում է աշակերտին: Մենք կարևորում ու խրախուսում ենք հաղորդակցական ընթերցանությունը:²

Այդ նպատակով տարբեր ժամանակներում տարբեր միջոցներ են կիրառվել: Բացի ավանդական ընթերցանության դասավանդման մեթոդներից՝ մեր օրերում տարածում են գտել նոր մեթոդներ, հատկապես փոխերգործոն (ինտերակտիվ) մեթոդներ, որոնք ուղղված են ընթերցանության հմտությունների ձևավորմանը: Այդ առումով ուշագրավ մեթոդներ են՝ «Ուղղորդող (կամ ընդհատումներով) ընթերցանություն», «Քառաբաժան», «Հինգրուպեանոց ազատ շարադրանք», «Երեք բանալի, մեկ կողպեք», «Կրկնակի գրառումների օրագիր», «Երկու աստղիկ, մեկ դրոշակ» մեթոդները, դերերով ընթերցանությունը, բեմականացումը բանավեճը և այլն: Ընդ որում, մեկ դասաժամում միևնույն տեքստի շուրջ դասաժամի տարբեր փուլերում կարելի է կիրառել տարբեր մեթոդներ:

Դասագրքի տեքստի (բնագրի) ուսումնասիրության աշխատանքը կարելի է կազմակերպել «Խթանում, իմաստի ընկալում, կշռադատում» կամ ԽԻԿ համակարգի սկզբունքով:

Ստորև ներկայացնում ենք հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանում Մ.Գալշոյանի «Աղբրանց արուն մեջ քարերուն» պատմվածքի (դասագրքում «Կռունկ» վերտառությամբ) ընթերցանության կազմակերպման մեր փորձը:

Դասի թեման՝ Մ.Գալշոյանի «Կռունկ» պատմվածքի

Դասի տեսակը՝ նոր ուսումնական նյութի յուրացման դաս

Դասարան՝ 6-րդ

Առարկան՝ մայրենի

Դասի նպատակը: Բացահայտել պատմվածքի ենթիմաստը, բնութագրել կերպարները, մեկնաբանել վերնագիրը, ճանաչել և արժևորել Կոմիտասին, զարգացնել ճաշակ և հարգանք ազգային մշակույթի հանդեպ:

Դասարանի կահավորումը: Կոմիտասի և Մուշեղ Գալշոյանի դիմանկարները: Ցուցապաստառին Մ.Գալշոյանի և Կոմիտասի խոսքերն են և ասույթներ Կոմիտասի մասին, «Կռունկ» երգի տեքստը:

² Ա.Մարկոսյան, Մ.Միմոնյան, Մեթոդական ուղեցույց ուսուցիչների համար, Եր., «Շաղիկ», 1996, էջ5

Մեթոդ և հնարները: ԽԻԿ համակարգը, Քառաբաժան, Դերային ընթերցանություն, «Երեք բանալի մեկ կողպեք»

Միջառարկայական կապ: Երաժշտություն, հայրենագիտություն:

Դասի ընթացքը: Խթանման փուլ: Դասն սկսում են ներածական խոսքով Գալշոյանի, նրա ստեղծագործությունների, հերոսների մասին:

Ապա միասին լսում ենք «Կռունկ» երգի Կոմիտասի կատարումը, հանձնարարում են «Քառաբաժան մեթոդով» գրել՝ երգը լսելու պահին ի՛նչ տեսան, ի՛նչ լսեցին, ի՛նչ զգացին և ի՛նչ նոր վերնագիր կառաջարկեն: Գրառումները ընթերցելուց հետո անցնում ենք դասի երկրորդ փուլին՝ հիմնական մասին:

Իմաստի ընկալման փուլ: Այս փուլում դերային ընթերցմամբ կարդում ենք պատմվածքը: Որպեսզի աշակերտների համար խոսքը ավելի տպավորիչ լինի, հեղինակի խոսքը ընթերցում են ես: Կարդալու ընթացքում կիրառում են «Ուղղորդվող (կամ ընդհատումներով) ընթերցանություն» մեթոդը:

Այս մեթոդը հնարավորություն է տալիս երեխային ընկալել տեքստը, քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով՝ վերլուծել և եզրահանգումներ անել: Յուրաքանչյուր մասի ընթերցումից հետո դադար են տալիս, հարցադրումներով խթանում քննարկումը:

Առաջին հատվածը կարդալուց հետո հարց են ողղում դասարանին.

-Ի՞նչն էր ուշագրավ այս հատվածում.

Հնչում են պատասխաններ.

-Այն, որ նա փրկել ու տարածել է հայկական երգն ու երաժշտությունը: Մեջբերում է հատվածը.

-Նա երկար շրջել էր Արևմտյան Հայաստանում, անցել գավառից գավառ, հավաքել մեռնող, գաղթող ու ննջող երգերը, սերմել հույս և ուրախության երգ, անցել էր Եգիպտոսի հայաշատ քաղաքներով և մյուռոնի փոխարեն նա՝ հայր սուրբը՝ Կոմիտաս վարդապետը, տարաշխարհիկ հայերին մկրտել հայ հոգով, ի տեղ նշխարի՝ նրանց բերանները երգով քաղցրացրել:³

-Որ օտարերկրացիները խոր ակնածանք են տածել Կոմիտասի և հայ մշակույթի հանդեպ:

Մեջբերում է համապատասխան հատվածը.

-Ասում են՝ այս հոգևոր հայրը հայ երաժիշտ է, շշնջում էր մեկը, և թեկուզ երևացողը Կոմիտասի թիկունքն էր, հարգանքով գլուխ էին տալիս ու հեռանում:

Շարունակում ենք ընթերցանությունը: Երկրորդ հատվածը կարդալուց հետո կրկին հարց են ողղում դասարանին.

-Ո՞րն էր հատվածի ամենահուզիչ պահը:

Աշակերտների մեծ մասը ընտրել էր հետևյալ հատվածը.

³ Նույն տեղում:

–Աջնան թախիծով լցված հորիզոնում երկու միայնակ հոգիներ հանդիպել էին. երկուսն էլ մեծ կորստի տեր ու նույն կարոտի՝ տաք երկիր ու երամի: Կռունկի հոգնած ու բեկված թևերից, երկար վիզ ու կտուցից կաթկթում էր նրա կաղկղան և տակնուվրա անում պանդուխտի հոգին. կաղկղան խոսում էր պանդուխտի հոգու հետ, կաղկղայի մեջ ախ կար, հեռավոր ու տաք մի երկրի հուշ ու կարոտ, կորցրած երամին գտնելու հուսահատ փորձը:

–Իսկ ինչու՞ էր իր ցավը պանդուխտը հենց կռունկին պատմում,–կրկին հարց եմ ուղղում դասարանին:

–Որովհետև պանդուխտի և կռունկի ճակատագրերը նման էին: Որովհետև երկուսն էլ կորցրել էին հայրենի եզերքը:

–Ի՞նչ զգացումներով են համակված հերոսները:

Հնչում են պատասխաններ՝ տխրության, կարոտի, անհուսության, վեհության:

Հաջորդում է իմ հետևյալ հարցը.

–Տխրությունն ինչպիսի՞ն պիտի լինի ըստ իռլանդուհու, ըստ Կոմիտասի, ըստ Մարգարիտի և ըստ ձեզ: Հնչում են հետաքրքիր պատասխաններ՝ համապատասխան մեջբերումներով (իռլանդուհու համար՝ լացով, Կոմիտասի համար՝ ուժեղ և առնական, Մարգարիտի համար՝ հզոր):

Աշակերտները նմանություններ են գտնում կռունկի և պանդուխտի, կռունկի և Կոմիտասի, կռունկի և Մարգարիտի միջև, և որպես այդ ամենի ընդհանրացում համեմատվում են հայ ժողովրդի և կռունկի ճակատագրերը:

Պատմվածքի ընթերցումից հետո բացատրում եմ անհասկանալի բառերը, անդրադառնում ենք նաև փոխաբերական իմաստով գործածվող բառերին ու նախադասություններին:

Հարցնում եմ՝ ինչպիսին էր «Կռունկ»երգի երաժշտությունը: Պատասխաններ լսելուց հետո բարձրաձայն կարդում եմ տեքստին հաջորդող բառային աշխատանքի պահանջներից մեկը. «Երաժշտություն և մեղեդի բառերի համար ընտրել ինչպիսի՞ հարցին պատասխանող բնորոշումներ»: Աշակերտները շարունակում են լրացնել շարքը:

Անցնում ենք վերջին՝ կշռադատման փուլին:

Կիրառում եմ «Երեք բանալի, մեկ կողպեք» մեթոդը: Այս մեթոդը տեքստի ընկալման, վերլուծության, կշռադատության արդյունավետ ձև է: Աշակերտները գտնում են այն բանալիները՝ երեք պարբերությունները, որոնք արտահայտում են ստեղծագործության հիմնական գաղափարը, և կողպեքը՝ սեփական բառերով կազմած նախադասությունը, որը արտահայտում է տվյալ տեքստի հիմնական բովանդակությունը:

Տնային հանձնարարություն: Սահուն և արտահայտիչ ընթերցել պատմվածքը:

Լավ ընթերցող ձևավորելու համար կարևորում եմ դասագրքերի նյութերի ուսումնասիրությանը զուգահեռ արտադասարանային ընթերցանության կազմակերպումը:

Արտադասարանային ընթերցանությունը կարելի է կազմակերպել և՛ տանը(հանձնարարվող կամ իրենց ընտրությամբ ստեղծագործությունների ընթերցմամբ), և՛ դասարանում:

Շատ արդյունավետ է լինում, երբ արտադասարանային ընթերցանությանը հաջորդում է գրքի ստեղծագործական քննարկում:

Անհրաժեշտ է մտածել այնպիսի հարցեր, որոնք համապատասխանում են աշակերտի տարիքին և գրքին: Ահա մի քանի հարց. Օրինակ՝ ի՞նչ է քեզ հիշեցնում այս ստեղծագործությունը: Ի՞նչ էր հետաքրքիր: Ի՞նչ էիր մտածում, երբ կարդում էիր:

Ո՞ր մասն ես ամենաշատը հավանել:

Կա՞ բան, որի հետ համաձայն չէիր: Ի՞նչպես դու կփոխեիր վերջաբանը, և այլն:

Մ.Գալշոյանի «Կռունկ» պատմվածքի ուսցումից հետո որպես արտադասարանային ընթերցանության նյութ ընտրեցինք Մ.Գալշոյանի «Ծիրանի ծառ» պատմվածաշարը, որտեղ զետեղված էր նաև «Կռունկ» պատմվածքը:

Կազմակերպեցինք գրքի քննարկում, որի ընթացքում աշակերտները իրենց կարծիքները հայտնեցին գրքում տեղ գտած «Օրն ավետյաց», «Մաղթանք», «Դարուղի», «Սպասում» և այլ պատմվածքների մասին, հարցեր տվեցի, մտքեր փոխանակեցին, լրացրին միմյանց:

Ընթերցանությանը մղելու լավագույն միջոցներից են նաև այցելություն գրադարան, հանդիպում գրողների հետ, այցելություն գրողների տուն-թանգարան:

Արդյունք: Նշվաշ մեթոդները կիրառելու դեպքում աշակերտները կկարողանան հասկանալով կարդալ ցանկացած նյութ և ինքնուրույն վերլուծություններ կատարել:

Բանալի բառեր - Ընթերցանություն, ընթերցանության հմտությունների ձևավորում, մեթոդ, աշակերտ, ուսուցիչ, զարգացում:

Միրանուշ Դուշան, Ընթերցանության հմտությունների զարգացումը Մուշեղ Գալշոյանի «Կռունկ» պատմվածքի օրինակով - Ընթերցանությունը անձի կրթության ու զարգացման գործում եղել և մնում է անփոխարինելի: Միայն ընթերցանությամբ է երեխայի մոտ ձևավորվում աշխարհընկալում, արժեհամակարգ, գեղագիտական ճաշակ, ազգային գիտակցություն, սեր ազգային արժեքների նկատմամբ: Մեր օրերում, սակայն, քիչ են ընթերցասեր

աշակերտները և այս հոդվածում փորձել ենք ներկայացնել սովորողի համար ընթերցանության կարևորությունը, ընթերցանության հանդեպ հետաքրքրություն առաջացնելու, ընթերցածը տպավորիչ և հասկանալի դարձնելու ուղիները՝ օգտագործելով ավանդական և ժամանակակից մեթոդներ:

Сирануш Гушян, Формирование навыков чтения - Роль чтения в процессе обучения и развития личности была и остается незаменимой. Только с помощью чтения у ребенка формируются мировосприятие, система ценностей, эстетический вкус, национальное самосознание, любовь к национальным ценностям. Однако в наши дни среди учеников мало любителей чтения , и в данной статье мы попытались представить важность навыков чтения для учащихся, пути пробуждения интереса к чтению, превращения прочитанного в более впечатляющее и понятное, используя как традиционные, так и современные методы.

Siranush Ghushchyan, Building reading skills - The role of reading has been indispensable in the process of individual's education and development. Only by reading the child forms his world perception, system of values, aesthetic taste, national identity love towards national values. However, nowadays there are few book lovers among schoolchildren, and in this article I have tried to represent the importance of reading skills for students, ways to create interest in reading, make the reading material more impressive and comprehensible, using both traditional and modern methods.

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ
ՆՈՒՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

2001 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքի չորրորդ հոդվածով որպես պետական քաղաքականության սկզբունք ամրագրվել է բնապահպանական կրթության պարտադիր բնույթը կրթական համակարգի բոլոր մակարդակներում, դրա շարունակականությունը, նաև համալիր բնույթը¹։ Օրենքի ընդունումը խթանեց բնապահպանական կրթության գաղափարախոսության ձևավորումը՝ ստեղծելով իրավական հիմքեր մեր երկրում այդ գործընթացի համակարգված իրականացման համար։ Սակայն օրենքի կիրառման արդյունավետությունը մնում է ցածր, իսկ պատճառները մանրամասն ուսումնասիրության և վերլուծման կարիք ունեն։ Միանշանակորեն պետք է արձանագրել՝ բնապահպանական կրթությունը պետք է ունենա ոչ միայն կրթական ու դաստիարակչական, այլև իրազեկման նշանակություն, ինչպես նաև պետք է ապահովի մասնագիտական կադրերի պատրաստման համապատասխան մակարդակ։

Վերոնշյալ օրենքի ընդունումից ութ տարի հետո, կարևորելով բնապահպանական կրթության անհրաժեշտությունը, առաջ քաշվեց «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգ², որն ամեննին էլ չկրճատեց բնապահպանական խնդիրների քանակը. չնվազեց օղի աղտոտվածության աստիճանը, չդադարեցին անթույլատրելի անտառահատումները, քաղաքի կանաչ գոտիների հաշվին սրճարանների ու ժամանցի վայրերի կառուցումը։

Ներկայումս Հայաստանը կանգնած է զգալի մարտահրավերների առաջ, որոնք միտված են խթանալու և բարելավելու երկրում բնապահպանական կրթությունը³։ ՀՀ սկսիվ ներգրավումը մի շարք միջազգային բնապահպանական, կրթական ու տեղեկատվական համաձայնագրերին, ինչպես նաև ՄԱԿ-ի ԵՏՀ «Կրթություն հանուն կայուն զարգացման» ռազմավարության գործընթացներին, նույնպես պահանջում է առանձնային ուշադրություն դարձնել բնապահպանական կրթությանը։

¹ Տե՛ս «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենքը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1006>։

² Տե՛ս «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգը, <http://www.gov.am/files/meetings/2009/4087.pdf>։

³ Տե՛ս Հայաստանի գետերի և վտակների կենսաբազմազանության ուսումնասիրությունը. Հայաստանում բնապահպանական կրթության մոդել, Երևան, 2010, էջ 1։

Ներկայումս աստիճանաբար խորանում են ինչպես համընդհանուր, այնպես էլ տարածաշրջանային և տեղային բնապահպանական հիմնախնդիրները, որոնք արտահայտվում են հասարակության և բնության կապերի համակարգում հակասությունների առաջացմամբ: Բնապահպանական հիմնախնդիրների թվում են.

- ✓ կենսոլորտային կենսաբազմազանության կրճատումը,
- ✓ մարդկանց առողջական վիճակի վատացումը,
- ✓ շրջակա միջավայրի աղտոտումը արդյունաբերական թափոններով, լրացուցիչ էներգիայով,
- ✓ կենսոլորտի կենսաբազմազանության կրճատումը և այլն⁴:

Ձևավորվող նոր բնապահպանական քաղաքականությունը ենթադրում է ներկա ու ապագա սերունդների համար էկոլոգիապես անվտանգ ու մաքուր շրջակա միջավայրի ապահովումը, որն առանց բնապահպանական կրթության ու դաստիարակության հնարավոր չէ իրագործել: Մարդու աշխատանքային գործունեության հետևանքով շրջակա միջավայրը մեծ վնասներ է կրում՝ չհասցնելով վերականգնվել, ինքնամաքրվել: Այստեղից է առաջ է գալիս շրջակա միջավայրի պահպանության խնդիրը, որին անմիջականորեն առնչվում է բնապահպանական կրթությունը: «Բնապահպանական կրթությունը ուսումնական գործընթաց է, որն ավելացնում է մարդկանց գիտելիքները և տեղեկացվածությունը շրջակա միջավայրի և նրա հետ կապված մարտահրավերների մասին, զարգացնում է անհրաժեշտ գիտելիքները և մասնագիտացումը մարտահրավերներին դիմակայելու համար և դաստիարակում է վերաբերմունք, մոտիվացիա, պարտավորություն՝ կայացնելու տեղեկացված որոշումներ և ձեռնարկելու պատասխանատու միջոցառումներ»⁵:

Բնապահպանական կրթությունը անընդմեջ գործընթաց է, որը սովորողներին ոչ միայն զինում է բնապահպանական անհրաժեշտ գիտելիքներով, այլև զարգացնում է նրանց գործնական կարողությունները, ապահովում է համապատասխան վարքագիծ և ձևավորում, արմատավորում է բնապահպանական մշակույթ՝ հնարավորություն տալով լուծել բնությանն ու շրջակա միջավայրին առնչվող բազմաթիվ խնդիրներ, տեսնել և գնահատել բնապահպանական խախտումները և այլն: Եթե մարդը ունենա բնապահպանական համապատասխան գիտելիքներ, հնարավորինս զերծ կմնա էկոլոգիական սխալներ անելուց:

Բնապահպանական կրթությունը առաջադրում է հետևյալ խնդիրները.

⁴ Տե՛ս **И. Д. Ламтеев**, Экологические проблемы: социально-политический у идеологический аспект, Москва, 1982, с. 132:

⁵ Բնապահպանական կրթությունը մարգագետիններում և արոտավայրերում. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Երևան, 2012, էջ 4:

- ✓ ձևավորել էկոլոգիապես առողջ ապրելակերպով, վարքով ու գործունեությամբ անհատ,
- ✓ հետազոտել համակարգի բնապահպանական խնդիրները՝ առաջադրելով լուծման ուղիներ,
- ✓ ձևավորել ու զարգացնել բնապահպանական իրավիճակներ վերլուծելու հմտություններ, որոնք կնպաստակառնողվեն միջավայրի վիճակի գնահատմանն ու շրջակա միջավայրի պաշտպանությանը,
- ✓ ձևավորել հուզական վերաբերմունք բնության՝ որպես համամարդկային արժեքի հանդեպ,
- ✓ արմատավորել բարոյական ու հոգատար վերաբերմունք բնության նկատմամբ:

Գիտամանկավարժական գրականության մեջ բնապահպանական դաստիարակության նպատակը սահմանվում է որպես բնության, նրա հարստության, շրջակա միջավայրի նկատմամբ խնայողական և հոգատար վերաբերմունքի ձևավորում և անձի ակտիվ գործունեության մշակում, որը դրսևորվում է բնության նկատմամբ գիտակցական վերաբերմունքի մեջ որպես ամենօրյա վարքի կանոն: Մարդկանց ողջ կյանքն առնչվում է բնությանը: Մարդը սնվում է բնության բարիքներով, շենքեր է կառուցում և հագուստ կամ այլ իրեր պատրաստում բնությունից ստացած նյութերով: Բնությունը հարուստ է անտառներով, օգտակար հանածոներով, բազմաթիվ բույսերով ու կենդանիներով, որոնք անսպառ չեն: Ուրեմն պետք է խնայողաբար օգտվել այդ բարիքներից, հոգատարություն ցուցաբերել բնության նկատմամբ:

Չարկ է նկատել, որ վերոնշյալ սահմանումները լիարժեքորեն չեն արտահայտում բնապահպանական դաստիարակության բովանդակությունն ու նպատակը: Բնապահպանական կրթության ու դաստիարակության գլխավոր նպատակը անձի կողմից բնության և հասարակության փոխազդեցության համակարգի ըմբռնումն է, քանի որ բնապահպանական դաստիարակության գործընթացը ներառում է նաև բնության նկատմամբ անձի պատասխանատվության և հուզականային որակների ձևավորումը:

Այսպիսով՝ բնապահպանական կրթության նպատակն է զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ, ձևավորել բնապահպանական գիտակցություն, իսկ բնապահպանական դաստիարակության նպատակն է աճող սերնդին ծանոթացնել բնության, շրջակա միջավայրի առանձնահատկություններին, պարզաբանել բնության կարևորագույն օրենքները և այն ուղիները, որոնց միջոցով կարելի է պահպանել ու վերարտադրել բնությունը: Անհրաժեշտ է նախադպրոցական տարիքից նպատակառնողված ձևով ձևավորել պատասխանատվություն շրջակա միջավայրի նկատմամբ, իսկ դրա իրականացումը հնարավոր է սովորողների

ճանաչողական գործընթացում ուսուցման տարբեր մեթոդների կիրառմամբ, մասնավորապես, երբ նրանք ծանոթանում են Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի տեսակներին: Այդ գործընթացը ուսուցիչն իրականացնում է սովորողների հետ հատուկ աշխատանքի՝ բնապահպանական միջոցառումների, ցուցահանդեսների, էքսկուրսիաների, դիտումների կազմակերպման միջոցով: Ուսուցիչը բնապահպանական հասկացությունների ձևավորման աշխատանքը սկսում է կենսաբանության առաջին դասերից: Համապատասխան օրինակներով ցույց է տալիս մարդածին գործոնների ազդեցությունը բնության, շրջակա միջավայրի վրա: Սովորողի մոտ ամրակայվում է գիտակցություն, որ մարդու յուրաքանչյուր քայլը պետք է ուղեկցվի բնապահպանական գործունեությամբ:

Հարկ է նկատել, որ բնապահպանական կրթության գործընթացում դաստիարակությունը դիտարկվում է որպես կրթության արժեքային գործառույթ: Կրթությունն ու դաստիարակությունն այս դեպքում չեն տարանջատվում, ընդհակառակը՝ համատեղվում են իրենց նպատակներով ու խնդիրներով: Արիստոտելյան բնորոշմամբ՝ դաստիարակության գործում հմտությունների զարգացումը պետք է նախորդի մտքի զարգացմանը: Այլ կերպ ասած՝ ճշտորեն և նպատակադիր կիրառելով ուսուցման բազմաթիվ մեթոդներ՝ կրթում ու դաստիարակում ենք բնապահպանական գիտելիքներով զինված, բանիմաց ու գրագետ մարդ:

Մարդկային պահանջմունքները, ի հակադրություն ռեսուրսների, անսահմանափակ են, բնապահպանական կրթության շրջանակներում պետք է մշակել համապատասխան գաղափարներ, մեթոդներ, որոնց միջոցով հնարավոր կլինի իրականացնել այնպիսի գործունեություն, որը կնպաստի բնության և շրջակա միջավայրի պահպանմանը: Այս տեսություններից մեկը նոոսֆերային տեսությունն է, որը գտնում է, որ մարդկությունը պետք է համախմբվի մարդ-բնություն-հասարակություն մասնիկների ներդաշնակ զարգացման գաղափարի շուրջը, ու մարդկանց մոտ պետք է ձևավորվի նոոսֆերային գիտակցություն, որը հնարավորություն կտա չվնասելու հետագա սերունդների շահերը:

Դպրոցական դասընթացը ցույց է տալիս, որ մակերեսային են աշակերտների գիտելիքները և պատկերացումները հատկապես տեղական բուսատեսակները ճանաչելու, նկարագրելու և որոշելու հարցում: Ահա թե ինչու ուսուցիչը աշակերտներին պետք է ծանոթացնի տեղի բուսականության հաճախ հանդիպող, ինչպես նաև անհետացման եզրին կանգնած տեսակներին, «Կարմիր գրքին», «Անտառային օրենսգրքին», «Բուսական աշխարհի մասին», «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենքներին և մի շարք այլ օրենքների ու օրենսդրական ակտերի, տեղեկություններ հաղորդի Հայաստանում ստեղծված արգելոցների, արգելավայրերի մասին:

Այսօր անհրաժեշտ է ցույց տալ աշակերտին մատուցվող նյութի արդիականությունն ու կիրառելիությունը առօրյա կյանքում, որպեսզի նա հասկանա թե ինչ իմաստ ու նշանակություն ունի նշված առարկայի շրջանակներում ստացած գիտելիքը հասարակական կյանքում⁶: Հետևաբար՝ ինչ սովորեցնել՝ խնդրից առաջ գալիս է ինչի համար սովորեցնել խնդիրը, այսինքն՝ ուսուցիչը պետք է հատուկ նպատակով նյութն ընտրի ու համապատասխան սկզբունքով այն մատուցի, որ սովորողի ստացած գիտելիքը նրան օգտակար լինի իրական կյանքում և ապագայում: Ցավով պետք է արձանագրել, որ դպրոցում երեխաները ստանում են բնապահպանական գիտելիքներ, սակայն ոչ բոլոր դեպքերում են նրանք կարողանում իմացածը կիրառել: Այս առումով ուսումնական գործընթացում կարևոր է զարգացնել միջառարկայական (օրինակ՝ կենսաբանության ու աշխարհագրության միջև) կապերը:

Բնապահպանական ուղղվածություն ունեցող ոչ ավանդական դասաժամերին անհրաժեշտ է կազմակերպել թեմատիկ դասեր, բնության պահպանման վերաբերյալ միջոցառումներ, որոնց միջոցով սովորողների մեջ կստեղծվի ակտիվ քաղաքացիական դիրքորոշում բնության նկատմամբ: Կարելի է կազմակերպել խաղային մրցույթներ արշավների և էքսկուրսիաների ժամանակ: Դասերի արդյունավետությանը նպաստում են նաև բնապահպանության մասին տեսանյութերի ներկայացումը, դիտումը:

Բնապահպանական կրթությունը կշահեր, եթե դասագրքերին կից գունավոր ներդիրների տեսքով ներկայացված լինեին քարտեզներ, բույսերի, կենդանիների նկարներ, մասնավորապես այն տեսակների, որոնք ներառված են «Կարմիր գրքում»: Նման ճանաչողական մոտեցումը կնպաստեր բնապահպանական գիտակցության զարգացմանը, ինչպես նաև սովորողի մեջ կզարգացներ այն ընկալումը, որ ինքը ևս կարող է որևէ կերպ ազդել բնության ու շրջակա միջավայրի վրա:

Նպատակային կլինի նաև բնապահպանական օրացույցի կիրառումը ուսումնական գործընթացում: Տարվա ընթացքում հանդիպում են հատուկ օրեր, որոնք բնապահպանները նշում են աշխարհի մի շարք երկրներում, օրինակ՝ «Անտառների միջազգային օր» (մարտի 21), «Թռչունների միջազգային օր» (ապրիլի 1), «Երկրի օր» (ապրիլի 22), «Կենսաբազմազանության պահպանման օր» (մայիսի 22), «Շրջակա միջավայրի համաշխարհային օր» (հունիսի 5), «Անապատացման - երաշտի դեմ պայքարի համաշխարհային օր» (հունիսի 17), «Կենդանիների պաշտպանության համաշխարհային օր» (հոկտեմբերի 4) և այլն: Սովորողներին պարբերաբար պետք է **ոչ միայն** ներկայացնել բնապահպանական տոները՝ **նշելով դրանց նշանակությունը, այլև դրանց մասնակցելու նախագծեր կազմել:**

⁶ Մ. Դավթյան և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004, էջ 7:

Խրախուսելի կլինի, եթե բնապահպանական կրթության տարբեր գործընթացների (օրինակ՝ ծառատունկերի) ակտիվ մասնակիցներ լինեն նաև սովորողների ծնողները: Վերջիններիս դերը կրթական գործընթացի արդյունավետության վրա չափազանց մեծ կլինի այն առումով, որ կապահովվի բնապահպանության կրթության անընդհատությունը թե՛ ուսումնական հաստատությունում, թե՛ ընտանեկան միջավայրում:

Բանալի բառեր – բնապահպանություն, բնապահպանական կրթություն և դաստիարակություն, կրթական գործընթաց, բնապահպանական տոն, առողջ ապրելակերպ, շրջակա միջավայր, բնություն, դպրոց:

Նունե Հովսեփյան, Բնապահպանական կրթության և դաստիարակության առանձնահատկությունները դպրոցում – Բնապահպանական կրթության շրջանակներում ուսուցման տարրերի ինտեգրումը հնարավոր է դարձնում լուծել կրթական մի շարք խնդիրներ և զարգացնել դասավանդման մեթոդիկան, որի շնորհիվ առավել արդյունավետորեն կապահովվեն գիտելիքի բովանդակության կապն իրական կյանքի հետ, ուսումնական նյութի ընկալումն ու սովորողների հետաքրքրասիրության բարձրացումը: Ուսուցման նոր մեթոդների, ժամանակակից տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների գործադրումն առավել մատչելի ու նպատակային է դարձնում բնապահպանական գիտելիքի յուրացումը: Բնապահպանական կրթությունն ու դաստիարակությունն առաջին հերթին կարևորվում են սովորողների դաստիարակության և առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման տեսանկյուններից:

Нуне Овсепян, Особенности экологического образования и воспитания в школе – В рамках экологического образования интеграция элементов обучения дает возможность реализации ряда образовательных проблем и развитию методики преподавания, благодаря чему будут обеспечены эффективная связь содержания знаний с реальной жизнью, эффективное восприятие учебного материала и повышение интереса обучающихся. Применение новых методов обучения, а также возможностей, предоставленных современной технологией, делает восприятие экологических знаний более доступным и целевым. Экологическому образованию и воспитанию придаётся важность в первую очередь с точки зрения воспитания обучающихся и формирования культуры здорового образа жизни.

Nune Hovsepyan, Peculiarities of environmental education and upbringing at school – Introduction of teaching elements within the framework of environmental education makes it possible to solve a number of educational problems and develop teaching methods. This will allow to ensure the link between knowledge content and

reality, understanding of learning material and raising students' curiosity more effectively. The use of new teaching methods and modern technologies makes the mastering of environmental knowledge more accessible and purposeful. Environmental education and upbringing are first of all important in terms of education of students and development of culture of healthy lifestyle.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության մասին» ՀՀ օրենք, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=1006>:
2. «Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական ու միասնական ազգային համակարգի ստեղծման» հայեցակարգ, <http://www.gov.am/files/meetings/2009/4087.pdf>:
3. Բնապահպանական կրթությունը մարզագետիներում և արոտավայրերում. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ, Երևան, 2012:
4. Հայաստանի գետերի և վտակների կենսաբազմազանության ուսումնասիրությունը. Հայաստանում բնապահպանական կրթության մոդել, Երևան, 2010:
5. Դավթյան Մ. և ուրիշներ, Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ, Երևան, 2004:
6. Лаптеев И. Д., Экологические проблемы: социально-политический и идеологический аспект, Москва, 1982:

**ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ
ՄԱՐԻԵՏԱ ՃԱՂԱՐՅԱՆ, ԷԴԻԿ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ, ՍՏԵԼԼԱ ՄԱՆԹԱՇՅԱՆ**

Հայաստանյան կյանքի ներկա զարգացումները, մասնավորապես բազմաթիվ արտաքին ու ներքին խոչընդոտների միջով հակասականորեն ու դիալեկտիկորեն ձևավորվող ու առաջադիմող մրցակցային շուկայական տնտեսակարգի, քաղաքական ու քաղաքացիական ազատությունների օրյեկտիվ պահանջները «ստիպում են», որ սոցիոլոգիական և սոցիալ-հոգեբանական ուսումնասիրությունները դառնան օրախնդիր հասարակական կյանքի կառավարման բոլոր ոլորտներում: Բնականաբար, դրանից անմասն չէ նաև այնպիսի մի կարևորագույն ոլորտ, ինչպիսին կրթականն է, նախ և առաջ՝ բուհական համակարգը:

Վերջին շրջանում գրեթե դասական ոչ բոնի մեթոդներով Հայաստանում իրագործված արմատական իշխանական ու կառավարչական փոփոխությունները, որոնցում առաջնակարգ դերերից մեկը պատկանում է հենց բուհական ուսանողությանը, նկատելիորեն շոշափում են բուհական կրթության ամենատարբեր բաղադրիչները, որոնք թերևս խտացվում են «կրթության նոր որակ» հասկացության շուրջ: Այն իր հիմքերն է ձևավորել նախորդ տարիների ընթացքում կրթության համակարգի արդիական մի շարք հիմնահարցերին նվիրված ուսումնասիրություններում, այդ թվում իրագործված միջազգային հեղինակավոր կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերում: Նման նշանակալից ծրագրերից մեկը իրագործվել է Բուդապեշտի Կենտրոնական եվրոպական համալսարանի (ԿԵՀ) Բարձրագույն կրթության վերլուծական կենտրոնի կողմից, որի արդյունքները ներկայացված են 2013թ. հրատարակված «Բարձրագույն կրթությունը Հայաստանում այսօր. առկա խնդիրների վերլուծություն»¹ հաշվետվության մեջ: Կենտրոնը հատուկ ուշադրություն է դարձնում կիրառական ուսումնասիրություններին և բարձրագույն կրթությունը գործնականում կիրառելու փաստացի հեռանկարներին, ինչպես նաև ժողովրդավարության զարգացման հետ կապված հարցերին: Սույն առումով ուշագրավ այս հաշվետվության մեջ ներկայացված մանրակրկիտ ու համալիր հետազոտությունների արդյունքում կատարված այնպիսի ընդհանրացումներ և հարցադրումներ, որոնք համահունչ են նաև Հայաստանի կրթական համակարգի հետագա զարգացումներին ու ժամանակակից մոտեցումներին: Դրա ապացույցներից են տարբեր բուհերում այդ ընթացքում իրագործված ուսումնասիրությունները, նրա համատեքստում իրագործված բարեփոխումներն ու նախատեսված ձեռնարկումները: Մասնավորաբար, դա վերաբերում է վերջին

¹ Տե՛ս https://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf, 54 էջ

տարիներին բուհերում ստեղծված «Կրթության որակի ապահովման» ստորաբաժանումների գործունեությանը, դրանց որոշակի ձեռքբերումներին:

Սոցիոլոգիական ուսումնասիրությունները կրթօջախի կառավարման ու ինքնակառավարման արդյունավետ տարր են դառնում այնքանով, որքանով վարչակազմն ու աշխատակազմը սովորողների հետ միասին գիտակցաբար ցանկանում են համատեղ կյանքի ու խնդիրների սուբյեկտիվ, կիսահավաստի (երբեմն՝ անհավաստի), հաճախ կանխակալ, բուհի առաջընթացին խոչընդոտող մեկնաբանություններին հակադրել գիտականորեն հիմնավորված և լավատեսական հետևություններ: Նման կրթօջախներից է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը, որտեղ 2012 թվականից Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի կողմից իրագործվող պարբերական ուսումնասիրություններն անմիջականորեն ներառված են բուհի կառավարման մեխանիզմի մեջ: Հատկանշական է, որ Մայր բուհի համապատասխան կառույցների հետ ակտիվ համագործակցության շնորհիվ հետազոտություններում հաշվի են առնվել թե՛ բուհի ու նրա անմիջական սոցիալական միջավայրի յուրահատկությունները, թե՛ բոլոնյան գործընթացի պահանջները: Ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփված են 2018 թվականին հրատարակված աշխատության մեջ²:

Տվյալ հոդվածում ներկայացված են բուհում ստացած կրթության որակի մասին ուսանողների ընկալումները, որոնք 2017 թվականի սեպտեմբերից 2018 թվականի հունվար ամիսների ընթացքում ձեռք են բերվել բարձր կուրսեցիներից (հիմնականում ավարտական կուրսերից) ձևավորված ֆոկլու-խմբերի հետ քննարկումների ընթացքում³: Ինչպես ֆոկլու-խմբերի հետ քննարկումներում, այնպես էլ հնգամյա կտրվածքով բազմաբնույթ կրթական ու մերձկրթական խնդիրների վերաբերյալ հարցումներում կարելիվոյն հաշվի են առնվել այն խնդիրները, որոնք բացահայտվել են վերոնշյալ Եվրոպական կենտրոնի հաշվետվության մեջ, մասնավորապես, կրթական համակարգում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ հանրային քննարկումների ոչ բավարար մակարդակը, դրանց նպատակների վերաբերյալ հանրության անբավարար իրազեկվածությունը, գործընթացներում ուսանողների ու դասախոսների մասնակցության պակասը: Սա մի իրողություն է, որն ըստ հեղինակների, հանգեցնում է բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների հարցում խանդավառության բացակայությանը և հոռետեսական տրամադրություններին⁴:

² Տե՛ս Առաքելյան Ս., Կյուրեղյան Է., Ճաղաքյան Մ., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (Գիտաուսումնական մտորումներ և փաստեր): Երևան, Տիր հրատարակչություն, 2018, 264 էջ:

³ Ֆոկլու-խմբերը ձևավորվել են երրորդ և չորրորդ (ավարտական) կուրսերի ակտիվ, առաջադիմող ու իրազեկ 8-ական ուսանողներից (6-ը ավարտական կուրսից, 2-ը՝ երրորդ):

⁴ Տե՛ս https://www.osf.am/wp-content/uploads/2013/10/OSF_HE_report_ARM.pdf, էջ 25:

Հավելենք նաև, որ գիտական հետաքրքրությունների համար մասնաճյուղի ընտրությունը պատահական չէ: Առկա ու հեռակա ուսուցման 1600 ուսանողներով Մայր բուհի միակ մասնաճյուղը՝ որպես ժամանակակից բուհական հիմնախնդիրների «խաչմերուկ», տիպական օրինակ է: Հիմնականում մարզի դպրոցականներից համալրվող մասնաճյուղի ուսանողական կազմը ուսման հանդեպ դրական վերաբերմունքով և առաջադիմությամբ թերևս ամենից շատ է խտացված կերպով ներկայացնում հանրապետության բուհական ուսանողությանը: Մասնաճյուղում ներկայացված են ինչպես բնագիտական, այնպես էլ հումանիտար, տնտեսագիտական, մանկավարժական և արվեստագիտական մասնագիտությունները:

Հանրապետության կրթական համակարգի ու Մայր բուհի զարգացումների համատեքստում մեր հետազոտության ուղղվածության մեջ կարևորվել է նոր՝ «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ինստիտուտի կայացման ուղղությամբ մասնաճյուղում տեղի ունեցող հարաճուն գործընթացը: Այն թելադրված է Հայաստանի տնտեսաքաղաքական ու սոցիալ-մշակութային նոր իրողություններով, արտադրության ու փոխանակման մեջ միջազգային ավելի լայն ու բազմակողմանի համագործակցությամբ, եվրոպական կրթական տարածքի հետ ներդաշնակման, կրթական ավելի ինտենսիվ տեղաշարժերի գործընթացներով: Այս ամենը նոր ու «անսովոր» պահանջներ են դնում մասնագիտական պատրաստության գործընթացների արդյունավետության վրա, ինչին էլ թերևս համուղղված է «Կրթական ծրագրի պատասխանատու»-ի ձևավորվող ինստիտուտի գործունեությունը: Իրենց գործառույթների շրջանակներում կրթական ծրագրերի պատասխանատուները ուշադրության կենտրոնում պետք է պահեն ուսումնական պլաններում տարբեր մոդուլների փոխկապվածության ու փոխպայմանավորվածության օպտիմալացման, դասընթացների փաթեթների բովանդակային բարելավման, ուսանողների տեսական և գործնական ձեռքբերումների արդյունավետ գնահատման ու դրանց համարժեք կիրառման, և այս ամենի մեջ ուսանողների ավելի ակտիվ ու գործուն ներգրավման հարցերը: Միաժամանակ, պետք է կարևորվի բուհ-գործատու սերտ ու փոխշահավետ կապը, առաջարկվեն ուսումնաարտադրական պրակտիկաների ու շրջանավարտների աշխատանքի տեղավորման խնդիրների նորովի լուծումներ: Ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների գործնականորեն կիրառելու գործում առաջնակարգ գործոններ պետք է դառնան դասախոսների անձնական-բարոյական ու մասնագիտական-մանկավարժական որակները, բուհական կառավարիչների կազմակերպչական ու բարոյա-աշխարհայացքային հատկանիշները, դասախոս-ուսանող, ուսանող-ուսանող միջանձնային հարաբերությունները:

Ընդհանրացրած տեսքով ներկայացնենք հետազոտության այն արդյունքները, որոնք բացահայտում են մերօրյա զարգացումներին համահունչ և ուշադրության արժանի սոցիալ-հոգեբանական ու կառավարչական կազմակերպչական խնդիրները⁵:

Հնգամյա հարցումների ու փորձագետների գնահատման արդյունքներով ուսանողական հանրության գրեթե 30-40%-ը բավարար չափով իրազեկված չէ իր արդիական շահերի պաշտպանությամբ, ուսմանն ու աշխատանքի տեղավորելուն օժանդակող կառույցների գործունեությամբ և նրանց հնարավորությունների մասին: Մի կողմից տպավորություն է ստեղծվում, թե ուսանողների մի ստվար հատվածի չի հետաքրքրում այդ կառույցների աշխատանքները, կամ շարժվում են խորհրդային ժամանակների իներցիայով, որտեղ չկար վճարովի ուսուցում ու աշխատանքի տեղավորվելու կենսական խնդիր: Մյուս կողմից, ուսանողների վիճակագրական մի խումբ (հիմնականում հեռակա ուսուցման բաժնի ուսանողների 20,0-25,0%-ը) էապես կապված չէ բուհի և նրանում ընթացող իրադարձությունների հետ: Դրանք դասերին էպիզոդիկ հաճախող, ցածր առաջադիմություն ունեցող պասիվ ուսանողներն են, որոնց հիմնական շարժառիթը «մի կերպ բավարար գնահատականներով ավարտական վկայական ստանալն է»: Առկա է նաև ուսանողության «դժգոհ» այն մասը, որը իրազեկված է, սակայն չի ցանկանում օգտվել տվյալ կառույցների ծառայություններից: Մի դեպքում պատճառը սեփական երկչոտությունն է, ընտանեկան ու ազգային ավանդույթի ուժ ունեցող «ավելորդ ամոթխածությունը», մյուսում՝ պատասխանատվության ոչ սրտացավ վերաբերմունքը, ինչը, ըստ փորձագետների, պայմանավորված է ուսանողական կառույցում «պատահական» անձանց գոյությամբ, ֆակուլտետային ու մասնաճյուղային կառույցների անբավարար համագործակցությամբ, գործունեության մեջ ինքնուրույնության պակասով և այլն: Ամեն դեպքում ամրագրվում է այն վիճակագրական փաստը, որ ուսանողության մոտ առկա է համարժեք իրազեկվածության խնդիր, կապված ուսումնական ու աշխատանքային շահերը պաշտպանելուն կոչված մասնաճյուղային կառույցների գործունեության ու հնարավորությունների իմացության հետ:

Բուհական կրթության որակի համար նորովի արդիական մյուս խնդիրը կապված է մանկավարժական ու արտադրական պրակտիկաների կազմակերպման հետ: Այստեղ ավանդականն ու գործնականում անփոփոխ այն է, որ պրակտիկաները միտված են ուսանողին ապագա հնարավոր գործունեության նրբություններին ծանոթացնելուն, սեփական գիտելիքների ու

⁵ Տվյալ հոդվածի ձևաչափից դուրս է մասնաճյուղի ձեռքբերումների դիտարկումը, որը ներկայացված է վերոնշյալ՝ **Առաքելյան Ս., Կյուրեղյան Է., Ճաղարյան Մ.,** ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (Գիտաուսումնական մոտորումներ և փաստեր) աշխատության մեջ (տե՛ս ԳԼՈՒԽ 2-ի 2.4; 2.5; 2.6 պարագրաֆները, էջ 255-261):

հմտությունների փորձարկմանն ու ինքնաստուգմանը: Տվյալ համատեքստում կրթօջախը պարբերաբար ճշգրտում ու վերանայում է իր մոտեցումները պրակտիկաների կազմակերպման և իրականացման գործընթացի նկատմամբ՝ հաշվի առնելով գործատուների նոր կարգավիճակը և կադրերին առաջադրվող նրանց նորովի պահանջները: Մրցակցային շուկայական կյանքը, կրթական միջավայրի ընդլայնումն ու խորացումը կադրերից օբյեկտիվորեն պահանջում են նոր բնույթի կարողություններ, արժեքային նոր առաջնահերթություններ, աշխատանքային ակտիվության նորովի ընկալում, ինքնակրթության դերի վերագնահատում, շարունակական կրթության ու երկրորդ (երրորդ) մասնագիտության իրական արժևորում: Այս ամենը բացահայտվել է ներքին ու արտաքին շահակիցների շրջանում կատարված ուսումնասիրություններում և ֆոկլուս-խմբերի հետ քննարկումներում: Այսպես, Տավուշի մարզի կրթական ոլորտի ներկայացուցիչների ընդհանրական կարծիքով մանկավարժական մասնագիտությունների (այն մասնաճյուղում հիմնականներից էր) կրթական ծրագրերի կատարելագործման ներկա գործընթացներում առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի «...տեխնիկական միջոցներով, նաև անկաշկանդ, ստեղծագործաբար ու մատչելի եղանակներով դասը վարելու ժամանակակից մեթոդների, գործնական հմտությունների արդյունավետ փոխանցման մեթոդների ներդրմանը, մանկավարժ-սովորող հարաբերություններում տարիքային սցիալ-հոգեբանական ու հոգեբանական օրինաչափությունների դրսևորմանը»⁶:

Արդյունավետության տեսանկյունից մի շարք մասնագիտություններում խնդիրներ կան պրակտիկաների տևողության ու անցկացման ժամանակահատվածի օպտիմալության հարցում: Ավելի արդյունավետ դարձնելու անհրաժեշտություն ունեն պրակտիկանտ և պրակտիկայի ղեկավար, պրակտիկանտ և պրակտիկայի անցկացման վայրի խորհրդատու հարաբերությունները: Որպես փաստ ներկայացնենք փորձագետների կողմից նշված մի քանի խոստովանություն-նկատառումներ. «կարելի է նախապես իրազեկել պրակտիկայի վայրի մասին և տրամադրել ավելի մանրամասն տեղեկություններ նրա մասին», «ցանկալի է ստեղծել հնարավորություններ արվեստի ֆակուլտետի ուսանողների պրակտիկաների տևողությունը երկարացնելու համար», «դպրոցներում ուսուցիչները չապակողնորոշեն և չխոչընդոտեն ուսանողի կողմից դասը վարելուն», «պրակտիկայի վայրում լուրջ վերաբերվեն պրակտիկա անցնող ուսանողներին»; «պրակտիկային աջակցող դասընթացներն անցնել պրակտիկայից առաջ, որպեսզի օգտակար լինեն», «պրակտիկայի ժամանակահատվածը չհատել որևէ քննաշրջանի հետ» և այլն:

⁶ Տե՛ս Առաքելյան Ս., Կյուրեղյան Է., Ճաղարյան Մ., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (Գիտաուսումնական մոտորումներ և փաստեր); Երևան, Տիր հրատարակչություն, 2018, էջ 171:

Հարցումների արդյունքներն իրենց ուրույն տեղն ունեն բուհերում գնահատման համակարգի բարելավման գործում և դրանք արդյունավետ օգտագործվում են մասնաճյուղում⁷: Մասնաճյուղում գործող գնահատման համակարգի վերաբերյալ դրական որակումների կողքին փորձագետների համար քննարկումների նյութ է դարձել մասնագիտական գիտելիքների յուրահատկությունից կախված գնահատման տարբերակված մոդելների կիրարկման անհրաժեշտությունը: Օրինակ, եթե բնագիտական մասնագիտությունների փորձագետների համար թեսթային ստուգումները լիովին ընդունելի էին, ապա հումանիտար ոլորտի փորձագետների (բացի «լեզվաբաններից») համար դրանք արդարացված չէին: Փաստվում էր, որ թեսթերը լիարժեքորեն չեն կարողանում բացահայտել ուսանողի կարողությունները և «...անասելի շփոթվում ենք, երբ զգում ենք, որ դասախոսն իրապես չի կարողանում բացահայտել գիտելիքներդ»: Հատկապես առաջադիմող ու ակտիվ ուսանողության համար խիստ բացասական գործոն են դասախոսների կողմից դրսևորվող սուբյեկտիվության տարրերը: Օրինաչափ է հնչում ապագա հոգեբանների խոստովանությունն այն մասին, թե նույնիսկ թվացյալ սուբյեկտիվիզմը դասախոսի կողմից իրենց վրա ազդում է հիվանդագին կերպով⁸: Իսկ այն ոչ միշտ է «թվացյալ»: Հազվադեպ չեն փորձագետների մտահոգությունները, երբ «...իրական իմացությունդ, հնարամտությունդ գնահատելու փոխարեն, նայում են ստուգման գրքույկներին ու որոշում, թե ինչ գնահատական պետք է ստանաս»:

Հետազոտության մեջ շոշափվել են նաև նորովի կարևորվող այնպիսի խնդիրներ, որոնք նախկին հարցումներում չեն ընդգրկվել: Մասնավորաբար, դրանցից են մասնագիտության գիտակցական ընտրության, ուսումնական պլանների ժամանակին ու պատշաճորեն իմացության և նրա իրացման հանդեպ ակտիվ դիրքորոշում որդեգրելու հարցերը: Սրանք հարցեր են, որոնք սերտորեն առնչվում են ուսումնական պլանների ու առարկայացանկի, առարկայական ծրագրերի բովանդակության, ուսումնառության ողջ գործընթացի կազմակերպման ու կառավարման մեջ ուսանողության ավելի ակտիվ ու գործուն դերակատարության, որպես կրթության ժողովրդավարացման արդիական խնդրի հետ: Իսկ այդ խնդիրների լուծումը ուսանողից պահանջում է

⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 180-201:

⁸ Փաստենք, որ նաև հարցումների արդյունքների հիման վրա մասնաճյուղը 2017/18 ուստարվանից անցել է ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգի, որով ընթացիկ քննությունների ժամանակ ուսանողներն ազատվում են դասերից, արդյունաբար գնահատականից հանվել է մասնակցությունների միավորը, որը հնարավորություն է տալիս դասախոսին իր հայեցողությամբ արդյունաբար գնահատականի մեջ ներառել նաև իր դասընթացին ուսանողի ակտիվության միավորը: Տե՛ս ԵՊՀ ԻՄ ԳԽ, 10.06. 2017թ., արձ. Թիվ 24 (http://ijevan.y-su.am/wp-content/uploads/2013/12/app_endix-24-2.pdf)

աշխարհայացքային ժամանակակից մշակույթ, համամարդկային շահերի հիմքի վրա պետական ու ազգային շահերի առաջնահերթություն⁹:

Բուհերում նման խնդիրների լուծման համար առկա են որոշակի օբյեկտիվ պայմաններ¹⁰: Հարցումները պարզեցին, որ ուսանողության կեսից ավելին խնդիրներ ունի մասնագիտության գիտակցական ու ինքնուրույն ընտրության հարցում, ինչը, բնականաբար, լուրջ խոչընդոտ է դառնում ներկա պահանջներին համապատասխան գիտելիքներ ու հմտություններ ստանալու գործընթացում: Պատճառն այստեղ ավելի շատ սուբյեկտիվ է, քան՝ օբյեկտիվ: Թերևս բացասական ավանդույթի ուժ ունեցող անձնական պասիվությունը, ինքնուրույն ու «կրեատիվ» մտածողության պակասը երիտասարդության մի ստվար հատվածի դեռևս թույլ չի տալիս նման հարցերը պատշաճորեն արժևորել: Մինչդեռ, երևույթները համաշխարհային գիտաուսումնական և արտադրատնտեսական պրակտիկայում ունեն գործնական արդյունավետ կիրառման ավելի քան հարյուրամյա պատմություն¹¹: Սրա վրա ձևավորված էր նաև խորհրդային ավանդույթ, որը դեռևս լիարժեքորեն չի բարեփոխվել, որպես նորանկախ Հայաստանի մասնագիտական կողմնորոշման համակարգ:

Ի տարբերություն մասնագիտության ընտրության խնդրի փորձագետները շատ ավելի ակտիվ էին ու «արհեստավարժ» առարկայացանկի և առարկայական ծրագրերի բովանդակությանը, ինչպես նաև ուսուցման արդյունավետության վրա դասախոսի անձի և ուսանողական միջանձնային հարաբերությունների ազդեցությանը վերաբերող քննարկումներում¹²: Այդ քննարկումներից ընդհանուր հետևությունն այն է, որ ուսանողության ընկալմամբ մասնագիտությունների կրթական ծրագրերում մի կողմից առկա են թեմատիկ բովանդակությունը կրկնող առարկաներ, մյուս կողմից՝ առանձնացվում է ընդհանուր կրթական և մասնագիտական գիտելիքների ու հմտությունների մատուցման ու փորձարկման պակասը: Թե որքանով են այս խնդիրները հիմնավորված ու կատարելագործման արժանի ցույց է տալու

⁹ Տե՛ս **Կյուրեղյան Է.**, «Աշխարհայացքային ինքնակրթությունը որպես հայոց պետականության ամրապնդման գործոն», Փիլիսոփայությունը արդի աշխարհում (ՅՈՒՆԵՍԿՕ-ի հոչակած Փիլիսոփայության համաշխարհային օրվա կապակցությամբ հրավիրված գիտաժողովի նյութեր; Երևան, 2017, էջ 166-177)

¹⁰ Մասնաճյուղի կայքում (<http://ljevan.yso.am>) տեղադրված են «Բակալավրի կրթական ծրագրեր» և «Կրեդիտային համակարգի ուղեցույց» բաժինները: Ուսումնական պլանների մի մասում ներառված է «Մասնագիտական ներածություն» առարկան (փաստենք, որ «Բնֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Պատմություն», «Օտար լեզուներ» մասնագիտությունների առարկայացանկում նման կամ նմանատիպ առարկա բացակայում էր, որը վերոնշյալ հարցերի վերաբերյալ տեղեկույթի հիմնական աղբյուրներից է):

¹¹ Տե՛ս, օրինակ, **Кирилен К.**, Вопросы управления, М., 1981, էջ 109-121:

¹² Կոնկրետ մասնագիտությունների ու առարկաների թեմատիկայի, լսարանային մթնոլորտի վերաբերյալ ուսանողական ընկալումների մանրամասները տե՛ս Առաքելյան Ս. , Կյուրեղյան Է. , Ճաղարյան Ս., ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հասարակական կարծիքի համապատկերում (Գիտաուսումնական մտորումներ և փաստեր): Երևան, Տիր հրատարակչություն, 2018, էջ 230-236 :

մասնագիտական ու կազմակերպչական մանրակրկիտ զննումը: Ասենք, որ արդեն այս և նախորդ հարցումների տվյալները ինտենսիվորեն քննարկվում են մասնաճյուղում և համապատասխան ստորաբաժանումների առաջարկությունները (որոշակի առարկաների դասաժամերի կրճատման ու նոր դասընթացների ներմուծման վերաբերյալ) առաջիկա 1-2 ուսումնական տարիների օրակարգում է: Մասնավորաբար, արտաքին շահակիցների և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կարծիքների համադրումը փաստում է, որ ուսումնառության ընթացքում շրջանավարտները պետք է ձեռք բերեն թիմային աշխատանքում ավելի նախաձեռնողական դառնալու, «ֆիրմայի» շահերի պաշտպանության մեջ ավելի ակտիվ մասնակցություն ունենալու, ուսումնական լսարանի բարոյա-հոգեբանական մթնոլորտի առողջացմանը անձնապես ավելի համարժեք ներագդելու որակներ, ինչը պահանջում է լրացուցիչ բարոյա-հոգեբանական ու կառավարչական գիտելիքներ (հմտություններ)¹³:

Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել էր հետևյալ կարևոր փաստարկը. ուսանողները վիճակագրորեն միահամուռ արտահայտել են այն կարծիքը, որ **ուսուցման արդյունավետության կարևոր գործոնն է խթանիչ ուժն ու միայն** դասախոսի զուտ մասնագիտական որակները, այլ նաև **նրա անձային ու մանկավարժական հատկանիշները**: Սա փաստ է, որը առօրյա դասախոսական կյանքում շատ դեպքերում թերագնահատվում է: Սոցիոլոգի խնդիրը չէ երևույթը անձնավորելը, քանի որ այն գործ ունի զուտ հատկանիշների հետ¹⁴: Դրա համար նշենք մի քանի դիտողություններ, որոնք, ուսանողների հավաստմամբ, խոչընդոտում են ուսուցման արդյունավետությանը. կան դասախոսներ, որոնք «չեն սիրում հարց տվող ուսանողին», «ի վիճակի չեն լսարանում պահպանել պատշաճ կարգապահություն», «ուղղակի հիվանդության աստիճանի հակված են ցածր գնահատելու», «չափից ավել շեղվում են բուն նյութից», «այնքան արագ են խոսում, որ չենք հասցնում ընկալել», «կարդում են միայն գրքերից ու թղթերից», «քննության ժամանակ դառնում են «անսովոր դաժան ու չոր», «արտագրողին էլ, չարտագրողին էլ նույն գնահատականն են նշանակում»:

Միևնույն ժամանակ կարևորվում էր, որ «լավ» դասախոսի հավաքական ըմբռնման մակարդակում ուսանողն ավելի է առաջադիմում, երբ

¹³ Տե՛ս, օրինակ, **Կյուրեղյան Է.Ա., Շամիրյան Վ.Մ., Քոչյան Լ.Ս.**, Գործարար հաղորդակցում: Ուսումնական ձեռնարկ: Երևան, 2013, 112 էջ: Կյուրեղյան Է., Կիրառական սոցիոլոգիա: Դասագիրք, Երևան, 2015, ԳԼՈՒԽ 3, 3. 3., Կառավարման սոցիոլոգիա և հոգեբանություն: Корпоративная социальная ответственность: Новая философия бизнеса: Учебное пособие-Внешэкономбанк, Москва, 2011, 57 էջ:

¹⁴ Դա հնարավոր է գիտակցել միայն սոցիոլոգիական որոշակի մշակույթի դեպքում, ինչը հանրության մեջ դեռևս պատշաճորեն արմատավորված չէ: Տե՛ս, օրինակ, **Нозель Элизабет**. Массовые опросы., М., 1978, էջ 44-48

մասնագիտական հատկանիշների կողքին, դասախոսը անձնական օրինակով կարողանում է լսարանում ստեղծել փոխադարձ հարգանքի, գիտելիքի հանդեպ անբռնազբոս հետաքրքրության, անձնական ու աշխատանքային կյանքում կրթվածության կարևորության գիտակցման հոգեվիճակ:

Միջանձնային հարաբերությունների դերի վերաբերյալ քննարկումներում նկատելի էր ինքնաքննադատության որոշակի պակաս ուսանողների կողմից: Որպես «համերաշխության» դրսևորում նրանցից շատերը հակված էին խոչընդոտներն ու թերացումներն ավելի շատ վերագրել արտաքին հանգամանքներին, քան ներանձնային կամ ներխմբային հարաբերություններին: Միննույն ժամանակ նրանք խոստովանում էին, որ վատառողջ մրցակցությունը շրջափոխման (ռոտացիայի) մեջ, սուբյեկտիվիզմը՝ ոչ պաշտոնական հարաբերություններում, խաթարում են հոգեբանական մթնոլորտը և բացասաբար անդրադառնում ուսման որակի վրա:

Այսպիսով, ընդհանրացնելով բուհական կրթության որակի վերաբերյալ ուսանողության ընկալումները, կարող ենք ասել, որ ներկա զարգացումներում օբյեկտիվորեն փոխվում է սովորողների վերաբերմունքը ուսումնառության մի շարք կարևոր գործընթացների հանդեպ: Այն դրսևորվում է առարկայացանկի ու դասընթացների բովանդակության հանդեպ ավելի ակտիվ դիրքորոշման, մասնագիտական կողմնորոշման նորովի իմաստավորման, բուհ-գործատու հարաբերություններում շահախնդիր վերաբերմունքի, սոցիալական միջավայրի բարոյահոգեբանական մթնոլորտի հանդեպ ավելի գործուն ուշադրության մեջ:

Տվյալ իրողությունները պահանջում են բուհական որոշակի կառույցների գործունեության «ազատականացում», մրցակցային շուկայական կյանքի ու ազգապետական զարգացումների պահանջներին լիարժեք հարմարում:

Բանալի բառեր - Կրթական համակարգ, կրթական ծրագրի պատասխանատու, իրազեկվածություն, մասնագիտական որակ, առարկայական ծրագիր, դասախոսի անձնային նկարագիր, բարոյահոգեբանական մթնոլորտ

Մարիետա Ճադարյան, Էդիկ Կյուրեղյան, Ստելլա Մանթաշյան, Ուսանողության կողմից բուհական կրթության որակի ժամանակակից ընկալումները – Հոդվածում, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի օրինակով, բարձր կուրսերից կազմված ֆոկուս-խմբերի օգնությամբ քննարկվում է ուսանողության կողմից բուհական կրթության որակի ընկալումները Հայաստանի կրթական համակարգի ներկա զարգացումների համատեքստում: Դիտարկվում են մասնագիտական ժամանակակից որակների ու հնարավորությունների մասին ուսանողների իրազեկվածությունը, ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի օպտիմալությունն ու համապատասխանությունը շուկայական տնտեսակարգի ու քաղաքացիական ազատությունների պահանջներին: Սույն

համատեքստում առանձնակի է կարևորվում դասախոսների անձնային ու մանկավարժական որակների, պաշտոնական ու ոչ պաշտոնական միջանձնային հարաբերությունների դերը:

Мариета Джагарян, Эдик Кюрегян, Стелла Манташян, Современные представления студентов о качестве высшего образования - На примере Иджеванского филиала Ереванского государственного университета, с помощью фокус-групп, состоящих из представителей высших курсов, в статье обсуждается представление студентов о качестве вузовского образования в контексте современных реалий системы образования Армении. Рассматриваются информированность студентов о современных качествах и возможностях специальностей, оптимальность и соответствие учебных планов и предметных программ требованиям рыночной экономики и гражданских свобод. В данном контексте особо подчеркивается роль личностных и педагогических качеств преподавателей, межличностных формальных и неформальных отношений.

Marieta Tchagharyan, Edik Kyureghyan, Stella Mantashyan, The perception of the educational quality by students - Based on the example of YSU Ijevan branch by the help of focus groups, in the article, made up of students from higher education courses is discussing the perceptions of quality in the context of the current developments in Armenia's educational system. The students' awareness about the professional qualities and capabilities, the optimality and relevance of curricula and subject curricula to the requirements of market economy and civil liberties are observed. In this context, the role of personal and pedagogical qualities of lecturers, the official interpersonal relationships are especially important.

ՎԱՐՔ ՄԵՏԱՅ

Հայրենանվեր ազգային գործիչն ու մտավորականը (նվիրվում է մեծանուն հայ, անվանի հասարակական-քաղաքական ու պետական գործիչ Ալեքսան Կիրակոսյանի 100-ամյակին)

Գիտամշակութային մեծ նվաճումներով աշխարհին հայտնի մեր ժողովուրդը միշտ էլ աչքի է ընկել վառ անհատականություններով, հասարակական ակտիվությամբ և ազգային նկարագրով բնութագրվող նվիրյալներով, որոնք անմնացորդ ծառայել ու ծառայում են իրենց հայրենի երկրին ու ժողովրդին: Այդ մարդկանց համար հաստատուն ու հանրօգուտ նկարագիր ունենալը գոյատևումի երանելի իմաստ է, ընտրած բնագավառների խոր իմացություն և գործունեության ճիշտ ուղղություն: Այս բարձր հատկանիշների ներդաշնակությունը կերպավորված է կատարյալ հայի ու քաղաքացու, հասարակական-քաղաքական գործիչ, իսկական մտավորական, տաղանդավոր կազմակերպիչ Ալեքսան Մաթևոսի Կիրակոսյանի 89-ամյա տարեգրության մեջ: Նրա ապրած կյանքի այդ տարիները դեռ երկար են զգացնել տալու մեծ մարդու, ազգային գործիչի բեղմնավոր վաստակի արգասիքը:

Վաստակաշատ մանկավարժի և ազգային-պետական գործիչի հարուստ և բովանդակալից կրթական և հասարակական-քաղաքական գործունեությունը կարելի է բաժանել մի քանի ժամանակահատվածի: Հայտնի է, որ ժամանակն է ստեղծում, ձևավորում և կերտում մարդու դիմանկարը: Մարդ-արարածն ապրում և գործում է իրեն բաժին ընկած ժամանակի մեջ: Ժամանակները կարող են նպաստել մարդու վեհացմանն ու բարձրացմանը կամ ընդհակառակը: Մակայն ամենակարևորն ու էականն այն է, երբ պատմական դժնդակ ժամանակներում գործող անհատը ինքն է նպաստում հասարակական մթնոլորտի վեհացմանը, մարդկային փոխհարաբերությունների բյուրեղացմանը, զգացմունքների ու հասարակական կրթերի առողջացմանը: Ահա նման անձնավորություն էր լավագույն մտավորական, ազգային նվիրյալ գործիչ, հանրօգուտ նկարագիր ունեցող, կատարյալ հայրենասեր հայի ու քաղաքացու տիպար հանդիսացող մարդկային առաքինի բարձր հատկանիշներով օժտված, հասարակական-քաղաքական գործիչ Ալեքսան Կիրակոսյանը: Նկարագրելով իր ապրած ժամանակները պետական նշանավոր գործիչը իր «Մայրամուտի շեմին» հուշագրությունում գրում է .« Իմ կյանքի ժամանակը բարդ և հակասական է եղել, լեցուն անկումներով ու թռիչքներով, սևի և սպիտակի համադրությամբ: Հակասություն պետք չէ որոնել: Ժամանակն էր այդպիսին: Նա, ով փորձում է մեր անցած կյանքն ու ժամանակը տեսնել միայն լույսի կամ ստվերի մեջ, համոզված

եմ՝ ճիշտ չի: Գրքում ձգտել եմ հիմնական շեշտը դնել մտորումների ու խոհերի, ինձ անհանգստացնող տագնապների վրա, որ նոր սկսված դարի պարտադրանքից է:» (Տե՛ս Ա. Կիրակոսյան, Մայրամուտի շեմին, Եր., 2002, էջ 3): Ընդգծելով, որ նա երեք հանրապետությունների ժամանակակիցն է և պատկանում է քառասնական թվականների այն սերնդին, որը աշխարհ եկավ 20-րդ դարի սկզբի նգովյալ տարիներին և անցավ դժվարին, տատասկոտ և, հիրավի, հերոսական ճանապարհ, ըմբռնեց մայրական փառքի և ստեղծագործ աշխատանքի բերկրանքը, բայց արդյունքում ապրեց մեծ հիասթափություն՝ ականատես դառնալով այդքան դժվարությամբ, մեծագույն ջանքերով ստեղծված արժեքների ոչնչացմանը, կատարված գործի ուրացմանը, Ալեքսան Կիրակոսյանը ընդգծում է.« Ամեն սերունդ իր անցած ճանապարհով է հաստատում կյանքի մեծ խորհուրդը և յուրաքանչյուր հուշագրություն պատմության և ժամանակի որոշակի մի հատվածի անհատական իմաստավորում է: Իմ երկար ու իսկապես բուռն կյանքը հատվել է շատ շատերի կյանքի հետ, նաև մարդկանց, ովքեր դեռ կենդանության օրոք պարուրված էին խորհրդավորության շղարշով: Ես բախտ եմ ունեցել ճանաչելու մեծ անհատականությունների, հանդիպել եմ նաև փոքրոգիների: Նրանցից շատերն արդեն չկան, մյուսները ապրում են մեզ հետ, մեր կողքին: Երկու դեպքում էլ դժվարին ու պատասխանատու խնդիր է իմ առջև ծառանում: Յուրաքանչյուր խոսք ավելի է կարևորվում, ինչի մասին ես չեմ կարող մոռանալ գեթ մի պահ»:»(էջ 4) Նրա կենսագրության առաջին շրջանը կորսված մանկության ցավի ու դառնության հուշերն են: Ալեքսան Կիրակոսյանը իրեն համարում էր իր շատ սերնդակիցների պես, մանկություն չունեցող մարդկանցից մեկը: Նրա նախնիները գաղթել են հիմնականում Ադրիանապոլսի պայմանագրից հետո՝ Վերին Բասենից Շիրակի գավառի Այգեբազ գյուղ, որտեղ էլ ուղիղ 100 տարի առաջ 1918թ. օգոստոսի 18-ին ծնվել է Ալեքսան Կիրակոսյանը: 2 տարեկանում, 1920թ. սեպտեմբերին թուրքական հրոսակները Արևելյան Հայաստան ներխուժելիս գնդակահարել են մորը, ում արյունոտ գրկում էլ եղել է փոքրիկ Ալեքսանը, ով էլ հրաշքով փրկվել է աստծո կամեցողությամբ: Մորը գիշերով են հողին հանձնել ու երկար ժամանակ անհայտ է մնացել շիրիմը: Հայրը այդ օրերին ծառայում էր Հայաստանի Առաջին Հանրապետության բանակում, և մինչև նրա վերադարձը փոքրիկ Ալեքսանն ու յոթ տարով նրանից մեծ քույրը՝ Նախշունը, հանձնվել են բախտի քմահաճույքին: Նկարագրելով հոր՝ Մաթևոս Կիրակոսյանի ծանր ճակատագիրը, Ալեքսան Կիրակոսյանը նշում է թե ինչպես մոր մահից 4 տարի առաջ, երբ նրանք մոր՝ Վառվառայի հետ մեկ օրում կորցրել էին իրենց երեք գավակներին, մի քանի օրում հոր մագերը սպիտակել էին: Հիվանդագին սիրով էր նա սիրում Ալեքսանին: Վերադարձից հետո այդ « իմաստուն մարդն ու հումորի անսպառ պաշարի տեր անձնավորությունը դառնում է Ալեքսանի

ընկերն ու խոհրդատուն»(էջ 5) Ալեքսանը նշում է, որ 1926թ. դպրոցական առաջին զանգն ու առաջին դասը շատ տպավորիչ է եղել նրա համար, ով երախտագիտությամբ է հիշում իր առաջին ուսուցիչ, հետագայում Գյումրիի միջնակարգ դպրոցի տնօրեն Գրիգոր Խաչանյանին: (էջ 6)

Տարրական դպրոցն ավարտելուց հետո Ալ. Կիրակոսյանը ընդունվել է Ախուրյանի նորաբաց յոթնամյա դպրոցը: 1933թ. այն վերածվեց միջնակարգի: Նա ուսումը շարունակեց Գյումրու հայտնի մանկավարժական տեխնիկումում, որի պատերի ներսում պատանին գտել է միանգամայն ուրիշ միջավայր ու բարձրակարգ մասնագետներով շրջապատված մթնոլորտ, որտեղ դասավանդում էին Եվրոպայի և Ռուսաստանի առաջատար համալսարաններում ուսանած այնպիսի տաղանդավոր մասնագետներ ինչպիսիք էին համապարփակ և հարուստ գիտելիքներով օժտված, իրենց գործին անսահման նվիրված, շնորհաշատ Հովհաննես Տեր-Միրաքյանը, շուշեցի Հայկ Հովհաննիսյանը, Իսահակ Տեր- Զաքարյանը, Նիկոլայ Կիրակոսյանը, Օսիկ Պարանյանը, Սարգիս Խաչատրյանը, Մկրտիչ Սիմոնյանը և այլք: Ալեքսան Կիրակոսյանը երախտագիտությամբ , կարոտով ու ակնածանքով է հիշում իր տաղանդավոր ուսուցիչներին, մանկավարժներին, որոնք վերադարձել էին Ենայի, Բեռլինի, Մոսկովի, Վենետիկի, Մ. Լոմոնոսովի և այլ բարձրակարգ համալսարաններից, կրթելու և դաստիարակելու նոր սերնդին, սակայն հետագայում, ինչպես ցավով արձանագրում է հեղինակը նրանք իրենց մահկանացուն կնքեցին Սիբիրի բանտերում և համակենտրոնացման ճամբարներում: (էջ 10)Նա հատուկ ակնածանքով վերհիշում է թե այդ օրերին ինչպիսի խանդավառությամբ էին ընթերցում, այն էլ մոմի լույսի տակ, Բաֆֆու, Ռ. Պատկանյանի, Պ. Պոռոշյանի, Ծերենցի, Խ. Աբովյանի հին հրատարակությունները, որոնք ձեռքից ձեռք էին անցնում, ապա նշանավոր գրող Ատրպետի գաղտնի վաճառած «Մշակ» , «Փորձ», «Արձագանք», «Աղբյուր», «Տարագ», «Մուրճ» պարբերականները: Տեխնիկումն ավարտելուց հետո 1936թ. Ալեքսան Կիրակոսյանը նշանակում է ստացել Լենինականի գավառի Հարթագյուղի դպրոցում, որպես ուսուցիչ: Դրանով սկսվում է Ա. Կիրակոսյանի աշխատանքային գործունեության առաջին շրջանը որպես մանկավարժ: Նա զովեստով է խոսում ուսուցչական կոլեկտիվի, տնօրենի նաև իր սաների մասին, որոնց մի մասը զոհվել էր հայրենական մեծ պատերազմում , մի մասն էլ հասել էր որոշակի բարձրագույն կրթական մակարդակի, նրանցից մեկն էլ Գերմանիայում դարձել էր բանաստեղծ, փայփայելով հայոց լեզուն և գրականությունը: Երկու տարի անց Ա. Կիրակոսյանը նշանակվում է Սպիտակի շրջանի Գոգարան գյուղի դպրոցի տնօրեն: Կոլեկտիվի մասին խոսելիս նա սիրով նշում է, որ մանկավարժական կոլեկտիվում աշխատանքային և ընկերական մթնոլորտ էր, փոխադարձ սեր ու հարգանք կար: « Երեխաները կարոտ էին ու ձգտում էին ուսման, իսկ

մանկավարժները ջանք չէին խնայում նրանց նախասիրությունները բավարարելու համար»: (էջ 11) Պատահական չէ, որ լուսժողկոմի մրցանակին՝ որպես հանրապետության լավագույն գյուղական դպրոցի արժանացավ Գոգարանի դպրոցը: Մանկավարժական աշխատանքին զուգընթաց Ա. Կիրակոսյանը սովորում էր Երևանի Մանկավարժական Ինստիտուտի բանասիրության ֆակուլտետում: Այստեղ նա մեծ երախտագիտությամբ է հիշում և հարգանքի տուրք տալիս իր դասախոսներին՝ Մկրտիչ Մկրյանին, Արարատ Ղարիբյանին, Գուրգեն Սևակին, Զավեն Գրիգորյանին, Ստեփան Ներսիսյանին, Սողոմոն Սողոմոնյանին և այլ ճանաչված գիտնականներին և ճշմարիտ մտավորականներին: 1939թ. աշնանը լուսավորության աշխատողների հանրապետական կոնֆերանսում պատգամավոր է ընտրվել Սպիտակի շրջանից: Գոգարան վերադառնալիս, պատերազմի լուրը լսելով, Կիրակոսյանը տիկնոջը ուղարկում է ծնողների մոտ, դպրոցի գործերը հանձնում է ուսփաժնի վարիչ Բ. Բարսեղյանին, ներկայանում զինկոմիսարիատ և պահանջում իրեն ուղարկել բանակ: Ամուսնացել է 1936թ. Ախուրյանի յոթնամյա դպրոցի համադասարանցու Վիկտորյայի հետ, ունեցել է վեց երեխա՝ երեք տղա, երեք աղջիկ: Սիրանուշը և Տաթևիկը բժշկուհիներ էին, Հայկը՝ կնոջ և երկու զավակների հետ աշխատում է Ուրալում: Աշոտը ինժեներ- շինարար է, տնտեսագետ, սոցներդրումների հիմնադրամի գործադիր տնօրենն է: Գագիկը բանասեր է, օտար լեզուների մասնագետ, դիվանագետ, աշխատում է արտաքին գործերի նախարարությունում իբրև բաժնի վարիչ: Բոլոր զավակներն էլ ամուսնացած են: Երեք հարս ունի, Կարինեն՝ բժշկուհի է, Մարինեն՝ կենսաբան, Նադյան՝ տնտեսագետ: Ունի 10 թոռ, վեց ծոռ: 1939թ. նա ծառայել է Դոնի կազակային հեծելազորային գնդում, որի հրամանատարը գնդապետ Մերգել Կարապետյան էր: Նա մասնակցել է մերձբալթյան երկրների և Արևմտյան Բելոռուսիայի խորհրդային զորքերի մղած մարտերին: 1941թ. հունիսի 22-ին հայրենական պատերազմը դիմավորել է Արևմտյան Բելոռուսիայում: Նա ներկայացնում է ռազմական գործողությունների ընթացքը Արևմտյան ռազմաճակատում, խոսում է օկրուգի նախկին հրամանատար գեներալ-գնդապետ Պավլովի և մարշալ Տիմոշենկոյի ռազմական գործողությունների մասին: Ցավով է նշում, որ պատերազմի սկզբում պատրաստ չէին պատերազմին, քանի որ առանց զենքի և զինամթերքի էին, անփորձ էին, մեծ մասը զինվորական պատրաստություն չունեցող երիտասարդներ էին, որոնք թնդանոթի միս դարձան: Պատահական չէ, որ 1922-23թթ. ծնվածների միայն 2-3 տոկոսը տուն վերադարձավ: Նա վիրավորվում է 1941թ. հոկտեմբերի 12-ին Մոսկվայից մի քանի տասնյակ կմ հեռու գտնվող Վոլոկլալամսկի խճուղու մոտ, գերմանական ինքնաթիռի նետած ռումբից: Ա. Կիրակոսյանը տեղափոխվել է Տամբով բուժվելու, այնտեղից՝ 1942թ. փետրվարին՝ Տաշքենդ, որտեղից մեկ

տարի անց ավագ քաղդեկի կոչումով ուղարկվել է Իվանովայի մարզի Շույսկ քաղաքը, 1942թ. աշնանը նշանակում է ստացել Վնուկովո կայարանի մերձակայքում տեղակայված հատուկ դեսանտային կորպուսի 9-րդ բրիգադում, որտեղից ուղարկվել է Մոսկվայի մարզում գտնվող դեսանտային զորքերի բարձրագույն հրամանատարական դպրոց:

Այդ ժամանակից սկսած նրա կյանքը կապվեց դեսանտային զորամասի հետ: Իբրև սպա մասնակցել է Հունգարիայի ազատագրական մարտերին, երկրորդ ուկրաինականից տեղափոխվել է երրորդ ուկրաինական ռազմաճակատ: 1945թ. ապրիլի 4-ին Ալ. Կիրակոսյանը մասնակցել է Ավստրիայի ազատագրական մարտերին, անձնական խիզախությամբ է աչքի ընկել Վիներ-Նոյշտադ քաղաքի մոտ մղվող մարտերում: Նույն թվականի ապրիլի 5-ին առաջինը իր վաշտը տանելով գրոհի, նա ծանր վիրավորվում է և տեղափոխվում հոսպիտալ: Հաղթանակից հետո երկրում տիրող վիճակին անդրադառնալիս Ա. Կիրակոսյանը ցավով արձանագրում է երկրի դեկավարության մոտ հաղթանակի տրամադրության փոփոխությունը կասկածամտության և անվստահության: Նա նկարագրում է, թե ինչպես ռազմագերիներին՝ համակենտրոնացման ճամբարներից փախած և պարտիզանական ջոկատների շարքերում թշնամու դեմ կռված, դաշնակիցների բանակներում կռված, տարբեր երկրների դիմադրական շարժումներին միացած, թշնամուն մեծ վնաս պատճառած շատերին ուղարկում էին արքայ:

«Գաղափարական մամլիչի պայքարը կոսմոպոլիտիզմի դեմ» այսպես է բնութագրում Ա. Կիրակոսյանը ետպատերազմյան շրջանում թշնամու դեմ կռված զինվորի ճակատագիրը: (էջ 35) Ինչպես միանգամայն ճիշտ նկատում է Ա. Կիրակոսյանը Ստալինը վախենում էր Եվրոպան տեսած զինվորից, նրան հանգիստ չէր տալիս մեկ դար առաջ եվրոպական պատերազմներից վերադարձած դեկաբրիստների ուրվականը: Ահա թե ինչու ետպատերազմյան շրջանում կազմակերպվեց հարյուր հազարավոր հայերի արտաքսումը Միբիր ու Ալթայի երկրամաս: Նրանց մի մասը «Մասունցի Դավիթ» տանկային շարասյան կազմակերպման մասնակիցներն էին: Ետպատերազմյան տարիներին Ալ. Կիրակոսյանի կյանքում նոր շրջադարձներ եղան: Ինչպես նա է գրում իր գրքում «Ես տեսել էի բարեկարգ եվրոպական կենցաղ, մարդու արժանապատվությանը հարիր կյանք և, բնական է, որ նույնն էլ ցանկանում էի իմ երկրի համար: Իսկ ցանկությունն իրականացնելու համար գործունեության նոր դաշտ էր հարկավոր, դպրոցական պատերն ինձ համար արդեն շատ նեղ էին» (էջ 36- 39): 1946թ. կրկին վերադառնում է Սպիտակ, որտեղ աշխատանքի է անցնում կուսշրջկոմում՝ կուսկաբինետի վարիչ, միաժամանակ, պատմություն է դասավանդում միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարաններում: Սակայն Ա. Կիրակոսյանը երկար չի աշխատում Սպիտակի շրջանում: 1947թ. նա ընդունվում

է կուսդպրոց, միաժամանակ կատարելով այդ դպրոցի կուսկազմակերպության քարտուղարի պարտականությունները: Կուսակցության դպրոցն ավարտելուց հետո, 1949թ. սեպտեմբերին նա կուսշրջկոմի քարտուղար է ընտրվում Անիի շրջանում, որտեղ օգնում է վերականգնելու պատերազմի հետևանքով քայքայված շրջանի միակ արտադրական ձեռնարկությունը՝ Անի-պեմգան, որն էլ հումք էր մատակարարում ցեմենտ արտադրող ձեռնարկություններին: Նույն տարում Ա. Կիրակոսյանը ընտրվում է Անիի շրջգործկոմի նախագահ, երկու տեղերում պաշտոնավարելով մոտ երեք տարի, նա 1952թ.փետրվարին ՀԿԿ կենտկոմի կողմից ուղարկվում է Լենինականի օկրուգ՝ որպես կուսմարմինների բաժնի վարիչ, սակայն շատ կարճ ժամանակ է այստեղ աշխատում, քանզի իր իսկ խնդրանքով նույն թվի մայիսին Կենտկոմը որոշում էր կայացրել նրան ուղարկել ԽՄԿԿ-ի բարձրագույն դպրոցում կամ ժողտնտեսության ակադեմիայում սովորելու: Սակայն ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը Ա.Կիրակոսյանի համար անսպասելի՝ նրան նշանակում է Ղուկասյանի և Ամասիայի միացյալ շրջանի կուսշրջկոմի առաջին քարտուղար: Ինչպես Ա.Կիրակոսյանն է գրում իր աշխատության մեջ «մինչև առաջին քարտուղարի կարգավիճակով շրջան մեկնելս, բերքահավաքը վատ կազմակերպելու և անասնազվաքանակի մեծ չափերի կորուստների համար շրջանի 27 տնտեսությունների ղեկավարներ և ֆերմաների վարիչներ դատի էին տրվել: Սակայն չնայած կառավարության և օկրուգային կոմիտեի համառումներին, ես թույլ չտվեցի դատի տալ նրանցից և ոչ մեկին, քանզի համոզված էի, որ նրանք չէին ստեղծված իրավիճակի մեղավորները, և անարդարացի կլիներ նրանց քվության նոխազ դարձնել» (էջ 52): Նրան հաջողվում է միացյալ շրջանի տնտեսությունը վերականգնել ու զարգացնել իր կազմակերպչական տաղանդի ու ղեկավարին հատուկ հետևողական և տնքաջան աշխատանքի շնորհիվ: Նրա անմիջական նախաձեռնությամբ ՀԽՍՀ նախարարների խորհրդի հատուկ որոշմամբ անհատույց 1մլն ռուբլու արժողությամբ անկողին է բաժանվում շրջանի հեռավոր գյուղերի բնակիչներին, ապա 1955թ. նախարարի միջոցով կարողանում է Երևանի համար նախատեսված անտառանյութով բեռնված 100 վագոնները, բեռնաթափել Լենինականի կայարանում և օգտագործել դրանք շրջանի շինարարական և վերանորոգման աշխատանքների համար: Դրա շնորհիվ վերականգնվում են քայքայված վիճակում գտնվող շրջանի դպրոցները, հիվանդանոցներն ու կուլտուր- կենցաղային օբյեկտները (էջ 53): Նրա անմիջական ջանքների շնորհիվ, հանրապետության ղեկավարության օգնությամբ. լուծվում է շրջանի էլեկտրաֆիկացման և ռադիո-հեռախոսային ցանցի ստեղծման հարցը, դրական տեղաշարժ է նկատվում նաև երկրագործության և անասնապահության մեջ, գրեթե կրկնապատկվում է անասնազվաքանակը, ինչպես հանրային, այնպես էլ անհատական

տնտեսություններում: Սակայն ինչպես Ա.Կիրակոսյանն է արձանագրում «ցավոք մշակութային, կրթական համակարգի բարելավումն ավելի դանդաղ էր ընթանում» (էջ 53): Ա. Կիրակոսյանը, շատ հաճախ շրջանի գյուղացիների վիճակը հաշվի առնելով հոգուտ նրանց խախտել է ՀՀ կառավարության որոշումները, կանոնադրությունները, դիմելով այնպիսի համարձակ քայլերի, ինչպիսին էր այդ հեռավոր շրջաններում՝ Ամասիայում և Ղուկասյանում կանոնադրությամբ գյուղացիների տնամերձի համար նախատեսված 2500 ք.մ վարելահողի փոխարեն, որը Արարատյան դաշտում նույնպես նույն քանակի էր, հատկացնում է յուրաքանչյուրին մեկ հեկտար, առանց հանրապետական կազմակերպություններին տեղյակ պահելու (էջ 53): Նրա նպատակը վիճակի արագ փոփոխության ձգտումն էր, ապրելու և աշխատելու հնարավորության ստեղծելն էր մարդկանց համար, սեփական կյանքին ու ճակատագրին նրանց տեր դարձնելն էր: Նա կարողանում է նաև զրպատանքներին ու ամբաստանագրերին պատասխանել և մնալ անսասան: Հենց Ղուկասյանի և Ամասիայի միացյալ շրջանից էլ նա 1954թ. ընտրվում է ՀԿԿ կենտկոմի անդամ: 1956թ. ՀԿԿ կենտկոմի և կառավարության որոշմամբ կատարվում է վարչատարածքային փոփոխություններ, որի արդյունքում բաժանվում են Ղուկասյանի և Ամասիայի շրջանները: Դրանից հետո Ա. Կիրակոսյանը տեղափոխվում է ՀԿԿ կենտկոմ՝ կուսմարմինների բաժնի վարիչի տեղակալի պաշտոնով, ապա 1957թ. նշանակվում է Հոկտեմբերի (այժմ՝ Արմավիր) շրջկոմի առաջին քարտուղար և աշխատում մինչև 1961թ.: Այստեղ ևս ցուցաբերած հոգատար և սրտացավ վերաբերմունքի շնորհիվ նա արձանագրում է բազում հաջողություններ, որոնք դրսևորվեցին բամբակի բերքատվության կրկնակի աճի մեջ (13 հազար տոննա բամբակ արտադրվեց, որը Հայաստանում արտադրվածի 1/3-ն էր կազմում, առանց ցանքատարածությունների ավելացման), ռոտգման ցանցի վերանորոգման, նոր ցանցերի՝ Սև ջրի ու Շախվառուտի (այժմ՝ Հուշակերտ) ջրհան կայանների, Հոկտեմբերյանի մեքենատրակտորային կայանի կառուցման հետ, գյուղամիջյան զրեթե բոլոր ճանապարհների ասֆալտապատման, դպրոցական նոր շենքերի, բաղնիքների, մշակութային օջախների կառուցման, հողի մելիորացիայի շնորհիվ բերրիության բարձրացման, խաղողի և մեծ քանակությամբ պտուղ-բանջարեղենի բերքատվության ավելացման մեջ: Ա.Կիրակոսյանի ջանքերի շնորհիվ գյուղատնտեսությանը զուգահեռ վերելք էր ապրում մշակութային կյանքը:

Ա.Կիրակոսյանը 1961-65թթ. տարբեր պաշտոններ է վարել ՀԿԿ կենտկոմում: 1961թ. նշանակվել է Հայաստանի կենտկոմի կուսակցական մարմինների բաժնի վարիչ, զբաղվելով կադրերի ընտրության և տեղաբաշխման հարցերով, ապա կուսակցական մարմինների բաժնի վերակառուցման արդյունքում աշխատել է Հայաստանի կենտկոմի գյուղբաժնի վարիչ: Երկար

տարիներ կուսակցական ղեկավար պաշտոններում աշխատելուց հետո վերջնականապես Ա.Կիրակոսյանը որոշում է զբաղվել գործուն կազմակերպչական աշխատանքով: 1965թ. նա նշանակվում է կաթի-մսի արդյունաբերության նախարար և աշխատում մինչև 1970թ.: Նրա անմիջական ջանքերով այս ոլորտում ևս բազում հաջողություններ և առաջընթաց է գրանցվում: 5 տարվա ընթացքում Հայաստանի գրեթե բոլոր շրջաններում կառուցվեցին կաթի ու պանրի նոր գործարաններ, որոնք հազեցված էին հիմնականում արտասահմանյան սարքավորումներով, հոսքագծերով: Վերակառուցվեցին Զեյթունի կաթի կոմբինատը, ձեռնամուխ եղան այն ժամանակ Եվրոպայում ամենախոշոր Շահումյանի կաթի գործարանի կառուցմանը: Այդ տարիներին Հայաստանը զանգվածաբար անցավ յուղալի, աղաջրային, հողակավոր շվեյցարական, ինչպես նաև եվրոպական ոռոգիչ պանիրների արտադրությանը: Վերակառուցվեցին Երևանի, Լենինականի., Կիրովականի մսամթերքների կոմբինատները: Հայաստանը Մոսկվա էր առաքում 1000 տոննա շվեյցարական պանիր (էջ 86) :

1970-1986թթ. Ալ. Կիրակոսյանը եղել է նախ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, ապա՝ առաջին տեղակալ: Այդ տարիները բնութագրվում էին որպես ժողովրդական տնտեսության զարգացման ժամանակաշրջան: Անհրաժեշտ է արձանագրել, որ այդ ժամանակ կատարվեցին զգալի տեղաշարժեր , աննախադեպ զարգացման բարձր տեմպեր գրանցվեցին գրեթե բոլոր ոլորտներում, որտեղ ինչ խոսք իր կարևոր ներդրումն ուներ Ա. Կիրակոսյանը: Այդ տարիներին, Ա. Կիրակոսյանի խոսքերով ասած «ուշադրության կենտրոնում հայտնվեց մայրաքաղաքի ենթակառուցվածքների, մասնավորապես տրանսպորտի խնդիրը: Ու թեև շահագործման հանձնվեց Երևանի մետրոպոլիտենը, բայց, ցավոք, խնդիրը մնաց օրվա ծիրում» (էջ 122): Միութենական ղեկավարության հետ իր ունեցած կապերի օգտագործման շնորհիվ Ալ. Կիրակոսյանը կարողացավ մեծ նպաստ բերել հանրապետության տնտեսական ճյուղերի զարգացման գործին: Ա.Կիրակոսյանի աշխատանքային գործունեության վերջին հանգրվանը՝ 1986-1988 թթ. եղավ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության գլխավոր վարչության պետի պաշտոնը: Այստեղ ևս Ալ. Կիրակոսյանը աշխատեց իրեն յուրահատուկ հետևողականությամբ ու հոգատարությամբ: Խորհրդային իշխանության գաղափարական հարկադրանքի պայմաններում Ալ. Կիրակոսյանն առանց ընկրկելու, համարձակ այս ոլորտում ևս իր վրա վերցրեց ազգային բնույթի դժվարին ծրագրերի իրականացումը: Նա չափազանց մեծ ծավալի աշխատանք կատարեց այդ երկու տարվա ընթացքում Մոսկվայից չխրախուսվող հանարապետության տարածքի քայքայված, գրեթե ոչնչացման եզրին գտնվող տաճարներն ու եկեղեցիները, պատմության ու մշակույթի շատ

կարևոր այլ հուշարձանների վերականգման ու դրանց ճանապարհները բարեկարգելու ուղղությամբ: Այդ տաղանդավոր կազմակերպիչն ու իմաստուն մարդը 1986 թ.-ից միութենական նշանակության անհատական թոշակառու էր, պարգևատրվել է բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով, Երևանի պատվավոր քաղաքացի էր: Վախճանվել է 2007թ. հունվարի 9-ին Երևանում:

Ամփոփելով նշենք, որ շնորհիվ բնական ձիրքի, լայնախոհության, ինքնուրույն մտածելակերպի, տարբեր խնդիրների ճշմարտությանը հասու լինելու համառության, վերլուծական մտածողության ու աշխատասիրության Ալեքսան Կիրակոսյանը անգնահատելի դեր է խաղացել հարազատ ժողովրդի պետականության ամրապնդման ու կենսամակարդակի բարձրացման գործում:

Անվանի քաղաքական, ազգային գործչին միշտ էլ բնորոշ է եղել հասարակական և քաղաքական խնդիրներին անմիջապես արձագանքելն ու իր սկզբունքային վերաբերմունքը համարձակ կերպով դրսևորելը: Նա իր հրապարակային ելույթներով, հասարակական –քաղաքական ակտիվ գործունեությամբ, մեծ եռանդով լծվեց պետականաշինության, հանրապետության տարբեր ոլորտների զարգացման համար խիստ կարևոր խնդիրների լուծման գործին: Նա իր հասարակական ակտիվ գործունեությամբ, անմնացորդ նվիրվեց արցախյան ազատագրական պայքարի հաղթական խնդրի լուծման գործին: Ա. Կիրակոսյանին հատուկ էին սկզբունքայնությունը, ազնվությունը, պահանջկոտությունը ու նվիրվածությունը իր հայրենիքին ու սեփական ժողովրդին: Նա միշտ էլ աչքի էր ընկել իր հասարակական բարձր ակտիվությամբ ու հեղինակությամբ: Ա. Կիրակոսյանը իր ընդառաջող ու գործունյա բնավորության շնորհիվ ակտիվ մասնակցություն է բերել կառավարություն ներկայացրած հանարապետության տարբեր ոլորտների զարգացման ծրագրերին: Նրա ավելի քան կեսդարյա պետական-քաղաքական գործունեության բնորոշ կողմերից մեկը բազմակողմանիությունն էր: Նա երբեք չի սահմանափակվել միայն մասնագիտական նեղ ոլորտով, զբաղվել է տարբեր բնագավառների հիմնահարցերով և տվել դրանց լավագույն լուծումը:

Արժեքավոր է Ա. Կիրակոսյանի ներդրումը հայ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման ու զարգացման գործում: Ակնհայտ է Կիրակոսյանի ծանրակշիռ վաստակն ու ծառայությունները հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր ոլորտներում: Շատ հաճախ նրա բազմաբեղուն գործունեությունը գուգակցվել է հրապարակախոսական ելույթներով և պաշտոնական զեկուցումներով:

Անուրանելի է նրա ակտիվ հասարակական- քաղաքական գործունեությունը, որը նպատակաուղղված էր հանրապետությունում տիրող բարոյական մթնոլորտի առաջացմանը, հայ ժողովրդի քաղաքական ու հոգևոր համախմբմանը ազգային նվիրական գաղափարների շուրջ: Օժտված լինելով

բարոյականային վեհ հատկություններով, անհուն աշխատասիրությամբ և ոգեղենությամբ, նա կարողանում էր ընկերական և աշխատանքային շրջապատին մշտապես ուղղորդել կանխորոշումների իրականացմանը, նախանշված հիմնահարցերի կարգավորմանը:

Պատմության ֆակուլտետի կոլեկտիվը երխատագիտությամբ է հիշում թե ինչպիսի մեծ ծավալի աշխատանք է կատարել Ա. Կիրակոսյանը Հայաստանի հարակից երկրների տեղանունների բառարանի հրատարակչական գործը կազմակերպելու, նրա հինգ հատորյակի ֆինանսավորումը ապահովելու, հայ հին և միջնադարյան քարտեզների հրատարակումը կազմակերպելու, պատմագիտական մի շարք կարևոր աշխատությունների հրատարակման համար ֆինանսական խնդիրները լուծելու ուղղությամբ: Վաստակաշատ պետական գործիչ, Ա. Կիրակոսյանին լավ ճանաչելով հարգում էր Խորհրդային Հայաստանի ողջ աշխատավորությունը և առաջին հերթին մտավորականությունը: Նա մեծ ճանաչում էր գտել նաև Սփյուռքում, որտեղ բարի համբավ էր թողել: Ահա թե ինչպես է նրան բնութագրել նամակագիր Վաչիկ Դարենցը՝ հայրենական պատերազմի մասնակիցը. «Շնորհալի մարդ մեծատառով, գիտնականի հետ ուսյալ, կրթյալ ու գիտնական, աշխատավորի հետ պարզ, ժպտերես, հասարակ» (Տես մարդը, գործիչը, մտածողը, կազմեց Աշոտ Կիրակոսյանը, Երևան, 2009, էջ 217):

Խիզախ ու անհանգիստ կյանք, ազնիվ ու շիտակ անհատականություն, հայ ժողովրդին նրա մատուցած ծառայությունները մեծ են: Նա էր լավագույն խորհրդատուն պետական ու կուսակցական գործունեության ասպարեզի շատ աշխատողների և առանձնապես երիտասարդության համար: Նա ուներ արժանապատիվ կեցվածք, մարդկանց նկատմամբ ցուցաբերում էր շիտակ, անաչառ վերաբերմունք, երևույթները խորությամբ վերլուծելու և գնահատելու կարողություններ: Մարդկանց հոգսերը թեթևացնելու, նրանց ազնիվ արարքները և գործերը պաշտպանելու համար Ա. Կիրակոսյանը գործադրում էր բոլոր ջանքերը և հնարավորությունները խնամքով թաքցնելով իր հոգսերը, դրանք ոչ թե ցուցադրական էր, այլ նրա ներքին պահանջն էր, իր էությունից բխող և իրենից չբաժանվող հատկանիշներ: Նա համառորեն զբաղվում էր ինքնագարգացմամբ, օրինակ էր այն երիտասարդների համար, ովքեր իրենց գործունեության համար ասպարեզ էին ընտրում հասարակական կյանքի բարդ ոլորտը: Պատերազմը չկարողացավ կոտրել նրա ամուր կամքը, անսասան հավատը, կյանքի նկատմամբ ունեցած առողջ հայացքն ու զգոնությունը, ձգտումները: Նա օժտված էր վճռականությամբ, խիզախությամբ, հաստատուն, եռանդուն և հետևողական գործողությամբ, որով շռայլորեն օժտված էր: Շատ հաճախ խիստ քննադատության էր ենթարկում անպատասխանատու աշխատողներին, բայց հետևում էր թերությունների բացահայտմանն և դրանց վերացմանը, իսկ երբ

հարցը վերաբերվում էր աշխատողների ազատմանը, հաշվի առնելով ընտանեկան վիճակը , հաճախ նրանց թողնում էր իրենց աշխատանքին:

Ա.Կիրակոսյանը հարգում և ընդառաջում էր աշխատող մարդկանց, իսկ անբաններին և ձևամոլներին երբեք չէր հանդուրժում: Նա օժտված էր մարդկանց ճանաչելու բացառիկ սուր զգացողությամբ, նրանց գործերն ու արարքները շիտակ ու անկողմնակալ գնահատելու մեծ կարողությամբ: Մոայլվում էր, հոգեկան խռովք էր ապրում, երբ տեսնում էր անփույթ, անկազմակերպ մարդկանց: Անողոք էր անագնիվ, ստոր արարքների կատարողների, հանցավոր անտարբերություն ցուցաբերողների նկատմամբ:

Դպրոցում աշխատելու տարիներին, դեռ աշխատանքային գործունեության վաղ տարիներին նա երևաց որպես հասարակական կյանքի խնդիրներով այրվող, ժամանակի հրատապ հարցերով ապրող ղեկավար, որը արժանացավ ճանաչման ու ժողովրդի անկեղծ հարգանքին: Ա. Կիրակոսյանը ճիշտ էր ընտրել իր մասնագիտությունը (մանկավարժություն, պետական-կուսակցական գործունեություն), քանի որ նրա մեջ հավասար ուժով հանդես էին գալիս այդ ասպարեզների գործիչների համար անհրաժեշտ այնպիսի կարևոր հատկանիշներ, ինչպիսիք են բացառիկ ուշադրություն մարդու նկատմամբ, մարդու արարքների դրդապատճառների խոր վերլուծություն, ու մարդու մեջ երևան եկած բացասական գծերի հաղթահարում և այլն: Ա. Կիրակոսյանը ժողովրդի շահի մեջ էր տեսնում պետության շահը: Օրենքները պետք է ծառայեն մարդու և պետության շահերին: Նա միշտ հավատում էր իր դավանանքին և կոչմանը: Ա. Կիրակոսյանի մարդկային էությունը բնութագրող մի քանի հատկանիշներից են Առաջին - անկեղծ, անկաշառ սերն ու նվիրվածությունը մարդու նկատմամբ, անհաշտ, անողոք պայքարը չարի, անարդարության դեմ՝ բարու և արդարության հաղթանակի համար:

Երկրորդ՝ ագնիվ զգացմունքների և մտքի խոր ներդաշնակությունը բոլոր պարագաներում

Երրորդ՝ կրքոտ ճշմարտություն և համարձակ մտահաղացումները կատարելու բացառիկ սուր զգացողությունը և այն իրականացնելու վճռակնությունը:

Չորրորդ՝ բարդ հիմնախնդիրները լուծելու կազմակերպչական բացառիկ , վիթխարի տաղանդն ու այդ պայքարում իր մարդկային արժանապատվությունը անսասան պահելու կարողություն

Հինգերորդ՝ երբեք խոր ապրումները, անձնական հոգսերը, տառապանքները չցուցադրելու, թաքցնելու բնավորություն, հուսահատության պահերին հոգևոր խռովքը և ներդաշնակությունը մարդկանց թերությունների նկատմամբ:

Վեցերորդ՝ պաշտամունքի հասնող սերը բանականության ուժի և առողջ զգացմունքների նկատմամբ, մտքի անկախությունը, ընկերների նկատմամբ ուշադիր վերաբերմունքը և վճռական պահերին ցույց տված բարոյական օգնությունը:

**Պ.գ.դ., պրոֆեսոր
Էդիկ Մինասյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԹԵԼԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

1921 թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՊՍԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ5

ԲՈՐԻՍ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ԵՎ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1

992-2002 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ11

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԵԼԻՆԵ ԳԻԼԱՎՅԱՆ, ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԻՐԱԿԱՆՆԸ ՈՒ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆԸ

ԷԴՈՒԱՐԴ ՄԻԼԻՏՈՆՅԱՆԻ «ՍԱՏԱՆԻ ԿԱՄՈՒՐՁԸ» ՎԵՊՈՒՄ.....23

ԶՈՅԱ ՊՈՂՈՍՅԱՆ

ԿՈՐՈՒՍՅԱԼ ԵԶԵՐՔԻ ԿԱՐՈՏԸ ՌՈԼԱՆԴ ՇԱՌՈՅԱՆԻ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՄ.....28

ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԵԾ ԱՆՀԱՏԸ Ս. ԽԱՆԶԱՂՅԱՆԻ

«ՎԱՐՔ ՀԱՐԱՆՅ» ՇԱՐՔՈՒՄ33

ԲԱԳՐԱՏ ՆԵՐՍԻՍՅԱՆ, ԱՍՅԱ ԴԱՐԲԻՆՅԱՆ

ԳՐԱԿԱՆ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ

ՎՐԱՅԵՐԵՆԻ ՀՈԼՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ

ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....42

ՄԵՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՍՏԻՃԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԻ

«ՄԾՆՇԱՂԻ ԱՆՈՒՐՁՆԵՐ» ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՇԱՐՔՈՒՄ.....48

ՀԱՍՄԻԿ ՄԿՐՏՁՅԱՆ
ԿԵՆԱՑՆԵՐԻ ԼԵԶՎԱՍՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ.....58

MYRA KARAPÉTIAN
LES EXPRESSIONS IMAGÉES EN FRANÇAIS ET EN ARMÉNIEN.....71

SVETA OHANYAN
LA RHÉTORIQUE COMME ART DE PERSUASION.....79

КРИСТИНА АРУТЮНЯН
СИМВОЛИКА ЦВЕТООБОЗНАЧЕНИЙ "BLUE" И "BROWN"
В ПРОИЗВЕДЕНИЯХ АНГЛОЯЗЫЧНЫХ АВТОРОВ И
ОСОБЕННОСТИ ИХ ПЕРЕВОДА.....84

MARKUHI VOSKANYAN
ROLE OF POLITICAL EUPHEMISMS AND THEIR
TRANSLATION STRATEGIES.....94

ZARUHI ANTONYAN
THE CONCEPT OF COLOR IN IDIOMATICITY.....102

ՆԱՐԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԻ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ-
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....111

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՄԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ, ՀՐԱՆՏ ՂԱՐԱԳՅՈՁՅԱՆ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԶԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ.....120

ՆՈՆՆԱ ԽԱԶԱՏՐՅԱՆ
ՈՒՍԱՆՈՂԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԵԿՈՒՍԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԵՌԱՌԻՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ 131

ՇՈՒՇԱՆ ԶԻՐՈՅԱՆ

ՇՈՒԿԱՅԻ ԱԶԱՏ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԶՈՂ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ,
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ.....137

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԵԼԼԻ ՀԱՐՈՅԱՆ, ԱՇԽԵՆ ՄԿՈՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐԻ ԵՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.....145

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՒՈՐԳՅԱՆ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ.
ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....152

ՎԱՀԵ ԱՂԱՍԱՐՅԱՆ
ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ
ԱՐԴԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ.....168

В. А. АГН АСРЯН
ЗАРУБЕЖНЫЕ МОДЕЛИ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ
В КОНТЕКСТЕ РЕШЕНИЯ ЗАДАЧ ОБЕСПЕЧЕНИЯ
ЖИЗНЕДЕЯТЕЛЬНОСТИ И РАЗВИТИЯ
ТЕРРИТОРИАЛЬНОЙ ОБЩИНЫ.....178

ЕВГЕНИЯ ГЯНДЖУМЯН
ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ ОПРЕДЕЛЕНИЯ ПРИЗНАКОВ
ОГРАНИЧЕННЫХ ВЕЩНЫХ ПРАВ РА.....185

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ

ԱՄԱԼՅԱ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀԵՔԻԱԹԻ ԺԱՆՐԸ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂՆԵՐԸ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ

ԴՊՐՈՑԻ 5-ԸՂ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ.....192

ՄԻՐԱՆՈՒՇ ՂՈՒՇՅԱՆ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ
ՄՈՒՇԵՂ ԳԱԼՇՈՅԱՆԻ
«ԿՈՒՆԿ» ՊԱՏՄՎԱԾՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ.....197

ՆՈՒՆԵ ՀՈՎՍԵՓՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ.....203

**ՄԱՐԻԵՏԱ ՃԱՂԱՐՅԱՆ, ԷԴԻԿ ԿՅՈՒՐԵՂՅԱՆ,
ՍՏԵԼԼԱ ՄԱՆԹԱՇՅԱՆ**
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ.....210

ՎԱՐՔ ՄԵԾԱՑ.....220

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԱԿՈՒՆՔԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Ակունքում» տպագրության ներկայացվող հոդվածների տեխնիկական պահանջները.

Տպագրության ներկայացվող հոդվածները պետք է գրված լինեն Word տեքստային խմբագրի օգնությամբ:

Հոդվածները ներկայացնել հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով:

Հոդվածի շարվածքը լինի Unicode-ով (հայերեն հոդվածների դեպքում՝ նաև Sylfaen տառատեսակով), տառաչափը՝ 12, միջտողային հեռավորությունը՝ 1.5, թղթի ֆորմատը՝ A4:

Հոդվածի սկզբում գրել վերնագիրը՝ մեծատառերով, հաջորդ տողում՝ հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ մեծատառերով:

Հղումները դնել տողատակում՝ համարների աճման կարգով, նշել աղբյուրը՝ հեղինակին, վերնագիրը, հրատարակության վայրը, տարեթիվը (պարբերական հրատարակության դեպքում՝ նաև համարը) և էջը (էջերը):

Հոդվածի վերջում գրել բանալի - բառերը, հայերեն, ռուսերեն և անգլերեն ամփոփագրերը՝ 50-60 բառի սահմաններում:

Հոդվածին անհրաժեշտ է կցել նաև (առանձին էջով կամ առանձին ֆայլով) հոդվածի վերնագիրը և հեղինակի (հեղինակների) անուն, ազգանուն, հայրանունը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, ինչպես նաև հեղինակի (հեղինակների) տվյալները՝ կոչումը, պաշտոնը, աշխատանքի վայրը, հեռախոսի համարը (համարները), էլեկտրոնային փոստի հասցե (e-mail):

Հոդվածներն ուղարկել akunq.ysuib@gmail.com էլեկտրոնային հասցեով:

ԱԿՈՒՆՔ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԹԻՎ 4 (20)

Համարի պատասխանատու՝ Ա. Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Տեխնիկական խմբագիր՝ Թ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

Չափսը՝ 70x100/16: Ծավալը՝ 15 պայմ. տպ. մասով: Տպաքանակը՝ 100

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալ. Մանուկյան 1

A K U N Q
COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES
NUMBER 4 (20)

Executive editor: A. A. NERSISYAN

Cover and content design: T. V. SARGSYAN

Format: 70x100/16. Size: 12 sheets. Copies: 100.

YSU Publishing House

Yerevan, 0025, Al. Manukyan 1